

www.syuniacyerkir.am

Այուսնյաց Երկիր



ՉՈՐԵՔՆԱԲԹԻ
27 ՀՈՒՆԻՍԻ
2016թ.
№ 22 (398)

Այուսնյաց աշխարհի արժանավոր զավակը

07



Սուրեն
Խաչատրյանը
60
սարեկան է

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՏՅՈՒԴ

ԵՐԿՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վերադառնալով հայրենի տուն՝
Մարտինոսը՝ Մուրեկի Խաչատրյանին
Մայրամուտի մեջ մեր սեզ լեռներն են,
Ծավալյա գմբուխտով զուգված փայլվում...
Դարնան ծաղկունքով գերված հավքերն են
Սյունիքի մեջ անվերջ կլվում...

Երկնամուտի գրգանքների տակ
Յաղաքն է կրկին սիրով պարտավում...
Մեծայր երկնքի գրկում կապուտակ
Մեր արժիվներն են հանդարտ պատվում...

Մարավանդներից մեր գանգրագիտակ
Մեծանուն է նորից մարդկանց հմայում...
Չքնաղ բուրգի պես՝ հսկայահասակ,
Մատ սարն է եկող դարերին նայում...

Չնքուշ բույրերով լցված քաղաքն է
Մարտնեղներով լի թախծի մեջ խորհում...
Մե մեր պապերի անմահ ոգին է
Մից-ցից ժայռերի ծոցի մեջ նիրհում...



Մ ԵՃԱՐԳ՝ ՆԱԽԱԳԱՏԻ Հայաստանի Հանրապետության Պատվելի՛ հյուրեր Սիրելի՛ հայրենակիցներ

Սյունյաց հնամենի հողում տոն է այսօր՝ Գորիս քաղաքը բոլորում է հիմնադրման 140-ամյակը: Նշանակալից տոնի առթիվ ամենաջերմ ողջույնս ու շնորհավորանքս են հղում ամենքիդ, ի դեմս ձեզ՝ բոլոր գորիսցիներին, մեր ողջ ժողովրդին, մաղթում ձեզ անձնական երջանկություն եւ հաջողություններ: Գորիս քաղաքի հիմնադրումը՝ որպես հազարամյակների խորքից եկող Գորայք-Կյորեսի շարունակություն, պատմական անհրաժեշտություն էր՝ թելադրված 19-րդ դարի վարչաքաղաքական-տնտեսական զարգացումներով: Դեռես վաղ միջնադարում իր պաշտպանական նշանակությամբ հռչակված Ձագեձորի (Հաբանդի) բերդով, հաղորդակցության միջազգային ուղիների համազուգակետի բացառիկ կարգավիճակով,

մարդկանց արարչագործությամբ եւ հերոսական պահվածքով, հոգեւոր խորը արմատներով Գորիսը պատմության բոլոր փուլերում անուրանալի դեր է խաղացել Հայոց պետականության, Հայոց ինքնիշխանության, Հայոց արժանապատվության պահպանման սրբազան գործերում: 1700-ականներից մեկիքանիստ Գորիսը 19-րդ դարակեսին գավառամասի կենտրոն էր, 1868 թվականին՝ նորակազմ Ձանգեզուրի գավառակենտրոն, 1920-21 թվականներին՝ Ինքնավար Սյունիքի եւ Լեռնահայաստանի մայրաքաղաք, ավելի ուշ՝ տարածաշրջանի կենտրոն եւ Սյունյաց աշխարհի հոգեւոր կենտրոն: Նման կարգավիճակը Գորիսին առաջադրել է պատմական առաքելություն, որն արժանապատվորեն է իրականացվել դարերի ընթացքում:

Գորիսն իր պատմական առաքելությունը պատշաճորեն կատարեց նաեւ Արցախյան հերոսամարտի եւ Հայոց անկախ պետականության վերականգնման շրջանում: Միայն 173 գորիսցի այդ ընթացքում իրենց կյանքը դրեցին Հայրենիքի

«Հրռանա՛նք վեջ մեր նախշարար ևս ծյորան»

**Սուրեն Խաչատրյանի ելույթը Գորիս
ֆաղափի հիմնադրման 140-ամյակին
նվիրված համաժողովրդական
ժողովում**

փրկության զոհասեղանին, որոնց անմեռ հիշատակի առջև խոնարհվում են երիցս:

Այսօր էլ ակնառու է Գորիսի դերակատարությունը մեր նոր հանրապետության տնտեսական-քաղաքական, հոգեւոր-մշակութային ու կրթական կյանքում, մեր ազգային ավանդույթների պահպանման գործում:

Քաղաքն իր ներկա պերճաշուք տեսքը ձեռք է բերել գորիսեցիների նախորդ բոլոր սերունդների աշխատանքի, քաղաքաշինական մտքի, մեծ սիրտ եւ նվիրումի շնորհիվ: Մի քանի տասնամյակի ընթացքում բարձրացավ մեր քաղաքը, որտեղ զարմանալի վարպետությամբ զուգորդվել են ազգային բազմադարյա ճարտարապետության հիանալի ավանդույթներն ու քաղաքաշինության ժամանակակից նվաճումները: Տնտեսական դժվարին մեր օրերում անգամ լսվում է քաղաքաշինության հեւքը Գորիսի բոլոր հատվածներում՝ աննախադեպ ծավալների հասած ճանապարհաշինությունից մինչև սոցիալական նշանակության նոր օբյեկտների կառուցում, ինչը եւս մեկ վկայություն է քաղաքի ու տարածքի հանդեպ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի եւ կառավարության ուշադրության: Ասվածի մեկ այլ եւ գորեղ հավաստումն է Տաթևի

ԶԱՆՓԵՋՈՒՐ

ՆԱՍՏ ՍԱՆՅԱՆ

*Ինձ կանչում է երկիրն այն անձրեւոտ,
Ուր մի գիշերվա մեջ մարդահասակ
Մի եղեգ է աճում անձավի մոտ:*

*Ինձ կանչում է երկիրն այն արեւոտ,
Ուր քարակույտերի հոտն է ննջում
Խոշոր եղջերավոր ժայռերի մոտ:*

*Ինձ կանչում է երկիրն այն բարձրաբերձ,
Ուր որոտի պահին չես իմանում
Ա՞մպ է ոտքերիդ տակ, թե՞ փլվող քերձ:*

*Ինձ կանչում է երկիրն այն խորախոր,
Ուր, թե երեկ քար ես նետել անդունդ,
Արձագանքը պիտի լսես այսօր:*

*Ինձ այն հողն է կանչում, ուր նույն պահին,
Երբ որ ձորերի մեջ բալն է հասնում,
Ձնծաղիկն է բացվում ձորագլխին:*

*Ինձ կանչում է երկիրն այն խիստ ու մեղմ,
Ուր կարող ես հանգիստ ու տարվա չորս
Եղանակը տեսնել մի ժամվա մեջ:*

*Ինձ կանչում է երկիրն այն գեղանի,
Ուր մարդը մեղմ է, խիստ, բարձր է ու խոր
Բնաշխարհի նման իր հայրենի:*



Կյանքի ուղին

Սուրեն Խաչատրյան. ծնվել է 1956թ. օգոստոսի 1-ին Գորիս քաղաքում, ծառայողի ընտանիքում: 1972թ. ավարտել է Գորիսի N3 միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ հեռակա ուսուցմամբ ավարտել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումը: 1995թ. ավարտել է «Պրոգրես» համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, իսկ 2003թ.՝ Հայաստանի Հանրապետության կառավարման ակադեմիան:

1972-1974թթ. աշխատել է Գորիսի ավտոնորոգման գործարանում՝ մեխանիկ: 1974-76թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո մինչև 1989թ. շարունակել է աշխատել Գորիսի ավտոնորոգման գործարանում:

Արցախյան շարժման առաջին օրերից ակտիվորեն մասնակցել է ինքնապաշտպանական ջոկատների կազմավորմանը, սահմանների պաշտպանությանն ու Արցախի համար մղվող մարտերին: 1992-94թթ. ղեկավարել է կամավորական N3 պայմանագրային զույմարտակը: 1994թ. աշխատել է Գորիսի քաղխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ, 1996թ. ապրիլին՝ ընտրվել քաղխորհրդի գործկոմի նախագահ: 1996թ. նոյեմբերին ընտրվել է Գորիսի քաղաքապետ:

1995, 1999 եւ 2003թթ. ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր: 2006թ. հունիսին ընտրվել, իսկ 2011թ. հունիսին եւ 2016թ. փետրվարի 20-ին վերընտրվել է Գորիսի պետական համալսարանի կառավարման խորհրդի նախագահ: 2010թ. հոկտեմբերին ընտրվել է ՀՀ վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահ: Հայաստանի Հանրապետական կուսակցության Սյունիքի մարզային խորհրդի նախագահն է:

Պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի, «Ապարապետ Վազգեն Սարգսյան», «Գարեգին Նժդեհ», «Մարշալ Բաղրամյան», «Մայրական երախտագիտություն», «Մարտական ծառայություն», «Մխիթար Գոշ» շքանշաններով եւ մեդալներով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. մարտի 25-ի որոշմամբ նշանակվել է մինչև այժմ, մոտ մեկ տարի ընդմիջումով, աշխատում է ՀՀ Սյունիքի մարզպետ:

Ամուսնացած է, ունի 4 երեխա:

«Հըռանա՛նք վեջ մեր նախշարար Էս ծյորան»

Մրբազան եզերք

անգրգական ճոպանուղու կառուցումը, որի գործարկմանն ականատես կլինենք ժամեր անց:

Տոնական այս օրը, երբ թերթում ենք Գորիս քաղաքի հիմնադրման, կառուցման պատմությունը, մտովի հիշում ենք բոլոր այն նշանավորների անունները, ովքեր տարբեր ժամանակներում վճռական դեր են խաղացել քաղաքի հիմնադրման, կառուցման եւ զարգացման գործերում: Նրանց անվանացանկը հաճելիորեն ծավալուն է, եւ ըստ էության հնարավոր չէ բոլորի անունը հնչեցնել հիմա: Սակայն չեմ կարող չհիշատակել 18-19-րդ դարերում Գորիսի մելիքական գերդաստանի՝ Մելիք-Հյուսեհյանների տոհմանունը, որի ներկայացուցիչների արարումների շնորհիվ Գորիսը բարձրացավ ու տեսանելի դարձավ Ռուսական կայսրության կենտրոնից անգամ: Չեմ կարող չհիշել բազմաթիվ մեր գավառապետերին եւ հատկապես Ստարացկի գավառապետին, որոնց ավանդը Գորիսի քաղաքաշինության մեջ առայսօր տեսանելի է: Գորիսեցիներիս խոնարհումն եմ բերում բոլոր ճարտարապետներին՝ առաջին չափագրումներն իրականացրած Ջանուշյանից ու Խարչենկոյից մինչև մերօրյա ճարտարապետներ ու շինարարներ:

Գորիսը, սակայն, աշխարհին ճանաչելի դարձավ գրչության եւ մշակույթի անկրկնելի կենտրոններով, հայերենի անգրգական վարպետ Ակսել Բակունցով, հայ արձակի երեսելի Սեռո Խան-զադյանով, մեր լեռնաշխարհի հավերժական երգիչ Գուսան Աշոտով, որոնց անվանը բոլոր գորիսեցիների երախտագիտությունն ու հարգանքն են մատուցում:

Սիրելի՛ հայրենակիցներ: Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյա-

կին նվիրված հանդիսությունը հանդնկել է Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշարձանի բացման հետ: Գրիգոր Տաթևացու հուշարձանը երբեւէ պետք է հառներ Գորիսի կենտրոնում: Եվ մեծագույն պատիվ է ժամանակակիցներիս համար, որ հենց մեզ վիճակվեց այդ խնդրի լուծումը, ինչի համար իմ շնորհակալությունն եմ հայտնում հատկապես քանդակագործ Նարեկ Օրոյանին ու ճարտարապետ Սեւադա Զաքարյանին: Վստահ եմ, որ Գրիգոր Տաթևացու անունը կրող այս հրապարակը, որտեղ այլևս հառնում է նրա հուշարձանը, կդառնա գորիսեցիների սիրելի ժամադրավայրը: Վստահ եմ նաեւ, որ Տաթևացու քարե ներկայությանն առնչվելիս ամեն անգամ յուրաքանչյուրիս մեջ նորովի կարթնանան մեր պետության, Հայ առաքելական եկեղեցու հանդեպ մեր որդիական սիրո ամենաջերմ զգացումները:

Սիրելի՛ հայրենակիցներ, անշուշտ հիշում եք Մեծ Գուսանի պատվիրանն ամենքիս՝ «Հըռանանք վեջ մեր նախշարար էս ծյորան»: Այդ պատգամն այժմեական է նաեւ այսօր, ինչը կյանքի կոչելու դեպքում միայն կարող ենք Գորիսը սերունդներին ավանդել ավելի շեն, ավելի վեհաշուք:

Մեր իղձերի իրականացման գլխավոր երաշխիքը եղել է եւ կա հայոց վերածնված պետականությունը: Ուրեմնե՛՛ լինենք տերը եւ արժանապատիվ քաղաքացին մեր երկրի:

Եզրափակելով խոսքս՝ վերստին շնորհավորում եմ բոլորիդ՝ քաղաքի հոբելյանի առթիվ եւ յուրաքանչյուրիդ մաղթում ամենայն բարիք:

Շնորհավոր տոնդ, Գորիս: Թող բարի լինի քո երթը գալիքում:

16 հոկտեմբերի 2010թ.

Բովանդակություն

Սրբազան եզերք

Գարնանային էտյուդ (Տիգրան Գրիգորյան) 2
 «Հըռանանք վեչ մեր նախշարար էս ծյորան»
 (Ս.Խաչատրյանի ելույթը Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին
 նվիրված տոնախմբության ժամանակ) 2
 Ջանգեզուր (Համո Սահյան) 3

Ս.Խաչատրյան. կյանքի ուղին 4

Խմբագրական

Այունյաց աշխարհի արժանավոր զավակը.
Սուրեն Խաչատրյանը 60 տարեկան է (Սամվել Ալեքսանյան) 7

Համարի հովանավորը

Վաչագան Ադունց. «Սուրիկ Խաչատրյանը վայելում է
յուրաքանչյուր գորիսեցու սերն ու հարզանքը» 7

Համարի ֆոտոալբոմը 8

Շնորհավորանք եւ վաստակի գնահատություն

Մանվել Գրիգորյան, Տիգրան Փարվանյան,
Անդրանիկ Մակարյան 12

Սյունիքի մարզպետարան. հետադարձ հայացք

Ջորավիգ Սյունյաց երկրին ու սյունեցուն (Գրիգոր Թադևոսյան) 14

Շնորհավորանք եւ վաստակի գնահատություն

Կիմ Աղաբեկյան, Ալբերտ Իսոյան, Դավիթ Գասպարյան 20

Ակնածալի գնահատականները Սյունյաց մեծերին

Նրա փառքի լուսապսակը երբեք չի խամրի
 (Գրիգոր Տաթևացու մասին) 23
 Ակսել Բակունցի 110-ամյակի կապակցությամբ 24
 Եվս մեկը Սյունյաց աշխարհի երեւելիներից
 (Մորուս Հասարթյանի մասին) 24
 Օրհնյա՛լ եղիցի ժամ գալստյան քո
 (Սերո Խանգաղյանի մասին) 25
 Խնկարկունի արժանի անուն՝ Սուրեն Այվազյան 26
 Հայ բանաստեղծի օրհներգ տեսակը
 (Համո Սահյանի մասին) 27
 Մեծ սյունեցին (Արամ Մանուկյանի մասին) 28
 Խոսք սիրո եւ երախտիքի (Գուսան Աշոտի մասին) 30

Շնորհավորանք եւ վաստակի գնահատություն

Հայր Մակար վարդապետ Հակոբյան, Արզո Ավակով,
Էդգար Մանուկյան 32

Հայրենիքի կանչով (Արցախյան գոյամարտ)

Ս.Խաչատրյանի մարտական ուղին (Սուրեն Բաղդասարյան) 31
 Սուրեն Խաչատրյանի մասին (Համլետ Մկրտչյան,

Սելիքսեթ Պողոսյան, Մուշեղ Խոյլունց) 33
 Գորիսի երկրապահ կամավորականների 3-րդ պայմանագրային
 գումարտակը եւ նրա մարտական ուղին
 (Արկադի Ծատուրյան) 34
 ...Եվ գրողում է գումարտակը (Ալվարո Մեսրոպյան) 42

Շնորհավորանք եւ վաստակի գնահատություն

Յուրի Բերեզովսկի, Ազատ Գասպարյան, Էվելինա Թադևոսյան,
Կարեն Համբարձումյան, Շանթ Հովհաննիսյան, Սմբատ Օրբելյան,
Արարատ Թանգյան, Նվարդ Հարությունյան 44

Արցախյան քառօրյա պատերազմ

Հայրենիքը վտանգի մեջ է. Սյունիքը ոտքի է ելնում 48
 Ս.Խաչատրյան. «Հայրենասիրությունն անթելված էր մեր
 ժողովրդի մեջ, բավական էր մի կայծ, որ նորից բռնկվի» 51
 Իսկ լեռան կատարին օրը չի մթնում 54
 Ս.Խաչատրյան. «Թող տեսնեն, թե այստեղ ինչ մարտական
 ոգի կա՝ թե՛ 18 տարեկան պատանու,
 թե՛ 60 տարեկան տղամարդու մեջ 57

Շնորհավորանք եւ վաստակի գնահատություն

Սեյրան Օհանյան, Արմեն Դուլարյան 58

Համարի ֆոտոալբոմը

Սյունյաց աշխարհում՝ ազգային ոգին կենսունակ պահող
հին ու նոր ավանդույթներն արժեւորելու հանձնառությամբ 58

Իրականություն դարձած ծրագրեր

Տարածաշրջանում կառուցվեցին նոր բժշկական
 կենտրոններ եւ հիմնանորոգվեցին գործող կենտրոնները 62
 Մեղրի-Ծավ-Կապան ավտոմայրուղին
 հանձնվեց շահագործման 64
 Վերականգնվել է Շաքե-Սիսիան-Տոլորս ճանապարհը 64
 Գորիսն ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարմամբ 65
 Սարգում կառուցվել է 12 նոր դպրոց 66
 Վերածնված Տաթև 66

Սյունիքի մարզպետի նախաձեռնությամբ

Գիտաժողովներ՝ հանրապետության առաջատար
գիտնականների մասնակցությամբ 68

Համարի ֆոտոալբոմը (ընտանիքը) 69

Շնորհավորանք եւ վաստակի գնահատություն

Արշավիր Հովհաննիսյան, Աղասի Հակոբջանյան,
Մխիթար Ջաքարյան, Աշոտ Հայրապետյան,
Վարդան Գեւորգյան 70

Տարածքային քաղաքականություն, դրվագ

26 հունիսի 2009թ., ԳՀ կառավարության
արտագնա նիստ Սյունիքում 73

Բովանդակություն

Չայ-իրանական

Նորորյա բարեկամություն վաղընջական հարեւանի հետ..... 74

Չայոց մեծ եղեռնի առիթով

Չայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը
(Ս.Խաչատրյանի խոսքը) 76

Չամարի ֆոտոալբոմը

Սուրեն Խաչատրյանի հեղինակած գրքերը 77

Նամականի

Դավիթ Գասպարյանի նամակը Ս.Խաչատրյանին,
4 հունիսի 2008թ. 78
Ս.Խաչատրյանի նամակը ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ
Ռադիկ Սարտիրոսյանին, 3 դեկտեմբերի 2013թ. 80
Ս.Խաչատրյանի նամակը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ
Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին,
11 սեպտեմբերի 2015թ. 81

Չամարի ֆոտոալբոմը 79

Սպասված վերադարձ

Ս. Խաչատրյանին սյունեցիները դիմավորեցին շուքով 82

Ս.Խաչատրյանի հարցազրույցներից

«...Որ տղամարդը գլուխը բարձր բացի իր տան դուռը»
(Լենա Չովսեփյան) 83
«Որ գալիք սերունդները ամեն ինչ նոր տողից չսկսեն»
(Ալվարո Մեսրոպյան) 86
ՀՀ ԱԺ պատգամավորության թեկնածու
թիվ 70 ընտրատարածքում (Ալվարո Մեսրոպյան)..... 88
«Մեր վաղը արդեն սկսվել է...» (Սուսաննա Շահնազարյան)..... 90

Շնորհավորանք եւ վաստակի գնահատություն

Արտուշ Դուկասյան, Լեւոնիկ Պետրոսյան, Վիկտորյա Դավթյան 92

Չավերժացվեց Սպարապետի ներկայությունը Սյունիքում

Սպարապետի կիսանդրին՝ Կապանի Բաղաբուրջ
հուշահամալիրում (Վահրամ Օրբեյան)..... 96

Վերադարձ (Սամվել Ալեքսանյան)..... 97
Երկու հորեյան եւ անվանակոչություն (Վահրամ Օրբեյան)..... 99

Ս.Խաչատրյանի կերպարը ժամանակակիցների ընկալումներում

Ջերմ մաղթանքներով (Միեր Կարապետյան) 100
Եզերքիս հոգսակիրը (Կիմ Աղաբեկյան) 101
Մեր աշխարհը եւ նրա որդին (Շչորս Դավթյան)..... 102
Սյունիքի հրոտից-օգոստոս տոնական է
(Ռոբերտ Էջաննցի) 103
Նրա գերդաստանի գլխավոր արժեքը եղել է Աշխատանքը
(Գրիշա Սմբատյան) 104
Վերացել է խոսքի եւ գործի հակադրությունը
(Արտուր Աթայան) 105
Նա իր հայրենիքի որդին է (Սամվել Ալեքսանյան) 106

Չավերժացվեց նահատակների հիշատակը

Չրաշակերտ կոթող՝ Արցախյան զոհամարտի նահատակների
հիշատակը հավերժացնող (Սամվել Ալեքսանյան) 110

Չամարի ֆոտոալբոմը

Գորիս. նրա նախածեռնությամբ ու հովանավորությամբ
հավերժությանը մեկնված կոթողներ եւ կառույցներ..... 114

Մատենագիտական ցանկ

Գրքեր, թերթեր, որոնք հրատարակվել են Ս.Խաչատրյանի
մեկնաստությամբ 116

Գերդաստանը

Դեզիկ Բաղդասյունյան. «Փառքին հասնելու ճանապարհն իմ
աշխատանքն է եղել» (Սուսաննա Շահնազարյան) 118
Դեզիկ Բաղդասյունյան. խոսք հիշատակի..... 119
Սուրեն Խաչատրյան մարդու համար իր արմատները
յուրօրինակ այցեքարտ են (Ալվարո Մեսրոպյան)..... 120

Սրբազան եզերք

Վայելուչ տեսքի բերվեցին սրբավայրերը 122
Տաթևի մայր վանքը՝ մարզի իշխանավորների,
հոգեւորականների, զորականների տարեվերջյան
հանդիպման վայր..... 122
Սյունյաց աշխարհի հորովել (Գուսան Աշոտ) 124

Չասցե՝ Կապան,
Շահումյան 20/32:
(0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Գլխավոր խմբագիր՝
ՍՍՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Լրագրողներ՝
ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ՝
ՍՆԱՎԻԿ ՆԱՎԱՍՏՐԳՅԱՆ
Ձեւավորումը՝
ԳՐԻԳՈՐԻ ՍԱՀԱՎՅԱՆԻ
Օպերատոր՝
ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ

Թղթակցությունները չեն գրախոսվում
եւ հեղինակներին չեն վերադարձ-
վում: Խմբագրության եւ հեղինակների
կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր
վիճակում (3 մեքենագիր էջից ոչ
ավելի):
Չդումը՝ «Սյունյաց երկրին» պարտադիր
է:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Չասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան
500,000 ՀՀ դրամ:
Ծավալը՝ 15.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության
20.07.2016թ.:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սյունյաց աշխարհի արժանավոր զավակը

Սուրեն Խաչատրյանը 60 տարեկան է



ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երբ Պետրոս եւ Յովհաննես առաքյալներին քննում էին Երուսաղեմի ատյանում, քահանայապետի հարցերից մեկին

այսպէս պատասխանեցին նրանք. «Իսկ մենք չենք կարող չասել, ինչ-որ տեսել ենք ու լսել» (Գործք առաքելոց, գործք 4.19):

Սկզբունքն այս աչքի առաջ ունենալով ու մեր ներքին մղումին ընդառաջ գնալով՝ «Սյունյաց երկիր»-ը չէր կարող չներկայացնել մեր լեռնաշխարհի նշանավոր ու արժանավոր զավակին՝ Սուրեն Խաչատրյանին, ում 60-ամյակն է լրանում 2016թ. օգոստոսի 1-ին, ում կյանքի ուղին՝ պատանեկության տարիներից, մեր աչքի առաջ է: Ինքն էլ՝ որպէս պետական այր, երկու տասնամյակ անկեղծորեն ձգտել է երկրամասի նշանավոր ու վաստակաշատ որեւէ մեկին չմոռանալ, նրանց արած-դրածն ըստ պատշաճի արժեւորել:

Լրագրի սույն համարով փորձել ենք արժեւորել Սուրեն Խաչատրյանի գործունեությունը՝ հիմքում դնելով իրատեսությունը:

* * *

Սուրեն Խաչատրյանի կյանքն ու գործը, անցած ճանապարհը պարտավոր ենք դիտարկել ժամանակի համապատկերի վրա, քանզի ժամանակից ու հասարակական-քաղաքական համակարգից դուրս մարդ (առավել եւս պետական ու հասարակական գործիչ) չկա ու չի կարող լինել: Այնպէս որ՝ իր գործունեության բոլոր փուլերում նա կրել է հասարակական կյանքի անցումային փուլերին ուղեկցող բարդ ժամանակների կնիքը: Այդքանով հանդերձ՝ ունեցավ հատկանիշներ ու որակներ, որոնցով ակնհայտորեն ու շահեկանորեն տարբերվեց ու առանձնացավ: Այդ ամենի մասին

ՀԱՄԱՐԻ ՀՈՎԱՆԱԿՈՐԸ

Սուրիկ Խաչատրյանը վայելում է յուրաքանչյուր գործիսեցու սերն ու հարգանքը



ՎԱՀԱԳԱՆ ԱՂՈՒՆՑ

Գորիսի քաղաքապետ

Մեր շրջապատում քիչ ենք հանդիպում իրենց գործի նվիրյալների, իրենց պապերի հողին ու ջրին

մեծ սիրով փարված հայրենասերների, մարդկանց հոգսերով ապրող ղեկավարների, ովքեր իրենց ուժն ու ավյունն օգտագործում են ի նպաստ ժողովրդի: Առավել քիչ ենք հանդիպում այնպիսի մարդկանց, որոնց մեջ բնությունը միանգամից սերմանած լինի այս բոլոր հատկանիշները: Այդ քչերից մեկը Սուրիկ Խաչատրյան մարդն է, քաղաքական գործիչը, լավ ղեկավարը, հայրենիքի պաշտպանը, մեծ սյունեցին...

Մինչեւ գրիչ վերցնելը թվում էր հեշտ կլինի շնորհավորանքի խոսք գրել մի մարդու մասին, ում հետ շատ երկար տարիներ ենք աշխատել, բազմաթիվ փորձությունների միջոցով ենք անցել, միասին մեծ հաջողությունների հասել, պատվով լուծել մեր առջեւ ծառայած խնդիրները: Բայց միեւնույն ժամանակ շնորհավորանքի խոսք հղել ավագ ընկերոջը, սիրելի սյունեցուն, ում՝ Սյունիքի եւ սյունեցու հանդեպ ունեցած սերն ու ոգեւորությունը հաճելիորեն վարակիչ է:

Սուրիկ Խաչատրյանն օրինակելի ղեկավար է. պահանջկոտ է ինչպէս շրջապատի, այնպէս էլ իր հանդեպ, նախանձախնդիր յուրաքանչյուր բնակչի խնդրի լուծման հարցում, մեղով ու բարեհոգի լավ աշխատողի ու արդյունավետ աշխատանքի հանդեպ: Նրա համար անհնարին ոչինչ չկա: Կարողանում է լուծում գտնել նույնիսկ անլուծելի թվացող խնդիրներին, հիանալի կազմակերպիչ է եւ խոսքի արժեքը գնահատող մարդ:

Հիշեցի մի դեպք: Դեռեւս հեռավոր 1994թ., երբ նա դեռ մոր էր ստանձնել Գորիսի կառավարման ղեկը, տեղի ունեցավ ահավոր ջրհեղեղ, որը նաեւ մարդկային զոհերի պատ-

ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՎԵՐՆԵՐ



Կապան, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հերթական այցի ժամանակ (1 հունիսի 2004թ.)



11 դեկտեմբերի 2015թ., Նախագահ Սերժ Սարգսյանը խորհրդակցության է հրավիրել Սյունիքի մարզի ղեկավարներին


Վազգեն Սարգսյանը Գորիսի քաղաքապետ Ս.Խաչատրյանի հետ՝ Կապանի գորամասում, 1996թ.:



Սյունյաց աշխարհի արժանավոր զավակը

Սուրեն Խաչատրյանը 60 տարեկան է

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

էջ 7  բարձրաձայնել ենք 2011 թվականին, երբ առաջին անգամ փորձեցինք ուրվագծել նրա դիմանկարը («Սյունյաց երկիր», N13 (232)), եւ նպատակահարմար չէ կրկնել ասվածը, մանավանդ որ այդ հոդվածը՝ «Նա իր հայրենիքի որդին է», տեղ է գտել թերթի սույն համարում (էջ՝ 106):

Եվ, այնուամենայնիվ, ո՞րն էր նրա

քաղաքական կենսունակության աղբյուրը, ո՞րն էր պատճառը, որ հազար ու մի փորձությունների միջով անցնելուց հետո անգամ ուժ էր գտնում իր մեջ՝ անընդհատ սրբագրելու անցածն ու արածը, գործելու նոր եռանդով, ներկայանալու նոր նախաձեռնություններով:

Այդ առիթով մինչեւ այսօր հրամցվող մեկնաբանություններին չենք անդրադառնա: Բայց կա մեկ այլ իրողություն, որ գոնե հիմա չպետք է շրջանցել կամ ուրանալ. նրա կենսունակության ակունքը հայրենի եզերքն է, այդ լեռնաշխարհի մարդկանց ոգին:

Քաղաքապետի, պատգամավորի, մարզպետի դիրքը երբեք նրան չհեռացրեց ժողովրդից, շարքային մարդկանցից, ինչի համար եւ հազարավոր սյունեցիներ մնացին սրտակից նրա հետ: Մի անգամ արդեն գրել ենք. «... Գորիսն անհատականությունների քաղաք է: Գորիսը չես կարող կառավարել վահի,»

26 հոկտեմբերի 2007թ.,
ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի
մասնակցությամբ Կրեմլում ունեցավ
Սերգի-Շվանիձոր-Վերիշեն-
Շավ-Կապան միջպետական
ճանապարհի ավարտին նվիրված
հանդիսություն, որի ժամանակ
Էլույթ ունեցավ մարզպետ
Ս.Խաչատրյանը:



Վազգեն Սարգսյանը
Գորիսի քաղաքապետ
Ս.Խաչատրյանի հետ՝
Կապանի զորամասում,
1996թ.:



մահակի օգնությամբ: Գորիսը կառավարելու համար պիտի սիրել Գորիսը, գորիսեցուն, հարգել նրա արժանապատվությունը... Ոմանց համար գուցե ես հասկանալի չեմ պարզազույն այդ ճշմարտությունները, բայց դա է իրականությունը» («Այունյաց երկիր», N17 (290), 2013թ.):

Ասվածն առանց վերապահումի կարող ենք տարածել ամբողջ Այունիքի վրա՝ արաքսամերձ Նոնաձորից մինչև Գորայք:

* * *

Մեծ ես անկրկնելի Մորուս Հասրաթյանը «Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը» հոդվածն այսպես է ավարտում. «... Նրա ծննդավայրը, որտեղ էլ լինի՝ ընդունելի է: Իսկ նրա սյունեցի լինելը պատիվ է բերում ոչ միայն Այունիքին, այլև իրեն՝ հանճարեղ ես անմահ Խորենացուն»:

Ավելի լավ հնրավոր չէ ասել՝ սյունե-

ցի լինելը, իրոք, պատիվ է յուրաքանչյուրիս համար:

II Սուրեն Խաչատրյանը ոչ միայն Այունյաց աշխարհի զավակ է, այլև այդ աշխարհի ավելի քան տասը տարվա ղեկավարը, որը, ինքնըստիներյան, պատիվ է ու նրա ապրած կյանքը կարելորող ծանրակշիռ հանգամանք: Իսկ այդ տարիները մեր պետականության կայացման համար, Այունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար սովորական ժամանակահատված չէին:

Գրականագետ Դավիթ Գասպարյանն Ակսել Բակունցի «Կյորես» վիպակի առիթով ուշագրավ ընդհանրացում է արել հայրենիք հասկացության առիթով:

Ահա նրա խոսքը. «Ի՞նչ է հայրենիքը, եթե ոչ ծննդավայրից սկսվող եւ լեզվով, մշակույթով, հավատով ու տեսակի ընդհանրությամբ իր սահմաններն ամբողջացնող մի եզերք: Ի՞նչ է հայրենիքը, եթե ոչ արյանք ժառանգած մի բնաշխարհ, որ սերունդների պայքարով, գրով ու խաչքարով, տաճարով ու դպրոցամբ, ծեսով ու սովորությամբ, մարդկային կենսագրություններով եւ հարության շարունակվող սպասումներով փոխանցվում է այդ ամենի տեսք ու կերպարով ծնված, այդ ամենից սերված նրա որդիների»:

Իր հայրենիքի կրողն է Սուրեն Խաչատրյանը, հայրենիքի այդ ընկալունն ու ոգին է, որ առաջսօր ձգտում է կենդանի պահել նա:

Եվ Այունիքում սպասում են նոր գործերի ու նախաձեռնությունների, քանի որ նա դեռ ասելիք ու անելիք ունի...

ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈԱԼՈՒՄԸ



26 հունիսի 2009թ.,
Կապանում տեղի ունեցավ ՀՀ
կառավարության արտագնա
նիստ: ՀՀ վարչապետ Տիգրան
Սարգսյանը մարզկենտրոնում
Ս. Խաչատրյանի ուղեկցությամբ



14 ապրիլի 2016թ., Տաթևի վանք, Ամենայն հայոց
կաթողիկոս Գարեգին Բ-ի եւ Մեծի Տանն Կիլիկիո
կաթողիկոս Արամ Ա-ի հետ



ՀՀ ԱԺ-ում մասնակցությամբ Հովիկ Աբրահամյանի եւ Սուրեն Խաչատրյանի, տեղի ունեցավ Ղևուռդ Ալիշանի «Սիսականի» (վերահրապարակված գրքի) շնորհանդեսը (2009թ.)



Սուրիկ Խաչատրյանը վայելում է յուրաքանչյուր գործեսցու սերն ու հարգանքը

ՀԱՄԱՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐԸ

Էջ 7 Ճառ դարձավ: Գորիս ժամանեցին հանրապետության ղեկավարները: Բոլորն այն կարծիքին էին, որ երկրի ունեցած սուղ միջոցներով անհնարին կլինի վերականգնել ենթակառուցվածքները, քաղաքը բերել բնականոն հուն: Սակայն այդպես չէին մտածում Սուրիկ Խաչատրյանը, նրան հավատացող եւ նրա կողքին կանգնած մարդիկ: Եվ նրա կողմից աշխատանք-

ների ճիշտ կազմակերպման շնորհիվ հաշվարկայինից տասնյակ անգամ քիչ միջոցներով, սակայն մեծ նվիրումով քաղաքը ոչ միայն վերականգնվեց, այլև կառուցվեցին լրացուցիչ ենթակառուցվածքներ: Նման օրինակները շատ են: Ս. Խաչատրյանի շնորհիվ Գորիս քաղաքը եւ տարածաշրջանի բնակավայրերի մեծ մասն ունեն շուրջօրյա ջրամատակարարում, գազիֆիկացված են, ունեն խնամված եւ բարեկարգ տեսք:

Հարգարժան մարզպետը հետևողական է ինչպես բնակիչների սոցիալական վիճակը կարգավորելու, բնակավայ-

րերի բարեկարգումն իրականացնելու, այնպես էլ գիտամշակութային կյանքը զարգացնելու գործում: Հենց նրա անմիջական մասնակցությամբ նոր թափ առան մեր հինավուրց մշակութային արժեքների, գիտական օջախների վերականգնման աշխատանքները, կառուցվեցին նորերը: Նրա անմիջական ղեկավարությամբ եւ հովանավորությամբ վերականգնվել են Գորիսի եկեղեցիները, կառուցվել եւ վերակառուցվել բազմաթիվ հուշարձաններ ու իրապարակներ: Իր ժողովրդի պատմության եւ մշակույթի նվիրյալն ու գիտակը բազմաթիվ գրքերի եւ աշխատությունների տպագրության հովանավորն է, գիտության եւ մշակույթի գործիչների լավագույն բարեկամը:

Հայրենի հող ու ջրի նվիրյալն ու մեծ հայրենասերը, բնականաբար, չէր կարող անտարբեր մնալ նաեւ հայրենիքի պաշտպանության գործում: Նա դեռ նախորդ դարի ութսունականների վերջից պաշտպանության գործի կազմակերպիչներից էր, սեփական օրինակով եւ



**1 սեպտեմբերի
2009թ., ՀՀ Նախագահ
Սերժ Սարգսյանը,
Սյունիքի մարզպետ
Սուրեն Խաչատրյանը
մասնակցեցին Կապանի
N3 միջնակարգ դպրոցի
վերաբացմանը, որ
վերանորոգել էր դպրոցի
շրջանավարտ Սերգեյ
Համբարձումյանը:**



**25 ապրիլի 2009թ., ՀՀ պաշտպանության
Նախարար Սեյրան Օհանյանը Սուրեն
Խաչատրյանին է հանձնում «Վազգեն
Սարգսյան» մեդալը:**



**17 ապրիլի 2004թ.,
Սիսիան, Համո Սահյանի
հուշարձանի բացման
ժամանակ խոսք է ասում
Սյունիքի մարզպետ
Սուրեն Խաչատրյանը:**

կազմակերպչական ունակություններով կարողացավ համախմբել Գորիսի տարածաշրջանի ինքնապաշտպանական ջոկատները եւ ստեղծելով մի կուռ կառույց ու այն ընդգրկելով նորաստեղծ հայոց բանակի մեջ՝ լուրջ ներդրում ունեցավ Հայաստանի եւ Արցախի պաշտպանության եւ պատմական տարածքների ազատագրման գործում: Երկու տասնամյակից ավելի Ս. Խաչատրյանը, ղեկավարելով ԵԿՄ մարզային կառույցը, ամենօրյա հոգատարություն է ցուցաբերում հաշմանդամ ազատամարտիկների եւ զոհված զինծառայողների ընտանիքների նկատմամբ: Վերջերս նրա նախածնունդային եւ անձնական միջոցներով կառուցվեց եւ շահագործման հանձնվեց Արցախի ազատագրման պայքարում զոհված եւ անհայտ բացակայող հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթողը, որը Երկրորդ աշխարհամարտում զոհված մեր հայրենակիցների հուշահամալիրն ավելի գեղեցկացրեց ու դարձրեց մեր համաքաղաքացիների եւ

հյուրերի համար ոչ միայն սրբատեղի, այլ նաեւ հաճելի ժամանցի վայր: Իսկ մեր ժողովրդին բաժին հասած այս վերջին խառնակ ու դժնդակ իրադարձությունների ժամանակ Սուրիկ Խաչատրյանը նորից սահմանին էր՝ զինվորի կողքին՝ պատրաստ նորից մարտնչելու մեր հայրենիքի համար:

Հատկապես Գորիսում այս վերջին ժամանակներում որոշակի բարեփոխումներից, դրական տեղաշարժերից, նաեւ Սուրիկ Խաչատրյանի լուռ ու հպարտ կեցվածքից զգացվում է մարդկանց հոգեբանության փոփոխություն. գորիսեցին իրեն զգում է իր պապերի լիիրավ հաջորդը, իր քաղաքի տերը, պատասխանատու է՝ լավի, է՛լ վատի համար: Վստահորեն կարող են ասել, որ Սուրիկ Խաչատրյանը վայելում է յուրաքանչյուր գորիսեցու սերն ու հարգանքը:

Ժողովրդի ծոցից ելած եւ ժողովրդի նվիրյալ զավակը, լինելով հավատավոր հայ քրիստոնյա, մի հետաքրքիր նախածնունդային հանդես եկավ վերջին տա-

րիներին: Սկսած 2015թ. տարեմուտից՝ ամեն տարի Սյունիքի մարզի հոգեւոր, քաղաքական ու քաղաքացիական, զինվորական եւ այլ ոլորտների ղեկավարների ու քաղաքացիների մի մեծ խումբ Նոր տարին զինավորում է Տաթևի վանական համալիրում՝ դրանով կարծեք թե երդում տալով ազնվորեն ու անմնացորդ ծառայել հայրենիքին եւ հայ ժողովրդին:

Իմ եւ բոլոր գորիսեցիների անունից ջերմորեն շնորհավորում եմ Սուրիկ Խաչատրյանի ծննդյան օրը՝ ցանկանալով առողջություն, մեծ նպատակներին հասնելու անսպառ եռանդ: Այն ուժն ու եռանդը, սերն ու ոգեւորությունը, որ նա տածում է իր ծննդավայրի, պետության, յուրաքանչյուրի հանդեպ, թող բազմապատկվի ու վերադառնա իրեն ու իր ընտանիքին:

Թող Աստծո կամոք խաղաղ երկնքի տակ դեռ երկար տարիներ տոնենք Սուրիկ Խաչատրյան մեծ մարդու եւ լավ ղեկավարի ծնունդը: ■

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ԵԿՄ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ Սուրիկ Խաչատրյանին



ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵԿՄ վարչության նախագահ, Արցախի հերոս, զորավար

Հարգելի՛ Սուրիկ Խաչատրյան եռասերունդ երկրպագի կամավորականների միության, հանրապետության բոլոր երկրպագիների, 5-րդ բրիգադի մարտիկների, պատանի, երիտասարդ երկրպագիների եւ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ ծննդյանդ 60-ամյա հոբելյանի կապակցությամբ: Մաղթում եմ քեզ, քո ընտանիքի անդամներին առողջություն, երջանկություն, հաջողություններ:

60 տարին պատկառելի տարիք է: Այդ տարիքում հստակորեն կարելի է հաշվետվություն տալ, թե կյանքի որոշակի ժամանակահատվածում մարդը որքանով է պիտանի եղել ընտանիքին, ընկերներին, հայրենիքին, ազգին, պետությանը: Դու, հարգելի՛ իմ ընկեր, կյանքիդ

կարելոր տարիները նվիրել ես Արցախյան ազատամարտին եւ Սյունիք աշխարհի սահմանների պաշտպանությանը: Պատահական չէ, որ դու ԵԿՄ վարչության անդամ ես եւ երկրպագիի Սյունիքի մարզային խորհրդի նախագահը: Լավագույն կողմերով դրսևորվելով 1989-94-ի պատերազմական օրերին՝ հարաբերական անդորրի տարիներին եւս դու, սիրելի՛ մարտական ընկեր, նվիրվել ես հայրենանվեր աշխատանքի՝ նպաստելով եռասերունդ երկրպագիի հայրենասիրական ծրագրերի կյանքի կոչմանը, պատանի եւ երիտասարդ երկրպագիների կրթման, դաստիարակման գործընթացին:

Սյունիքը ռազմավարական կարելոր նշանակություն ունեցող մարզ է, եւ հպարտորեն կարող ենք արձանագրել, որ երկրպագի Սուրիկ Խաչատրյանը պատվով է իրականացնում մարզը զարգացնելու, շենացնելու պարտականությունը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ծննդյանդ օրվա կապակցությամբ: Լավագույն բարենախթանքներս ընդունելով՝ հիշիր, որ դեռ միասին բազում հայրենասիրական ծրագրեր ենք իրականացնելու:

Միշտ՝ բանակի կողքին, բանակի հիմնախնդիրներով մտահոգ



ՏԻԳՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ

Գնդապետ, ՀՀ զինված ուժերի 1-ին զորամիավորման հրամանատար

Սուրեն Խաչատրյանին վաղուց եմ ճանաչում, բայց մեր առաջին շփումն այն ժամանակ էր, երբ Վայքում տեղակայված զորամասի հրամանատար էի: Այնուհետեւ 2009-ից, ճակատագրի կամոք, ծառայության եմ անցել այս տարածաշրջանում, երբ Սուրեն Խաչատրյանն արդեն հինգ տարի ղեկավարում էր Սյունիքի մարզը: Մեր միջեւ մարդկային ջերմ եւ գործնական հարաբերություններ հաստատվեցին: Եվ դրանից հետո մինչեւ այս պահը Սուրեն Խաչատրյանին տեսել եմ բանակի կողքին կանգնած, բանակի հիմնախնդիրներով մտահոգ: Եվ մարդկային փոխհարաբերություններում, եւ աշխատանքում նրան ճանաչում եմ որպես ճշմարիտ, ազգասեր հայ, հմուտ վարչական ղեկավար: Ռազմավարական կարելոր նշանակություն ունեցող Սյունիքի մարզի նրա ղեկավարումը բոլորիս աչքի առաջ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

է, կասեմ, որ դա նրա մոտ շատ լավ է ստացվում:

Սուրեն Խաչատրյանն Արցախյան պատերազմի քուրայով անցած անձնավորություն է, լավ գիտի հայրենիքի դիրքերը պահող զինվորի հոգեբանությունը, նրա կարիքները: Իր առաջին հարցն ուղղված ինձ, որպես զորահրամանատարի, այս է՝ ի՞նչ կարող եմ անել զորքի համար: Փառք Աստծո, բանակն այսօր ամեն ինչով ապահովված է, դա չէ խնդիրը, այլ զինվորի հանդեպ նրա հոգատարությունը եւ պատրաստակամությունը՝ միշտ զինվորի կողքին կանգնել: Քառօրյա պատերազմի ժամանակ էլ իր մարտական փորձն ի սպաս դրեց թշնամու մուրթ ջարդելու գործին: Տեղյակ եմ, որ մարզպետի զորիսյան նստավայրը վեր էր ածվել կազմակերպչական աշխատանքների յուրօրինակ շտաբի: Սյունիքի մարզպետի գլխավորությամբ Սյունիքի գումարտակն ապրիլի 3-ի օրվա վերջին Ստեփանակերտում էր եւ մեկնեց առաջնագիծ:

Ի սրտե շնորհավորում եմ Սուրեն Խաչատրյանին՝ ծննդյան 60-ամյա հոբելյանի առթիվ, ցանկանում բեղմնավոր գործունեություն, շարունակական աշխատանք, ամուր առողջություն: Ուզում եմ շնորհավորել նրա ընտանիքին, նրա շրջապատի մարդկանց, քանզի բոլորն էլ ուրախանում են նրա հաջողություններով:

Մշտապես բանակաշինության ակունքներում



ԱՆՊՐԱՆԻԿ ՄԱԿԱՐՅԱՆ

Գեներալ-մայոր, ՀՀ զինված ուժերի 4-րդ զորամիավորման նախկին հրամանատար, Ձորքերի (ուժերի) միացյալ խմբավորման հրամանատար

Ազգային բանակի եւ նրա շարժիչ ուժ հրամանատարական կազմի հաջողության համար յուրաքանչյուր զինվորականի անհրաժեշտ են մի քանի նախապայմաններ: Առաջինը՝ զինվորականի խիստ ու բարձր պատասխանատվությունն է, երկրորդը՝ բարձր մակարդակի կազմակերպվածությունը. միայն գրագետ հրամանատարը կարող է իմաստուն հրամաններ տալ: Եվ զինվորականի գործի հաջողության երրորդ ու ամենակարևոր հանգամանքն ամուր թիկունք ունենալն է՝ ի դեմս իշխանությունների եւ հասարակության տարբեր խավերի:

Ձորրորդ բանակային զորամիավորման եւ Սյունիքի մարզում արդեն մի քանի տարվա ծառայությանս փորձը մարզային, քաղաքային ու գյուղա-

կան համայնքների իշխանությունների հետ համագործակցելու վառ օրինակն ու ապացույցն են: Այս տարիների ընթացքում եւ իշխանությունները, եւ ազգաբնակչությունը, եւ տարբեր հկ-ներ ու ձեռնարկություններ մշտապես եղել են բանակի թիկունքին, ինչի շնորհիվ մեր առաջ դրված մարտական առաջադրանքները կատարել ենք բարձր մակարդակով: Հատկապես պետք է կարելուրեն մարզի հանքարդյունաբերական ձեռնարկություններից «Ձանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ներդրումը բանակաշինության գործում, ինչպես նաեւ «Գեղի գոլդ» ՓԲ ընկերության՝ Սիսիանի զորամասում կատարվող մեծածավալ ինժեներական աշխատանքների դերը:

Գոհ եւ շնորհակալ եմ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանից, որ այս ամբողջ ժամանակահատվածում նպաստել է բոլոր հրամանատարներին՝ բարձր մակարդակով զինվորական ծառայություն իրականացնելուն, ինչպես նաեւ համայնքային իշխանությունների հետ սերտ համագործակցելուն: Որպես մարզի ղեկավար, որպես անհատականություն՝ նա իր սրտացավ վերաբերմունքն է ցուցաբերել հատկապես բանակաշինության, մարտական դիրքերի ամրապնդման, ձեռնային պայմաններում սպասարկման ճիշտ կազմակերպման եւ մի շարք այլ խնդիրներ կարգավորելու հարցում:

Շնորհավորելով հոբելյանի առթիվ՝ մաղթում եմ առողջություն, բազում հաջողություններ՝ մարզի զարգացման համար հեռանկարային ծրագրերը կյանքի կոչելու ճանապարհին: Շնորհակալությունս եմ հայտնում մեր ծառայողական պարտականությունները կատարելու բարդ եւ պատասխանատու գործում մշտապես մեզ օժանդակելու եւ աջակցելու համար:

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ. ՀԵՏԱԴԱՐԶ ՀԱՅԱՑՔ

Զորավիգ Այունյաց Երկրին ու այունեցուն



ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի
տեղակալ

Սյունիքի մարզը, որպես վարչատարածքային, իսկ մարզպետարանը որպես տարածքային կառավարման միավոր, գոյություն ունեն ավելի քան 20 տարի: Դրանցից ավելի քան 11 տարին կապված է Սուրիկ Խաչատրյան հասարակական-քաղաքական ու պետական գործչի եւ պարզապես իր հայրենի եզերքին անսահման նվիրված մարդու հետ:

Ս. Խաչատրյանն իր նախորդ գործունեությամբ արդեն իսկ այունեցիների տեսադաշտում էր եւ ցույց էր տվել, որ անհաղորդ չի եղել այունեցուն հուզող խնդիրներին: Եվ մարզպետի պաշտոնում նշանակվելուց հետո, գոնե նրա հետ աշխատողներին համար ակներե էր նրա՝ մարզի խնդիրների ճանաչողության բարձր աստիճանը եւ Սյունյաց աշխարհի անցյալի ու ներկայի

փայլուն իմացությունը:

Ս. Խաչատրյանի պաշտոնավարման հենց սկզբից դասակարգվեցին թե հանրապետությանը բնորոշ եւ թե մարզին յուրահատուկ հիմնախնդիրները՝ ըստ տարածաշրջանների, համալիր ուսումնասիրության եւ վերլուծության արդյունքում առանձնացվեցին առաջնահերթ խնդիրները, որոնք պետք է ապահովվեն մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը:

Թե ինչ է արվել մարզում, սոցիալ-տնտեսական ընդհանուր եւ ոլորտային առաջնահերթ լուծում պահանջող ինչ խնդիրներ են լուծում ստացել այդ տարիներին եւ ինչ անելիքներ կան՝ ստորեւ:

Նախ կատարված ուսումնասիրությունների համադրմամբ եւ մարզի ռազմավարական զարգացման ապահովման նպատակով որպես առաջնահերթ խնդիրներ որակվեցին՝

- ներքին ռեսուրսների վերամշակման հետ կապված մրցունակ արտադրությունների զարգացումը,
- փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական, ներդրումային, տեղեկատվական եւ խորհրդատվական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը,
- ենթակառուցվածքների (գազիֆիկացում, ճանապարհաշինություն, խմելու եւ ոռոգման ջրի մատակարարում, տրանսպորտային կապի բարելավում, համայնքներում բարեկարգման իրականացում եւ այլն) զարգացումը,
- մարզի տեղական ինքնակառավարման համակարգի լիարժեք ձեւավորումն ու կայացումը, նրանց գործունեության արդյունավետության բարձրացման օժանդակումը,

- գյուղատնտեսության ոլորտի զարգացման ծրագրերի, մասնավորապես ճյուղի զարգացմանը նպաստող ենթակառուցվածքների նպատակային ծրագրերի իրականացման օժանդակումը,
- կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետության բարձրացումը, դպրոցական շենքերի հիմնանորոգումը եւ նորերի կառուցումը,
- առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը, բուժաստատությունների տեխնիկական վերազինումը, պետական նպատակային ծրագրերի իրականացումը,
- համայնքային բյուջեների հավաքմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- քաղաքային եւ գյուղական համայնքների քաղաքաշինական զլխավոր փաստաթղթերի կազմման աշխատանքների կազմակերպումը,
- միջազգային եւ դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը եւ նրանց կողմից նպատակային ծրագրերի իրականացման օժանդակումը,
- մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կազմումը եւ իրականացումը:

Նշված խնդիրների լուծմանն ուղղված՝ մարզպետի գործունեության արդյունավետության մասին է վկայում ներկայացվող տեղեկատվությունը:

Վերջին տասնհինգ տարիներին մեծածավալ շինարարություն է իրականացվել մարզում՝ մոտ 70,1 մլրդ դրամ ընդհանուր գումարով:

Տասներկու նոր դպրոց է կառուցվել Նոնաձոր, Լիճք, Վարդանիձոր, Իշխանասար, Խոզնավար, Արավուս, Սրաշեն, Եղեգ, Տեղ, Բնունիս, Շամբ, Կապան համայնքներում՝ 2.67 մլրդ դրամ ընդհանուր արժեքով: Հիմնանորոգվել է 56 դպրոցական շենք՝ 5.67 մլրդ դրամ գումարով: 1.38 մլրդ դրամից ավելի գումար է հատկացվել նախակրթարանների նորոգմանը: Կառուցվել է երկու առողջապահական հիմնարկ մոտ 1.9 մլրդ գումարով, մինչև նույն ժամանակ

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ. ԴԵՏԱԴԱՐՁ ԴԱՅԱՑՔ

հիմնանորոգվել եւ վերանորոգվել են 3.13 մլրդ գումարի բժշկական հաստատություններ եւ գյուղական համայնքներում բուժկետեր:

Նշված ժամանակահատվածում իրականացվել է բազմաբնակարան շենքերի տանիքների 518.0 մլն դրամի հիմնանորոգման եւ 289.0 մլն դրամի վերելակների վերանորոգման աշխատանք:

Տարբեր ֆինանսավորման աղբյուրներով 2004-2015 թթ. ընթացքում իրականացվել են շուրջ 28.7 մլրդ դրամի ճանապարհաշինարարական աշխատանքներ, այդ թվում տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների 15.6 մլրդ դրամի հիմնանորոգման եւ համայնքային ճանապարհների նորոգման, ձմեռային պահպանման ու շահագործման 13.1 մլրդ դրամի աշխատանքներ:

Նախկինի համեմատ զգալիորեն ավելացել է նաեւ մարզի զազ օգտագործողների քանակը: Էժան վառելիքը բնակչությանը հասու դարձնելու համար մարզպետարանի մշակած համալիր ծրագրի միջոցով համայնքների զազֆիկացման ծրագրերին օպերատիվ եւ համակողմանի օժանդակություն է ցուցաբերվել, որի շնորհիվ զազ սպառող բաժանորդների թիվը ավելացել է 4.1 անգամ, կազմակերպություններին՝ ավելի քան 15.3 անգամ: Կապույտ վառելիքը մուտք է գործել մարզի 23 նոր բնակավայր եւ արդեն 35 բնակավայրում բնակչությունն օգտվում է երկնագույն վառելիքից:

Մշտական ուշադրության կենտրոնում է պահվել նաեւ բնակչության ջրամատակարարման բարելավման խնդիրը: Ընդհանուր առմամբ «Հայջրնուղկուղի» ՓԲԸ կողմից սպասարկվող 5 քաղաքային եւ 21 գյուղական բնակավայրից ամբողջությամբ շուրջօրյա ջրամատակարարում են ստանում 4 քաղաքային եւ 17 գյուղական բնակավայրերի բնակիչները: Իրականացվել են ջրամատակարարման համակարգերի կառուցման եւ հիմնանորոգման 5.83 մլրդ դրամի աշխատանքներ, ինչպես նաեւ մոտ 4.0 մլրդ դրամի ոռոգման համակարգերի կառուցման եւ հիմնանորոգման աշխատանքներ:

Հետեւողական աշխատանք է տարվել նաեւ բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրման եւ զբաղվածու-

թյան հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ:

Պաշտոնավարման սկզբից էլ Ս. Խաչատրյան մարդու եւ պաշտոնյայի համար հատուկ է եղել հասարակ քաղաքացու ու հատկապես սոցիալապես խոցելի խմբերի կարիքների ու խնդիրների լուծմանը զորավիզ լինելու պատրաստակամությունը:

Այսպես, 2005թ. համագործակցելով ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ղեկավարության հետ՝ լուծվել է ժամանակավոր կացարաններում բնակվող 28 փախստական ընտանիքի բնակարանային ապահովության հարցը: Հարցը լուծվել է բնակարաններ գնելու եղանակով: Կապանում գնվել է 22, Մեղրիում 3, Սիսիանում 2, Խոտ գյուղում 1 բնակարան:

2006թ. Գորիս քաղաքում շահագործման է հանձնվել ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Շվեյցարական զարգացման գործակալության եւ ՀՀ Սյունիքի մարզպետարանի համաֆինանսավորմամբ կառուցված 40 բնակարանանոց շենք, որի շնորհիվ բնակարանով ապահովվել է Գորիս քաղաքի ժամանակավոր կացարաններում բնակվող 40 փախստական ընտանիք:

Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով մարզի 14 փախստական ընտանիք բնակարանների գնման վկայագրերի միջոցով ձեռք բերեց բնակարան:

2007թ. եւ 2012թ. Շվեյցարական զարգացման եւ համագործակցության գործակալության, հանրապետական եւ մարզային իշխանությունների համագործակցության շնորհիվ Գորիս քաղաքում 34 սոցիալապես անապահով ընտանիք ապահովվել է բնակարանով:

«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրի իրականացման համար 2015թ. մարզում պայմանագիր էր կնքվել 52 համայնքի 325 հողօգտագործողի հետ:

Մարզպետի անմիջական նախաձեռնությամբ լուծում է ստացել սոցիալապես անապահով, նաեւ բարդ բժշկական ախտորոշումներով անձանց համար կա-

րելու մի խնդիր. եթե նախկինում Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջանից հեծողալիզ ստացող հիվանդները ստիպված էին գալ Կապանի բժշկական կենտրոն, ապա այժմ Գորիսում հեծողալիզի բաժանունը ստեղծելուց հետո այդ խնդիրը վերացել է:

Աշխատանքներ են իրականացվել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ: Ամեն տարի կազմակերպվել է «Պրոթեզաօրթոպեդիկ» ԲԲ ընկերության եւ «Սատար» բարեգործական հասարակական կազմակերպության աշխատակիցների այցը մարզ, որոնց միջոցով հարյուրավոր հաշմանդամներին հատկացվել են պրոթեզներ, սայլակներ, լսողական սարքեր եւ այլ պարագաներ:

Մարզպետի հանձնարարությամբ համապատասխան ծառայությունների կողմից ուսումնասիրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ արդեթանական զորքերի շփման գծում 2016 թվականի ապրիլյան ռազմական բախումների հետեւանքով զոհված 13 զինծառայողի ընտանիքների սոցիալական խնդիրներն ու կարիքները, նախնական զննահատման արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, ինչպես նաեւ կազմակերպվել դրամական օգնություն նշված ընտանիքներին:

Յուրաքանչյուր տարի ֆինանսական աջակցություն է տրվել բազմազավակ եւ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքներին:

Պաշտոնավարման ողջ ընթացքում մարզպետի գործունեության տիրույթում առանձնակի տեղ են զբաղեցրել կրթության բնագավառի հիմնախնդիրները:

Դպրոցների գործունեության բարելավման, ժամանակակից կրթական չափորոշիչների կիրառման շնորհիվ մարզի դպրոցները հետ չեն մնում հանրապետության տեխնիկապես հագեցված հաստատություններից:

«Կրթության որակ եւ համապատասխանություն» ծրագրի իրականացման շրջանակներում Սյունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդհանուր առմամբ տեղադրվել է ավելի քան 1300 համակարգիչ՝ համապատասխան սարքավորումներով: Բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կա-

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ. ԴԵՏԱԴԱՐԶ ԶԱՅԱՑՔ

պով, 110 դպրոցում գործում են համակարգչային դասարաններ, 5 դպրոցում՝ ինժինեռական լաբորատորիաներ:

Հանրապետությունում մարզերից առաջինը Սյունիքում է ներդրվել հեռակառավարման (պիլոտային) ծրագրով ուսուցման մեթոդը, որը հնարավորություն է ընձեռել սյունեցի դպրոցականներին «կենդանի» ձեռով, ամմիջականորեն մասնակցել մայրաքաղաքում անցկացվող դասապրոցեսներին:

Մարզում իրականացվող «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում 46 դպրոցի տարրական դասարանի աշակերտներին տրվում է «տաք», մնացածում՝ «չոր» սնունդ:

Ներկայումս մարզի 120 դպրոցում աշխատող 2225 ուսուցչի 87%-ն ունի բարձրագույն կրթություն, /2004 թվականին՝ 78%:

Մարզի դպրոցականները միշտ էլ հաջողությամբ մասնակցել են առարկայական հանրապետական օլիմպիադաներին. 2016թ. նրանցից 24-ը ստացել է դիպլոմ /2004 թվականին դիպլոմի էր արժանացել 12 աշակերտ/:

Վերջին տարիներին զգալիորեն աճել է նաև գերազանցության մեդալակիրների և հավակնորդների թիվը (2014-2015 ուստարի՝ 21 աշակերտ, 2015-2016 ուստարի՝ 32 աշակերտ):

Մարզի 46 դպրոցում գործում է լոկալ ջեռուցման համակարգ, 2004 թվականի 7-ի դիմաց:

Մարզպետի ուշադրությունից երբեք չեն վրիպել մարզի հոգեւոր-մշակութային և մարզական ոլորտներին առնչվող խնդիրները:

Բարձր կազմակերպվածությամբ ու պատշաճ մակարդակով նշվել են ազգային, պետական տոները, հոբելյանները և հիշարժան իրադարձությունները: Կազմակերպվել և անց են կացվել բազմաբնույթ մշակութային մասսայական տոնախմբություններ, փառատոներ, ցուցահանդեսներ, երիտասարդական հավաքներ, ուխտագնացություններ, ավանդական ազգային ծեսեր ու ծիսակատարություններ: Լուրջ ուշադրություն է դարձվել նաև պատմամշակութային հուշարձանների կառուցման ու վերանորոգման աշխատանքներին: Վերանորոգվել են Սիսիանի, Խնձորեսկի, Անգեղակոթի մշակույթի տները, Ագարակ քաղաքի մշակույթի պալատն ու երաժշտական



դպրոցը, Կապանի երկրագիտական թանգարանը, Գորիսի Ա.Սաթուրյանի անվան և Կապանի Ա. Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցները, Լորի Համո Սահյանի տուն-թանգարանը, Քարահունջի մշակույթի տունը, Ագարակ, Եղվարդ գյուղերի եկեղեցիները, Վահանավանքը, Հալիձորի բերդը, Որոտնավանքը, Տեղի Սուրբ Գեորգ եկեղեցին, կառուցվել են Դավիթ Բեկի Սուրբ Գայանե, Քաշունիի Սուրբ Սարգիս, Դարպասի Սուրբ Ստեփանոս, Տոլորսի Սուրբ Հռիփսիմե, Շաքեի Սուրբ Աստվածածին եկեղեցիները, մի շարք մատուռներ:

Պատշաճ ուշադրություն է դարձվել սպորտային միջոցառումներին: Մարզը

պարբերաբար մասնակցել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական քաղաք», «Լավագույն մարզական բակ» մրցույթներին՝ զբաղեցնելով մրցանակային տեղեր:

Մարզպետ Ս. Խաչատրյանի համար բացառիկ պատասխանատվության ոլորտ է եղել գյուղատնտեսությունը, իսկ սյունեցի գյուղացուն հուզող խնդիրների լուծումը ոչ միայն պետական նշանակության, այլև անձնական պատվախնդրության հարց է: Այդ մասին կարող են վկայել թե համայնքապետերը և թե ոլորտի տնտեսվարողները:

Ներկայումս մարզի տարածաշրջան-

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ. ԶԵՏԱԴԱՐՁ ԶԱՅԱՑԹ



ներում գյուղատնտեսությամբ զբաղվում է 22224 գյուղացիական եւ ֆերմերային տնտեսություն, գյուղատնտեսական մթերքներ /կաթ, միս, հացահատիկ/ վերամշակող 60 կազմակերպություն: 2004թ. համեմատությամբ ֆերմերային տնտեսություններն ավելացել են 175-ով:

Հետեւողական աշխատանքի ու մասնագիտական ներուժի նպատակային կիրառման շնորհիվ այս տարիների ընթացքում հաջողվել է մարզում զգալի ավելացնել գյուղմթերքների արտադրության ծավալները:

2004թ. համեմատ 2015 թվականին մարզում գրանցվել է գյուղատնտե-

սական մշակաբույսերի ցանքատարածությունների աճ. հացահատիկ եւ հատիկաղնդեղեն՝ 5483հա-ով, բանջարեղեն՝ 122հա-ով, պտուղ՝ 186.5հա-ով, ցրտահերկ՝ 1950հա-ով, աշնանացան՝ 3749հա-ով:

Վերջին տարիներին աստիճանաբար համալրվում է գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, ֆերմերներն ապահովվում են նորագույն տեխնիկայով:

2004թ. համեմատ ավելացել են հացահատիկահավաք մեքենաները՝ 16-ով, անվավոր տրակտորները՝ 117-ով, թրթուրավոր մեքենաները՝ 24-ով:

2004-2015թթ. մարզի սերմարտա-

դրող ֆերմերային տնտեսությունները մարզի գյուղացիական տնտեսություններին եւ հարեւան մարզերին հատկացրել են մոտ 1550 տոննա աշնանացան ցորենի սերմացու, 430 տոննա տարբեր ծավարեղեն, 250 տոննա պահածո, 3800լ գինի եւ հյութեր, 1050 տոննա պանիր:

2004-2015թթ. մարզից արտահանվել է 4500տ կարտոֆիլ, 6858տ կաղամբ, 4050տ աշնանացան ցորենի սերմացու, 920տ տարբեր տեսակի ծավարեղեն:

2015թ. գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում մարզի 16 համայնքի տրամադրվել է 33 անվավոր տրակտոր, 109 գյուղգործիք եւ ջրարբիացվել 47000հա արոտ, կառուցվել 13 կացարան, 17 փարախ, 67 խմոց:

Ծրագիրը կունենա շարունակական բնույթ եւ կընդգրկի մարզի եւս 11 համայնք:

Մարզպետի անմիջական ջանքերի շնորհիվ է նաեւ, որ հնարավոր եղավ 2004-2015թթ. շուկայականից էժան գներով մարզ ներկրել 14577 տոննա ազոտական, 15 տոննա ֆոսֆորական, 68 տոննա կալիումական պարարտանյութ, 3216846 լիտր դիզվառելիք, 15 տոննա առվույտի եւ 58,5 տոննա կորնզանի սերմացու, 8288 կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի, 10318կգ /Ռոդիֆակում-Ս/տեսակի եւ 9318կգ այլ տեսակի թունանյութ:

Մարզում առկա վեց ջրօգտագործող ընկերությունը ժամանակին եւ որակով կազմակերպել են ոռոգման սեզոնը: 2015թ. ոռոգվել է 1273հա հողատարածք, ինչը 2004թ. համեմատ ավելի է 129հա-ով:

Անասնաբուժական ծառայության հետ համատեղ վերահսկվել եւ համակարգվել են գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները:

Մարզում 2004թ. համեմատ գրանցվել է անասունների գլխաքանակի զգալի աճ: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 63321գլուխ /աճը՝ 73.6%/, մանրիները՝ 125664 գլուխ /աճը՝ 50.6%/, խոզերի գլխաքանակը՝ 12364 գլուխ /աճը՝ 32.8%/, թռչունները՝ 246844 թեւ /աճը՝ 40.8 %/, ավելի քան 29 հազարով ավելացել է մեղվաղնտանիքների քանակը:

Անհրաժեշտ ուշադրություն է դարձ-

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ. ԶԵՏԱԴԱՐՁ ԶԱՅԱՑՔ

վել բնության եւ շրջակա միջավայրի պահպանությանը, ցուցաբերվել աջակցություն բնապահպանական օրենսդրության կատարմանը, արգելանոցների եւ արգելավայրերի պահպանմանը եւ օգտագործմանը, ապահովվել համագործակցություն բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:

ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ Սյունիքի մարզպետարանի եւ գերմանական զարգացման բանկի միջեւ կնքված համաձայնագրի շրջանակներում 2012թ. սկսվել է «Շիկահողի կենսոլորտային արգելոցի հիմնադրման եւ շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» պիլոտային փուլը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8.25 մլն եվրո:

Անհրաժեշտ ուշադրություն է դարձվել նաեւ մարզի վարչական տարածքի սահմաններում սանիտարական մաքրման եւ աղբահանության աշխատանքներին:

2009-2015թթ. կառուցվել են 61 տիպային աղբավայրեր եւ կազմվել են սանիտարական մաքրման սխեմաներ:

Մարզի 44 հանքավայրի (12-ը՝ մետաղական, 32-ը՝ ոչ մետաղական) համար տրվել են ընդերքօգտագործման լիցենզիաներ, որոնցից ներկայումս շահագործվում է 30-ը /7-ը՝ մետաղական, 23-ը՝ ոչ մետաղական/: Բոլոր հանքօգտագործողներն ունեն հողատկայցման եւ ընդերքի օգտագործման համապատասխան փաստաթղթեր /լիցենզիաներ/:

Իր գործունեության ընթացքում թե իրեն վերապահված լիազորությունների, թե անձնական նախաձեռնությունների շնորհիվ Ս. Խաչատրյանի կողմից արվել է առավելագույնը մարզում նպաստավոր պայմաններ ստեղծելու, բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության որակի ապահովման եւ բարելավման, առավել արդյունավետ եւ մատչելի բուժօգնություն կազմակերպելու ուղղությամբ:

Եթե մինչեւ 2004թ. օրակարգում էր համակարգի պահպանման խնդիրը, ապա այսօր դրված է արդիականացած համակարգի միջոցով որակյալ բուժօժանայություններ մատուցելու հարցը: Զգալիորեն բարելավվել է առողջապահական ընկերությունների

ֆինանսատնտեսական վիճակը: Եթե 2004թ. համակարգի ընդհանուր կրեդիտորական պարտքը կազմում էր 212 մլն դրամ, իսկ նախկին տարիների չվճարված աշխատավարձի պարտքը՝ 158 մլն դրամ, ապա այսօր համակարգում չկան գոյացած պարտքեր:

2004-2016 թթ. ընթացքում Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում եւ այլ դոնոր կազմակերպությունների (մասնավորապես «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ) եւ մարզպետարանի մասնակցությամբ իրականացվել են. «Գորիսի ԲԿ» ՓԲԸ, «Կապանի ԲԿ» ՓԲԸ, Զաջարանի ԲԿ» ՓԲԸ հիվանդանոցային մասնաշենքերի վերակառուցման, «Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ նոր մասնաշենքի կառուցման, «Կապանի ԲԿ» ՓԲԸ մանկական ծառայության մասնաշենքի եւ «Սիսիանի ԲԿ» ՓԲԸ մասնակի հիմնանորոգման աշխատանքները: Նշված բժշկական կենտրոնները հիմնովին հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով, կահույքով: Վերանորոգվել են գրեթե բոլոր գյուղական բուժկետերը, կառուցվել են նոր գյուղական ամբուլատորիաներ, եւ մարզի առաջնային օղակի բուժաստատությունները հագեցվել են բժշկական սարքավորումներով, պարագաներով եւ կահույքով: Նշված ժամանակահատվածում կառուցվել է Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոնը, հիմնանորոգվել եւ հագեցվել են Տաթևի, Գորայքի, Անգեղակոթի ամբուլատորիաները:

2010թ. Գորիս քաղաքում շահագործվել է սրտաբանական կենտրոնը, ինչի շնորհիվ մարզի բնակիչների համար հասանելի են դարձել նորագույն բժշկական տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունները:

Միաժամանակ որոշ բուժաստատություններում ստեղծվել են նոր բաժանմունքներ եւ ծառայություններ, մասնավորապես՝ «Կապանի ԲԿ» եւ «Գորիսի ԲԿ» ՓԲ ընկերություններում բացվել են հեմոդիալիզի բաժանմունքներ, քիմիոթերապիայի ծառայություններ:

Մշտապես կարելուրդվել է երիտասարդ մասնագետներով բուժաստատությունների համալրման գործընթացը. նշված ժամանակահատվածում մարզպետի միջնորդությամբ պետական պատվերի շրջանակներում բժշկական համալսարանի 37 շրջանավարտ կլինիկական

օրդինատուրայի միջոցով վերապատրաստվել եւ ուսումն ավարտելուց հետո աշխատանքի են անցել մարզի տարբեր բուժաստատություններում: Ընտանեկան բժշկի մասնագիտացման ծրագրով մասնագիտացել են 68 բժիշկ եւ 157 բուժքույր:

Մարզի բուժաշխատողների մասնագիտական պատրաստվածության եւ որակավորման բարձրացման նպատակով իրականացվել են այլ բազմաթիվ կրթական ծրագրեր: Բուժաշխատողների ավելի քան 80 տոկոսն անվճար անցել է վերապատրաստման դասընթացներ:

Հաշվի առնելով Սյունիքի մարզի ռազմավարական նշանակությունը, ՀՀ կառավարությունը մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման հարցում մշտապես ունեցել է տարբերակված մոտեցում:

Այսպես, 2009թ. հունիսի 26-ին ՀՀ Սյունիքի մարզում կայացած ՀՀ կառավարության արտագնա նիստում առաջիններից մեկը հաստատվեց ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, 2014թ. փետրվարի 11-ին՝ 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:

Մարզի զարգացման ծրագիրը Սյունիքում նաեւ ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր եւ այլ կազմակերպություններին, գործարարներին, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց:

2010-2013թթ. մարզի զարգացման ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում էր ավելի քան 71.9 մլրդ դրամ, արտարժույթով նախատեսվող մարզի զարգացման ծրագրի ֆինանսավորման ծավալները՝ 437.9 մլն ԱՄՆ դոլար եւ 208.9 մլն եվրո: Համայնքների քառամյա ծրագրերով ոլորտային կապիտալ ծրագրերի ֆինանսավորման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 28.5 մլրդ դրամ:

2014-2017թթ. մարզի զարգացման ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում էր ավելի քան 88.9 մլրդ դրամ: Համայնքների քառամյա ծրագրերով, ըստ ոլորտների, կապիտալ ծրագրերի ֆինանսավորման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 27.5 մլրդ դրամ:

ՄԱՅԻՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ. ԴԵՏԱԴԱՐՁ ԴԱՅՆՑՔ

Համակողմանի ուշադրություն է դարձվել միջազգային և դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, նպատակային ծրագրերի իրականացմանը:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով անցած 12 տարվա ընթացքում տեղական և միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների, ինչպես նաև ֆինանսավորման այլ աղբյուրների միջոցով իրականացվել են ներդրումային, հումանիտար և վարկային ծրագրեր ավելի քան 62.1 մլրդ դրամ ընդհանուր արժեքով՝ ընդգրկելով մարզի գրեթե բոլոր համայնքները: Տարեցտարի ապահովվել է ներդրումների աճման տեմպ: Այսպես, 2004թ.-2 մլրդ, 2011թ.-12.4 մլրդ, 2015թ.-21.4 մլրդ, դրամ:

Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է մոտ 5,7 մլրդ դրամ:

Սյունիքում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակի հետ համատեղ կազմեց ՀՀ Սյունիքի մարզի տնտեսության դիվերսիֆիկացիայի ծրագիրը: Ծրագիրը բացահայտում է մարզի տնտեսության այն ճյուղերի զարգացման պոտենցիալը, որոնք թույլ են զարգացած կամ ընդհանրապես զարգացած չեն, և հնարավորություն է տալիս պոտենցիալ ներդրողներին իրականացնելու իրենց ծրագրերը մարզում: Մարզի դիվերսիֆիկացիայի ծրագիրը ներառում է 17 կոնկրետ ծրագիր՝ 13.8 մլրդ դրամ ընդհանուր արժեքով: ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվել է ծրագրի ամբողջական թարգմանություն անգլերեն և ռուսերեն՝ ծրագիրն արտասահմանյան ներդրողներին առավել հասանելի դարձնելու համար, կազմվել են ծրագրերից 4-ի մանրամասն բիզնես պլանները՝ նաև անգլերեն և ռուսերեն:

Մարզում առաջնային և կարելորագույն խնդիրներից մեկն է եղել և մնում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ տարվող

աշխատանքները որոշակիորեն նպաստել են զբաղվածության մակարդակի բարձրացմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, միջմարզային կոոպերացիայի ստեղծմանը, պետական և տեղական բյուջեների եկամուտների ավելացմանը և այլն:

Շարունակական լուծում են ստացել տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման խնդիրները:

Մարզի համայնքներում վարչական ու մասնագիտական ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու վարձակալության օպտիմալ եղանակների կիրառումը նպաստել են համայնքների բյուջեների հարստացմանը: Համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2015թ. բացարձակ աճը 2004թ. համեմատ կազմում է 1,23 մլրդ դրամ, կամ՝ 6.2 անգամ:

Համայնքներում կատարվել են վարչական հսկողության իրականացման ամենամյա աշխատանքային ծրագրերը: Նշված ծրագրերին համապատասխան, վարչական հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ղեկավարների՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների և համայնքների ավագանիների լիազորությունների իրականացման նկատմամբ:

2007թ. սկզբից մարզում ներդրվել է համայնքային ծառայության համակարգը, որը նպաստել է համայնքների ղեկավարների աշխատակազմերի՝ որակյալ կադրերով համալրմանը:

Մարզպետի հանձնարարությամբ կազմվել են մարզի 95 գյուղական համայնքի զարգացման անձնագրերը, որտեղ ներառվել են համայնքների պատմաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշները, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերում ընդգրկված առաջնային լուծում պահանջող հիմնախնդիրները:

Բոլոր համայնքներում ապահովվել են համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքները:

Լուծում է տրվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից

բարձրացված հարցերին, համապատասխան առաջարկություններ և միջնորդություններ ներկայացվել ՀՀ կառավարություն և նախարարություններ:

Նշված ժամանակում մարզպետի կողմից, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների հետ կապված, ՀՀ կառավարություն, նախարարություններ և կառավարությանն առընթեր մարմիններ են ներկայացվել 1780 առաջարկություն և միջնորդություն, որոնցից 1285-ը ստացել է լուծում:

Մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանների համաձայն մարզպետարանն օժանդակել է ամենամյա հրամանատարաշտաբային ուսումնավարժանքների կազմակերպման աշխատանքներին, որոնց արդյունքները ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի կողմից մշտապես բարձր են գնահատվել:

Որպես մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահ, մարզպետը հնարավոր աջակցություն է ցուցաբերել տարածքային զինկոմիսարիատներին, որպեսզի անցած 12 տարվա ընթացքում մշտապես գերակատարվեն տարեկան զորակոչային պլանները:

Չնայած նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ ձեռնարկված հետեւողական քայլերին, մարզում որպես գերակա հիմնախնդիր, շարունակում է մնալ գործազրկության մակարդակի իջեցման և բնակչության բարեկեցության աճի ապահովման խնդիրը:

Ընդհանուր առմամբ սա է այն հիմնականը, որ արվել է վերջին տասնմեկ տարում: Ասել, թե Սուրիկ Խաչատրյանի պաշտոնավարման օրոք լուծում են ստացել բոլոր հիմնախնդիրները, բնականաբար, ճիշտ չէ և նպատակ էլ չունենք որեւէ մեկին համոզել դրանում:

Բայց և կարող ենք պնդել, որ արվել է առավելագույնը ծագած խնդիրներին լուծում տալու ուղղությամբ, և որ այդ խնդիրների առաջնահերթության ընտրությունն ու լուծումը հաճախ պայմանավորված են եղել ոչ միայն դրանց հանրային նշանակության ընկալմամբ, այլև մարզպետի՝ սյունեցի մարզում զորավիզ լինելու պատրաստակամությամբ ու հաստատակամությամբ:



ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Մեր ժամանակի ընտրյալը



ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



ՎԼԲԵՐՏ ԻՍՈՅԱՆ

«Հայագիտակ» հրատարակչության հիմնադիր տնօրեն

Անցած դարավերջը եւ նոր դարասկիզբը բուռն հեղաբեկումների շրջան էին հայերիս համար, - ավերիչ երկրաշարժ, Խորհրդային Միության անկախատեսելի եւ ցավալի փլուզում, Հայաստանի վաղուց երազած անկախության հռչակում, շուտափույթ անցում թափփված սոցիալիզմից անհասկանալի կապիտալիզմի, պատերազմ հանուն լինելիության եւ Արցախի:

Պատմական այդ կարճ ժամանակաշրջանը պահանջում էր նոր, չնախատեսված մտածելակերպ, հարափոփոխ իրավիճակների ճշգրիտ ընկալում, նոր ժամանակների խառնալեզուն ըմբռնած նոր դերակատարներ:

Ասել է թե՛ ժամանակը հապշտապ սկսեց ծնել իր բարբերին ու իր պահանջներին համապատասխան հերոսներ ու ընտրյալներ:

Սուրեն Խաչատրյանն իր ժամանակի ընտրյալն է. նա կյանքի եւ պայքարի հորձանուտում եղել է մշտապես վճռական ու համարձակ, բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվող, հատկա-

նիշներ, որոնք թույլ չեն տալիս երկիրը վերածվելու անիշխանության ու քաոսի:

Այդ ծանրագույն եւ արագացված պայմաններում նախեսառաջ հարկավոր էր լինել անվեհեր զինվոր ու մարտիկ, գիտակցել, որ երկրի ճակատագիրը ոչ միայն ընդհանուրի համախմբվածության մեջ է, այլև անհատապես քո անձի մեջ է: Պատերազմը մեծ դպրոց ու համալսարան է թե՛ մասնակցի եւ թե՛ թիկունքում ապրողների համար. այդտեղ է թրծվում արմատական մարդ եւ առավել եւս՝ արմատական հայ լինելու գաղափարը: Պատերազմը շատերի պես կոփեց եւ ձեւավորեց նաեւ Սուրեն Խաչատրյանին, - նրան դարձրեց ավելի համարձակ ու վճռական, անզիջում. եւ, թող թույլ տրվի ասել, նաեւ իր սեփական կամքը թելադրող կառավարելի եւ անկառավարելի շրջապատին:

Պատերազմից առավել ծանր ու տեսական է վերափոխվող երկրի շինությունը, - հանրային սեփականությունից մասնավորին անցնելու դժվարին ու չափազանց վիճելի ընթացքը, որը պահան-

ջում էր ոչ միայն կամք ու վճռականություն, այլև հասարակարգերի ծագման եւ առաջացման իմացություն. ահա այս շրջանում ի հայտ եկան Սուրեն Խաչատրյանի՝ ղեկավարելու եւ կառավարելու որակները: Այդ կառավարումը հղի էր ոչ միայն ձեռքբերումներով ու վերընթաց հաջողություններով, այլև բնականոն, ակներե դժվարություններով ու ձախողումներով...

Մենք Սուրեն Խաչատրյանին ճանաչում ենք որպես գրի ու մշակույթի նվիրյալի, գիտակի ու հովանավորի, ինչպես նաեւ մի գործչի, ով ճանաչում է հայ դասական մարդ արարածի արմատական հատկանիշները՝ լինել մշակույթի, գիտության ջատագով, քո մեջ կրել տարածքը երկիր դարձնող որակները, - վայելքի, փառքի, իշխանության քաղցր ու փշոտ ճանապարհին չտրվել մակերեսային հայրենասիրության, լինել խորքային հավատավոր:

Սուրեն Խաչատրյանի անմիջական հովանավորությամբ եւ առաջաբանով «Հայագիտակ» հրատարակչությունը լույս է ընծայել մեծ հայագետ Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» կոթողային հատորը, հայ արձակի մեծ բանաստեղծ Ակսել Բակուցի «Ընտրանի» «Գիր» դասական մատենաշարով, հայ մեծ պատմաբան Նիկողայոս Ադունցի մեծարժեք ժողովածուն, Հրանտ Արմենի «Փռանձեռն» բացառիկ ուսումնասիրությունը: Նրա հովանավորությամբ ժամանակակից հայերենի է վերածվել Ղ. Ալիշանի «Սիսականը», որը լույս կտեսնի առաջիկայում:

Անուրանալի է Սուրեն Խաչատրյանի անշահախնդիր վերաբերմունքը հրատարակչական գործի եւ հրատարակիչների հանդեպ, - երբ երկու տարի առաջ Մոսկվայում մեծ տպաքանակով ռուսերեն վերահրատարակվեց Ա. Իսոյանի կազմած «Սեւ գիրքը» ՌԴ նախկին գլխավոր դատախազ Յու. Սկուրատովի հովանավորությամբ, Սուրեն Խաչատրյանը ոչ միայն հոգաց հայկական պատվիրակության ծախսերը, այլև իր մասնակցությունը բերեց թուրքական ոճիրները եւ Հայոց մեծ եղեռնը ներկայացնող գրքի հանդիսություններին...

Մենք ջերմորեն շնորհավորում ենք հայրենամակեր գործչի, մեր երդվյալ ընկերոջ ծննդյան 60-ամյակը եւ մաղթում Սյունիքը գլխավորելու քաջություն ու կամք:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Թող Աստված բարի՛ն կապարի...



ԴԱՎԻԹ ՎԱՍՊՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

առաջին իսկ տարիներից Գորիսի հետ կապը շարունակվեց Բակունցի ծննդյան օրերի ամենամյա տոնակատարություններով, որ զուգակցվում էր նաև Գորիսի օրվա հետ:

Հանդիսությունն սկսվում էր Բակունցի տուն-թանգարանից եւ հյուրընկալ գորիսեցիների առատ սեղանների միջով շարունակվում դեպի հրապարակ, որտեղ Բակունցի արձանն էր: Ծաղիկներ գրողի հուշարձանին, ելույթներ, ինչին հաջորդում էին խնջույքի սեղանները, որտեղ խոսք ու զրույցի առարկան Բակունցն էր, Չարենցն էր, Մահարին էր, գրականությունն ու մշակույթը:

II *Բակունցի շուրջ համախմբվելու այս հրաշալի ավանդույթը հիմնադրեց Սուրեն Խաչատրյանը, որ շարունակվում է նաև այսօր:*

1999-ի սկզբին բաց նամակով (տես «Հայաստանի Հանրապետություն», 1999, թիվ 4, 12 հունվարի) դիմեցի ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ ըստ արժանվույն նշելու մեծ գրողի 100-ամյա հոբելյանը, ստեղծելու հանձնաժողով եւ անելու կազմակերպական ու հրատարակչական անհրաժեշտ քայլեր: Հոբելյանը նշվեց Գորիսում ու Երեւանում եւ նշվեց փառահեղ:

Կազմակերպական գործերի կենտրոնում մարզպետ Սուրեն Խաչատրյանն էր: Ամեն ինչ պայմանավորված էր նրանով: Հաջորդեց նրա նախաձեռնությամբ տուն-թանգարանի բակում կանգնեցված բազալտակոլոմ աղբյուր-խաչքարը, ավելի ուշ՝ նաև գրողի դիմաքանդակը: Բակունցի հիշատակը նոր կերպարանք

էր առնում:

Հաճախակի այցելությունները, հանդիպումները, կապն ու մտերմությունն առիթ դարձան արդեն իսկ Բակունցի ծննդյան 110-ամյակի կապակցությամբ բաց նամակով դիմելու մարզպետին (տես «Գրական թերթ», 2008, թիվ 24, 4 հունիսի): Առաջարկում էի՝ գտնել Բակունցի գերեզմանը, գնալ «Խաչատուր Աբովյան» վեպի ամբողջական տարբերակը գտնելու հետքերով, հայտնաբերել «Հայկական մանրէ» երգի-ծական վիպակը, հիմնանորոգել Գորիսի տուն-թանգարանը, կազմակերպել ամենամյա բակունցյան ընթերցումներ, տպագրության պատրաստել գրողի «Երկերի ժողովածու»-ի 5-րդ հատորը՝ որպես լրացում քառահատորյակի:

II *Շատ բան արվեց, ինչ էլ չարվեց՝ դեռ կհասցնենք անել, բայց Բակունցի գերեզմանի որոնման հարցը չլուծվեց, որովհետև համապատասխան ծառայությունն անհրաժեշտ փաստաթղթեր չէր գտել, ուստի էլ չէր տրամադրել մարզպետին:*

Այն, ինչ հեռվում էի որոնում, գտա շատ մոտիկ տարածության վրա: Հուշողը Գուրգեն Մահարին էր, ով Բակունցին գնդակահարած եռյակի անդամներից մեկի՝ բանտապետ, հետագայում կալանավորված ու գնդակահարված Մահակ Ասլանովի անունից ասաց, որ մեծ գրողին գնդակահարել են Երեւանի Թոխմախ լճի տարածքում:

Հիմա արդեն Բակունցի գնդակահարության վայրը գիտենք, պիտի գտնենք ճիշտ տեղը, զուցե եւ հայտնաբերենք նրա ու մյուս նահատակների աճյունները եւ մի ազդեցիկ հուշակոթող կանգնեցնենք՝ ի նշան 1937 թվականի բոլոր զոհերի հիշատակի: Չմոռանանք՝ 1937 թվականի օգոստոսի 9-ը մեր ժողովրդի համար նույնն է, ինչ 1915-ի ապրիլի 24-ը: Ինչպես ապրիլի 24-ին, այնպես եւ օգոստոսի 9-ին ձերբակալեցին եւ բանտերը նետեցին հայ ժողովրդի արժանավոր ներկայացուցիչներին, ամբողջ մտավոր սերունդը: Մի դեպքում երիտթուրքերն էին, մեկ այլ դեպքում՝ երիտբոլշևիկները:

Բակունցը պահանջում է...
Պատմությունը պահանջում է...

Գորիսի հետ իմ կապն սկսվեց տեղի «Տաթև» համալսարանում դասախոսություններով: Պատերազմը նոր էր ավարտվել. պատուհանների գոգերին պաշտպանական ավազապարկեր էին, շենքերի վրա, այդ թվում եկեղեցու պատերին՝ ռմբակոծությունների հետքեր: Դժվար ժամանակներ էին:

Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում մնում էի մինչեւ տասը օր եւ խիտ ծրագրով ու ժամանակացույցով վարում հայ գրականության պատմության դասընթացը:

Ազատ ժամերին շրջում էի Գորիսում, հանդիպում տեղի գրական-մշակութային մարդկանց հետ, այցելում հնավայրեր: Ավելի շատ լինում էի Ակսել Բակունցի տուն-թանգարանում, որ ասես հանդիպումների վայր լիներ:

Սուրեն Խաչատրյանի քաղաքապետության, այնուհետև մարզպետության

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

1937-ի հուշակոթողը պետք է կանգնեցվի...

Ահա, Բակունցի ծննդյան 110-ամյակի առիթով մարզպետի անմիջական հովանավորությամբ տպագրվեցին գրքեր, այդ թվում՝ իմ «Ավսել Բակունց: Կյանքը եւ ստեղծագործությունը» մենագրությունը: Գրքում ոչ միայն Բակունցի կյանքն է ու գործունեությունը, այլև նրա անտիպ բազմաթիվ կարեւոր նյութեր են, ինչպես նաեւ ամբողջ դատական գործը:

II *Ի՞նչ սիրով մարզպետը կազմակերպեց իմ այս եւ բակունցյան այլ հրատարակությունների շնորհանդեսները: Մեծի հիշատակին, գրի ու գրքի հանդեպ նրա լուռ ոգեւորությունն ակնհայտ էր...*

Բայց միայն Բակունցը չէ նրա հետաքրքրությունների ոլորտում, այլև ամբողջ Սյունիքի արվեստն ու մշակույթը: Այդ տեսադաշտում ծնվեց իմ «Գրական Գորիս» ծավալուն ուսումնասիրությունը, որ տեղ գտավ քաղաքի 140-ամյակին նվիրված «Սյունյաց երկիր» թերթի հոբելյանական համարում (2011, թիվ 10, մայիս): Ծնվեցին նաեւ Զամո Սահյանին, Սերո Խանգադյանին եւ այլոց նվիրված հոդվածները:

Դեռեւս 2003 թվականին լույս էր տեսել իմ «Զամո Սահյան: Կյանքը եւ ստեղծագործությունը» մենագրությունը: Եվ ահա, Սահյանի ծննդյան 99-ամյակի նախօրյակին, մարզպետը զանգահարեց.

- Տնտեսագիտության ինստիտուտի ուսանողները կարդացել են քո «Զամո Սահյան» գիրքը եւ ցանկություն են հայտնել հանդիպել հեղինակի հետ: Ես խոստացել եմ կազմակերպել հանդիպումը: Վաղը եկ Գորիս:

Վաղը, այսինքն՝ 2013 թ. ապրիլի 13-ին մեկնեցի Գորիս: Ուսանողներն իրենց դասախոսների հետ ժամանել էին մի մեծ ավտոբուսով եւ այլ մեքենաներով: Հինգ-վեց տասնյակի չափ պայծառ երիտասարդներ էին:

Հանդիպումը միանգամից տեղի ունեցավ մի մեծ սրահում, հացի սեղանների շուրջ: Ուսանողներից մեկը ելույթի մեջ ասաց.

- Այդ գրքում շատ հզոր էներգետիկա կա, ուզում էինք Ձեզ հանդիպել եւ գրուցել Զամո Սահյանի անձի ու գործի շուրջ: Ինձ ուղղվեցին հարցեր եւ հաջոր-



դեցին պատասխաններ: Ուսանողների հարցերը շատ բովանդակային էին: Պարզ երեւում էր, որ սիրում են Զամո Սահյանի պոեզիան եւ իմ գիրքը լավ կարդացել են: Նաեւ արտասանում էին Սահյանի բանաստեղծությունները, կատարում նրա խոսքերով գրված երգեր: Օրը Զամո Սահյանին էր՝ Թունանյանի, Բակունցի գործը շարունակող մեծ սյունեցունը:

Հաջորդ օրը տնկատարությունը շարունակվեց Սիսիանում՝ Զամո Սահյանի արձանի շուրջ: Հոծ բազմություն էր:

Եկել էր նաեւ տնտեսագիտության ինստիտուտի ռեկտորը: Ելույթներ ու մեծաբանքներ մեծ սյունեցուն: Խոսեցի նաեւ եւ ու պնդեցի իմ տեսակետը՝ Զամո Սահյանի տեղը Հովհաննես Թունանյանի կողքին է...

Հանդիսությունը շարունակվեց նաեւ հավաքից հետո: Սյունեցիների դեմքին հպարտության բերկրանք էր:

Նայում էի մարզպետին, ով դեկավարում էր արարողությունը, եւ տեսնում նրա ոգեւորությունը: Բանաստեղծը, ընթերցողը, գիրքը, գրականությունը միասին էին եւ ոգելից վիճակում:

Եվ հանկարծ մարզպետը դարձավ ինձ.

- Այս տարի լրանում է Գուրգեն Մահարու ծննդյան 100-ամյակը: Ի՞նչ ես մտածում: Մահարին Բակունցի, Չարենցի ընկերն էր, Սահյանին շատ բարձր գնահատողը: Վաղը՝ Մահարու ծննդավայրը, դեռեւս հեռու է, իսկ Գորիսը՝ մոտ: Արժե՛, որ Մահարու հոբելյանը լավ նշվի:

Պատասխանեցի, որ ավարտում եմ «Գուրգեն Մահարի: Կյանքը եւ ստեղծագործությունը» մենագրությունը:

Միանգամից ասաց.

- Հաշվիր, որ գրքի տպագրության ծախսը վաղը եւեթ կփոխանցենք հրատարակչություն:

Եվ փոխանցեց:

«Գուրգեն Մահարի» մենագրությունը տպագրվեց «XX դար: Հայ գրողներ» մատենաշարով՝ որպես մի գրական հուշարձան եւ արժանացավ Վահան Թեքեյան մշակութային միության մրցանակի:

Մարզպետին եւ տեսել եմ այս կարգի բազմաթիվ հանդիպումների ու միջոցառումների ժամանակ եւ գնահատել նրա նվիրվածությունն իր տարածաշրջանի գրական, գիտական, մշակութային դեմքերին: Իսկ դա դեկավարի համար ամենեւեւ էլ անկարելի էր բան չէ:

Տարիների ընթացքում եւ ճանաչել եմ այն նկարագրի մարզպետին:

Կյանքը լի է բազմաթիվ լավ եւ վատ անակնկալներով, հաճելի եւ վանող լուրերով: Այս քառսի մեջ պետք է նախ լավը տեսնենք, լավը գնահատենք, որպեսզի կրճատվեն չարի ու չարիքի սահմանները: Թող Աստված բարին կատարի...

Ահա այդ զգացողությամբ շնորհավորում եմ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի ծննդյան 60-ամյակը եւ մաղթում մեր հայրենիքը շենացնելու արդյունավետ գործունեություն: ■

ՎԿՆԱԾԱԼԻ ՔԱՆՉԱՏԱԿԱՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ՍԵԾԵՐԻՆ

Նրա փառքի լուսապսակը երբեք չի խամրի

Ամեն անգամ, երբ հայացք ենք ձգում դեպի Սյունյաց աշխարհի պատմական անցյալը, դարերի երկնականարում փայլատակող բազում-բազմաթիվ աստղերի մեջ ակնհայտորեն երեւում է առավել խոշոր մի լուսատու՝ յոթնալույս մի մեծություն: Դա Գրիգոր Տաթևացին է, որ ահա վեց դար շարունակ լուսավորում է մեր ընթացքը եւ, անտարակույս, դեռ լույս ու ջերմություն է սփռելու մեր անցնելիք ճանապարհին: Իհարկե, Գրիգոր Տաթևացին համազգային, ինչ-որ առումով համամարդկային երեւոյթ է, որքան էլ նրա կյանքն ու գործունեությունը կապված են Սյունիքի, մասնավորապես Տաթևի հետ, որքան էլ այդ երեւոյթը քննենք տեղական ինչ-ինչ չափանիշներից ելնելով նաեւ: Ու եթե փորձենք մի պահ մտովի ուրվագծել բոլոր ժամանակների հայոց մեծերի բույլը, ապա կտեսնենք, որ նրանում հավիտենական իր տեղն ունի Սուրբ Գրիգոր Տաթևացին: Ավաճճ, անշուշտ, չափազանցություն չէ: Դրանում կարելի է հանգստանալ ամեն անգամ, երբ հաղորդվում ենք փիլիսոփայական մտքին, աստվածաբանությանը, մանկավարժությանը, մեկնողական գրականությանը, բժշկագիտությանը, մանրանկարչությանը, մի շարք այլ գիտությունների:

Գրիգոր Տաթևացու կերպարը նորովի է փայլում ու վեհորեն բարձրանում երիցս, երբ հիշում ենք, թե պատմական ինչպիսի ժամանակներում է ինքը գործել: Չդադարող պատերազմների, ասպատակությունների պայմաններում նրա գլխավորած տաթևյան դպրոցը

գրչի, մտքի եւ հավատի գործընթացն արեց այն, ինչը չէր կարող անել որեւէ զինական ուժ, թեեւ վերջինս էլ արձանագրեց հերոսական շատ ու անմոռանալի դրվագներ:

II Այն, ինչ Տաթևացին արեց Յայ առաքելական եկեղեցու միասնության վերականգնման, մեր դավանանքի անաղարտության պահպանման, կաթոլիկ եկեղեցու գրոհները կասեցնելու ուղղությամբ, անչափելի է ու հիացմունքի արժանի: Դարերի հեռվից անգամ տեսանելի է,



թե պետականություն չունեցող հայ ժողովրդի համար ինչ էր նշանակում Մայր աթոռը Սուրբ Էջմիածին վերադարձնելը:

Պատմության կամոք հայոց մեջ Սյունիքի վարդապետարանին էր վերապահված «գիտությունների աղբյուրի» դերը: Տաթևացուց մոտ մեկ դար առաջ

էր մեր հանճարեղ պատմիչ Ստեփանոսն արձանագրել Սյունյաց վարդապետարանի մասին. «Յայաստանի բոլոր գիտությունների գլխավոր տեղն էր, որտեղ գտնվող դպրոցները ծաղկած էին: Չէ՞ որ ինչպես աթենական դպրոցներն էին հռոմեականների մեջ փարթամացած եւ գիտությունների մայր հռչակված իսպանացիների աշխարհում...», այնպես էլ այսօր՝ Թորգոմյան տանը՝ մեր հայոց աշխարհում»: Գրիգոր Տաթևացու օրերում սյունիքյան դպրոցը հասավ մի նոր՝ աննախադեպ բարձունքի:

Սյունիքում մշտապես ու հպարտությամբ են հիշում, որ Գրիգոր Տաթևացին հիմնականում գործել է այստեղ եւ մասնավորապես Տաթևում: Մշտապես հիշում ենք, որ նա ամփոփված է տաթևյան սրբազան հողում, եւ նրա շիրմին բոլոր առիթներով աղոթքի ենք գնում: Դա հավելյալ պարտավորություն է մեզ համար՝ նրա հիշատակը վառ պահելու, նրա գիտական ժառանգությունն աճող սերնդին հետևողականորեն հասցնելու հարցերում: Այնպես որ՝ Գրիգոր Տաթևացու հուշարձանը երբեւէ պետք է հառնեք Գորիսի կենտրոնում: Եվ մեծագույն պատիվ է ժամանակակիցներիս համար, որ հենց մեզ վիճակվեց այդ խնդրի լուծումը:

Վստահ եմ, որ Գրիգոր Տաթևացու անունը կրող հրապարակը, որտեղ վեհորեն կհաննի նրա հուշարձանը, կդառնա գորիսեցիների սիրելի վայրը: Վստահ եմ նաեւ, որ Գրիգոր Տաթևացու քարե ներկայությանն առնչվելիս ամեն անգամ յուրաքանչյուրիս մեջ նորովի կարթնանան մեր պետության, Յայ առաքելական եկեղեցու հանդեպ մեր որդիական սիրո ամենաջերմ զգացումները:

Ուրեմն՝ թող հավերժի սուրբ Գրիգոր Տաթևացու ոգեղեն ներկայությունը հայոց աշխարհում, թող հավիտենական լույսի աշխարհից մշտապես հորդի նրա աղոթքն ու օրհնությունը՝ հայ ժողովրդի, հայոց պետության հզորացման ու հարատեւման համար:

Սուրեն Խաչատրյան
Սյունիքի մարզպետ,
«Այունյաց երկիր»,
2010թ., N16 (213)

ՎԿԱԾԱԼԻ ԳՆԱՅԱՏԱԿԱՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵԾԵՐԻՆ

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի խոսքը Ակսել Բակունցի 110-ամյակի կապակցությամբ

Որքան գնում, այնքան անհուն էի ջերմ ենք խոնարհվում հայ արծակի խոշորագույն վարպետ Ակսել Բակունցի անվան եւ անզուգական արվեստի առջեւ: Որքան գնում, այնքան շատ ու այնքան հաճախ ենք դիմում նրա զորացնող արվեստին ու մեր ընթացքը չափում-ստուգում նրա երազներով, հզոր Հայաստանի մասին նրա պատկերացումներով: Իսկ նրա ծննդյան օրը շատ վաղուց արդեն մեր օրացույցի վրա ընդգծված տեղ ունի՝ հիշարժան օրվա, տոնական օրվա կարգավիճակ: Պատահական չէ ամենեւին, որ ամեն տարվա հունիսի 13-ին նրա բնօրրան Գորիսում մարդիկ շնորհավորում են միմյանց, խոնարհվում նրա հիշատակի առջեւ, աղոթք առաքում առ Աստված՝ մեր երկրի շենացման, մեր ժողովրդի լինելիության համար:

Իրավացի էին մեր մեծերը, երբ առաքյալ էին համարում Ակսել Բակունցին, մեր մշակույթի զորավար: Գոնե հիմա կարող ենք ստույգ ասել՝ հենց Ակսել Բակունց առաքյալի, զորավարի առաջնորդությամբ է նաեւ մեզ հաջողվել, որ հոգեւոր-մշակութային առայսօր շարունակվող պատերազմում երբեք չպարտվենք: Եվ հոգեւոր-մշակութային այդ հաղթանակներն են հետո բերել հայ գինականի հաղթանակը, ապահովել մեր լինելիության առհավատչյան, վերականգնել կորսված մեր պետականությունը:

Ճակատագիրը շատ քիչ ժամանակ հատկացրեց Բակունցին՝ ստեղծագործելու համար: Գրական աշխարհում նա հասակ առավ առասպելական հերոսի պես եւ կարողացավ ավելի քան հարյուր գեղարվեստական ստեղծագործություններից բաղկացած ժառանգությունն թողնել սերունդներին, որից մոտ քսանը՝ գլուխգործոցներ: Հենց



այդ ստեղծագործությունների շնորհիվ էլ ժողովուրդը սրբագործեց մի ոսկյա առասպել Բակունցի մասին ու նրան տեղ տվեց հայոց պատմության պատգամախոսների շարքում:

Ուզում եմ օգտվել այս առիթից եւ նշել, որ մենք մեծ պարտք ունենք Ակսել Բակունցին ու բակունցագիտությանը: Մասնավորապես պիտի կարողանանք գտնել Բակունցի գերեզմանն ու գրական ժառանգության կորսված մասը, պիտի մինչեւ վերջ վերականգնենք ստալինյան վարչակարգի կամայականությունների հետեւանքով նրա խամրած փայլն ու փոխանցենք սերունդներին:

110 տարի է մեզ բաժանում Բակունցի ծննդից, 72 տարի՝ նրա ողբերգական մահից, բայց միշտ, ինչպես առաջին ալպիական ծաղիկը, թարմ ու բուրավետ է նրա վաստակը...

«Սյունյաց երկիր»,
N13 (185), 2009թ.

Եվս մեկը Սյունյաց աշխարհի երեւելիներից

Սյունիքում անանց հիացունով ու երախտագիտությամբ ենք հիշում մեր լեռնաշխարհի բարի ծնունդ Սորոս Հասրաթյանին:

Նրան՝ իր գիտական ժառանգությամբ, այսօր էլ տեսնում ենք հայ ժողովրդի պատմության, հնագիտության, մանկավարժության, ճարտարապետության պատմության եւ բանասիրության ամենատարբեր ոլորտներում: Եվ, բարեբախտաբար, բազում հարցերի վերաբերյալ նրա ուսումնասիրությունները կամ հետազոտություններն ուշագրավ են, վերստին ընթերցելու եւ քննարկելու արժանի:

Բայց, անկեղծ լինեմ, առավել հետաքրքրությամբ ընթերցում եմ Սյունյաց աշխարհին նվիրված նրա գործերը եւ հատկապես «Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը», «Որտե՞ղ է թաղված Վարդան Մամիկոնյանը», «Սյունիքի բնակավայրերի պատմությունից», «Հնագիտական հետազոտություններ Սիսիանում» եւ մյուս մենագրությունները՝ մեր երկրամասի անցյալը վերծանող:

Այդ ուսումնասիրություններում եւ հողվածներում անկարելի է չտեսնել այն ջերմ ու անկեղծ սերը, որ կա հայրենի եզերքի՝ Սյունյաց աշխարհի հանդեպ:

Սյուն կողմից՝ հնարավոր չէ Սյունիքի բազմադարյա պատմության մասին ամբողջական ու հավաստի խոսք ասել՝ առանց Սորոս Հասրաթյանի գիտական ժառանգության իմացության, ինչն արդեն իսկ վկայում է թողած հետազոծի մնայնության մասին:

Ուշադրության արժանի է մեր լեռնաշխարհի երկու՝ Սյունի եւ Սիսական անունների հասրաթյանական բացատրությունը, դրանում նշանավոր շատ պատմաբաններին հակադրվելը:

ԱԿՆԱԾԱԼԻ ՔԱՆՉԱՏԱԿԱՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵԾԵՐԻՆ

ուսումնասիրվեցին ու հիմնավորվեցին:

Տարեց այունեցիները հիշում են, որ Մորուս Գասրաբյանը, հայրենի երկրամասում լինելիս, առաձնահատուկ վերաբերմունք էր ունենում մեր անցյալի ամեն մի հուշարձանի, խաչքարի հանդեպ եւ դրանցից յուրաքանչյուրն ընկալում էր իբրեւ շնչավոր ու ոգեղեն երեւոյթ: Ամեն մի տապանաքարի, ավերակ մատուռի, վիմագիր հիշատակարանի, հնամյա տաճարի մեջ տեսնում էր հայ ստեղծագործ մտքի փայլատակունը, դարերի ոտնահետքն ու հեւքը... Եվ պատահական չէ ամենեւին, որ նրա մահվանից (1979թ.) տասնամյակներ անց նույնպէս մեր պատմության բազում հիշատակներ, նյութական ու հոգեւոր մշակույթի շատ հուշարձաններ շարունակում ենք ճանաչել ըստ Մորուս Գասրաբյանի ներկայացրածի, այդ թվում՝ աստվածասկիզբ Ծիծեռնավանքը, Գորիսի եւ Սիսիանի, ինչպէս եւ հանրապետության մի շարք տարածաշրջանների հուշարձաններ:



Միշտ էլ հպարտացել եմ, որ իմ հայրենակիցը մեծ ու անկրկնելի է սայաքնովագիտության մեջ: Եվ նրա պատկառելի ներդրումը, ստուգապէս, ոչ միայն Մորուս Գասրաբյանի, այլեւ հայ բանահյուսության ակնառու նվաճումներից է:

Մորուս Գասրաբյանը յուրօրինակ մի կամուրջ էր (եւ շարունակում է այդպիսին մնալ) հայագիտության բազմերախտ մեծերին նոր սերնդին կապող, նրանց ազնիվ ավանդը նոր եկողներին փոխանցող: Նկատի ունեն Մանուկ Աբեղյանին, Լեոյին, Նիկողայոս Մառին, Գրայա Աճառյանին, Գալոբ Մանանդյանին, Գովսեփ Օրբելուն, Արսեն Տերտերյանին: Նկատի ունեն, անշուշտ, աշխարհահռչակ Նիկողայոս Աղոնցին, ում առաջադրած գիտական որոշ դրույթներ՝ հատկապէս «Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ» մեծագործությունում, նոր խորությամբ

Ստացվել է այնպէս, որ մինչեւ հիմա ըստ պատշաճի չի հավերժացվել ականավոր գիտնականի, մեծ սյունեցու հիշատակը: Մինչեւ հիմա նրա գիտական ժառանգությունն ամբողջապէս չի դրվել ընթերցողի սեղանին: Այնպէս որ անելիքներ ունենք այդ ուղղությամբ: Եւ առաջին քայլը, կարծում եմ, պետք է լինի Մորուս Գասրաբյանին նվիրված գիտաժողովի կազմակերպումը Սիսիանում, որի ընթացքում ցանկալի կլիներ ծանոթանալ նրա անտիպներին եւս:

Իսկ մինչ այդ խոնարհվենք բազմաշնորհ, ինքնատիպ ու լայնախոհ գիտնականի, Մորուս Գասրաբյան անընդգրկելի երեւոյթի հիշատակի առջեւ եւ գոհություն մատուցենք Բարձրյալին, որ Սյունյաց բարբեր արգանդն այդպիսի անհատականություն է պարգեւել հայ ժողովրդին:

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ
«Այսօրվա Երկիր», N20 (396), 2016թ.

Օրինյալ եղիցի ժամ գալստյան քո

Հեռավոր 1935-ին Տաթև գյուղում ուսուցչություն էր անում Սերո Խանգադյանը: Հասցրել էր ճանաչելի դառնալ, երբ, օրերից մի օր, նրա կիսամութ սենյակ է մտնում գյուղի մեծ մամեն՝ մի մեռն մասունք տատիկ, եւ խաչակնքելով ասում. «Օրինյալ եղիցի ժամ գալստյան քո»: Ապա ավելացնում. «Գրով շենամա տունը Հայոց» եւ Սերո Խանգադյանին մեկնում մի ձեռագիր մատյան...

Տատի խոսքերը, կարծես, ողջ հայ ժողովրդի անունից էին հնչում եւ, ասես, ողջերթի խոսքեր էին սկսնակ գրողին: Հարյուր տարի անց վերստին հանդգնում ենք, որ Սերո Խանգադյանի հայտնությունը հայոց հոգեւոր-մշակութային անդաստանում նվիրագործված երեւոյթ է եղել:

Եվ հարյուր տարի անց կրկնում ենք մեռն-մասունք այդ տատի խոսքերը. «Օրինյալ եղիցի ժամ գալստյան քո»:

Ես ուրախ եմ եւ հպարտ, որ կարողացել եմ (ճակատագրի կամոք) գրողի կյանքի վերջին շրջանում լինել նրա մտերիմների ու մերձավորների թվում, արժանանալ նրան ընկեր ու բարեկամ լինելու պատվին՝ չնայած մեր տարիքային մեծ տարբերությանը:

Բավարարված եմ, որ նրա մահվանից հետո վերջ դրեցինք գրողի մայրաքաղաքային ու գորիսյան առանձնատների շուրջ ծագած անորոշություններին, իսկ Գորիսի առանձնատունը դարձրինք տուն-թանգարան, որ ներկայումս հիմնանորոգվում է:

Ուրախ եւ հպարտ եմ նաեւ, որ Գորիսում հավերժացրինք նրա հիշատակը՝ քաղաքի փողոցներից մեկը եւ թիվ 6 հանրակրթական դպրոցը կոչելով գրողի անվամբ, որի բակում, մեր ժամանակի

ՎԿԱԾԱԼԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵԾԵՐԻՆ

լավագույն քանդակագործներից մեկի՝ Գետիկ Բաղդասարյանի ձեռամբ, կանգնեցվեց հայ ժողովրդի նշանավոր գավակի կիսանդրին:

Գիտակցում ենք, միաժամանակ, որ անելիք ունենք գրողի մայրաքաղաքային առանձնատան նպատակային օգտագործման, գրողի հիշատակի հավերժացումն ավարտին հասցնելու, անտիպները տպագրելու, իսկ լավագույն ստեղծագործությունները վերահրատարակելու, գրական ամբողջ ժառանգությունը վերագնահատելու եւ նորովի արժեւորելու ուղղությամբ:



«Մատյան եղելության» վեպը, որի մեջ բախում-ցյան նրբագեղությամբ մարմնավորված է պատերազմական եւ հետպատերազմյան շրջանի Գորիսը՝ իր մարդկանցով, ճակատագրերով ու անկրկնելի գույներով:

Նրա նվիրական երազն Արցախն ու Նախիջեւանն ազատագրված տեսնելն էր: Եվ իր ազգային, հասարակական-քաղաքական գործունեության հիմնական ուղղություններին հենց այդ էր:

Արցախյան հերոսամարտի օրերին հասցրեց ընթերցողին ներկայացնել «Անդրանիկ» (1989թ.), «Շուշի» (1991թ.), «Նժդեհ» (1993թ.) վեպերը՝ կրկին ոգեկոչելով ազգային ոգին ու կերտվածքը, վերստին քաջալերելով պատերազմ մեկնող հայ ազատամարտիկներին:

Սերո Խանգաղյանն իր հավերժական հանգստարանը գտավ հայոց մեծերի պանթեոնում, սակայն նրա արմատներն ու հոգին մնացին մեր լեռնաշխարհում, բայց ոչ իբրեւ անցյալ, ոչ իբրեւ հուշ, այլ հայոց հողն ու ազգը գորացնող ներկայություն:

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ
«Սյունյաց երկիր»,
N32 (374), 2015թ.

II *Գրողի հորեյանը հետադարձ հայացքի առիթ է տալիս, եւ այսօր, մտովի թերթելով Ս.Խանգաղյանի վաստակի լավագույն էջերը, դժվար է չհիանալ նրա մտքի ընդգրկումների կայունությամբ, չսքանչանալ նրա ստեղծած գրական հերոսների պատկերասրահով:*

Նրա պատկերացմամբ՝ գրականությունը մարդու համար է եւ կոչված է նրան բարձրացնելու, հավատ ներշնչելու դեպի սեփական եությունը: Նման գիտակցումով էլ ստեղծագործեց մինչեւ կյանքի վերջը եւ մնաց հայ գրականության առաջին շարքում:

Սերո Խանգաղյանը մեր հողի եւ ժողովրդի կենսագիրն էր ու համարձակություն ունեցավ միշտ էլ ձեռք զարկել իրականության շիկացած հարցերին:

Իրավացի էր Համո Սահյանը, երբ ասում էր՝ Սերո Խանգաղյանը քայլով պատմություն է: Եվ նա ժողովրդի անցյալից վերցնում էր ոչ թե մոխիրը, այլ՝ կրակը: Դրա լավագույն արտահայտություններից է «Մխիթար Սպարապետ»-ը՝ հայ պատմավիպասանության շքեղ փայլատակուններից մեկը:

Սերո Խանգաղյանը, լինելով Ակսել Բակունցի արժանավոր գրական շառավիղը, շարունակեց գեղարվեստականացնել մեր լեռնաշխարհի ավանդույթներն ու պատմությունը: Հիշատակելի է հատկապես

ԽՆԿԱՐԿՈՒՄԻ արժանի անուն՝ Սուրեն Այվազյան

Նախ գողթան չքնաղ երգիչներն էին Սյունիքում. Գողթն գավառն ի սկզբանե մեր աշխարհի մաս էր կազմում: Հետո Շաղատի վարդապետարանի, ապա Տաթևի վարդապետարանի եւ ամբողջ միջնադարի իմաստուններն էին, հռչակաճուճ մտածողներն ու գրիչները, որոնց թվում էին քաջ ռաբունապետ Հովհան Ռոտունցին, տիեզերահռչակ փիլիսոփա Գրիգոր Տաթևացին եւ Հայոց երկրորդ լուսավորիչ Մովսես Խոտանանցին (Տաթևացին): Հետո հայոց երկնակամարում ճառագեց հավերժական մի լուսատու՝ Ակսել Բակունց: Հետո իրենց կանթեղներով եկան նրանց լույսը վերստին ու նորովի սերմանողները՝ Համո Սահյանն ու Սերո Խանգաղյանը, Նիկողայոս Արմցը, Գուսաֆ Աշոտն ու Սուրեն Այվազյանը...

Երախտապարտ սյունեցիների համար նրանցից յուրաքանչյուրի անունը խնկարկունի արժանի է, հիշելի ու պաշտելի: Եվ նրանցից յուրաքանչյուրի հետ կապված ամեն մի իրադարձություն անմոռանալի է մեզ համար ու տոնելի:

Սուրեն Այվազյանի 100-ամյակն է լրացել:

II *Խոնարվում ենք նրա հիշատակի առջեւ, եւս մեկ անգամ վերհիշում նրա բյուրեղյա կերպարն ու կյանքի ուղին, թողած գրական ժառանգությունը եւ կրկին հպարտություն ապրում, որ Սյունյաց արզանդը նման գավակ է պարգեւել մեր ժողովրդին:*

1981 թվականից ի վեր, երբ նա հեռացավ երկրային կյանքից, մենք չհասցրինք նրա հիշատակն արժանավորապես հավերժացնել, չհասցրինք նոր հայացք ձգել նրա թողած գրական ժառանգությանը, չհասցրինք աճող սերնդին

ԱԿՆԱԾԱԼԻ ՔԱՆՉԱՏԱԿԱՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵԾԵՐԻՆ



Հայ բանաստեղծի օրհներգ պոեմակը

Ելույթ Սիսիանում՝ Համո Սահյանի հուշակոթողի մոտ՝ գրողի ծննդյան 99-ամյակի կապակցությամբ



հաղորդակից դարձնել նրա հերոսների կերպարներին, որոնցից շատերը հայրենապաշտության իսկական կրողներ էին, հայոց ճակատագրով մտահոգվածներ:

Այնպես որ մենք պարտք ունենք Սուրեն Այվազյանի հանդեպ եւ չենք վարանում այդ մասին ասել բարձրաձայն:

Անտարակույս, Սուրեն Այվազյանի շատ ստեղծագործություններ իրենց մնայուն տեղն ունեն հայ դասական գրականության անդաստանում, հայոց արժեհամակարգում, որը նրա ամենամեծ ծառայությունն է մեր ժողովրդին:

Գնահատելի է հայրենի երկրամասի հանդեպ նրա նվիրվածությունը, որը եղել է մնում է ընդօրինակման արժանի: Նրա գրական հերոսների մեծ մասի նախատիպերն իրական մարդիկ են՝ մեր ապուլպապերը, մեր լեռնաշխարհի մարդիկ: Նրա արարած պատկերների մեծ մասը Այունյաց լեռնաշխարհի աստվածասկիզբ ու իրաշք տեսարաններն են: Նրա գեղարվեստական արժարժույթների առանցքը շատ դեպքերում այլուներցիների ավանդույթներն ու սովորույթներն են, մեր լեռնաշխարհի պատմության հերոսական դրվագները:

Ուրեմն՝ մեկ անգամ եւս խոնարհվենք Սուրեն Այվազյանի անմեռ հիշատակի առջեւ եւ վերահաստատենք մեր հավատամքը՝ անելու հնարավորը, որ հոգեւոր-մշակութային վեմը, ինչի վրա խոյացել է Սյունիքի հինգ հազար տարվա պատմությունը, երբեք չերերա ու ավելի ամրանա:

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ

«Այունյաց երկիր», N25 (368), 2015թ.

Հայրենակիցներ

Մեր օրացույցում կան օրեր, որոնք հատկապես այլուներցիներիս համար եղել ու մնում են աննոռանալի ու տոնական, թեւ ներառված չեն որեւէ տոնացույցի մեջ: Այդ օրերից մեկն ապրիլի 14-ն է՝ հայ մեծ քնարերգու Համո Սահյանի ծննդյան օրը:

Այսօր հենց այդ օրն է, եւ մենք բարի ավանդույթի համաձայն հավաքվել ենք մեծն Համո Սահյանի հուշակոթողի մոտ՝ երիցս խոնարհվելու նրա անմեռ հիշատակի առջեւ, կրկին հաղորդվելու նրա գրական, մարդկային, բանաստեղծական կերպարի հետ, նորից ու դարձյալ չափելու - նժարելու մեր ընթացքը նրա պատգամների ու խոհերի հետ, ավելի բարձր պահելու Համո Սահյան լուսատուն մեր ազգի եւ պետականության ճանապարհին:

Հազարամյակների պատմություն ունեցող հայոց բանաստեղծության մեջ Սահյանն ստեղծեց միմիայն իրեն հատուկ բնաշխարհիկ մի արվեստ՝ ծնված բնության եւ մարդու հավերժական դաշինքից ու հասցեագրված թե՛ իր ժամանակակիցներին, թե՛ գալիք սերունդներին:

Մեր գրականագիտությունը քանիցս ըստ պատշաճի արժեւորել է հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանի գրական ժառանգությունը, եւ ես իրավունք չեմ վերապահում ինձ՝ նոր ընդհանրացումներ կատարել ու գնահատականներ տալ: Պարզապես ուզում եմ հիշել բանաստեղծ Համո Սահյանին տրված գնահատականներից երկուսը, որ ինձ շատ սրտամոտ են: Առաջինի հեղինակը մեր գրական անդաստանի մյուս մեծն է՝

Հրանտ Մաթեոսյանը. «...Սահյանը ժամանակների ու տարածությունների մեջ մեր այս ջրղոտ ու դյուրագրգիռ խաչմերուկի հայ մարդը եղավ, եւ իր խոսքը մեր երթի համար օրհներգ եւ իր գործը մեր դրոշին ճիշտ մեր պատկերը դարձավ: ...Նա այնուամենայնիվ հարաբերվել կարողացավ աշխարհի ազատների այն համայնքին, որ իրեն բանաստեղծների համայնք է անվանում»: Իսկ ահա թե ինչ է ասում Սերո Խանգաղյանը. «Համո Սահյանը Քուչակի, Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի պոեզիայի շարունակող ջահակիրն է մեր բանաստեղծական աշխարհում»:

Այստեղ գալուց առաջ ես ընթերցում էի Համո Սահյանի կյանքի վերջին շրջանի հարցազրույցներից մի քանիսը: Եվ տեսա, որ կյանքի ամենավերջին տարիներին անգամ նրա մտահոգությունը մեր պետականությունն էր: Ահա թե ինչ էր ասում բանաստեղծը. «Իսկ ես մտածում եմ, թե բոլոր կուսակցություններից ու բոլոր գաղափարներից բարձրագույնը պետականությունն ունենալն է: Դա է, որ դրված է մեր առջեւ: Ամենաբարդ գաղափարը: Եթե կարող ենք՝ բոլորս միանանք՝ էս պետությունը պահենք»: Այս խոհերն ընթերցելուց հետո ավելի ակնհայտ է դառնում, որ հայրենասիրության, պետական մտածելակերպի, ազգապահպանության սահյանական ընկալումը բացառիկ է ու անզուգական: Ապացույցը նրա ստեղծագործություններն են՝ Հայաստան աշխարհին, հայրենի քարափներին նվիրված, որոնցից մի քանիսը կարող ենք գլուխգործոց համարել: Այսպես՝

ՎԿԱԾԱԼԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵԾԵՐԻՆ

Նայասրան ասելիս այրերու
այրվում են,
Նայասրան ասելիս ծնկներու
ծալվում են,
Չգիրեմ ինչո՞ւ է այդպես:

Նայասրան ասելիս շրթունքս
ձաքում է,
Նայասրան ասելիս հասակս
ծաղկում է,
Չգիրեմ ինչո՞ւ է այդպես:

Նայասրան ասելիս ասքերս լցվում են,
Նայասրան ասելիս թեւերս
բացվում են,
Չգիրեմ ինչո՞ւ է այդպես:

Նայասրան ասելիս աշխարհը
իմ տունն է,
Նայասրան ասելիս էլ մահը
ո՞ւմ շունն է...
Կոնաւո՞ւ, կլինեմ այդպես:

Սեզ համար, գալիք բոլոր սերունդների համար գրված այս օրհներգն իսկապես մեր ազգային երթի համար է ու դարերի համար: Ուստի եւ՝ մեր գործով, մեր ապրած կյանքով Հայաստան աշխարհը, մեր հանրապետությունն ու պետությունը սիրենք այնպես, ինչպես մեծ բանաստեղծն է սիրել ու պատգամել:

Եվ օրհնաբանենք ու փառաբանենք հայոց աշխարհի սրբազան այս անկյունը՝ Սյունյաց աշխարհը, որ մեր ժողովրդին ու համաշխարհային մշակույթին Հանո Սահյան է պարգևել:

ՍՈՒՐԻԿ ԽԱՀԱՏՐՅԱԼ
Սյունիքի մարգալեպ
«Սյունյաց երկիր», N9(282), 2013թ.

Մեծ այունեցին

Սյունիքն արդարացիորեն հպարտանում է իր մեծագույն գավակներով, այդ թվում՝ Արամ Մանուկյանով: Չնայած գրականության մեջ եղած տարբեր կարծիքների, Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) 1879թ. (130 տարի առաջ) ծնվել է ոչ թե Շուշիում, այլ Սյունիքի Ջեյվա-Դավիթբեկ գյուղում: Երկու տարեկանում, հորը կորցնելուց հետո մոր հետ տեղափոխվել է Շուշի (1): Այդ մասին վկայում են դավիթբեկցիները եւ մասնավորապես Սաֆար Եղիազարյանը («Սյունյաց երկիր», N-4, 2009թ.): Ս. Վրացյանը եւ Թադեոս առաջիններն էին, որ 1929թ. «Դրօշակ»-ում Ջեյվան նշեցին որպես Արամի ծննդավայր (2):

Արամ Մանուկյանի հիշատակը 1990-ին հավերժացվեց ծննդավայր Դավիթբեկում, գյուղի միջնակարգ դպրոցը կոչվեց նրա անվամբ: 2007-ի սեպտեմբերի 14-ին Կապանում բացվեց «Ժամանագություն» կոմպոզիցիան: ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Լեւոն Թոքմաջյանն այդ քանդակի մեջ մեկտեղել էր Արամ Մանուկյանի, Սուրբ Մովսես Տաթևացու (Խոտանանցու), եւ Լեռնագործի կերպարները: 2009թ. սեպտեմբերի 28-ին Արամ Մանուկյանի կիսանդրին (հեղինակ՝ Լեւոն Թոքմաջյան) տեղադրվեց Կապանի քաղաքապետարանի մերձակա զբոսայգում:

Արամ Մանուկյանը XX դարի հայ ազգային-քաղաքական ու պետական ակնառու դեմքերից է:

Հասակ առնելով մի ժամանակաշրջանում, երբ հայ ազգային-ազատագրական շարժումը թեւակոխել էր իր բարձրագույն՝ գինված պայքարի փուլը, երբ հայությունը տարված էր արեւմտահայության ազատագրության գերագույն խնդրով, Արամ Մանուկյանն անդամագրվեց հայ ազատամարտի պայքարին եւ իր հետագա ամբողջ կյանքն անմնացորդ նվիրեց հայ ժողովրդի ազատության սուրբ գործին (3):

Նրա հայացքներն ազատագրական շարժման վերաբերյալ, ինչպես նաեւ այդ ուղղությամբ ձեռնարկած քայլերն աչքի ընկան նպատակասլացությամբ, հետեւողականությամբ ու հիմնավորվա-



ծությամբ: Դրանք, ինչպիսի դրսևորումներ էլ ունեցան, միտված էին ազգային խնդիրների լուծմանը: Նույնիսկ այն դեպքերում, երբ նա կազմակերպչական-քարոզչական աշխատանքների ընթացքում արժարժում էր նաեւ սոցիալական ու սոցիալիստական գաղափարներ, նրա մտահոգությունը ոչ թե դրանց անմիջական իրագործումն էր, այլ ազատագրական շարժման խորացումը, արեւմտահայության ազատությանն օր առաջ հասնելը: Սոցիալիզմը, որպես դրական երեւոյթ, թողնվում էր ապագային:

Արամի համոզմունքն էր, որ ազգային-ազատագրական պայքարի դրոշ պարզած հայ ժողովուրդը պետք է ապավինի սեփական ուժերին: Այդ իսկ պատճառով նա սկզբնապես՝ Կարսում գործելու ընթացքում (1903-1904թթ.), փորձում էր զինատար խմբերի կազմակերպման իր մասնակցությունը բերելով հասնել հայոց ներուժի հզորացմանը, ապա՝ Վանում գործելու առաջին շրջանում (1905-1906թթ.) անդադրում աշխատում էր ընդհանուր ապստամբության համար անհրաժեշտ հիմքերի ստեղծման ուղղությամբ, որը հաջողության հասնելու կարելիություն գրավականներից մեկը կարող էր լինել:

Վանի նահանգապետի պաշտոնում նա լիովին վեր հանեց իր կազմակերպչական տաղանդը, ազգային-պետական մտածելակերպն ու ոգին: Առաջնորդվելով հայ ժողովրդի շահերով, նա գործի լծեց բոլոր կարող ուժերին, ինչ կուսակցության էլ նրանք պատկանեին: Հանուն հայ բնակչության շահերի նա քանիցս ընդդիմացավ ռուսական զորահրամանատարության քաղաքականությանը՝ փորձելով, երբեմն

ԱԿՆԱԾԱԼԻ ՓՆԱՐԱՏԱԿԱՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵԾԵՐԻՆ

արդյունավետ, ազդել նրա վրա: Արամի գլխավորությամբ գործադրված ջանքերի շնորհիվ հայությունը բացահայտեց իր ստեղծարար կարողությունները (4):

Արամի հմուտ կառավարման շնորհիվ Վան-Վասպուրականի նահանգապետությունն ապրեց այնպիսի զարգացում, որը, ըստ մի շարք գիտնականների (Ա. Սիմոնյան, Ա. Ասրյան, Մ. Ջիլֆուղարյան), թույլ է տալիս այն անվանել հայոց նորագույն պետականության նախատիպ:

Համաձայնելով պատմական գիտությունների դոկտոր Արամ Սիմոնյանի եւ նյուս գիտնականների հետ, նշենք, որ Ազգային պետականության վերականգնման համար վերջին հարյուրամյակում հայ ժողովրդի համար համառ պայքարն անցել է տարբեր հանգրվաններով, առաջ բերելով անկախ պետականության գոյության հինգ իրողություններ (5):

1. 1915թ. գառնանը Վանի նահանգի հայերի՝ Արամ Սանուկյանի գլխավորած կարճատև անկախությունը՝ հայոց ազգային պետականության վերականգնման առաջին փորձը:
2. 1918թ. մայիսին Հայաստանի Առաջին Հանրապետության հաստատումը՝ վեց հարյուր տարի առաջ կորցրած անկախ հայոց պետականության վերականգնումը:
3. 1921թ. ապրիլին Գարեգին Նժդեհի գլխավորությամբ Լեռնահայաստանի Հանրապետության հռչակումը, որն արձանագրեց հայերի ազգային պետականության կարճատև գոյությունը պատմական Հայաստանի մի սահմանափակ տարածքում՝ Սյունիքում:
4. 1988թ. սկսած դարաբաղյան հզոր շարժման ընթացքում ծնունդ առած Հայաստանի երկրորդ ազգային անկախ Հանրապետությունը, (1991թ. սեպտեմբերի 21):
5. Նույն շարժման անմիջական արգասիք հանդիսացող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը (1991թ. սեպտեմբերի 2):

Հայ ժողովուրդը ունեցավ նաեւ կիսանկախ պետականություն՝ հանձինս ՀԽՍՀ (1920- 1991թ.), որը միասնական ԽՍՀՄ պետության մի մասն էր (6):

1915-1917թթ. Արամի գործունեու-

թյունը հիմնականում աղերսվեց Կովկասում ապաստանած արեւմտահայ փախստականության ճակատագրի հետ՝ աչքի ընկնելով նպատակասլացությամբ ու հետեւողականությամբ: Սիւսանանակ, նա իր մասնակցությունը բերեց արեւելահայությանը հուզող խնդիրների քննարկմանն ու հանգուցալուծմանը (7):

Հենց Երեւանում էլ, 1917թ. դեկտեմբերից 1919թ. հունվարն ընկած ժամանակահատվածում, առավելագույն բացահայտվեցին Արամի կազմակերպչական տաղանդն ու ազգային-պետական մտածողությունը: Գիտակցելով տարածաշրջանում զարգացող ռազմաքաղաքական անցքերի հնարավոր վտանգավոր հետեւանքները հայ ժողովրդի համար, Երեւան հասնելուն պես Արամը նախագծեց հայ ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված պարզ եւ իրատեսական մի ուղի, ըստ որի հայ ժողովուրդը առաջին հերթին սեփական ուժերով պետք է հանգուցալուծեր իրեն հուզող բոլոր խնդիրները: Նա ցուցաբերեց աներեւակայելի կազմակերպչական տաղանդ, նախաձեռնողականություն, երկաթյա կամք, բացառիկ հետեւողականություն, շրջափայցություն՝ ժողովրդական գիտակցության մեջ սեփական ուժերի նկատմամբ հավատն ամրապնդելու եւ համազգային շարժում կազմակերպելու համար (8):

Ինչպես Վան-Վասպուրականում, այնպես էլ Երեւանում, գործելով բացառիկ պայմաններում, նա շատ արագ դարձավ կենտրոնական դեմք՝ իր ուժով, նախաձեռնող կամքի, նրբամիտ կեցվածքի, գործող անձանց ու կազմակերպություններին իր հավասարակշիռ մտնեցումների եւ ապակուսակցական ոգու շնորհիվ հասնելով հասարակության հետ նրանից բարձրացող անհատի հակադրության բացառմանը: Այդ է պատճառը, որ նա ժողովրդական լայն զանգվածների, գործի եւ Երեւանի նահանգի Ազգային խորհրդի կողմից հռչակվեց նահանգի դիկտատոր, այսինքն՝ օժտվեց միանձնյա իշխանությամբ: Մշտապես պարզաբանելով իրականացվող քայլերի հրատապությունը, շեշտելով ժողովրդի եւ ռազմական ու քաղաքական ուժերի նկատմամբ իր հարգանքը, լինելով հավասարապես հետեւողական, մայիսյան ճակատագրական օրերին

նրա վճռական, առարկությունը չընդունող դիրքորոշումը վճռական ճակատամարտ տալու եւ Երեւանը պաշտպանելու, սթափեցրին թուրքական առաջխաղացման սարսափելի վտանգից անորոշության մատնված ժողովրդին եւ տեւական պարտություններից հուսալքված զորքին՝ ապահովելով հայ ժողովրդի ոչ միայն գոյությունը, այլեւ անկախ պետականության վերականգնումը: 1918թ. Հայաստանի Հանրապետության ստեղծման համար մեծապես պարտական ենք նրան եւ ամենեւին էլ պատահական չէ, որ միայն նա է արժանացել ՀՀ հիմնադրի կոչմանը: Ասվածից չի կարելի հետեւություն անել, թե Արամը միայնակ կերտեց Հայաստանի Հանրապետությունը: Այն արդյունք էր ողջ ժողովրդի ու բազմաթիվ գործիչների գերմարդկային ջանքերի: Արամի մեծագույն ծառայությունն այդ բոլորին միավորելն ու մեկ նպատակի ուղղորդելն էր (9):

Սարդարապատի ճակատամարտից հետո Արամը, ստանձնելով անկախ Հայաստանի նախակառավարության դեր կատարող Երեւանի Ազգային խորհրդի Վարչության նախագահի եւ զինվորական վարիչի պաշտոնները, ընդհանուր գործին շաղկապելով բանիմաց եւ հասարակության մեջ մեծ հեղինակություն վայելող ուժերին, կարողացավ նորանկախ երկիրը պահել համեմատական կայունության մեջ, մինչեւ Հայոց Կենտրոնական Ազգային խորհուրդը եւ ՀՀ կառավարությունը տեղափոխվեցին Երեւան:

ՀՀ անդրամիկ կառավարության մեջ Արամն ուներ բացառիկ դիրք, նրան էին վստահվել միաժամանակ ներքին գործերի, լուսավորության, հաղորդակցության, պարենավորման, խնամատարության, մեր օրերի լեզվով ասած՝ նաեւ տարածքային կառավարման նախարարի լիազորությունները: Արամը, առաջնորդվելով ազգային-պետական մտածողությամբ, դրսեւորելով կազմակերպչական տաղանդ, անձնական անշահախնդրություն, նախաձեռնողականություն ու հետեւողականություն, նպատակային եւ արդյունավետ գործունեություն ծավալեց ինչպես երկրի հայացման, այնպես էլ երկրում իրավակարգի հաստատման, վարչական մարմինների, հատկապես ՆԳ նախարարության ամրապնդման եւ այլ ուղղություններում՝ այդ կերպ մեծապես

ՎԿԱԾԱԼԻ ՔԱՆՉԱՏԱԿԱՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵԾԵՐԻՆ

նպաստելով նորաստեղծ պետականության ամրապնդմանը:

Արամ Մանուկյանի բովանդակ գործունեության ուսումնասիրությունը հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի Առաջին հանրապետության ստեղծման պատմության եւ ժամանակի այլ իրադարձությունների համապատկերի վրա հաստատում է այն իրողությունը, որ ազգային արժեքներին անկեղծորեն նվիրվելու, իրապես ազգային նպատակներ հետապնդելու, ազգային ուժերին ապավինելու, հաստատական, հավասարակշիռ ու անշահախնդիր գործելու, կենսակերպով ժողովրդից էականորեն չտարբերվելու, չխորթանալու դեպքում հայ քաղաքական, պետական, ռազմական գործիչներն ու ուժերը կարող են համախմբել ժողովրդին եւ նույնիսկ ամենածանր իրավիճակներից հաղթանակով դուրս գալ (10):

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Արամ Մանուկյանի կերպարը մշտապես ոգեշնչման աղբյուր ու վառ օրինակ է հանդիսացել բազում սերունդների համար: Նրա հայրենամկեր, փոթորկահույզ կյանքն ու գործունեությունը ուսանելի օրինակ է հայ ժողովրդի հետագա սերունդների համար (11):

Ծանոթագրություն

1. «Այունյաց երկիր», Կապան, նոյեմբեր, 2009, N4
2. «Դրօշակ», Փարիզ, 1929, հունվար-փետրվար, N1-2, էջ 26, 29
3. Արմեն Ասրյան, «Արամ Մանուկյան. կյանքը եւ գործը» Երեւան, 2009թ., էջ 246
4. Ասրյան Ա., նշված աշխ., էջ 249
5. Սիմոնյան Ա., Ջանգեզուրի գոյամարտը (1920-1921թթ.), Երեւան, 2000, էջ 667
6. Խաչատրյան Ս., Լեռնահայաստան, Երեւան, 2003, էջ 9-10
7. Ասրյան Ա., նշված աշխ., էջ 249
8. Ասրյան Ա., նշված աշխ., էջ 250
9. Ասրյան Ա., նշված աշխ., էջ 251
10. Ասրյան Ա., նշված աշխ., էջ 252
11. Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ. Եր. 1991թ.:

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳՊՀ խորհրդի նախագահ,
ՀՀ Այունիքի մարզպետ
Գորիս, 2009

Խոսք սիրո եւ երախտիքի

Գուսան Աշոտի 100-ամյակին նվիրված գրքի առաջաբան



Գիրքը մեծ գործ-սեցու կյանքի եւ գրական գործունեության մասին է. հողվածներ, հուշեր, մտորումներ, կարծիքներ: Գրքում ներկայացված են՝ մեծերի խոսքը Գուսան Աշոտի մասին, խոհի ու երգի վարպետի հուճորը, հետաքրքիր դեպքեր, հանդիպումներ, Աշոտի խրատները, անտիպ գործեր, նրա ստեղծագործության ընտրանիից մի մաս:

Այս գիրքը Գուսան Աշոտի մասին լինելով հանդերձ, նաեւ այն սուրբ մատյանն է, որ պիտի ոգեկոչի բոլորիս՝ պահելու հիշատակը մեծերի, պաշտպան կանգնելու հայրենիքին, նրա անկախությանն ու ազատությանը:

Մեզ մնում է սիրով ու երախտագիտությամբ հիշել նրան եւ փորձել, միշտ փորձել հասկանալ նրան, նրա ստեղծածը, նրա թողած գրական ժառանգությունը, հոգեգմայլ ու մեղմահունչ մեղեդին, նրա բազմազույն աշխարհը:

2007 թվականի ապրիլի 25-ին լրացավ մեծ երգահանի 100-ամյակը:

Միանալով սիրո մեծ երգիչ, հայրենասեր երգահանի բազմաթիվ մտերիմներին, հարազատներին, գործընկերներին՝ օրհնում ենք

Գուսան Աշոտի ծնունդը, նրա անցած ճանապարհը, օրհնում՝ խոնարհվելով, օրհնում՝ խորախորհուրդ ակնածանքով...

Այս բազմաթվամյակ գիրք-հուշապատումը թող լինի աստվածատուր մարդու հիշատակի հավերժացման, մեր հոգու պարտքի երախտիքը:

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Այունիքի մարզպետ
Գորիս, 25 ապրիլի 2007թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ



**ՀԱՅՐ ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ
ՀԱՎՈՐԵԱՆ**

Հայ առաքելական
եկեղեցու Սյունյաց թեմի
առաջնորդական տեղապահ



ПОСОЛ АРГО АВАКОВ

Руководитель Ереванского
офиса ОБСЕ



ԷԴԳԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայաստանի զարգացման
նախաձեռնությունների (IDeA)
հիմնադրամի գործադիր
տնօրեն

Սեծարգո մարզպետ Սյունիք աշխարհի, Սյունյաց թեմի եւ մասնավորաբար իմ անունից օրհնություն եւ շնորհավորանք ենք բերում Ձեզ ծննդյան 60-ամյա հորելյանի առթիվ: Ակնհայտ է, թե ինչպես եք Ձեր ապրած կյանքի շատ ու շատ օրեր նվիրաբերել մեր երկրի քաղաքական դաշտի զարգացմանը, հող հայրենիի պաշտպանությանը, եւ, որ անճակարեւորն է, հայոց առաքելական սուրբ եկեղեցու բարեկարգմանն ու շենացմանը: Ձեր բարեգթության, աստվածահաճո բարեգործական ծրագրերի եւ անխախտ հետեւողականության շնորհիվ է, որ Սյունյաց թեմի մի շարք վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ այժմ ունեն բարեկարգ, ավարտուն տեսք: Ուստի թող Տիրոջ օրհնությամբ լուսավորյալ եւ օրհնյալ լինի Ձեր կենսուղին: Առողջ եւ արելշատ օրեր ենք մաղթում Ձեզ, հավատ, հույս եւ անուր կամք՝ դիմակայելու ճակատագրի հրամցրած անակնկալներին: ■

Уважаемый Сурик Сергеевич, Позвольте от имени бюро ОБСЕ в Ереване и от меня лично поздравить Вас с 60-летием и пожелать крепкого здоровья, счастья и долгих лет жизни. Мы тесно работаем с Вами с 2006-ого года, с начала открытия нашего регионального офиса в Капане и мы рады, что благодаря нашему сотрудничеству внедряются новые методы устойчивого экономического развития, особенно в области планирования диверсификации экономики, экологической безопасности и активизации гражданского общества. Для нас всегда приятно работать с Вами и мы надеемся на плодотворное сотрудничество и в будущем. ■

Հարգելի պարոն Խաչատրյան Հայաստանի զարգացման նախաձեռնությունների (IDeA) հիմնադրամի ողջ անձնակազմի եւ անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ՝ հորելյանի կապակցությամբ: IDeA հիմնադրամը գնահատում է Սյունիքի մարզային իշխանությունների եւ անձամբ Ձեզ հետ ունեցած արդյունավետ համագործակցությունը՝ «Տաթելի վերածնունդ» ծրագրի իրականացման շրջանակներում: Վստահ եմ, որ համատեղ ջանքերով մեզ կհաջողվի իրականացնել Սյունիքի մարզի զարգացմանն ուղղված բոլոր ծրագրերն ու նախաձեռնությունները: Մաղթում եմ նորանոր հաջողություններ եւ քաջառողջություն: ■

ՌԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏ)

Սուրեն Խաչատրյանի մարտական ուղին

1988 թվականն ինչպես շատ հայրենասեր հայերի, այնպես էլ Սուրեն Խաչատրյանի համար եղավ ճակատագրական: Նժդեհի զինվոր պապ Նիկոլայ Բաբայանի արյան կանչը նրան բերեց հայրենիք, զցեց Արցախյան շարժման փոթորիկների մեջ:

Ս ինչ մայրաքաղաքում միտինգներ ու ցույցեր էին անում, սահմանամերձ շրջաններում թուրքերը գաղտնի ու բացահայտ հակահայկական գործողություններ էին իրականացնում՝ հոտեր ու նախիրներ հափշտակում, հովիվներ ու հողագործներ առեւանգում: Ազերի ավազակների ճանապարհը փակելու համար ամենից առաջ հարկավոր էր զինվել: Դեռ 1988 թվականից Գորիսում գործում էր երկու ջոկատ, որոնց ստեղծման օրվանից Սուրեն Խաչատրյանը նրանց աջակիցն էր: Այնուհետև նրա ընդհանուր հրամանատարությամբ միավորվեցին շրջանում կազմավորված բոլոր ջոկատները: Իսկ այդ ջոկատները զինելու համար հրամանատարի նախաձեռնությամբ եւ միջոցներով մեծ քանակությամբ զենք ու զինամթերք ներկրվեց Ռուսաստանից, Վրաստանից եւ Մերձբալթյան հանրապետություններից:

1989 թվականից արդեն Գորիսի կամավորականները պաշտպանական մարտեր էին մղում Շուռնուխից մինչև Խոզնավար, շրջանի մոտ 150 կմ սահմանի երկարությամբ:

1989թ. հոկտեմբերից մինչև հեկտեմբեր բացահայտ ազդեցիկ

սկսվեց շրջանի տարածքի նկատմամբ: Գոկտեմբերի 7-ին ռուս-ազերական միացյալ ուժերը գրոհեցին Կոռնիձորը: Տեղի կամավորականները ոչ միայն կարողացան հետ մղել հարձակումը, այլև վնասազերծել ազերաբնակ Ջիջիմլի գյուղի կրակակետերը: Նույնատիպ հարձակում ձեռնարկվեց նաև շրջանի Խանաձախ գյուղի ուղղությամբ: Հրամանատարության գրագետ մարտավարության շնորհիվ հակառակորդը երկու մարտում էլ զոհեր տալով ետ քաշվեց, իսկ հայ կամավորականները մարտից դուրս եկան առանց կորուստների: Մարտից մարտ դրսևորվում է կատարելագործվում էին Սուրեն Խաչատրյանի ռազմական կարողությունները, հմտանում էր ոչ միայն պաշտպանական, այլև հարձակողական մարտավարության մեջ: Եվ երբ 1991-ի գարնանն սկսվեց «Կոլցո 1» գործողությունը, շրջանի պաշտպաններն արդեն պատրաստ էին հետ մղելու այդպիսի հզոր հարձակումը: 1991-ի մայիսի 7-ի լուսաբացին, ռուսական բանակի եւ ազերի ՕՄՕՆ-ականների միացյալ ուժերը, օդուժի եւ հրետանու աջակցությամբ, շրջանի սահմանի ողջ երկարությամբ հարձակման անցնելով, ժամանակավոր հաջողության հասան միայն Շուռնուխ գյուղի ուղղությամբ: Հետագայում, պաշտպանությունից անցնելով հակահարձակման, հայ կամավորականները՝ Սուրեն Խաչատրյանի հրամանատարությամբ, կարողացան հակառակորդին հետ շարտել Շուռնուխից:

1992 թվականին շրջանի կամավորական ջոկատը Սուրեն Խաչատրյանի հրամանատարությամբ հաջողությամբ իրականացրեց մի քանի մարտական գործողություններ, ինչի շնորհիվ ազատագրվեցին Ջիջիմլի-1, Ջիջիմլի-2 բնակավայրերը: Այս գործողությունները, թուլացնելով ազերիների պաշտպանությունը, դյուրացրին Լաչինի միջանցքի բացումը:

1992թ. մայիսից, Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ եւ հրամանատարությամբ, ստեղծվեց Գորիսի պայմանագրային գումարտակը: Սահմանամերձ Տեղ, Խնձորեսկ եւ Շուռնուխ գյուղերի ինքնապաշտպանական ջո-

կատների վաշտերի հրամանատարներ նշանակվեցին Մելիքսեթ Պողոսյանը, Սանասար Բեգլարյանը եւ Վլադիկ Ստեփանյանը:

Նորաստեղծ գումարտակը, այլ ջոկատների ու ստորաբաժանումների հետ, մասնակցեց Լաչինի միջանցքի պաշտպանական մարտերին՝ այն լայնացնելով, հարավում՝ մինչև Սաֆյան, իսկ հյուսիսում՝ Սարի Բաբա գյուղերը:

Հրամանատարը՝ Սուրեն Խաչատրյանը եւ շրջանի մարտական ջոկատներն արդեն մի քանի տարվա մարտական կենսագրություն ունեին: Վազգեն Սարգսյանը վստահում էր Գորիսի գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանին: Երբ 1992թ. հոկտեմբերի 6-ին իրադրությունը միջանցքի հյուսիսային կողմում չափազանց սրվել էր, Սպարապետը շտապ եկավ Գորիս: Հարկավոր էր, ինչ գնով էլ լինի, փրկել դրությունը: Վաղ առավոտյան գումարտակից 100 հոգի կազմ-պատրաստ սպասում էր հրամանի: Շարժվեցին Եղծահող գյուղի ուղղությամբ, որտեղ ազերիները ներխուժման վտանգ էին ստեղծել: Հակառակորդի առաջխաղացումը հաջողությամբ կասեցվեց: Այնուհետև, պաշտպանությունից անցնելով հակահարձակման, ստորաբաժանումների հետ կարողացան ազատագրել մինչև Սարի Բաբա գյուղի տարածքը:

Ազերիների բոլոր ջանքերն իզուր անցան: Հայ կամավորականները, որոնք ազատագրել էին Շուշին, բացել Լաչինի միջանցքը, այլևս նախաձեռնությունը զիջելու մտադրություն չունեին: Հետագա մարտերն արդեն ընթանում էին միջանցքից շատ հեռու, հաջորդ շրջաններում: 1993թ. ամռանը Գորիսի կամավորականները մասնակցում էին Կուբաթլիի եւ Ջանգելանի ազատագրական մարտերին:

1994թ. հունվարից Արցախյան ուժերն անցան ազատագրական գործողությունների: Մարտերը ծավալվում էին Աղդամի եւ Ֆիզուլու շրջաններում: Գորիսի կամավորականներն այլևս անելիք չունեին սահմանամերձ տարածքներում՝ ռազմաճակատի գիծը մի քանի տասնյակ կիլոմետր ետ էր քաշված: Հունվարից մինչև հրադադար

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՍԱՐՏ)

ՀԱՍԼԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ

Արցախյան պատերազմի տարիներին Գորիսի պաշտպանության խորհրդի նախագահ



Գորիսի գումարտակի առաջին հրամանատարն ինքս եմ եղել՝ նշանակված Վազգեն Սարգսյանի կողմից, իսկ հիմնադրման գործընթացը

սկսվել էր զինվորական կոմիսարիատի, սահմանապահ պարետատան հովանու ներքո: Իմ նշանակման օրը միանգամից 25 ազատամարտիկ անդամագրվեց գումարտակին, որը շարունակություն ունեցավ: Մի քանի օր անց, երբ Սպարապետը եկավ Գորիս, տեսավ ամեն ինչ, գոհություն հայտնեց: Սակայն ես մտադիր չէի շարունակել ձեւավորվող գումարտակի ղեկավարումը եւ խնդրեցի այլ աշխատանքի տեղափոխել ինձ: Վազգեն Սարգսյանը համաձայնեց: Առաջ եկավ նոր հրամանատարի նշանակման հարցը: Պարզվեց, որ եւ Վազգենը, եւ ես, եւ Գորիսի ազատամարտիկները նույն մտադրություն ունենք՝ գումարտակի հրամանատար կարող է լինել միայն Սուրիկ Խաչատրյանը, որի կազմակերպական ունակությունները հայտնի էին պատերազմի նախորդ փուլից: Նրա հեղինակությունն ընդունում էին բոլոր զինված խմբավորումներն ու տարածաշրջանի ինքնապաշտպանական ջոկատները: Դրան հաջորդեց Վազգեն Սարգսյանի հրամանը: Կարճ ժամանակում Սուրիկ Խաչատրյանը կարողացավ ավարտել

գումարտակի ձեւավորումը, ստեղծել մարտունակ եւ կարգապահ զինվորական ստորաբաժանում, որը մասնակցեց բազմաթիվ մարտական գործողությունների: ■

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Գնդապետ, Տեղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Արցախյան պատերազմի տարիներին



Ես 3-րդ գումարտակի վաշտերից մեկի հրամանատարն էի ի սկզբանե, եւ միայն իմ վաշտում, հենց սկզբից, 125 ազատամարտիկ կար,

կարող եմ հիմա նրանցից յուրաքանչյուրի անուն-ազգանունը ներկայացնել՝ իրենց ամրացված զենքի համարներով: Կարող եմ թվարկել 3-րդ գումարտակի մասնակցությամբ տեղի ունեցած մարտական գործողություններն օրերով եւ մանրամասն: Եվ այդ ամենը՝ Սուրիկ Խաչատրյանի հրամանատարությամբ: Պատերազմի ժամանակ Գորիսի տարածաշրջանից 79 հոգի գոհվեց մարտական գործողությունների ընթացքում, բազմաթիվ վիրավորներ ունեցանք մարտական գործողությունների ժամանակ, որոնցից 93 հոգու կյանքը հետագայում նույնպես հնարավոր չէր լավ փրկել: Այդ գոհերի մի մասը 3-րդ գումարտակի մարտիկներ էին... Մենք մեր երեխաներին, գալիք սերնդին միայն ճշմարտությունը պետք է ասենք, այլապես Արցախյան գոյակռփի բարոյա-

Սուրեն Խաչատրյանի մասին

կան իմաստը կկորցնենք վերջնականապես: ■

ՄՈՒՇԵՂ ԽՈՅԼՈՒՆՑ

Գնդապետ, Գորիսի շրջանի, ապա Սյունիքի տարածաշրջանի ոստիկանության պետ 1991-96թթ.



Պաշտոնի բերումով մասնակցել եմ այդ օրերին Սյունիքում տեղի ունեցող գրեթե բոլոր կարեւոր իրադարձություններին: Մասնակցել եմ Սուրիկ

Խաչատրյանի նշանակմանը: Բոլորս գտնում էինք, որ դժվարին այդ վիճակում միայն Սուրիկը կարող է բոլոր զինված խմբավորումներին եւ ինքնապաշտպանական ջոկատներին իրար գլխի հավաքել: Եվ դա նրան հաջողվեց, լավ հրամանատար եղավ: ■

նրանք մարտնչում էին Զորադիզի եւ Ֆիզուլու շրջանի մյուս բնակավայրերի ազատագրման համար:

Ազատամարտի առաջին օրից մինչեւ զինադադար Սուրեն Խաչատրյանն անձնավիրաբար մասնակցելով բազմաթիվ մարտերի, անցավ շարքայինից մինչեւ զնդապետ ճանապարհը: Զայրե-

նիքը նրան լիարժեքորեն վարձատրեց իր ազնիվ նվիրաբերության համար՝ պարգևատրելով մի շարք մեդալներով: Զրադադարից հետո, շատերի մեան, գումարտակի հրամանատարը նույնպես անցավ խաղաղ աշխատանքի: Սակայն նա չհեռացավ իր զինակից ընկերներից: Նրա համար իր զինակից ընկեր-

ների ու հայրենիքի շահը միշտ եղել եւ մնում է առաջնայինը: Յուրաքանչյուր օր ապրում է զենքի եղբայրության ու նորաստեղծ անկախ պետության կայացման հոգսերով:

ՍՈՒՐԵՆ ԲԱՂՂԱՍՈՐՅԱՆ
ԵՎ Մ ԳՈՐԻՍԻ ՎՊԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՆԱԽԱԳԱՀ

Ղ ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏ)

Գորիսի Երկրապահ կամավորականների III պայմանագրային գումարտակը եւ Նրա մարտական ուղին



ԱՐԿԱԴԻ ՃԱՏՈՒՅԱԼ

1992 թ. մարտի 17-ին խորհրդային 7-րդ բանակի զորամասերը հեռանում են իրեն անկախ ու սուվերեն պետություն հռչակած Հայաստանից: Ռազմաստրատեգիական առումով ստեղծվում է միանգամայն նոր իրավիճակ: Երրորդ կողմի բացակայության պայմաններում Ադրբեջանը լիակատար շրջափակման մեջ է առնում Արցախը, ամուր փակում Գորիս-Լաչին ճանապարհը՝ վայրագ հրետակոծության ենթարկելով հայոց սահմանային բնակավայրերը:

Ազերի բռնակալներն ամեն կերպ փորձում են հավերժացնել Ղարաբաղի հայության ստրկացումը:

Ղարաբաղի համար սկսվում է մի նոր, ծանր ու դժվարին ժամանակ, որը զնալով ավելի է ծանրանում:

Հարկավոր էր միջոցներ փնտրել Ղա-

րաբաղի ժողովրդին թշնամու երախից փրկելու համար: Իսկ այդ փրկությունը պիտի գար ու անցներ Գորիսով: Առաջին հերթին Գորիսը պիտի կանգներ Ղարաբաղի թիկունքին, քանի որ այն դարձել էր հակամարտության կենտրոն, որի խաչմերուկներում իրար են բախվում հայ-ազերական հակադիր ուժերը:

Նկատի ունենալով այս ամենը՝ թշնամին հսկայական զորային միջոցներ էր կուտակել այստեղ՝ Հայաստանի հարավում՝ հիմնականում Գորիսի ու Կապանի ուղղություններում:

Թշնամու պատասխան հակակշիռը պարտադրված էր ստեղծել հայկական կողմը: Ազերիների վայրագ հրետակոծություններին պատասխանելու համար հարկավոր էր ստեղծել ժողովրդական-հայրենասիրական միասնական ճակատ: Հարկավոր էր լայնամասշտաբ միջոցառումներ մշակել հայկական զորային ուժերը միավորելու, նրանց տեխնիկական հնարավորությունները զորացնելու, պետական բոլոր կառույցները նպատակամղելու հայրենիքի պաշտպանության գործին: Գիշտ է, այդ ժամանակ կային ինքնաբուխ կերպով ստեղծված երկրապահ-կամավորական ջոկատներ, որոնց թիվը շրջանում քսանից անցնում էր: Կային նաեւ աշխարհագրային միավորումներ, առանձին զինված խմբեր, բայց արդեն ժամանակն էր այդ ուժերը միավորելու, հարվածային մեկ բռունցք ստեղծելու, մարտական ինքնագործունեությանը եւ վրեժի վրա հիմնված արկածախնդրություններին վերջ տալու, այն զորային միավորները, որոնք պայմանականորեն ջոկատներ էին կոչվում եւ շատ դեպքերում գործում էին առանձին-առանձին, միացնելու, դնելու մեկ միասնական հրամանատարության տակ:

1992թ. մայիսի 27-ին Գորիսի դրամատիկական թատրոնի շենքում տեղի է ունենում ժողովրդական մարտիկների հավաք: Հավաքին մասնակցում են Գորիս քաղաքի եւ շրջանի գյուղերի աշխարհագրային միավորումների ներկայացուցիչներ, Պաշտպանության խորհրդի անդամներ, իշխանությունների ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության բարձրաստիճան սպաներ: Հավաքի մասնակիցների միահամուռ համաձայնությամբ առաջարկվում է ստեղծել Գորիս քաղաքի եւ շրջանի գյուղերի աշխարհագրայինների (ջոկատների) միասնական զորամիավորում:

Նշանավոր այս հավաքին մասնակցում եւ համապատասխան բացատրություններ է տալիս ՀՀ պաշտպանության նախարարության մարտական պատրաստության վարչության պետ գեներալ-մայոր Մ.Սարգսյանը: Այսպիսով, շրջանում գործող բոլոր կամավորական-երկրապահ ջոկատները եւ զորային փոքր խմբերը միավորվում են, եւ այդ հիմքի վրա ստեղծվում է Գորիսի Երկրապահ կամավորականների III պայմանագրային գումարտակը, որը Գորիսի զինկոմիսարիատի ենթակայությամբ ստեղծված, պետական պատասխանատվությամբ զինվորական կազմավորում էր՝ միասնական հրամանատարությամբ: Երկրապահ կամավորականների միաձայն հավանության ներքո գեներալ-մայոր Մ.Սարգսյանն ընթերցում է Վազգեն Սարգսյանի հրամանագիրը Սուրեն Սերգեյի Խաչատրյանին գումարտակի հրամանատար նշանակելու մասին:

Երկրապահ ջոկատները, որոնք գումարտակի կազմում վերածվել էին դասակների ու ջոկերի, հրահանգներն ու հրամաններն ստանում էին գումարտակի հրամանատարությունից: Նման պայմաններում արդեն բացառվում էին արկածախնդրություններն ու անհարկի ինքնագործունեությունը:

Այն առթիվ, թե երկրապահ կամավորականներն ինչո՞վ են տարբերվում զինծառայողներից, Գորիսի զինկոմ Սերգեյ Գրիգորյանը բացատրում է, որ երկրապահ ազատամարտիկներն այն մարդիկ են, որոնք կամովին մասնակցում են հայրենիքի պաշտպանությանը: Նրանք՝ երկրապահները, կոնկրետ Գորիսում, ինքնապաշտպանական գումարտակի

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՍԱՐՏ)

Եւ երկրապահ ջոկատների մարտիկներն են, իսկ զինծառայողները նրանք են, որոնք գտնվում են իսկական պարտադիր զինծառայության մեջ:

1992թ. հունիսի 10-ին հարավ-արեւելյան սահմանագծի պաշտպանությանը մասնակցելու համար Գորիս է ժամանում հայոց կայացող բանակի կանոնավոր զորակոչիկների դեսանտային-գրոհային զնդի առաջին ստորաբաժանումը: Չինվորականների առջեւ ունեցած ելույթի ժամանակ Վազգեն Սարգսյանը, հստակ բացատրություններ տալով առաջադրված հարցերին, ասում է, որ Գորիսի սահմանների պաշտպանությունն իրականացնում են պարետի ենթակայությամբ գործող զինվորական կոմիսարիատը, պահեստազորայինների կամավորական երկրապահ գումարտակը եւ շրջանային ոստիկանության աշխատակիցները: Դրսից գործուղված ռազմական բոլոր ջոկատներն ու զինյալ խմբերը նույնպես մտնում են պարետատան ենթակայության տակ:

Անդրադառնալով մարտական ուժերի ռազմավարության հարցերին՝ Սպարապետն ընդգծում է, որ երկրի պաշտպանությունը զուտ պետական խնդիր է եւ չի հանդուրժում ոչ մի խմբակային, կուսակցական, թայֆայական մոտեցում: «Պատմության մեջ, - ասում է նա, - հաճախ ենք պարտվել, երբ հայրենիքի պաշտպանությունը վեր ենք ածել գավառի, մելիքության, տվյալ շենի ու գյուղի պաշտպանության»: Սպարապետը նաեւ այն կարծիքն է հայտնում, որ պահեստազորայինների երկրապահ կամավորական միավորումներից են սկիզբ առել պետական ռազմական կառույցները: Շատ զինվորականներ են մարտական դասեր առել երկրապահ կամավորականների գումարտակում եւ նրա ջոկատներում:

II 1992թ. գարնանը Գորիս քաղաքի եւ շրջանի բոլոր գյուղերի երկրապահ կամավորականների ջոկատները եւ բոլոր զինյալ խմբերը մտնում են նորաստեղծ գումարտակի կազմի մեջ:

Ի տարբերություն երկրապահ ջոկատների, որոնք գործում էին իրենց գյուղի եւ քաղաքի շրջանակներում եւ յուրաքանչյուրն իր սահմանային հատ-



վածում կանգնած՝ տեղական նշանակության մարտեր էր մղում թշնամու դեմ, գումարտակն արդեն պետական կարգավիճակով մարտական խոշոր զորամիավորում էր՝ կոչված ռազմական խոշորամասշտաբ խնդիրներ լուծելու:

Ստանձնելով գումարտակի հրամանատարի դժվարին պարտականությունը՝ Սուրեն Խաչատրյանի առաջին գործն է լինում ամրապնդել կարգապահությունը, բարձրացնել ազատամարտիկների պատասխանատվությունը եւ թույլ չտալ ինքնազուլիս, չհիմնավորված արարք որել մեկի կողմից: Հրամանատարի մվիրվածության, խստապահանջության եւ գործիմացության շնորհիվ շուտով գումարտակը մեծանում, զորանում է,

դառնում հարվածային հզոր ուժ:

1992թ. վերջերին գումարտակի կազմում արդեն 600-ից ավելի երկրապահներ կային: Գումարտակի հրամանատարությունն ամեն կերպ ձգտում էր բարձր պահել երկրապահ մարտիկի պայքարի ոգին, նրա մեջ հավատ ներշնչել վերջնական հաղթանակի նկատմամբ: Գումարտակի հրամանատարության նախաձեռնությամբ պաշտպանական ամրություններ են կառուցվում սահմանային բնակավայրերի շուրջ: Բուռն թափով սկսվում է ռազմաուսումնական պրոցես, ձեռք են բերվում զգալի քանակությամբ ռազմական հանդերձանք, գույք եւ այլ անհրաժեշտ միջոցներ: Գումարտակի կազմում երկ-

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏ)

րապահը զինվորանում է, զինվորական կարգապահությունը դառնում է բոլորի համար պարտադիր, վերջ է տրվում ինքնուրույն նախաձեռնություններին, արկածախնդրություններին: Երկրապահ տրակտորիստը տանկիստ է դառնում, բանվոր խառատը՝ զրահամեքենավար, հնձվորը՝ թնդանոթաձիգ, հովիվը՝ ավտոմատավոր: Իսկ թշնամին ամեն օր ու ժամ հրետակոծում է հայոց սահմանային բնակավայրերը: Ջոհվում են անմեղ ու անպաշտպան մարդիկ, ավերվում են տներ, շենքեր... մոռացության են տրվում կնունքներն ու ծնունդները: Ցերեկները դառնում են տագնապ ու լարում, գիշերները՝ մղձավանջ: Վերերկրյա տները դատարկվում են, բնակիչները վախենում են դուրս գալ նկուղներից, ապաստարաններից:

Երկրապահների գունարտակի հրամանատարությունը թշնամուն պատասխան տալու միջոցներ է որոնում: Ողջ Գորիսը պատրաստ էր վերջին միջոցները ներդնելու, միայն արժանի հարված հասցվեր թշնամուն: Գունարտակի տղերքը պատրաստ էին կենաց ու մահու կռվի:

Երկու գլխավոր խնդիր կար. ի՞նչ ուժերով կարելի է դիմագրավել թշնամուն եւ ինչո՞վ կարելի է սատարել Ղարաբաղի մարտնչող ժողովրդին: Կար, իհարկե, ժողովրդական հզոր կամքի ու միասնության առկայությունը, բայց դեռ չկար հայոց բանակը:

Երկրապահ կամավորների միությունը զորական ազդեցիկ ուժ էր, բայց դեռ բանակ չկար եւ չունեի բանակի համապատասխան զինվածությունը: Ջինային տեսակետից թշնամին մի քանի անգամ գերակշռում էր մեր ուժերին: Հայոց կողմը միայն մի առավելություն ուներ՝ մարտական բարձր ոգին, Ղարաբաղին օգնելու անսասան վճռականությունը:

Գորիսի III պայմանագրային գունարտակի հրամանատարությունը լավ գիտակցում էր, որ մարտական բարձր ոգին հաղթանակի կեսն է, բայց դեռ հաղթանակ չէ: Միայն մարտական խանդավառությամբ հնարավոր չէ ընկճել տանկերով, գրադներով ու հրանոթներով զինված թշնամուն: Ուրեմն՝ նախ եւ առաջ հարկավոր էր զինել գունարտակը, ձեռք բերել ժամանակակից զինատեսակներ: Հարկավոր էր ոչ միայն թշնամուն թույլ չտալ ներխուժել սահմաններից ներս, այլև անհրաժեշտ էր

նրան հեռացնել հայոց սահմաններից եւ ապահովել խաղաղ բնակչության անվտանգությունը: Դրան հասնելու համար պետք է մարտիկների բարոյականային մեծ ոգեւորությանը գունարել զինային համապատասխան միջոցներ:

Այդ նպատակով իր գործունեության սկզբնական շրջանում Գորիսի երկրապահների գունարտակի գլխավոր խնդիրը դառնում է ռազմական տեխնիկայի եւ սպառազինության այլ տեսակների ձեռք բերման հարցը: Եվ իրոք, բավական կարճ ժամանակում գունարտակը կարողանում է զինվել պատշաճ զինատեսակներով: Եվ դա կատարվում է ոչ միայն սեփական երկրի միջոցների հաշվին, այլև թշնամուց իվված զենքերի հաշվին: 1992թ. ամռան շրջանում գունարտակը հենց այդպիսի մարտավարությամբ է առաջնորդվում: Մինչեւ մեծ ու ընդհանուր հարձակումը, գունարտակը փոքրաքանակ զինախմբերով՝ ջոկերով ու դասակներով, այս ու այնտեղ, որտեղ թշնամին չէր սպասում, հանկարծակի հայտնվում է թշնամու թիկունքում, անակնկալի բերում նրան եւ տիրանում փախած հակառակորդի զինամիջոցներին:

Մարտավարության այս ձեռք ժամանակի մեջ արդարացնում էր իրեն: Գունարտակի հրամանատարությանը հաջողվում էր համախմբել ռազմական բոլոր ուժերը, ապահովել համագործակցությունը նախկին ջոկատների միջեւ: Սերտ կապ է հաստատվում ռազմաճակատի եւ թիկունքի միջեւ, այնպես որ գունարտակը միշտ ստանում է ժողովրդի աջակցությունը, վայելում մարդկանց վստահությունը:

Գունարտակի ղեկավարությունը հասնում է այն բանին, որ երկրապահ տղաների մոտ իշխում է միայն մեկ գաղափար ու մեկ ձգտում՝ միահանուռ ուժերով փրկել հայրենիքը՝ կռվող մարտիկից հեռու պահելով գաղափարական տարածայնությունները, քաղաքական շահարկումներն ու կուսակցական տարաբնույթ մոտեցումները: Պահանջների հավասարություն, կարգապահություն բոլորի համար՝ զինվորից մինչեւ հրամանատար, փոխհամաձայնություն

դասակների եւ ջոկերի միջեւ, խստապահանջություն ռազմական իրադրությանը համապատասխան, անխափան կապ երկրապահ ազատամարտիկների եւ ժողովրդի միջեւ, քաջության փառաբանություն եւ վախկոտության նշավակում, անսասան հավատ հաղթանակի նկատմամբ:

Ահա գունարտակի գործունեության ընդերքում մշտապես գործող կանոններն ու օրենքները:

Գունարտակն առանձին վաշտերից ու դասակներից (նախկին ջոկատներից) կազմված մի կուռ ամբողջություն էր, որտեղ ամեն մեկը գիտեր իր անելիքը եւ պատրաստ էր կատարելու ամեն մի մարտական առաջադրանք:

Գունարտակն իրենից ներկայացնում էր նախաբանակային հզոր զորամիավորում՝ բանակին հատուկ զորային ստորաբաժանումներով: Գունարտակը բաղկացած էր երեք մարտական վաշտից: Վաշտերն իրենց հերթին բաժանվում էին դասակների, դասակները՝ ջոկերի, ինչպես սովորաբար լինում է բանակում: Գունարտակի յուրաքանչյուր վաշտ ուներ մարտական գործունեության իր տեղանքը եւ գործում էր ռազմաճակատի իրեն հատկացված հատվածում:

Գունարտակի առաջին վաշտը գործում էր հիմնականում Շուռնուխի եւ Գորիս-Կապան ավտոճանապարհի պաշտպանության հատվածներում՝ վաշտի հրամանատար Վլադիկ Ստեփանյանի գլխավորությամբ: Այս վաշտում ընդգրկված էին Գորիս քաղաքի, Քարահունջի, Հարժիսի եւ Խոտ-Որոտան գյուղերի երկրապահ կամավորական ազատամարտիկները:

Գունարտակի երկրորդ վաշտը՝ Մելիքսեթ Պողոսյանի (Մելո) գլխավորությամբ, գործում էր ռազմաճակատի Խնածախ, Տեղ գյուղերի պաշտպանության հատվածներում:

Վաշտում ընդգրկված էին Տեղ, Խնածախ, Վաղատուր, Խոզնավար, Քարաշեն, Արավուս գյուղերի ջոկատների երկրապահ ազատամարտիկները:

Շրջանի հարավային սահմանների պաշտպանության հատվածներում (Հարթաշեն, Խնձորեսկ, Կոռնիձոր) գործում էր գունարտակի երրորդ վաշտը՝ Սանասար Բեգլարյանի (Սանո) գլխավորությամբ:

Ավներ, Վերիշեն, հետագայում նաեւ Կոռնիձոր գյուղերի կամավորա-

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՍԱՐՏ)

կան ջոկատները՝ Սերյոժա Սեդրակյանի, Ստյոպա Արզումանյանի եւ Սերյան Գալստյանի ղեկավարությամբ, կատարել են գումարտակի հրամանատարի հատուկ հանձնարարությունները:

Գումարտակի վաշտերի միջև մարտական գործողությունների այսպիսի տեղաբաշխումն ամենեւին չէր նշանակում, թե գումարտակի ստորաբաժանումները գործում էին իրարից անջատ եւ կապ չունեին մեկը մյուսի հետ: Գումարտակի հրամանատարությամբ օպերատիվ աշխատանքի շնորհիվ ստորաբաժանումների միջև փոխադարձ կապը ցանկացած պահի ապահովվել է եւ նկատի է առնվել պահի թելադրանքը: Այնպես որ, Կոռնիժորի սահմաններում գործող վաշտը թշնամու քայլերին համապատասխան, կարող էր հայտնվել Որոտան-Շուռնուխ հատվածում եւ ընդհակառակը:

Գումարտակի վաշտերն ու դասակները մշտապես գտնվել են փոխադարձ կապի մեջ եւ իրադարձության պահանջով իրար փոխօգնության են հասել՝ գործելով միասնական մարտական կանոնադրությամբ ու համապատասխան գրաֆիկով:

Գումարտակն իր ստեղծման օրից սկսած ազերի հրոսակների դեմ մտնում է մարտական գործողությունների մեջ եւ վճռական դեր կատարում թշնամուն հայոց սահմաններից հեռու քշելու եւ ջախջախելու գործում:

1992թ. արյունալի մարտերը շարունակվում են Արցախում: Թշնամին իսկական նվաճողական պատերազմ է սկսում Գորիսի սահմանների վրա: 1992թ. ապրիլ-մայիս ամիսների բոլոր օրերի ընթացքում ազերիները վայրագորեն հրետակոծում են ամբողջ Գորիսը՝ նպատակ ունենալով խարխուլել հայոց սահմանների պաշտպանական դիրքերը, ամայացնել սահմանամերձ բնակավայրերը, Ղարաբաղն իսպառ կտրել մայր Հայաստանից եւ բացառել որեւէ օգնություն մարտնչող Արցախին:

Հրթիռային կայանքներից, հրանոթներից, մոտոհրաձգային տեխնիկայի բոլոր տեսակներից անխնա հրետակոծվում է Գորիս քաղաքը, Խնածախ, Կոռնիժոր, Շուռնուխ, Տեղ, Արավուս, Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ գյուղերը: Չայզամից խոզնավար ու մինչեւ Կոռնիժոր ընկած տարածքները վերածվում են վիթխարի կրակագծի: Վայրագ թշնա-

մին գերակշիռ տեխնիկայի եւ հրետանու հզոր միջոցներով կարողանում է զգալի վնասներ պատճառել սահմանամերձ բնակավայրերին: Մի օրվա ընթացքում միայն Տեղ գյուղում ութ բնակչե՞նք է ավերվում, հրդեհներ են բռնկվում Խոզնավարում, Կոռնիժորում, Խնձորեսկում, Ներքին Խնձորեսկում: Թշնամին կանգ չի առնում ոչ մի միջոցի առջեւ՝ դիմելով պատերազմելու ամենաստոր քայլերին:

Սահմաններում տիրող իրավիճակը հրամայաբար պահանջում է համախմբել բոլոր ուժերը, ամրապնդել սահմանների պաշտպանությունը եւ հնարավոր բոլոր միջոցներով ճնշել հակառակորդի բոլոր կրակակետերը, ռազմական հեռակետերը: Գլխավոր խնդիրը Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի բացումն էր, որ շարունակում է ազերիների կողմից փակված մնալ, Մարդասիրական ճանապարհի բացումը կյանքի չափ անհրաժեշտ էր, եւ դա մնում էր հայոց մարտական ուժերի գլխավոր ռազմավարական նպատակը:

1992թ. ընդհանրապես հարուստ էր կարելու իրադարձություններով ու անցքերով, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան եւ Հայաստանի, եւ Արցախի ժողովուրդների համար:

1992թ. հունվարի վերջին Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհուրդը Ղարաբաղը հռչակեց անկախ պետություն:

Ազգերի ինքնորոշման այս միանգամայն իրավացի որոշումը Ադրբեջանի կողմից ընկալվեց որպես հակասահմանադրական ոտնձգություն իր տարածքային ամբողջականության դեմ եւ ազերիների ռազմական մեքենան ամբողջ թափով նետվեց ազատատենչ Արցախի եւ նրան սատարող Հայաստանի դեմ: Սկսվեց հայ ժողովրդի հայրենական-ազատագրական պատերազմը մեծապետական հովերով տարված ադրբեջանական նվաճողների դեմ:

1992թ. հունվարի 28-ին, որը համարվում է հայոց բանակի ստեղծման օր, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի հրամանագրով ստեղծվում է Հայաստանի պաշտպանության նախարարություն: Պաշտպանության նախարար է նշանակվում Վազգեն Սարգսյանը:

Թշնամական հորդանքերը զսպելու եւ Ղարաբաղի ժողովրդի ազատությունը

պաշտպանելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է ընդունում ստեղծել հանրապետության ինքնապաշտպանական ուժեր եւ ինքնապաշտպանության կոմիտե:

Ամբողջ Ղարաբաղում հաստատվում է արտակարգ դրություն: Մեծից փոքր զինվորանուն են, ողջ ժողովուրդը, «Մահ կան ազատություն» զոչելով, խրամատավորվում է սեփական տանը՝ պատրաստ մարտնչելու մինչեւ վերջին մարդը: Ղարաբաղյան ազատամարտերին հսկայական օգնություն են ցույց տալիս Հայաստանից գնացած ուժերը, որոնց մեջ կային նաեւ տասնյակ գորիսեցիներ:

1992թ. փետրվարի 26-ին հայկական ինքնապաշտպանական ուժերի ռազմական փայլուն օպերացիայի շնորհիվ ազատագրվում է Խոջալուն: Ադրբեջանի ռազմավարական հզոր հեռակետերից մեկը՝ Խոջալուն, ոչնչացվում է: Դրանով իսկ վերացվում է Խոջալուից Արցախին սպառնացող մահացու վտանգը:

Խոջալուից հետո մայիսի 8-ին ազատագրվում է Շուշին: Ռազմավարական նրբագույն արվեստի տեսակետից Շուշիի ազատագրումը մինչեւ հիմա էլ շատերին է զարմացնում, թե այդ ինչպես եղավ, որ հայության մի փոքր հատվածի մի քանի տասնյակ տղաներ կարողացան հողմացրիվ անել մինչեւ ատամները զինված ազերական բանակի հզոր որջը:

1992թ. մայիսի 18-ին հայկական ինքնապաշտպանական ուժերը շեշտակի գրոհով ազատագրում են Լաչինը՝ պատմական Հայաստանի Աղահեջք գավառը, որը բնակեցվել էր թրքախոս քրդերով, հետագայում նաեւ ադրբեջանցիներով: Ազերիներն այստեղ էլ պարտություն են կրում: Լաչինի ընդամենը 7 կիլոմետրանոց միջանցքից փախչում են ավելի քան 7.5 հազար թրքախոս քրդեր, որոնք չեն ուզում կռվել հայերի դեմ:

Ազերական բռնության դեմ տարած հայ ժողովրդի այս հաղթանակները մի անգամ եւս ցույց տվեցին, որ հանուն ազատության եւ անկախության ճանապարհը հետընթաց չունի եւ հնա-

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏ)

րավոր չէ հաղթել մի ժողովրդի, որ հանուն ազատության մեծից փոքր զինվոր է դարձել: Ժողովուրդն ամուր ու միական կանգնել է իր զինվորության թիկունքին: Մարդասիրական միջանցքի բացումից ընդամենը երկու օր հետո Հայաստանից մոտ երկու հարյուր մեքենա սննդամթերք, հագուստեղեն, դեղորայք եւ այլ տեսակ ապրանքներ են առաքվում Ղարաբաղի ժողովրդին: Ինչպես ողջ հայ զինվորությունը, այնպես էլ Գորիսի III պայմանագրային գումարտակն իր թիկունքին միշտ էլ զգացել է իր ժողովրդի կենարար շունչը:

Գումարտակն իրեն գորեղ է զգացել ժողովրդով, իր զավակների հետեւին կանգնած բնակիչներով: Ինչպես ասում են, ժողովուրդն էլ բանակվել է իր բանակի թիկունքում: Եվ ոչ միայն տեղի ժողովուրդը, այլև ամբողջ հայությունն է սատար կանգնել իր բանակին:

Հայոց մեծ ազատամարտին սատարել են նաեւ բազմաթիվ սփյուռքահայեր: Ամերիկայի Միացյալ Նահանգներից Ռոբերտ Գրիգորյանը մեծ չափի օգնություն է քերել Հայաստան, որից բաժին է հասել նաեւ Գորիսին:

1992թ. օգոստոսին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի օգնությամբ գնվեց 32 տանկ: Հայ տանկիստ մարտիկները ճանապարհ են ընկնում դեպի ազատություն, դեպի Արցախ՝ իրենց հետ տանելով վեհափառի օրհնությունը:

1992թ. հունիսի 10-ին Գորիս է ժամանում Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը եւ ելույթ ունենում տեղի զինվորության ու ժողովրդի առջեւ: Նա իր ելույթում մասնավորապես ասում է այն մասին, որ ճիշտ է, բացվել է Լաչինի մարդասիրական միջանցքը, բայց երկրի հարավային ուղղությամբ վտանգը դեռ առկա է եւ պետք է պատրաստ լինել թշնամու նոր հարձակումներին:

Հայոց Սպարապետի այցն ամրապնդում է ժողովրդի հավատը հաղթանակի նկատմամբ, հայրենասիրական նոր խանդավառությամբ համակում զինվորությանը, երկրապահ գումարտակայիններին: Տեղական հոգսերն ու խնդիրները հօդս են ցնդում, հայրենիքի պաշտպանությունը դառնում է գերագույն խնդիր:

Իրոք, վիճակը չափազանց ծանրանում է Կոռնիձորի, Ներքին Խնձորեսկի, Խնձորեսկի, Տեղի եւ Շուռնուխի ուղղություններում:

Չհաշտվելով Լաչինի եւ միջանցքը կորցնելու մտքի հետ՝ հակառակորդը նոր ուժեր է կենտրոնացնում երկրի հարավային շրջաններում եւ մեծ ուժերով հակահարձակման անցնելով՝ փորձում նորից տիրանալ Լաչինի մարդասիրական միջանցքին: Թշնամին միաժամանակ շարունակում է հայկական դիրքերի եւ սահմանամերձ բնակավայրերի զանգվածային հրետակոծությունները:

1992թ. օգոստոսին հայկական զորամիավորումները պաշտպանական դիրքեր են գրավում Ամավան (Ձաբուղ) գյուղի կամրջի, Հոջազի եւ դեպի Կուբաթլու տանող ճանապարհի մատույցներում՝ դեպի Լաչինի միջանցքը թշնամու կողմից առաջխաղացման փորձերը կանխելու համար: Տեղ գյուղի մոտակա բարձունքներին «գրադ» կայանքներ են տեղադրվում, ինչպես նաեւ ծանր հրետանի: Հայկական կողմը լայնամասշտաբ հարձակման է նախապատրաստվում Հոջազ, Թիզիկ, Սեյդլար, Կուբաթլու, Մուլաշար, Լիսագոր, Ստրոյկա ուղղություններով, որտեղ թշնամին ուներ ռազմական մեծ ուժեր: Այս ուղղությունների վրա գործում էր նաեւ Գորիսի երկրապահ կամավորական գումարտակը: Գումարտակի կամավորականները քաջաբար կռվում են թշնամու դեմ՝ մեկը մյուսի հետեւից ոչնչացնելով թշնամու կրակակետերը:

Շուտով ազերական զորամասերը լայնամասշտաբ հարձակումներ են ձեռնարկում Կոռնիձոր գյուղի ուղղությամբ՝ Լաչինի շրջանի Մալախալախի գյուղի տարածքով եւ ճիզեր գործադրում մոտենալ մարդասիրական միջանցքին, այն նորից փակելու նպատակով: Սակայն արժանի հակահարված ստանալով՝ թշնամին ետ է նահանջում՝ մարտադաշտում թողնելով մեծաքանակ տեխնիկա եւ մարդկային զգալի կորուստներ: 1992թ. ամառային շրջանում մոտ 75 օր գումարտակի առանձին դասակներ (Տեղ, Շինուհայր, Խնձորեսկ, Գորիս քաղաք, Կոռնիձոր, Հարթաշեն, Խնածախ, Խոզնավար) հերոսական կռիվներ են մղում թշնամու դեմ՝ կասեցնելով նրա առաջխաղացումը դեպի մարդասիրական միջանցք:

1992թ. օգոստոսին իրավիճակը

բարդանում է Շուռնուխի, Բարձրավանի եւ Թասի ոլորանների տարբեր տեղամասերում:

Գորիսին թիկունքից հարվածելու եւ հայկական ուժերի զգալի մասն այստեղ կաշկանդելու նպատակ հետապնդելով, թշնամին Թասի լեռնանցքը եւ նրա հարակից շրջանները ենթարկում է զանգվածային հրետակոծության եւ միաժամանակ «Օխտի մեջք» կոչվող տարածքից սկսում բավական խոշոր ուժերով հարձակվել Շուռնուխի ուղղությամբ: Այստեղ տեղաբաշխված Գորիսի երկրապահների գումարտակի առաջին վաշտը՝ Մարատ Աթաբեկյանի գլխավորությամբ, մարտի մեջ է մտնում թշնամու դեմ: Տղաները կռվում են քաջաբար, անձնուրաց: Սակայն իրավիճակը քանի գնում բարդանում է: Ուժերն անհավասար էին: Անձնուրաց կռվող տղաները գիտակցում են, որ այդպես երկար դիմադրել չեն կարող թշնամու տասնապատիկ շատ ուժերի դեմ: Օգնությունը խիստ անհրաժեշտ է: Շուտով գումարտակն իր հիմնական կազմով տեղափոխվում է ռազմաճակատի այս չափազանց կարեւոր հատվածը: Շուռնուխ-Չայզամի-Թաս հատվածներում կռվող տղաներին օգնության է հասնում նաեւ մեր հրետանին: Հմուտ հրետանավոր Սամվել Աղաջանյանն իր ընկեր հրետանավորների հետ հրամոքները մեծ դժվարությամբ կարողանում է տեղափոխել Բարձրավան գյուղի բարձունքները եւ այնտեղից կրակի տակ առնում գրոհող թշնամուն: Գումարտակը Շուռնուխի մատույցներում տեղի ունեցած համառ ու անզիջում կռիվների ընթացքում կարողանում է ապահովել Գորիսի անվտանգությունը: Թշնամուն այդպես էլ չի հաջողվում փակել Գորիս-Կապան ավտոճանապարհը, որն ուներ ոչ միայն ռազմական, այլ նաեւ կենսական նշանակություն: Գումարտակի տղաների քաջության եւ անվեհերության շնորհիվ հակառակորդի գրոհները կասեցվում են Շուռնուխի ուղղության վրա: Աղբբեջանի ռազմական մեքենան գործում էր ամբողջ թափով՝ անընդմեջ ստանալով նոր համալրումներ: Թշնամին շարունակում էր գիշեր-ցերեկ ռմբակոծել-արկակոծել Լաչինի միջանցքն ու նրա հարակից շրջանները: Աղբբեջանցիները հույսեր էին փայփայում, որ իրենց կհաջողվի ետ գրավել Լաչինը եւ այստեղով անցնող մարդասիրական միջանցքը: Նրանք իրենց հույսը դրել էին

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՍԱՐՏ)

ռազմական տեխնիկայի եւ մարդկային ուժի քանակային առավելության վրա: Բայց հաշվի չէին առել հայ զինվորի, կամավոր երկրապահի ոգու գորուբունը: Ազերիներն այդպես էլ չհասկացան, որ երկրապահ կամավորականները վարձկաններ չեն եւ կռվում են իրենց հողի եւ ազատության, արդարության վերականգնման համար:

1992թ. օգոստոսի 29-ին եռաբլուրում Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ տեղի է ունենում մահապարտների գումարտակի երդման արարողությունը եւ գիշերը՝ մոմի լույսի տակ հատուկ վաշտի հրամանատար Գագիկ Շառոյանը ընթերցում, իսկ մյուսները բառ առ բառ կրկնում են երդման տեքստը:

Գորիսի գումարտակի կամավորականները գիտեին այդ մասին եւ դրանում զարմանալի բան չէին տեսնում: Նրանց համար դա հայոց սխրանքի սովորական մի արտահայտություն էր, քանի որ Հայաստանի եւ Արցախի համար կռվի ելած երկրապահ կամավորականներն էլ պակաս մահապարտներ չէին եւ կռվում էին անձնագրի նվիրումով, հայրենիքի փրկության համար նահատակվելու պատրաստակամությամբ: Դա մեր ժողովրդի պայքարի եւ ազատության աստեղային պահն էր, որտեղ առանց հարկադրանքի ու հրամանների հերոսանում էին նրա արժանավոր զավակները: Հայոց կռիվը համազգային էր, արդարությամբ օժտված, միակամ եւ միասնական եւ պիտի հաղթական ելք ունենար:

Բայց եղել են նաեւ անհաջողություններ:

Դրանից ամենաողբերգականը տեղի ունեցավ 1992թ. հունիսի 29-ին: ԼՂՀ-ի Մարտակերտի հատվածի Հասանդալի համար մղված ահեղ մարտերում հայ կամավորականները, հերոսաբար դիմադրելով թշնամու մեծաքանակ ուժերին, ինքնամոռաց մխրճվում են թշնամական դիրքերի խորքը եւ հայտնվում ծուղակում: Անհավասար մարտում հայ ազատամարտիկների մեծ մասը զոհվում է, իսկ 79 տղաների ճակատագիրը մինչեւ այսօր էլ մնում է անհայտ: Նրանց մեջ եղել են նաեւ սյունեցիներ: Այդ օրը՝ հունիսի 29-ը, հռչակվում է որպես «Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օր»:

Սակայն մարտական այս եւ նման անհաջողությունները (Արծվաշենի կորուստը եւ այլն) չընկճեցին հայ ժողովր-

դի պայքարի ոգին: Ողջ հայությունը պատրաստ էր թշնամու դեմ կռվելու մինչեւ վերջնական հաղթանակ:

Իսկ հայոց բանակն արդեն կայանում էր:

II 1992թ. հունիսի 17-ին արդեն պատրաստ էին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ռազմավիացիոն ստորաբաժանումները: Դա նշանակում էր, որ հոխորտացող Ադրբեջանի օդային ուժերի դեմ հայերն էլ իրենց օդուժն ունեին:

Նույն թվականի սեպտեմբերին հայկական զինուժն արդեն ուներ ինժեներական, իսկ հոկտեմբերին՝ հրետանային զորքեր: Այս ժամանակաշրջանում է ստեղծվում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հետախուզական զորամասը: 1992-ի նոյեմբերին կազմավորվում է հայկական զինուժի 5-րդ մոտոհրաձգային բրիգադը: Այսինքն՝ այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր իսկական կանոնավոր բանակ ունենալու համար:

1992թ. վերջերին եւ 1993-ի սկզբներին հայոց մարտական ուժերի գլխավոր մտահոգությունը դարձյալ կապված էր Լաչինի միջանցքը պաշտպանելու կարելու խնդրի հետ:

Հակառակորդը շարունակում էր հզոր ուժեր կուտակել ռազմաճակատի այս հատվածում՝ նախապատրաստվելով լայնածավալ հարձակման: Թշնամու հրետանին գործում էր աշխարհագրական բավական մեծ տարածության վրա՝ Լաչինի միջանցքի եւ Գորիսի սահմանների ողջ երկարությամբ: Լաչինի պաշտպանության եւ Ստրոյկա-Կոռնիձոր հատվածների շրջանում ազերիները մարտի մեջ են նետում Սու-24 ռմբակոծիչ ինքնաթիռներ: Հայկական ինքնապաշտպանական ուժերը, այդ թվում նաեւ Գորիսի գումարտակը, ծանր մարտեր են մղում Կուբաթլուի տարածքից թշնամու ձեռնարկած գրոհները կանխելու համար: Թնամու կրակակետի մի մասը լրջեցվում է: Մագրի Դուգից եւ Կուբաթլուի կողմերից հարձակվող թշնամին ուժեղ հակահարված է ստանում:

Միջանցքի համար ծավալված մարտերում Գորիսի գումարտակի տղերքը ցուցաբերում են առանձնահատուկ տոկոսություն եւ հերոսություն:

Զինկոմ Սերգեյ Գրիգորյանը, Գորիսի զինվորական ակտիվի հավաքում բարձր գնահատելով երկրապահների գումարտակի գործունեությունը, ասում է, որ կամավորականների գումարտակը բանակ չէ, բայց ամեն ինչ անում է այնպես, ինչպես բանակում:

Գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանը կարելու է ռազմական տեխնիկային տիրապետող մասնագետների խնդիրը, նշում, որ համապատասխան տեխնիկա արդեն կա, բայց զգացվում է այդ տեխնիկային տիրապետող մասնագետների պակաս:

1992թ. օգոստոսի վերջերին առանձնապես ծանր մարտեր են տեղի ունենում Լաչինի շրջանի հայկական պահակակետերի եւ ազերիների միջև: Միեւնույն ժամանակ հակառակորդը Կուբաթլիի շրջանից ընդհուպ մոտենում է Շուռնուխին: Ծանր մարտերից հետո բոլոր ուղղություններում էլ թշնամին, զգալի կորուստներ տալով, ետ է մղվում:

1992թ. օգոստոսի 31-ին հակառակորդը Սու-25 գրոհային ինքնաթիռով ռմբակոծում է Լաչինի միջանցքը: Հայ մարտիկներին հաջողվում է խփել ինքնաթիռը, որն ընկնում է Լիսագորի շրջակայքում:

Լաչինի մարդասիրական միջանցքը պահպանելու համար Գորիսում եւ ռազմաճակատի հարավ-արեւելյան հատվածներում արտակարգ ռազմական դրություն է մտցվում:

Այս ժամանակ հանրապետության նախագահի հրամանով Գորիսի պարետատան պարետ էր նշանակված ԱԻՄ-ի նախագահ Պարույր Հայրիկյանը: Մի ուրիշ հրամանով հանրապետության հարավ-արեւելյան ջոկատի Գորիսի վաշտն անցնում է պաշտպանության նախարարության ենթակայության տակ եւ վաշտի հրամանատար է նշանակվում Կամո Քոչունցը:

Որպես պարետ, Ելույթ ունենալով հանրության առջև, Պարույր Հայրիկյանն ասում է, որ Գորիսի մատույցներում մենք երեւանն ենք պաշտպանում:

1992թ. հոկտեմբերի երկրորդ կեսին մարդասիրական միջանցքի տարածքում գտնվող Հոչազ գյուղի մատույցներում թե՛ մարտեր են ծավալվում: Ազերիները նորից ու նորից են փորձում ճեղքել հայերի պաշտպանությունը, գրավել եւ փակել միջանցքը:

Այս շրջանում Հայաստանի պաշտ-

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏ)

պանության նախարարն էր Վազգեն Մանուկյանը:

Վիճակը շարունակվում էր ծանր մնալ նաև Գորիսի թիկունքում՝ Գորիս-Կապան ավտոճանապարհի տարբեր մասերում, հատկապես Շուռնուխի մատույցներում:

II 1992թ. հոկտեմբերի 17-ին ազերական մի ռմբակոծիչ կարողանում է անցնել Լաչինի միջանցքը, մտնում Գորիսի տարածքը եւ ռումբ նետում շրջանի հյուսիս-արեւմտյան հատվածում: Ազերիների ամենամահաջողակ առաջնորդներից մեկը՝ Էլչիրեյը, նախագահական իր ծառոււն երդվում է 1992թ. վերջին ազերական բանակի զորահանդեսը անել Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում:

Սակայն ինչպես միշտ, այս անգամ էլ Էլչիրեյի հաշիվները սխալ դուրս եկան: Ռազմաճակատի եւ ոչ մի հատվածում ազերական բանակը չի կարողանում հասնել որեւէ շոշափելի հաջողության: Ընդհակառակը, նրանք մեկը մյուսին զիջում են իրենց դիրքերը, եւ շուտով Լաչինի մարդասիրական միջանցքը դառնում է լիովին անվտանգ:

Հայրենապաշտպան այս կռիվների ողջ ընթացքում իրեն հիանալի է դրսևորում Գորիսի երկրապահ կամավորականների գունարտակը՝ անցնելով մարտական սխրանքների ամոռանալի ճամփաներով:

1993թ. սկզբներից Հայաստանի զինված ուժերում տեղի են ունենում կառուցվածքային կարելոր փոփոխություններ: Հունվարի 1-ից ներքին գործերի նախարարությունը հանրապետությունում ստեղծում է 9 ռեգիոնալ վարչություն, որոնցից մեկը Սյունիքում:

Հունվարի 13-ին Գորիսի շրջանում ստեղծվում է մոտոհրաձգային նոր ստորաբաժանում, որի հրամանատարը նշանակվում է ազատագրական մարտերում թրծված փոխգնդապետ Սերգեյ Գրիգորյանը: Միեւնույն ժամանակ հանրապետության պաշտպանության նախարարությունը պետական կարգավիճակ է տալիս Սյունիքի բոլոր աշխարհագրային միավորումներին:

Այս ամենը հնարավորություն է ընձեռում ավելի կենտրոնացնելու հարավ-արեւելյան ռազմաճակատի զինային ուժերը եւ ավելի նպատակասլաց օգտագործելու ռազմական տեխնիկայի հնարավորությունները: Այդ փոփոխությունների իրական արդյունքները շուտով իրենց զգալ տվեցին թշնամու դեմ մղվող հետագա կռիվների ընթացքում:

Դրան մեծապես նպաստեց նաև այն հանգամանքը, որ Գորիսը դարձավ Պետական նախարարի աթոռանիստ քաղաք: Վազգեն Սարգսյանը պետնախարարի պաշտոնով եկավ Գորիս՝ Արցախի թիկունքը ամրացնելու եւ Ձանգեզուրը տնտեսապես ամրացնելու լիազորություններով: «Արցախը պահելու համար թիկունքում մենք պետք է ունենանք հզոր Ձանգեզուր», - Գորիսում իր առաքելությունն այսպես է բացատրել հայոց Սպարապետը:

Երկարատեւ ու արյունալի մարտերից հետո 1993թ. ապրիլին վերջապես ազատագրվում է Քելբաջարը: Հայոց սահմանների մոտ լիակատար պարտություններից հետո թշնամին քաշվում է դեպի Կուբաթլու եւ Խնձորեսկից հարավ խոշոր ուժերով դիրքավորվում Դուրբան թափա (Մատաղասար) կոչված վայրում: Ազերիները ճիգեր էին գործադրում այստեղ կանգնեցնել հայոց ուժերի առաջխաղացումը եւ լրացուցիչ այլ ուժեր ներքաշելով այստեղ՝ այն դարձնել ռազմական ուժեղ հենակետ՝ նախապատրաստվելով նոր հարձակումների: Հայկական կողմը, գիտակցելով թշնամու այս մտադրությունները, միջոցներ է փնտրում հակառակորդին ոչնչացնելու եւ գրաված դիրքերից ետ քշելու համար: Ոչ մի դեպքում չէր կարելի թույլ տալ, որ սահմանի մերձակայքում ամրանա թշնամին, քանի որ դա նշանակում էր նոր հրետակոծություններ, նոր ավերումներ:

Այստեղ են հավաքագրվում հայոց զինուժը ներկայացնող տարատեսակ զորամասեր: Հիմնական զորուժը Գորիսի երկրապահ կամավորականների գունարտակն էր, որի հետ թշնամու դեմ ճակատելու են գալիս Գորիսի մոտոհրաձգային զնդի տանկիստները, բանակի զինվորության անձնակազմեր, մարտիկներ «Տիգրան Մեծ» ջոկատից: Կարելոր նշանակություն ունեցող այս գոտեմարտը ազերիների դեմ դեկավարում է Գորիսի երկրապահների գունարտակի հրամանատար Սուրեն Սերգեյի

Խաչատրյանը:

Ճակատամարտը սկսվում է 1993թ. օգոստոսի 27-ին: Թշնամին համար դիմադրություն է ցույց տալիս: Մարտական հաջողությունները թեքվում են մեկ ազերիների, մեկ հայերի կողմը: Թշնամին փորձում է տանկերի գերակշռությամբ ճնշել հայերի դիրքերը, ճեղքել պաշտպանությունը: Հակառակորդը այստեղ նաև օդուժ է օգտագործում:

Սակայն թշնամին դատապարտված էր կործանման: Հայոց քաջերը կռվում էին անձնագոհ մվիրվածությամբ:

Մի քանի ժամ տեսած ճակատամարտը ազերիները տանուլ են տալիս եւ խուճապահար գլորվում դեպի Կուբաթլու:

Դուրբան թափա կոչված տեղանքում մի նոր հերոսական էջ է գրվում ազատագրական պատմության մեջ: Գորիսի երկրապահ ազատամարտիկները ցույց են տալիս զանգվածային հերոսության օրինակ:

Օգոստոսի 31-ին Հաղորութի կողմից Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը մտնում են Կուբաթլու: Չդիմանալով հյուսիսից հարձակվող հայոց ուժերի ճնշմանը եւ խուսափելով երկու կողմից շրջապատման մեջ ընկնելու վտանգից՝ ազերական ջախջախված զորամասերի մնացորդները խուճապահար փախչում են դեպի Արաքսի ափերը: Ազատագրվում է Կուբաթլուն՝ սահմանային այն հզոր ռազմակայանը, որտեղից թշնամին անընդհատ կրակի տակ էր պահում Գորիսի եւ Կապանի բնակավայրերը: Նույն թվականի աշնանը ազատագրվում է Ձանգեղանը, որից հետո հայկական եւ ղարաբաղյան զորամիավորումները միասնական ուժերով մտնում են Հորադիզ եւ անցնում պաշտպանության:

Հայ-ազերական հակամարտության մեջ առանձնահատուկ կողմերով նշանավորվեց հորադիզյան կռիվների շրջանը, երբ արդեն դանդաղորեն փակվում էր պատերազմական գործողությունների վարագույրը, եւ ադրբեջանական բանակը վերջին ճիգերն էր գործադրում բեկում մտցնելու պատերազմի ընթացքի մեջ: Կուբաթլուի, Ձանգեղանի, Ֆիզուլուի անկումից հետո սա վերջին հենակետն էր, որից կառչել էր թշնամին:

1994թ. գարնան սկզբներից հակամարտության ճակատային գիծը անցնում էր Հորադիզով: Այստեղ՝ Հո-

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՍԱՐՏ)

րադիզ կայարանի մատույցներում, հակառակորդը կենտրոնացրել էր ռազմական հզոր միջոցներ եւ ուներ մարդկային ուժի կրկնակի, եռակի առավելություն:

Բացի սեփական ուժերից՝ ադրբեջանական զորամիավորումներին էին եկել միացել թուրքիայից, Չեչնիայից, Իրաքից ժամանած սպառազեն վարձկանների ու ահաբեկիչների ավազակախմբերը: Հայկական կողմը թշնամու դեմ հանել էր հայոց նորաստեղծ բանակի զորամասեր, որոնց միացել էին երկրապահ կամավորների տասնյակ ջոկատները եւ Ղարաբաղի ինքնապաշտպանական զորամասերը:

Ղարաբաղի եւ Սիսիանի զորային ուժերի հարեւանությամբ պաշտպանական իրենց դիրքերում ամուր կանգնած էին նաեւ Գորիսի երկրապահ գումարտակի տղերքը, որոնք ռազմաճակատի իրենց հատվածում արդեն մի քանի անգամ ետ էին մղել թշնամու կատաղի գրոհները: Հորադիզի ռազմաճակատի հրամանատարն էր գեներալ Հմայակ Հարոյանը: Կապան-Մեղրի զորամիավորումները գլխավորում էր Սիքայել Գրիգորյանը, իսկ Գորիս-Սիսիան զորամիավորման հրամանատարն էր գեղապետ Վալերի Գրիգորյանը:

Թշնամին ուժեղ էր: Հայերն անցել էին տեսական պաշտպանության: Հակառակորդը մոտ երեք ժամ հեռահար թնդանոթներով, գրադներով ու տանկերով հրետակոծում էր հայկական դիրքերը:

Պատմում են, որ խրամատից խրամատ շարժվելը դառնում է անհնարին: Կապը չի աշխատում:

Տեսական ավերիչ հրետակոծությունից հետո ազերիներն անցնում են զանգվածային հարձակման: Ազերական տանկերը առաջ են շարժվում: Տանկերի հետեւից հոծ շարքերով առաջ են շարժվում հետեւակայինները: Կարծելով, թե հայերի կենդանի շունչ չի մնացել, ազերի ասկյարները գոռում-գոչումներով սլանում են առաջ... Բայց ահա ազերիների համար բոլորովին անսպասելի հայ տղաները հող ու ավազի տակից դուրս են գալիս... Խփվում է թշնամու առաջատար տանկը, հետո երկրորդը: Հայ քաջերը նույնիսկ վիրավոր վիճակում գնդացրային կրակահերթով ոչնչացնում են հակառակորդի շփոթված ու զարմացած հետեւակայիններին: Կասեցվում են թշնամու գրոհները:

Թշնամին պարտություն է կրում նաեւ այստեղ՝ Հորադիզի կիսաանապատային հարթավայրում:

Հորադիզի հաղթանակով վերջ դրվեց պատերազմական գործողություններին:


Հաղթանակը, ավա՛ղ, ձեռք բերվեց թանկ կյանքերի գնով: Արցախյան ազատամարտին մասնակցեցին շուրջ հիսուն հազար հայեր, որոնցից մոտ չորս հազարը Արցախից զոհվեցին, 3.5 հազարը՝ Հայաստանից:

Գորիսի երկրապահ կամավորական գումարտակը կորցրեց իր ամենաքաջ տղաներին:

1992-94թթ. մարտական գործողությունների ընթացքում Գորիսի ենթամարզից զոհվեցին 20 զինվորներ: 1992-93թթ. ազերական վայրագ հրետակոծություններին Գորիսի ենթամարզից զոհ են դարձել 63 խաղաղ բնակիչներ:

Պատերազմի դաշտում թշնամին պարտվեց: Պատերազմը տեղափոխվեց դիվանագիտական դաշտ, որը մինչեւ հիմա էլ շարունակվում է: 1994թ. մայիսին ստորագրվեց համաձայնագիր կողմերի միջեւ հրադադար հաստատելու մասին:

Հորադիզից հետո հրամայական պահանջ է դառնում սահմանների պաշտպանության խնդիրը: Հրադադարը դեռ չէր նշանակում, որ պատերազմը դադարել է: Հայ զինվորը տուն վերադառնալ չէր կարող: Հրադադարից հետո Գորիսի երկրապահների գումարտակը մի քանի օրով վերադարձավ Գորիս: Որոշ երկրապահներ դուրս եկան նրա կազմից, բայց գումարտակը նոր պայմաններում շարունակեց իր մարտական գործողությունները: Գումարտակի երկրապահների մեծ մասը համալրեց հայոց բանակի շարքերը, դարձավ հայրենապաշտպան զինվոր եւ մեկնեց Հորադիզ՝ երկրի սահմանները պաշտպանելու: Գումարտակի զինվորները սկզբում Հորադիզի, այնուհետեւ Կուբաթլիի դիրքերում մնացին մինչեւ 1997թ. վերջը: Պատերազմից հետո գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանն անցնում է պետական այլ պաշտոնի: Գումարտակի նոր հրամանատար է նշանակվում Սուրեն Բաղդասարյանը, իսկ տեղակալ՝ Արայիկ Ղասուբյանը:



Սանասար Բեգլարյան
Ջոկատի հրամանատար



Մեկիստեթ Գրիգորյան
Տեղի ջոկատի հրամանատար



Սարգիսեյ Սայունց
Խնձորեսկի ջոկատի հրամանատար 1993-ից



Սլավիկ Սիմոնյան
Խանածախի ջոկատի հրամանատար 1990-ից



Սուրեն Բաղդասարյան
Գորիսի Քոլտակի ջոկատի հրամանատար 1988-92թթ.

ՂԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏ)

...Եւ գրոհում է գումարտակը

ԱԿՆԱՐԿ

Առաջին հայացքից դժվարաճանաչ դեմքեր: Չինվորական կեպին ու համազգեստը նրանց կեցվածքին խորոխտություն են հաղորդել. առնականության տարրը զատիչ է: Քիչ զննելուց ճանաչում են նրանց: Ծանոթ, հարազատ դեմքեր, որ օրը հազար անգամ անցել ենք միմյանց մոտով ու մեկմեկու գիտենք հինգ մատի պես, թեև բարեւ ու բարի լույս չի եղել: Իսկ այստեղ արդեն միմյանց ժպտում ենք հազար տարվա ծանոթի պես: Ժամապահը թեև լավ գիտի մեզ, բայց կարգ է՝ զեկուցում է հրամանատարին: Հրամանատարն էլ քաջածանոթ է՝ Սուրիկ Սերյոժայի Խաչատրյան:

Հրամանատարի աշխատասենյակում ցուրտ է: Մարդիկ բաճկոններով են: Պատին Անդրանիկ զորավարի մեծադիր նկարն է, որ գնացող-եկողին ասես բարի գալուստ ու ճամփա է մաղթում՝ լուսավոր ժպիտով: Եվ ժպիտը, որպես թախսման, զինվորը կռվի դաշտ է տանում, եւ թշնամին դառնում է հեշտ խոցելի, չնայած զինված է մինչեւ ատամները:

Սուրիկ Խաչատրյանն այս տարվա օգոստոսից Գորիսի շրջանի ինքնապաշտպանության գումարտակի հրամանատարն է: Գումարտակի ստեղծումը ժամանակի ծնունդ է՝ հրամայական լինելու ամենախստագույն աստիճանով, քանզի ժամանակը պետք ունի սրբագրության եւ պահը պատասխանատու է. հերոսականության որոշակի ու ընդգծված տարրերի կարիքը կա: Իսկ հակառակ դեպքում արդեն գալիք սերունդը չի ների:

Մեր ժողովուրդը, որ հազարամյակների ճամփա է անցել, ինչպես ամեն վտանգի ժամանակ, հիմա էլ երիտասարդացել է, նահանջելու տեղ չկա: Անարդար ժամանակը ծնկի բերելու պահն է: Եւ հայ ժողովրդի ընտրանին ռազմի դաշտում է: Եւ նրանք ապացուցում են, որ անցել է այն ժամանակը, երբ օտարների դրոշի

տակ էինք կռվում ու հերոսանում: Հիմա սեփական դրոշի, եռագույնի հովանու տակ կռվելու ժամանակ է: Եւ կռվում են: Փույթ չէ, որ նրանք հազարներ չեն: Գումարտակում այս տղաներին միավորել է լեռնաշխարհի շահը, նրա ապագան: Գորիսը եղել ու մնում է ռազմավարական նշանակության հենակետ, իսկ ամենից առաջ՝ Հայրենիք: Նրա մեկ սանտիմետրի կորուստն անգամ հավասարագոր է Հայաստանի սրտի տակ ատոմային ռումբ դնելուն: Գիտակցել այս ամենը, նշանակում է նաեւ հաղթանակի կեսը կռել: Քաջազուն տղերք են գումարտակին զինվորագրվածները: Նրանց ֆիդայու, ինչպես ժողովուրդն է ասում, հագուստը չի հրապուրել: Նրանց զինվորագրել է, միավորել հայրենիքի սերը, նրա անկախության, ազատության գաղափարը: Եւ ապացուցում են, որ անարժեք է մի ժողովուրդ, եթե նրա հոգում վարար գետի պես չի հորդում հայրենասիրությունը: Հրամանատարն էլ նախկինում զինվորական չէր: Նրան էլ այստեղ է բերել հայրենիքի վրա կախված վտանգը, եւ փորձել է իր ուժերի, հնարավորությունների սահմաններում նպաստ բերել վտանգված հայրենիքին:

Շատ չեն գումարտակին զինվորագրվածները:

– Եթե նոր երիտասարդներ եւս ցանկանան անդամագրվել մեր կազմավորմանը, հնարավորություն ունենք, – ասում է հրամանատարը:

– Յուրաքանչյուր ցանկացողի առջեւ բա՞ց են գումարտակի դռները, – հարցնում ենք:

– Ո՛չ: Այստեղ արդեն գործում է վերապահման օրենքը, որն ինքնըստինքյան պատնեշում է ֆիզիկական, մարտական անհրաժեշտ պատրաստականություն չունեցող երիտասարդների մուտքը գումարտակ: Մեզ պետք են արի, հերոս, փոթորիկ տղերք, քանզի զենքը պետք է ուժեղի, համարձակի ձեռքում լինի, որ այն խոսի իր ողջ զորությամբ, թե չէ զենքն ինչքան արդիական եւ հուժկու լինի, վախկոտի ձեռքում այն արդեն չլինելու է հավասար:

Գումարտակի ոգին, նրա շարժիչ ուժը մեծ թվով մեր այն տղերքն են, որ արդեն չորս տարի է կռվում են, – շարունակում է Ս. Խաչատրյանը:

Հրետանավոր Սամվել Աղաջանյան: Նրա ձեռագիրը թուրքն էլ ճանաչում է: Կգա ժամանակը, եւ Սամվելին, ինչպես

նաեւ Մարատ Աթաբեկյանին, Վլադիկ Ստեփանյանին, Արամ Ավանեսյանին, Սանասար Բեգլարյանին ժողովուրդը դափնիներ կնվիրի: Նրանք արժանի են դրան: Եւ թող օրհնվեն նրանց ծնող մայրերը, որ Գորիսին նման զավակներ են պարգեւել:

Վերջին ժամանակներս Գորիսն անընդհատ հրետակոծվում էր: Գումարտակի մարտիկներն առաջադրանք ստացան լռեցնել թշնամու կրակակետը: Հոկտեմբերի 31-ն էր: Ժամը մոտավորապես 22-ը: Արկերը դարձյալ թռչում էին Գորիսի վրա, իսկ մի մեծ հոսք՝ քաղաքի հինգերորդ թաղամասի վրա: Գորիսեցիներս արդեն սովոր ենք «Գրադից» արձակված արկերը հաշվելուն: Այս անգամ թշնամին հասցրեց 40 արկ թափել քաղաքի վրա: Անմիջապես հետեւեց մեր տղաների հուժկու հակազորոհը: Թշնամին լռեց...

Իսկ մենք «Ձանգեզուրի» հաղորդման մեջ, ինչպես ընդունված է, ընդամենը մի կարճ տող գրեցինք՝ թշնամին ստացավ արժանի հակահարված: Այդ մի տողի համար տղերքը մի ողջ օր կռվել են: Հաշվի առնենք նաեւ տեղանքը: Թշնամու կրակակետը գտնվում էր ձորում: Այդտեղ հասնելու համար նախ եւ առաջ պետք էր մի բարձունք մազցել, այնուհետեւ բարձունքն ի վար իջնել: Իսկ իջնելը լեցուն էր բազում վտանգներով, վիրավորներով: Խելացի ձեռով կազմված հարձակման պլանի շնորհիվ գումարտակին հաջողվեց առանց որեւէ կորստի լռեցնել թշնամու հզոր կրակակետը: Իսկ այդտեղ թշնամին ուներ չորս տանկ, մեծ քանակությամբ հետեւակ, հրետանի: Մեր տղերքը միայն ավտոմատով նրանց հաղթեցին:

Կանցնի ժամանակը: Եվ նույն ժամանակն էլ երեւի իրավունք կվերապահի ավելի մանրամասն եւ բարձրաձայն խոսել հայ ազատամարտիկների մղած ճակատամարտերի մասին: Եւ այն ժամանակ բոլորը կիմանան նաեւ գումարտակի հերոսական կռվի մասին, որ նա մղեց հոկտեմբերի 31-ին: Իսկ դա եզակի էջ չէ գումարտակի մարտական տարեգրության մեջ: Այդպիսի մարտեր նա բազում անգամ է մղել:

– Դիրքեր գրավելը մեզ համար հեշտ է, – ասում է հրամանատարը:

– Խնդիրը դրանք ամրացնելու, առաջավոր գծի եւ թիկունքի միջեւ մշտաթուն կապ, հաղորդակցություն

ՂԱՅՐԵՆՏԻ ԿԱՆՉՈՎ (ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՍԱՐՏ)

ապահովելու մեջ է: Այս չհայտարարված պատերազմը ցույց տվեց, որ հարձակմանը զուգահեռ կարելի էր նաև պաշտպանության դերը: Դիրքերը գրավելով՝ գումարտակի հարվածային թեև անընդհատ առաջ է շարժվում: Այս պարագայում պետք է այնքան ուժ ու հնարավորություն ունենալ, որ կարողանանք պահել գրաված դիրքերը: Ահա ինչու, օգտվելով առիթից, ուզում են գործիքներին ասել՝ ում համար թանկ է Գորիսը, համեցե՞ք մեզ մոտ: Մենք քաջ տղաների կարիք ենք զգում: Ո՞վ պետք է պաշտպանի մեր երեխաների, մայրերի, կանանց անդորրը, արժանապատվությունը, եթե ոչ մենք: Ուրիշի համար չենք կռվում: Մեզ համար ենք կռվում:

Թուրք զորիներից մեկը պատմում էր. «Բանակ չզորակոչելու համար ինձնից 150 հազար ու պահանջեցին: Չտվեցի: Չունեի, որտեղի՞ց տայի: Դրա համար էլ ինձ կռվի դաշտ ուղարկեցին»: Փառք Աստծո, գումարտակին անդամագրվածների մոտ իշխում է կամավորության սկզբունքը: Եւ հուսանք, որ կամավորությունը վիրուսի նման կտարածվի ողջ Գորիսով մեկ: Այն ժամանակ մենք գրաված դիրքերը պահելու համար կրախի առջեւ չենք կանգնի: Միեւնույն դիրքի համար հազար անգամ չենք կռվի:

- Վերջին ժամանակներս Գորիսի երկնակամարում հաճախ են հայտնվում թշնամու «ՍՈՒ-25» ռմբակոծիչներ: Չգիտես, սա ծա՞ղր է մեր հանդեպ, ծիծաղելու նոտա՞ է դա, թե՞ ահաբեկչության դրսեւորում: Մի՞թե հնարավոր չէ մեր օդային տարածքն անվտանգ դարձնել, զերծ պահել թշնամու խուժումներից, - հարցնում են գրուցակցիս:

- Հիմա շրջանում ամեն ինչ արվում է նման ոտնձգություններին արժանի հակահարված տալու համար, - ասում է հրամանատարը:

Զրույցն ընդհատում է ոտքից վիրավոր, հեճակներով, երիտասարդ մի զինվոր՝ Արայիկ Մելքունյանը: Երեւանում է բնակվում: Սակայն ծնվել է Գորիսում: Լսելով, որ ծննդավայրն ազերիների հրետակոծության թիրախ է դարձել, շտապել է Գորիս, շտապել մասնակցելու նրա պաշտպանությանը: Ես ծառայում եմ պետական միավորումում, ջոկատի հրամանատար եմ: Սակայն բազում հարցերում Սուրիկ Խաչատրյանի օգնությամբ եմ դիմել եւ միշտ պատրաստակամ օգնել է: Ասես մերժե՞լը նրա էության մեջ չկա,

եթե հարցը վերաբերում է պաշտպանությանը:

Գորիսում գորիսեցին պիտի կռվի: Ծայրահեղություն չհամարեք իմ ասածը, որովհետեւ գորիսեցին ավելի լավ գիտի տեղանքը, նրան ծանոթ են բոլոր անցքերն ու կածանները:

Եւ եթե մենք վիրավորներ, գոհեր ենք տալիս, ապա դա նաև տեղանքը չիմանալու արդյունք է:

Գնում ենք Երեւան, հանգստանալուց հետո վերստին Գորիս կգանք:

Եւ զնաց Արայիկը՝ հեճակներով:

Զինվորի զնալուց հետո մի պահ լռություն իջավ: Ո՞րն է մեր լինելիության ակունքը, որտե՞ղ է մեր ուժը: Նաև Արայիկի ու նրա նման զինվորների մեջ: Մեր լինելիության արմատը նրանց նմանների մեջ է, որ տղամարդավարի զոհաբերվել գիտեն: Եվ տղամարդավարի գումարտակից զոհվեցին Լենո Պետրոսյանը, Աշոտ Միրզոյանը, Սեմիկ Հակոբյանը:

Գոյություն քարշ տալը խորթ էր նրանց հոգում: Նրանք մոռացած իրենց, հանուն հայրենի կռվի դաշտ մեկնեցին, մեկնեցին ու հերոսացան: Հերոսացան եւ ապացուցեցին, որ զոհաբերվել կարող է միայն քաջը, որ ռազմի դաշտը վախկոտների տեղը չէ: Եւ այսօր գումարտակի տղերքը կռվում են նաև նրանց փոխարեն՝ մեր ինքնապաշտպանությունը դնելով ամուր հիմքերի վրա՝ թշնամուց խլելով նրա տեխնիկան՝ տանկեր, թնդանոթներ, ոչնչացնելով «Գրադ» կայանքներ եւ այլն:

Ահա այսպիսի ռազմավար է գրանցվել գումարտակի անվան դիմաց: Արդեն առիթ ունեցանք ասելու, որ գումարտակի միջուկը կամավորականներ են: Սակայն նրանց մեջ քիչ չեն նաև այն երիտասարդները, ովքեր վարժապետների կանգնել շրջանային զինվորական կոմիսարի կողմից: Եւ նրանց, բնականաբար, վարժեցնել, սովորեցնել, ուսուցանել է պետք: Զե՞ որ գործ ունենք ժամանակակից զենքի, տեխնիկայի հետ: Եւ խնդիրն այդ նույնպես լուծվում է գումարտակում:

Այստեղ՝ հենց տեղում, պատրաստում են տանկիստներ, հրետանավորներ, որ տանկը, հրանոթը գործադրելու համար վիզ չթեքեն ուրիշների առջեւ:

Սուրիկ Բաղդասարյանը գորիսեցի կռվողների մեջ «ստարիկների» շարքին է դասվում: Նա հիմա հրամանատարի

տեղակալն է:

- Ժողովուրդը հիանալի նախաձեռնություն է հանդես բերել՝ դիրքերում կանգնած մարտիկներին տանում է ծխախոտ, սննդամթերք, տաք գուլպաներ, հագուստ, - ասում է հրամանատարի տեղակալը: - Հարցը մի տուփ ծխախոտը չէ: Հարցն այն է, որ զինվորը թիկունքին զգում է ժողովրդի ջերմ շունչը, զգում է, որ մենակ չէ, ողջ ժողովուրդն իր հետ է: Դրանից էլ նա ոգեւորվում է, գոտեպնդվում: Մեզ համար հասկանալի չէ, թե ինչպես, ինչ նպատակով է օգտագործվում քաղաքում պաշտպանության նպատակով հանգանակված գումարը: Իսկ այդ անորոշությունն այդպես էլ չի պարզվում:

Ավտոտրանսպորտ ունեցող որոշ հիմնարկ - ձեռնարկություններ թաքցնում են պետական մեքենաները: Դրա պատասխանն էլ կա՝ զողացել են: Վատ չէ մտածված: Եւ վայ այն ազգին, որ նմանները կան նրա շարքերում: Սա արդեն դանդաղ մահ է: Հետաքրքիր է, նմանների համար երբ է սկսվելու հայրենասիրության ժամը: Եւ դեռ հարց է, կսկսվի՞:

Պատերազմը կվերջանա: Հայոց հողում խաղաղություն կիջնի: Նմաններն ի՞նչ երեսով պիտի մայեմ ժողովրդին եւ ապրեն նրա հետ:

Իսկ որ գումարտակի ճակատը բաց է, դրանում ոչ մի խոսք:

Նա արդեն իր հրամանատարի հետ դարձել է մի կուռ կուլեկտիվ, որի նշանաբանն են Գ. Նժդեհի հետեւյալ խոսքերը. «Հայրենասիրության հետ բարձրանում են ազգերը, ընկնում նրա հետ: Փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պիտի լինեն, քան մեծերը: Մենք, ավելի քան բոլորը, հայրենասպաշտ պիտի լինենք»:

Եւ հայրենասպաշտ է գումարտակի հրամանատարը, եւ այդպիսիք են նրա զինվորները, որ սովորել են ապավինել սեփական ուժին: Իսկ սեփական ուժն անեղ փոթորկի հզորություն ունի: Եւ փոթորկի պես գրոհում է գումարտակը: Եւ վերստին հիշում են Նժդեհի խոսքերը. «Միեւնույն ժողովուրդը, բանակը՝ նայած իր դեկավրներին, կարող է եւ հրաշագործություններ կատարել, եւ խայտառակորեն ծնկի գալ հակառակորդի առաջ»:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

«Զանգեզուր», 1 դեկտեմբերի 1992թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ



ՅՈՒՐԻ ԲԵՐԵՋՈՎՍԿԻ

«Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Յարգելի Սուրեն Խաչատրյան Ընդունեք իմ ամենաջերմ շնորհավորանքները Ձեր ծննդյան օրվա կապակցությամբ:

Սյունիքի մարզը, հանքագործների եւ մետալուրգների երկիրը, հաջողությամբ դիմակայում է համաշխարհային ճգնաժամին՝ ձեռք բերելով զարգացման նորանոր հնարավորություններ: Դեկավարի Ձեր արժանի հեղինակությունն ապահովում է մարզի բնակչուհուն զարգացումը: Վստահ եմ, որ Ձեր գործունեությունն ի բարօրություն մարզի հետագայում նույնպես կնպաստի մարդկանց կյանքի որակի բարձրացմանը, Սյունիքի մարզի բնակիչների հարմարավետությանը՝ իրենց հայրենի հողի վրա:

Սրտանց մաղթում եմ Ձեզ մեծ ձեռքբերումներ՝ հեռանկարային ծրագրերի իրականացման գործում, ինչպես նաեւ առողջություն, ընտանեկան բարեկեցություն, ջերմություն եւ հարմարավետություն:



ԱԶԱՏ ԳԱՄՊԱՐՅԱՆ

«Մեղրու ԾՇՇԶ» ՍՊ ընկերության տնօրեն

Յոբեյանի առիթով շնորհավորանքի ու բարենաղթանքի խոսքեր եմ հղում Սյունիքի մարզպետ, մեր լեռնաշխարհի արժանավոր զավակ Սուրեն Խաչատրյանին: Իսկ այդ շնորհավորանքն ու մաղթանքը ոչ միայն իմ, այլեւ, համոզված եմ, գործընկերներիս, բոլոր մեղրեցիների սրտից է բխում:

60-ամյակը մարդու կյանքի այն համգրվանն է, որ անցած ճանապարհին հետադարձ հայացք ձգելու, արած-դրածն ինչ-որ չափով ամփոփելու ամիրաժեշտություն է առաջացնում:

Այդ իմաստով կարող եմ ասել՝ Սուրեն Խաչատրյանի կյանքը լեցուն է գործերով, որոշ դեպքերում՝ դարակազմիկ (առանց չափազանցության) գործերով: Մենք միասին կառուցեցինք Մեղրի-Ծավ-Կապան ռազմավարական նշանակության ճանապարհը, որը, անտարակույս, գալիքին մեկնված նախագիծ էր: Միասին կառուցեցինք Մեղրու հիվանդանոցը՝ ամենաբարձր մակարդակով՝ մեր օրերի չափանիշներին համահունչ: Միասին հզորացրինք երկրի հարավային սահմանի պաշտպանական նշանակության ենթակառուցվածքները: Միասին հիմնանորոգեցինք, վերաշինեցինք տարածաշրջանի ճանապարհները, որը հանրապետության հարավային սահմանադուռ եւ սահմանապահ Մեղրու լինելիության գլխավոր գրավականներից է:

Միասին դպրոցներ կառուցեցինք Նոնաձոր, Լիճք եւ Վարդանիձոր գյուղերում ու ժամանակակից պայմաններ ստեղ-

ծեցինք աճող սերնդի կրթության եւ դաստիարակության համար:

Նրա նախաձեռնությամբ արդիականացվեց Մեղրու պահածոների գործարանը, որը փոքր-ինչ թեթևացրեց մեղրեցու հոգսը՝ իր աճեցրած բերքն իրացնելու ճանապարհին:

Նրա նախաձեռնությամբ հիմնարար փոփոխություններ տեղի ունեցան Մեղրու տարածաշրջանի խմելու ջրի մատակարարման ոլորտում, սկսվեց Մեղրու ոռոգման ինքնահոս համակարգի կառուցումը, որի առաջին փուլն արդեն իսկ ավարտվել է, որը կարելու էր քայլ է շրջանի հողերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կատարվածի թվարկումը, անշուշտ, կարելի է շարունակել, բայց առավել շատ են ծրագրերը՝ միտված տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Եվ ամենակարեւորը՝ բոլոր աշխատանքներն իրականացնելիս կամ ծրագրեր մտնտալիս ինքն առաջին հերթին հանդես է գալիս որպես Սյունյաց տան արժանապատիվ զավակ, որպես երկրամասի տեր ու ծառա, ում համար ամենափոքր հարցերն անգամ երկրորդական չեն, եթե դրանք առնչվում են մարզի բնակավայրերին ու սյունեցիներին:

Իր այս պահվածքով, շինարարի կողքին մշտապես կանգնած լինելով, մարդկանց մտահոգությունները սրտանոտ ընդունելով՝ նա ցույց է տվել ու ցույց է տալիս, թե ինչպես կարելի է սիրել հարազատ երկրամասը:

Ասելիքս ավարտեմ Սուրեն Խաչատրյանին խոսք ուղղելով. Ձեզ, հարգելի մարզպետ, իմ լավ ընկեր ու բարեկամ, քաջաառողջություն եւ երկար տարիների ստեղծագործ աշխատանք եմ մաղթում: Աստված Ձեզ պահապան:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ



ԷԿԵԼԻՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Սիսիանի N2 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Լրագրողական իմ գործունեության ընթացքում «կերտել» եմ բազմաթիվ կերպարներ, յուրովի սպասել յուրաքանչյուրի «ծննդին»՝ ակնկալելով նորանոր հերոսներ:

Անասելի հպարտությամբ եմ համակվում ամեն անգամ, երբ ինձ իրավունք է վերապահվում հանրության լայն շերտերին իրազեկել Սյունյաց աշխարհի պատմությունը կերտող անհատների մասին: Դերթական հաճելի պահը ուշացնել չտվեց... Այս անգամ պատիվ ունեմ ներկայացնելու Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին՝ 60-ամյա բարձունքը հաղթահարած, Սյունյաց աշխարհում ծանրակշիռ ավանդ ունեցող անձնավորություն, ով որերորդ անգամ խիզախեց, չերկնչեց իր ուսերին առնել Հայաստանի ջքնադագեղ ու գողտրիկ անկյուններից մեկի՝ Սյունիքի մարզպետի ոչ դյուրին, պատասխանատու պաշտոնը:

Երբեմն թվում է՝ դրախտն սկսվում է Սյունիքից, թվում է՝ ոչ մի տեղ արփին այդքան պայծառ չէ, որքան հիմնավորց այս հողում, որը, թվում է՝ պիտի հավերժի՝ անմահացնելով նաև նրանց, ովքեր նպաստում են Սյունիքի հարատևմանն ու հավերժացմանը:

Հենց այս դրախտային երկրի ղեկավարի՝ սյունեցու հոգու ցավով, հաջողություններով, ուրախությամբ ու տխրությամբ ապրող մարդու՝ Սուրեն Խաչատրյանի «մինի» դիմանկարն եմ փորձելու «կերտել» լուսավոր առիթով՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ: Մարդու տարիքն ամենեւին չի փաստում

ծննդյան տարեթիվը, այլ գիտակցական կյանքում կատարած ազգօգուտ, ազգապահպան, բարեգործական, բարեսիրական գործերի հանրագումարը, որի պակասը Ս.Խաչատրյանը հաստատ չունի:

Փոքրիկ հարցախույզն անգամ բավական է, որպեսզի կարծիք կազմեն Սյունիքի մարզպետի մասին, հոգու խորքում՝ շռայլ, նվիրաբերող, անհրաժեշտության դեպքում օգնությունը չուշացնող, սատարող, բազմաթիվ խնդիրների լուծում տվող...

Հայտնի ճշմարտություն է՝ հարգանքն ու պատիվը վաստակում են ոչ թե ուժով, այլ մեծահոգությամբ, ազնիվ մղումներով...

Տաճարը, վանքն ու եկեղեցին կանգուն են բյուր դարեր, քանի որ ամուր հիմք ունեն: Հուսանք, որ Սյունյաց երկիրը հաստատուն, անառիկ ու կանգուն կլինի Ս.Խաչատրյանի ղեկավարման բոլոր տարիներին՝ համոզված, որ ցանկությունն ու եռանդը, կարողությունն ու կամեցողությունը եռապատկվեն՝ ի շահ հարազատ եզերքի:

Բացառիկ է Սյունիքն իր աշխարհագրական դիրքով, ցավոք, գտնվում է ոչ բարեկամ երկրների հարեւանությամբ, ուստի պատերազմի բովով անցած, մշտապես վտանգներով շրջապատված մարզը ղեկավարելն արդեն իսկ պահանջում է առանձնահատուկ զգոնություն, աշխրջություն, կազմակերպչական կարողություններ... Բայց, կարծում եմ, երբ կա կամքը, սերն առ հայրենիք, ապա ոչ մի ուժ, ոչ մի պատնեշ, ոչ մի արգելք չեն կարող սասանել ուստանիդ անդորրը:

Ճակատագրի բերումով, երբ հերթական անգամ խաթարվեց Արցախ աշխարհի խաղաղությունը, երբ չարական ոսոխը կրկին ցանկացավ փորձել հայի հայրենասիրության աստիճանը, առաջիններից մեկը սյունեցին էր, որ զենք վերցրեց՝ ի պաշտպանություն երկիր հայրենի, համոզված, որ ոչ մի վայրագ ուժ այլևս ունակ չէ կասեցնելու հայի, հիրավի, անկասելի հաղթարշավը:

Միշտ պայքարի առաջնագծում, միշտ հայրենիքի անկախությունը, ազատությունը պահելու բաղձանքով, մշտապես հայրենիքի բախտով ու ճակատագրով մտահոգ...

Ահա այն սկզբունքները, այն մղիչ

ուժերը, որոնցով առաջնորդվել ու հայրենիքի պաշտպանությանն անդամաճան անդամագրվել է հարգարժան մարզպետն ու պայքարում է ցայսօր՝ ապացուցելով, որ «երկրի սահմանները գծվում են զենքով»:

Ավելի քան համոզված եմ, Ս.Խաչատրյանի կազմակերպչական ջիղի շնորհիվ է, որ բարձրագույն մակարդակով իրենց լուծումն են ստանում մարզի կրթությանն ու գիտությանը, երիտասարդությանն ու սպորտին, գյուղատնտեսությանը, սոցիալապես անապահով ընտանիքներին վերաբերող բազում հարցեր:

Թերեւս կարելի է անվերջ շարունակել, ներկայացնել, գնահատել մարզպետ Ս.Խաչատրյանի հայրենամասսո գործունեությունը, ավելին՝ վաստակը, եթե չհիշենք՝ ամեն սկիզբ իր ավարտն ունի, բայց այս պարագայում՝ շարունակական, ասելիքով լի, իմաստալից ավարտ: Հուսով եմ՝ շատերը կկիսեն հնչեցրած կարծիքներն ու կհամաձայնեն՝ երանի նրան, ում գործն է անմահ, ով մեկ անգամ տրվող կյանքում առատ «հունձք» է ամբարում, ում վաստակն անվերապահորեն գնահատված է եւ արժանի է հայրենիքին:

Ամբողջացնելով ասելիքս՝ համոզմունք եմ հայտնում, որ այն տարիները, որոնք պետք է անցնի պարոն Ս.Խաչատրյանն իր սիրելի Սյունիքի ու սյունեցիների հետ, լինելու են առաջընթացի, վերելքի տարիներ:

Հարգարժան պարոն Սուրեն Խաչատրյան, շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի առիթով: Ցանկանում եմ, որ պահպանվի Ձեր հոգու կորովը, որպեսզի ձեր իսկ օրինակով ոգեշնչեք Սյունիքի անվեհեր, ստեղծարար, քաջակորով զավակներին, որպեսզի անկատար չմնան նրանց՝ դարերում հավերժ ու անմահ ապրելու իղձն ու տենչը: Մաղթում եմ արելատություն, հաջողություններ ազգընտիր նախաձեռնություններում, բեղուն, ազգանպաստ աշխատանք՝ ի փառս հրաշագեղ, անզուգական, մոգական, չնաշխարհիկ Սյունիքի...

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ



ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ֆրանս-հայկական բժշկական կենտրոնի բուժական մասի ղեկավար

Մեծարգո Սուրեն Սերգեյի Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները 60-ամյակի կապակցությամբ: Հայաստանի եւ հայ ժողովրդի լուսավոր ապագայի կերտման ճանապարհին մաղթում եմ Ձեզ արելաշատություն, աշխատանքային բեղմնավոր գործունեություն, քանզի իրապես անգնահատելի է այն ամենը, ինչ Դուք արել եք Սյունյաց աշխարհի եւ մեր երկրի համար՝ գործի դնելով թե՛ Ձեզ՝ պետության կողմից տրված լիազորությունները, եւ թե՛ Ձեր անձնական կարողությունների ողջ զինանոցը, քանի որ Ձեր անձնական շահը եղել է մնում է Հայաստան աշխարհի հաստատուն զարգացումն ու բարեկեցիկ ապագան: «Ֆրանս-հայկական» ԲԿ-ն իր թիկունքում մշտապես զգացել է Ձեր շնչառությունը: Այն, որ մեր կենտրոնն իր գործունեության սկզբից այսչափ կարճ ժամանակում կայացել է իր ուրույն խոսքն է ասել Լեռնահայաստանում, մեծապես պայմանավորված է Ձեր անմիջական աջակցությամբ: Մեծարգո մարզպետ, թող Աստված պահպանի ինձի Ձեզ եւ Ձեր ընտանիքին, թող լույսը Ձեր կյանքում երբեք չսակավի, Ձեզ ուղեկից թող լինեն երջանկությունը եւ հաջողությունները: Եվ ինչպես Սողոմոն Իմաստունն է ասում՝ թող Աստված լցնի Ձեզ երկնային իմաստությամբ եւ շրջապատի ճիշտ ու հավատարիմ մարդկանցով:



ՇԱՆՔ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Մեծարգո Սուրեն Խաչատրյան Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի եւ ամձամբ իմ կողմից շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ ցանկանալով քաջ առողջություն: Կանգնած լինելով նորօրյա անկախ Հայաստանի ակունքներում, գնահատում եք անցյալը եւ կերտում նորը՝ կարեւորելով յուրաքանչյուր արժանի գործ: Արժեւորելով Սյունիքի հերոսական եւ մշակութային պատմությունը՝ Ձեր հեղինակությամբ ու պատվախնդրորեն հովանավորում եք ցանկացած մշակութային նախաձեռնություն: Մեկ անգամ էլս շնորհավորում եմ Ձեզ՝ հորեյլանի առթիվ եւ մաղթում երկար տարիների կյանք:



ՄՄԲԱՏ ՕՐԲԵԼՅԱՆ

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն

Փաստը, որ Սուրեն Խաչատրյանը 60 տարեկան է, ինձ ինչ-որ տեղ զարմանք է պատճառում, նկատի ունեն մրա աշխատանքային եռանդը, ամեն տեղ լինելու եւ ամեն ինչ հասցնելու ձգտումը, որ թերեւս շատ ավելի երիտասարդ տարիքին բնորոշ կլիներ: Որպես բժիշկ, բարեկամաբար ինքս եմ կողքից հուշել, որ այդ տեսակի մեջ չի կարելի ապրել ու աշխատել. մի օրվա մեջ գնալ-հասնել Մեղրի, այնտեղից հասնել Երեւան, նույն օրը վերադառնալ Կապան եւ դեռ խորհրդակցություն անցկացնել: Նման ուղեւորություն կատարող մեկին մի երկու օր կպահանջվի աղապատացվելու համար: Սա խոսում է մրա՝ աշխատանքի նկատմամբ պատասխանատվության, սկսած գործը մինչեւ վերջ հասցնելու ձգտման մասին: Չի կարելի չնկատել մարզպետի հոգածությունն առողջապահության ոլորտի հանդեպ: Մշտապես մրա տեսադաշտում է եղել մարզում արդիական բժշկական կենտրոններ ունենալու խնդիրը: Լինելով աշխարհի տարբեր երկրներում եւ տեսնելով առողջապահության զարգացման տարբեր աստիճաններ եւ ընդամենը սիրելով իր երկիրն ու Սյունիքի մարզը՝ ձգտում է, որ այսօրվան էլ չբախի մայրաքաղաքի բուժփնտրանքների դռները: Եվ իր ցանկությունը, ինչպես երեւում է, աստիճանաբար իրականություն է դառնում: Վերջին տարիներին Սյունիքի մարզի առողջապահության ոլորտում իրականացված ծրագրերի շնորհիվ հիմնանորոգվեցին եւ վերա-

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

կառուցվեցին Գորիսի, Քաջարանի եւ Կապանի բժշկական կենտրոնները, համալրվեցին ժամանակակից բուժ-սարքավորումներով եւ կահույքով: Իսկ Մեղրու տարածաշրջանն ունեցավ նորակառույց բժշկական կենտրոն՝ դարձյալ ժամանակակից հարմարություններով: Շատ քիչ մարզեր կարող են հպարտանալ նման բարեկարգ եւ հազեցած բժշկական կենտրոններով: Առողջապահության ոլորտի կադրերով համալրվածությունը եւս նրան հուզող հարցերից է:

Քանիցս լսել եմ, թե ինչպես մարզպետը կարելու է երկու կառույցի՝ բանակի եւ առողջապահության համակարգի դերը: Եվ դա պատահական չէ. ապրում ենք մի տարածաշրջանում, որտեղ միշտ պատերազմի վտանգը կա: «Ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակը երկար ձգվել էր կարող: Դրա խոսուն վկայությունը՝ ապրիլյան քառօրյա պատերազմն էր, երբ Սուրեն Խաչատրյանը հանդես եկավ որպես ռազմական գործի կազմակերպիչ: Սյունեցի կամավոր երկրապահների ջոկատները գլխավորեց Արցախի մայրաքաղաք՝ Ստեփանակերտ, այնտեղից դեպի առաջնագիծ: Մեկ անգամ չէ, որ եղավ առաջնագծում՝ բարոյապես աջակցելով դիրքապահ մարտիկներին, մարտադաշտում լինելու նրա կոչին անսացին շատերը, այդ թե՛ օրերին կռվող տղաների հետ էին Կապանի բժշկական կենտրոնի բուժաշխատողները:

Սուրեն Խաչատրյանը կոնկրետ գործերով ու նախաձեռնություններով մեկ անգամ չէ ապացուցել, որ իր երկրամասը եւ այսօրվա ժողովրդին սիրող անձնավորություն է, եւ միշտ իր խոսքում ու գործում այն ճշմարտությունն է ընկած, որ մեր կռիվը դեռ չի ավարտվել, եւ գինվորը պիտի իմանա, որ իր թիկունքում ժողովուրդը կա կանգնած, բժշկական կադրերով համալրված բուժօգնականներ, որ իր վերքը դարմանող կա: Շնորհավորում եմ Սուրեն Խաչատրյանի 60-ամյա հոբելյանը, մաղթում՝ առողջություն, ցանկանում՝ լինի աշխատունակ եւ իր մարզի ու ժողովրդի թիկունքին կանգնած, նրա հոգսերով ու ցավերով ապրող, ինչպես միշտ: Քանզի չենք կասկածում, որ անելիքներ ու ծրագրեր ունի տակավին իրականացնելու:



ՍՐՐԱՏ ԹԱՆԳՅԱՆ Ֆերմեր

Սրտանց շնորհավորում եմ Ձեր ծննդյան 60-ամյա հոբելյանը, ցանկանում քաջառողջություն, հաջողություններ եւ բեղմնավոր ու արդյունավետ աշխատանք: Գյուղը դժվարին ժամանակներ է ապրում, եւ Ձեր անսահման նվիրումով եւ եռանդով կանգնել եք գյուղացու կողքին, հատկապես գյուղացիական տնտեսությունները, ֆերմերներին հացահատիկային մշակաբույսերի որակյալ սերմերով, պարարտանյութերով, դիզվառելիքով՝ շուկայականից համեմատաբար ցածր գներով ապահովման գործում: Ձեր պաշտոնավարության օրոք չի եղել մի տարի, որ գյուղացին գոնե այս առումով աջակցություն չստանա: Գյուղատնտեսության ոլորտի հանդեպ ձեր որդեգրած սրտացավ վերաբերմունքի արդյունքը, կարծեք, երեւում է: Ստեղծվել են ֆերմերային տնտեսություններ, որոնք մարզում զբաղվում են բարձր վերարտադրության սերմնարտադրությամբ, ինչի շնորհիվ տարեցտարի ավելի բարձր բերքատվություն է ապահովվում: Դրա խոսուն վկան այն է, որ մշակովի ցանքատարածությունները վերջին մի քանի տարում էականորեն ավելացել են: Մասնավորապես, մարզում մեկ հեկտարի միջին բերքատվությունը 22 ցենտներից հասել է 33-ի: Ձեր օժանդակությամբ իրականացված նորոգումների շնորհիվ ավելացել են նաեւ ոռոգելի հողատարածությունները: Շատ լուրջ խնդիր է անասնապահական մթերքների իրացումը, այս ասպարեզում էլ, թեւս դանդաղ, բայց որոշակի

առաջընթաց գագավում է: Վերջին տարիներին լուրջ աշխատանքներ են կատարվել բարձրարդյուն արտադարյուն (ջրխմոցների տեղադրում, ճանապարհների բարեկարգում): Սյունիքի մարզը հարուստ է արտադարյունով, եւ գյուղմթերքների արտադրությանը նպաստող այդ ռեզերվը չօգտագործելն աններելի կլիներ: Գյուղատնտեսական ոլորտի նեղ օղակներից մեկը մնում է գյուղտնտեսական, ավելի ստույգ՝ դրա ֆինանսավարումը եւ բարոյապես մաշված լինելը: Գյուղացին աշխատում է տեխնիկայով, որ քսանհինգ-երեսուն տարվա վաղեմություն ունի: Եվ հաճելի է արձանագրել, որ մարզ է ներկրվել գյուղտնտեսական, մասնավորապես «Բելառուս» մակնիշի 26 տրակտոր»՝ իր գյուղգործիքներով: Իհարկե, դա բավարար չէ, բայց փաստն ինքնին հուսադրող է, որ գործը տեղից շարժվել է: Ինչեւէ, դույզն-ինչ չենք կասկածում, որ առաջիկայում եւս Ձեր հայացքն ուղղված է լինելու գյուղին, Ձեր ջանքերը՝ գյուղի առջեւ ծառայած խնդիրները լուծելուն:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ



ՆՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Սյունիքի մարզային կենտրոնի համակարգող

Որպես կայացած հասարակական-քաղաքական ու պետական գործիչ, որպես հայոց պատմության խորագիտակ մարդ, Սուրիկ Խաչատրյանը չէր կարող չկարենալ նորանկախ հանրապետության առջև ծառայած արտաքին ու ներքին մարտահրավերներին դիմակայելու խնդրում երիտասարդ սերնդի դերակատարությունը, չգտնել երիտասարդների ավյունն ու ներուժը հայրենաշեն գործունեությանն ուղղող դեյու կազմակերպական ձեւերը: Ինչպես ինքն է ասել տարիներ առաջ, հայ ժողովրդի պատմության այս ոչ սովորական հանգրվանում առկա խնդիրները չեն կարող լուծվել առանց երիտասարդության ակտիվ կենսադիրքի, առանց ազգային արժեքների խոր եւ համակողմանի իմացության: Եվ նորաստեղծ երիտասարդական կազմակերպությունը, որի հիմնադրման նախաձեռնողն էր ինքը, պիտի իր ոգով ու անվամբ առնչվեր երկու մեծ հայրդիների՝ Դավիթ Բեկի եւ Նժդեհի հետ: «Դավիթբեկյան ուխտեր» երիտասարդական հասարակական կազմակերպությունը նժդեհյան ժամանակների համանուն խմբերի գործունեության ընդօրինակմամբ երկիրը պաշտպանելու առաքելություն ուներ, բայց ոչ միայն: Ս.Խաչատրյանի անմիջական զորակցությամբ հասարակական կազմակերպության անդամները, ովքեր Սյունիքի երիտասարդության

մի սովոր մասն էին կազմում, ամենակապակց մասնակցություն սկսեցին ունենալ մարզի հասարակական, հոգեւոր-մշակութային ու մարզական կյանքին՝ յուրօրինակ կատալիզատոր դառնալով տարբեր ծրագրերի ու գաղափարների շուրջ երիտասարդների համախմբման եւ քաղաքացիական հասարակության զարգացման գործում: Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում համախմբեց մարզի երիտասարդությանը, համագործակցեց պետական եւ հասարակական կառույցների հետ, իրականացրեց բազում միջոցառումներ: Մարզպետ Ս.Խաչատրյանն առանձնապես արժեւորել է այն ամենը, ինչը նպաստում է երիտասարդների ռազմահայրենասիրական ոգու ամրապնդմանն ու բարձրացմանը, որի արդյունքները հատկապես ակնհայտ դարձան ապրիլյան պատերազմի ժամանակ, երբ երկրապահ կամավորական միության երիտասարդական խորհրդի անդամները մարզպետի հետ միասին առաջին արձագանքեցին սահմանում ծավալվող ռազմական գործողություններին եւ հանձն առան հայրենիքի պաշտպանության սուրբ գործը:

Ապրիլի լույս 2-ի գիշերն ադրբեջանական զինուժի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանի ամբողջ երկայնքով լայնածավալ հարձակումը գայրույթի ալիք էր առաջացրել նաեւ Սյունիքի մարզում: Եվ հազարավոր սյունեցիներ, սրտի թելադրանքով, պատրաստակամություն էին հայտնել մեկնել ռազմաճակատ:

II Ապրիլի 3-ի վաղ առավոտվանից Սյունիքի մարզպետի գործխյան նստավայրը վեր էր ածվել կազմակերպական աշխատանքների յուրօրինակ շտաբի: Սուրեն Խաչատրյանը նախեստառաջ խորհրդակցություն անցկացրեց Գորիս քաղաքի հիմնարկների եւ կազմակերպությունների ղեկավարների հետ՝ առաջադրելով իրավիճակից բխող խնդիրներ:

Այնուհետեւ արվեց կարգադրություն՝ մարզի բոլոր համայնքերում եւ հատկապես քաղաքապետարաններում ու մարզպետարանում շուրջօրյա հերթապահություն սահմանելու մասին: Օրվա գլխավոր խնդիրը, սակայն,



ԱՐՑԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ

սյունիքյան գումարտակի ձեւավորումն էր, որի նախապատրաստական աշխատանքները սկսել էին մեկ օր առաջ: Գումարտակի ձեւավորումն անմիջապես ղեկավարում էին Սուրեն Խաչատրյանը, Մեղրու, Քաջարանի, Կապանի, Գորիսի քաղաքապետներ Արշավիր Յովհաննիսյանը, Վարդան Գեւորգյանը, Աշոտ Չայրապետյանը, Վաչագան Ադունցը, ԵԿՄ տարածքային կազմակերպությունների ղեկավարներ Աշոտ Մինասյանն ու Մայիս Միրզոյանը (Սիսիան), Սուրիկ Բաղդասարյանը (Գորիս), Մանվել Օհանյանը (Կապան), Սանվել Չայրապետյանը (Մեղրի), Յովիկ Սատինյանը (Քաջարան):

Ազարակի կամավորական ջոկատը նպատակահարմար էր գտնվել թողնել տեղում՝ Նախիջեւանի ուղղությամբ սահմանի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով:

Օրվա վերջին, ըստ քաղաքապետ Մխիթար Զաքարյանի, ազարակցի կամավորականներն արդեն իսկ գտնվում էին Ծիրանածորի եւ Գողթանսարի սահմանային ուղեկալներում:

Ժամը 16-ի սահմաններում Մեղրու, Քաջարանի, Կապանի, Սիսիանի, Գորիսի ջոկատներն արդեն իսկ Գորիսի Գրիգոր Տաթևացու անվան հրապարակում

Հայրենիքը վրանգի մեջ է. Սյունիքը ոտքի է ելնում

2016թ. ապրիլի 3-ը Սյունիքում, հիրավի, հայրենասիրության պոռթկումի, հավաքական ուժի, համախմբվածության եւ միասնության իսկական դրսեւորման օր էր:

էին:

Կամավորականների մարզային հավաքակալայանի վերածված այդ հրապարակում էին նաեւ երիտասարդ երկրպահները (հրամանատար՝ Զարգանդ

Նիկողոսյան):

Կամավորականները զինվորական հանդերձանք եւ զենք էին ստանում Գորիսի ու Սիսիանի զորամասերից:

Սիսիանի կամավորականները, մինչեւ Գորիս մեկնելը, այցելել են Սիսիանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որտեղ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Չակոբյանի օրհնությամբ տեղի ունեցավ օրհնության կարգ, որից հետո կամավորականները զոհված ազատամարտիկների պանթեոնում խոնարհվեցին իրենց զոհված ընկերների շիրիմներին: Կամավորականներին ճակատ էին ճանապարհում բազում սիսիանցիներ՝ քաղաքապետ Աղասի Չակոբջանյանի գլխավորությամբ:

Կապանում նույնպես կազմակերպվել էր ճակատ մեկնող կամավորականներին ճանապարհելու արարողություն: ԵԿՄ տարածքային կազմակերպության գրասենյակի բակում հավաքված երկրպահներին ողջերթի խոսք էր ուղղել Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը:

Ժամը 19-ի դրությամբ Գորիսում ավարտվել էր գումարտակի ձեւավորման աշխատանքը. գումարտակի հրամանատարի պարտականությունը դրվել էր Գորիսի զինվորական կոմիսար,



ԱՐՅԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ

զնդապետ Մելիքսեթ Պողոսյանի վրա:
200 հոգուց բաղկացած կամավորական գումարտակի առջեւ ելույթ է ունեցել Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

Ժամը 19:30-ին Գորիսի Գրիգոր Տաթևացու անվան հրապարակից ավտոբուսների շարասյունը, գլխավորությամբ Սյունիքի մարզպետի, շարժվեց դեպի Լեռնայի Ղարաբաղի Հանրապետություն: Շարասյան կազմում էին նաև Գորիսի հիվանդանոցի շտապ օգնության մեքենաները՝ համապատասխան բուժանձնակազմով եւ դեղորայքով, ինչպես եւ ամենազնաց մեքենաներ՝ մորիլիզացված Գորիսի տարածաշրջանից:

*3 ապրիլի 2016թ.,
Գորիս, Սյունիքի գումարտակը
մեկնում է ճակատ...*



Թեև Գորիսում առատ ծյուն էր տեղում, բայց հարյուրավոր մարդիկ հավաքվել էին հրապարակում: Նրանց ծափահարությունների ներքո էլ ավտոշարասյունը շարժվեց դեպի Արցախ:

Տեսարանը, իրոք, հուզիչ էր: Գումարտակում, իհարկե, կային նաև երիտասարդներ, բայց հիմնական կազմն Արցախյան գոյամարտի վետերաններ էին՝ 1990-ականներից մեզ ծանոթ դեմքեր: Ամենակարեւորը՝ նրանք ճակատ էին մեկնում ոգետրված, բարձր տրամադրությամբ, սահմանում կանգնած երիտասարդ զինծառայողներին նեցուկ լինելու վճռականությամբ, ադրբեջանական ելուզակներին նույնիսկ կյանքի զնով սանձելու պատրաստակամությամբ:

Օրվա վերջին՝ ժամը 22-ի սահմաններում, Սյունիքի գումարտակն արդեն Ստեփանակերտում էր եւ պատրաստ էր մեկնելու առաջնագիծ:

Ապրիլի 3-ի օրը, սակայն, չնշանավորվեց միայն դրանով: Գումարտակի կազմավորմանը զուգահեռ ձեւավորվեց նաև ռեզերվ, որն անհրաժեշտության դեպքում կփոխարինի ճակատ մեկնածներին կամ կհամալրի գումարտակի շարքերը: Ինչպես տեղեկացրին մարզի զինկոմիսարիատներից՝ շարունակվում է ճակատ մեկնել կամեցողների հաշվառումը:



*Սյունիքի կամավորականների
Ստեփանակերտում
դիմավորեց ԼՂՀ
վարչապետ
Արայիկ Հարությունյանը*

Օրվա ընթացքում «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ում տեղի էր ունենում դոնորական արյունատվություն: Ըստ ՓԲ ընկերության տնօրեն Արթուր Առաքելյանի՝ դոնորական արյան հավաքումը կշարունակվի նաև ապրիլի 4-ին ու 5-ին:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Այունյաց երկիր», N10, 8 ապրիլի
2016թ.

ԱՐՑԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ



1994 թվականի մայիսից տարածաշրջանում հաստատված փխրուն խաղաղությունը մի օր վերածվելու էր ռազմական բախման, եւ դա տեղի ունեցավ ապրիլի լույս 2-ի գիշերը, երբ Ադրբեջանը լայնածավալ հարձակում ձեռնարկեց Լեռնային Ղարաբաղի սահմանի ամբողջ երկարությամբ: Մտավախությունը, որ այն ոգին ու միասնականությունը չեն լինի, ինչի շնորհիվ 1994-ին արձանագրվել է հաղթանակն Արցախյան պատերազմում, հօդս ցնդեց: Ականատես եղանք մի աննախադեպ միասնականության, համախմբումի, որն արձանագրվեց նաեւ Սյունիքի մարզում: Չորս օր տեւեցին ռազմական գործողությունները, բայց դրանից հետո եւս սյունեցի կամավորները մարտական դիրքերում են ու շարունակում են հերթապահել: Ապրիլի 3-ի երեկոյան ճակատ մեկնող կամավորների խումբը գլխավորում էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ում հետ էլ մեր հարցազրույցը քառօրյա պատերազմի եւ դրանից հետո ստեղծված իրավիճակի մասին է:

- Ապրիլյան չորս օրերին Սյունի-

քի մարզի երկրապահներից եւ ժամկետային զինծառայողներից զոհեր եղան, անդամալի կորուստներ, այդ ցավը նաեւ Ձեզ է պատել, մասնակցել եք նահատակների հուղարկավորություններին, փորձել սփոփել նրանց հարազատներին, ի՞նչ ունեք փոխանցելու մեր թերթի ընթերցողներին:

- Շատ ծանր էր այդ ամենը բոլորիս համար, բայց պատերազմն էլ իր չգրված օրենքներն ունի, պատերազմում անխուսափելի են զոհերը: Սյունիքից զոհեր շատ եղան: Սա է իրողությունը: Համոզված եմ, որ մարտական գործողությունների ժամանակ այդքան կորուստ չէինք տա, բայց հակառակորդն օգտագործեց անօդաչու թռչող սարքեր, ինչը նորություն էր հայ-ադրբեջանական հակամարտության ողջ ընթացքում: Դրա «հակաթույնը» տղաները չունեին, անտեղի զոհեր ունեցանք. սա է տխրեցնողը: Կարող եմ ասել, որ զոհվածների հարազատները եւս այն գիտակցումն ունեն, որ այսօրվա պատերազմը տարբերվում է 1990-ականների պատերազմից. նկատի ունեն Ադրբեջանի՝ նորագույն ռազմական տեխնիկայով զինված լինելը: Բոլոր առումներով նոր իրավիճակ էր ռազմադաշտում: Բայց, ինչպես երեւում է այժմ, տղաները հարմարվել են այդ ամենին՝ եւ սահմանների պահպանության, եւ իրենց անձի անվտանգության հարցերն արդեն լուծված են:

- Այսօր ապրիլի 11-ն է, տեղյակ եմք, որ Դուք մշտական կապի մեջ եք Սյունիքից սահման մեկնած կամավորական ջոկատների հրամանատարների հետ, խնդրում ենք ներկայացնել մեր ջոկատների վիճակը:

- Օրվա մեջ մի քանի անգամ կապ է լինում տղաների հետ, նրանց ոգին ու տրամադրությունը տեղն է, Սյունիքի կամավորները պաշտպանում են երկու թե՛ 6-րդ պաշտպանականի ընդհանուր հրամանատարն Աշոտ Մինասյանն է՝ փորձառու, մարտական ճանապարհ անցած հրամանատար, 7-րդի հրամանատարը գնդապետ Մելիքսեթ Պողոսյանն է՝ առավել քան փորձառու մի զինվորական, ունից շատերը պիտի սովորեն ռազմական գործը: Այսօր նրանց ղեկավարությամբ պաշտպանական գործեր են արվում, ամրացվում խրամատները, դրանք մի օրվա համար չեն:

1990-ական թվականներին սյունեցի ազատամարտիկները հիմնականում

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ.

«Հայրենասիրությունն անթեղված էր մեր ժողովրդի մեջ, բավական էր մի կայծ, որ նորից բռնկվի»

ԱՐՅԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ

հարավային թեւում են եղել, ամեն քար ու թփի ծանոթ էին, սակայն քանի որ այսօր գտնվում են հյուսիսային թեւում, տղաներին մեկ-երկու օր էր անհրաժեշտ, որ իրավիճակին ծանոթանային ու ամբողջովին տիրապետեին, ինչն արդեն հետեւում է: Այսօր ոչ մի խնդիր չի ծագում նրանց կողմից մարտական առաջադրանքները կատարելիս:

Նոր հերթափոխը պատրաստ է, բայց քանի որ այդ մասին ընդհանուր հրաման պիտի լինի, սպասում ենք դրան: Այսօր հեռաձայնել ենք, որ տղաների հագուստի հարցն էլ լուծվի, հրաման լինելու դեպքում հերթափոխի գործընթացը մի քանի ժամվա ընթացքում կլուծենք: Մեր բոլոր գործողությունները համաձայնեցնում ենք ՀՀ պաշտպանության նախարարության եւ ԼՂՀ պաշտպանության բանակի հետ, ոչ մի խնդիր չունենք:

- Աարիլի 3-ը միասնության, համախմբության օր էր, բոլորս ականատես եղանք համերաշխության մի յուրահատուկ դրսեւորումի...

- Այդ օրվան դեռ շատ ենք անդրադառնալու, ադրբեջանցիների նախաձեռնած լայնածավալ հարձակումը եւ մեր ժողովրդի արձագանքը, համախմբումը, պատրաստակամությունը՝ կանգնել ժամկետային զինծառայողների կողքին, դեռ երկար են հիշվելու: Կուզեի մեր ժողովրդին երախտագիտություն հայտնել այդ ինքնաբուխ արձագանքի համար, չափազանց հուզիչ էր համախմբումը, չկային տարածայնություններ, քաղաքական կուսակցությունները մի բռունցք էին դարձել: Արցախ-Հայաստան-Սփյուռք ավելի համախմբվեցին մի դրոշի ներքո: Մեր հաջողության գրավականը հենց դրա մեջ էր: Եվ այդ ամենի համար խոնարհվում են բոլորի առջեւ՝ ծերունու, երիտասարդի, երեխայի, բոլոր, բոլորի: Շատերը գուցե չէին պատկերացնում, որ ազգովին կարող ենք նման ձեւով համախմբվել: Կարծում էին՝ ո՞նց կարող էին ինչ-ինչ առիթներով նեղացած լինել, բայց... Փառք ու պատիվ Արցախյան պատերազմում կռվածներին, ովքեր մի ձգտում ու նպատակ ունեին՝ հնարավորինս շուտ հասնել ռազմաճակատ: Բոլորն էլ քաղաքականությունից վեր կանգնեցին, խնդիրը միայն սահմանների պահպանությունն էր: Հավատացնում են՝ ե՛ւ Ռուսաստանից, ե՛ւ այլ գաղթօջախներից շատ տղաներ ինքնաթիռով հասան Հայաստան ու մեկնեցին ռազմաճակատ:

- Եվ ինչո՞վ էր պայմանավորված, որ գլխավորեցիք երկրապահ կամավորականների Սյունիքի ջոկատը:

- Նախ՝ ԵԿՄ Սյունիքի կազմակերպության նախագահն եմ՝ մի կողմ դնելով հանգամանքը, որ Սյունիքի մարզպետն եմ, նաեւ հայ մարդ եմ ու մարտական փորձ ունեցող, եւ պարտավորված զգացի իմ ձեռքը վերցնել այդ նախաձեռնությունը: Միայն տղաներին առաջնագիծ ուղարկելը չէր խնդիրը, այլ նաեւ նրանց ապահովումը հանդերձանքով ու զենքով, տեղավորելը եւ այլն:

- Դուք առաջին իսկ օրը մոբիլիզացիոն աշխատանքների հետ մեկտեղ զբաղված էիք այսպես ասած թիկունքով, Ձեր առաջին հանձնարարություններից մեկը մարզի բոլոր քաղաքապետարաններում, գյուղապետարաններում, խոշոր կոլեկտիվներում հերթապահության կազմակերպումն էր:

- Մինչեւ այժմ այդ հերթապահությունը կա: Միաժամանակ՝ քաղաքապետարաններում ձեւավորված են հանձնաժողովներ, որոնք զբաղված են իրավիճակից բխող խնդիրների լուծմամբ՝ զոհվածների հուղարկավորություններ, հիվանդների տեղավորում, օգնության կազմակերպում...

- Եվ այդ նույն օրը մարզում մի շարժում սկսեց, ինչպես նաեւ ամբողջ հանրապետությունում, աջակցել կամավորականներին...

- Մինչեւ հիմա այդ շարժումը շարունակվում է, չնայած, որ մի քանի օր առաջ դպրոցներում արգելեցի երեխաներից, ծնողներից գումար հավաքելը: Դպրոցահասակ երեխայից գումար պահանջելը, թեկուզ սահմանի պահպանության համար, հարիւր չէ մեր օրերի համար: Եթե ֆինանսական խնդրի անհրաժեշտություն լինի, գիտենք՝ ում դիմել, իհարկե, հանձնաժողովների միջոցով համակարգելով ու հաշվառելով հանգամանկված միջոցները: Բանն այն է, որ յուրաքանչյուրը հետաքրքրված է, թե իր ներդրած գումարը նպատակային օգտագործվե՞ց, թե՞ ոչ: Միշտ մտածել եմ, որ հանգամանկված գումարների հանդեպ զգույշ պիտի լինել:

- Կամավորականների շարժումը մարզապետարանի կողմից նախաձեռնվա՞ծ երեւոյթ էր, թե՞ ժողովրդի սրտաբուխ նախաձեռնության դրսեւորում:

- Դա սրտաբուխ երեւոյթ էր, թեպէս ասենք, երբ ապրիլի լույս 2-ի գիշերն իմացանք հակառակորդի հարձակման մասին, կապ հաստատեցինք ՀՀ պաշտպանության նախարարի հետ, ով էլ հայտնեց, որ անհրաժեշտության դեպքում հրաման լինելու է, հետո նախարարն ասաց, որ իսկապես կամավորների կարիք կա, եւ ԵԿՄ տարածաշրջանային կառույցների ղեկավարներին անհապաղ փոխանցեցի, որ կազմ ու պատրաստ լինեն: Այսպես ասած՝ ժողովրդի սրտաբուխ շարժումը եւ կազմակերպչական պահն էլ մեկտեղվեցին:

- Եվ մի բան էլ նկատվեց. առաջնագիծ գնալը հայրենասիրական զգացմունքի դրսեւորում էր, բայց ըստ էության պատերազմի բովով անցած տղաներն էին, որ առաջինը զենք վերցրին նորից:

- Այո, առաջինն Արցախյան պատերազմի հաղթանակը կոողներն էին՝ մերօրյա ազատամարտի մասնակիցները, որոնց ուսերին մեծ պարտավորվածություն կար վերստին կանգնելու սահմանին: Նրանք այն ժամանակ էլ են կամավոր եղել, առաջին դեպքում էլ որեւիցե մեկի կողմից հրաման չի եղել, եւ այն ժամանակ այնպես չէր, որ որեւէ մեկը հրաման տար: Հայրենասիրությունն անբեղված էր մեր ժողովրդի մեջ, բավական էր մի կայծ, որ նորից բռնկվի:

- Այս վերջին երկու-երեք օրը հատկապես Կարմիր խաչի օժանդակությամբ զոհվածների, անհետ կորածների որոնման, մարմինների փոխանակման, զոհվածների ճանաչման գործընթաց է տեղի ունեցնում: Ի՞նչ կասեք այդ առումով:

- Նախ՝ տեղեկացնեմ, որ Կարմիր խաչին, որպես միջնորդ կազմակերպություն, ադրբեջանցիները չեն ընդունում: Հրադադարն Ադրբեջանի նախաձեռնությունն էր, որովհետեւ մեկ օր շարունակ Ադրբեջանի իշխանությունը խնդրում էր, որ կրակը դադարեցվի՝ ելնելով իրավիճակից եւ տեսնելով իրենց կողմից զոհերի քանակը, կռվողների շարքերում տիրող խուճապը: Չոհվածների դիերը ռազմադաշտից հանելը եւ փոխանակաւորությունն իրենց նախաձեռնությունն էր:

- Իսկ զոհվածների մեջ Սյունիքից կա՞ն, թե՞ ոչ:

- Այս պահի դրությամբ եթե լիներ, եւ կիմանայի, բայց նման տեղեկություն չունեմ, մոտ ժամերս ավելի հստակ կլինի՝

ԱՐՑԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ



կա՞ն, թե՞ չկան:

- Կուզեհի՞նք իմանալ վիրավորների վիճակի մասին, քանզի այդպիսիք հաստատ ունենք:

- Ունենք երկու ծանր վիրավոր, մեկը՝ Կապանից՝ երիտասարդ երկրապահներից, մյուսը Սիսիանի Սպանդարյան գյուղից է՝ Վարազդատը: Կապանցին խրամատում է վիրավորվել, ականանետից, վիճակը կայուն է, բայց ծանր: Վարազդատը վիրավորվել է անօդաչու սարքի հարվածից, երկու անգամ վիրահատել են, յոթ օր անցել է վիրահատելուց հետո, ինչը հույս է ներշնչում, որ դրական տեղաշարժ կլինի:

- Մի սրտաբուխ նախաձեռնություն էլ մարզում այն էր, որ մարդիկ հերթ էին կանգնում արյուն հանձնելու համար:

- Ասեմ, որ ամենուր՝ հանրապետության արյան հանձման կայաններում, հերթեր էին գոյացել: Մարդիկ մտածում էին, որ եթե չեն կարողանում առաջնագիծ գնալ, զոհն այդպիսով օգտակար լինեն կռվող տղաներին: Արժանին պիտի մատուցել բոլորին, ովքեր զենքը վերցրին եւ մեկնեցին ռազմաճակատ, ովքեր արյուն հանձնեցին, ովքեր

օգնություն ցուցաբերեցին...

Կրկնում եմ՝ համերաշխության մի աննախադեպ մթնոլորտ էր ստեղծվել. չկար իշխանություն-ընդդիմություն հակադրությունը, նեղացած, չարացած մարդ չկար, բոլորը-բոլորը մի դրոշի տակ էին: Տեսանք նաեւ սփյուռքի մեր հայրենակիցների համախմբումը, թե ինչ հանրահավաքներով էին դատապարտում Ադրբեջանի ագրեսիան, որոշները եկան մայր հայրենիք եւ մեկնեցին Արցախ: Արցախի հյուրանոցներում, ինքս եմ ակնաւատես եղել, տեղ չկար: Կռվել ցանկացողներից ոմանք մնացին ռեզերվում: Այդպիսի իրավիճակ էր...

- Այժմ, երբ հարաբերական անդորր է տիրում, մամուլում փորձում են ամփոփումներ անել, բացթողումներ նշել դիվանագիտական, ռազմաքաղաքական ոլորտներում եւ այլն: Ի՞նչ եք կարծում, ամփոփելու, դասեր քաղելու խնդիր ունե՞նք այսօր, թե՞ այդ ամենը թողնենք հետագա օրերին:

- Կարծում եմ՝ դրա ժամանակն էլ կգա: Այս համատեքստում ուզում եմ նշել, որ հանրապետության նախագահը դիվանագիտական դաշտում ճշգրիտ քայլեր ձեռնարկեց: Եվ համաշխարհա-

3 ապրիլի 2016թ.,
Գորիս, Սյունիքի գումարտակը
մեկնում է ճակատ...

յին հանրությանը հասու եղավ Ադրբեջանի ագրեսիան: Կային պետություններ, իհարկե, որ կատարվածի առիթով երկակի չափանիշներ էին կիրառում, բայց կային նաեւ այնպիսիք, որ դատապարտում էին Ադրբեջանի նախահարձակումն ու կանգնում Արցախի կողքին:

- Այս ամենով հանդերձ ի՞նչ կուզենայիք փոխանցել Սյունիքի բնակչությանը:

- Ես ընդամենն ուզում եմ բոլոր սյունեցիներին շնորհակալություն հայտնել, խոնարհվում եմ բոլորի առջեւ, որովհետեւ սյունեցիները մեկ անգամ եւս իրենց դրսևորեցին որպես հայրենապաշտ, նվիրյալ ժողովուրդ, եւ եթե վաղը, Աստված մի արասցե, թշնամին նորից մեզ պատերազմի մեջ ներքաշի, հանդգլած եմ, կտուժի, քանզի մեր ժողովուրդն առավել քան պատրաստ է, իսկ զինվորները՝ մարտականորեն տրամադրված:

Զրույցը՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ
«Այունյաց երկիր», N11,
15 ապրիլի 2016թ.

ԱՐՅԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ



Իսկ լեռան կապարին օրը չի մթնում

Մի քանի օր առաջ էր՝ ապրիլի 3-ին, երբ Սյունիքի մարզի կամավորականները մարզպետ Սուրեն Խաչատրյանի գլխավորությամբ մեկնեցին Արցախ: Ստեփանակերտ մայրաքաղաքում նրանք դիմավորեց ԼՂՂ վարչապետ Արայիկ Չարությունյանը: Դրանից հետո նույն գիշերը ջոկատները ճանապարհվեցին մարտական դիրքեր. Սիսիանի եւ Կապանի ջոկատները՝ Թալիշ, Գորիսի, Մեղրու, Քաջարանի ջոկատները՝ Եղնիկներ: Ավելի ուշ, ութ կյանք խլած հայտնի ողբերգական պատահարից հետո, Սիսիանի եւ Կապանի ջոկատները տեղափոխվեցին դարաբաղա-աղբբեջանական շփման մեկ այլ գիծ՝ Մատաղիս: Եվ ահա տասը օր է՝ Սյունիքի կամավորական ջոկատները հակամարտության գոտու

առաջնամասում են՝ ԼՂՂ պաշտպանության բանակի ստորաբաժանումների հետ միասին հսկելով Արցախի սահմանների անձեռնմխելիությունը... Ապրիլի 13-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը (Սամվել Ալեքսանյան, Վահրամ Օրբեյան, Համլետ Գեւորգյան, Ռաֆիկ Չարությունյան) հակամարտության հյուսիսային թևում էր, նպատակն առաջնագծի վիճակին եւ Սյունիքի կամավորական ջոկատների գործունեությանը ծանոթանալն էր: Մատաղիսում էինք, երբ հերթական անգամ այնտեղ եկավ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը՝ ուղեկցությամբ Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցի եւ ԵԿՄ Գորիսի տարածքային կառույցի ղեկավար Սուրիկ Բաղդասարյանի՝ ճակատայինների համար

առաջին անհրաժեշտության պարագաներ բարձած բեռնատար մեքենայով հանդերձ: Այդ պահին այնտեղ էին Կապանի ջոկատը (Սամվել Օհանյանի հրամանատարությամբ) եւ Սիսիանի ջոկատի մի մասը (Աշոտ Մինասյանի հրամանատարությամբ). սիսիանցի մյուս կամավորականներն առաջնագծում մարտական հերթապահության էին: Ջորակայանում, որտեղ այդ պահին հանգստի ժամ էր, իսկական աշխուժություն սկիզբ առավ: Նախ բոլորը հավաքվեցին ու ողջունեցին մարզպետին, ապա տեղի ունեցան իրավիճակի վերաբերյալ մտքերի փոխանակում, մարդկանց հետաքրքրող հարցերի շուրջ զրույցներ ու քննարկումներ: Այնուհետեւ մարզպետի ու Սիսիանի, Կապանի ջոկատների հրամանատարների միջեւ տեղի ունեցան առանձնազրույցներ՝ դիրքերում օպերատիվ իրավիճակին, կամավորականների կացությանն ու հատկապես բժշկական ծառայությանն ու առաջիկա հերթափոխին առնչվող... Օրվա վերջին, երբ արդեն մութն ընկել էր, մենք կրկին Մատաղիսի զորակայանում էինք. հրամանատար Աշոտ Մինասյանն արդեն մեկնել էր մի քանի կմ հեռավորության վրա գտնվող մարտական դիրքեր, իսկ այդ ընթացքում զորակայան էր այցելել Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը՝ կամավորականների համար բերելով առաջին անհրաժեշտության պարագաներ. այդ մասին մեզ տեղեկացրեց ազատամարտի սիսիանցի վետերան Համլետ Ծատրյանը, ով դիրքերից վերադարձել է զորակայանում էր: Մինչ այդ մեր ստեղծագործական խումբը միացել էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ մեկնել առաջնագծի մեկ այլ հատված՝ Եղնիկներ, որտեղ Գորիսի, Մեղրու, Քաջարանի ջոկատներն էին դիրքավորված: Մարտակերտից մոտ 18 կմ հյուսիսարեւմուտք գտնվող Մատաղիսը թարթառ գետի ափին է՝ երեք կողմից շրջապատող լեռների միջեւ: Գյուղի անունը ծագում է Վաչագան թագավորի դստեր անունից, որի պատվին էլ ժամանակին կառուցվել է գյուղը: Այդ տարածքում է Եղիշե առաքյալի վանքը, մերձակայքում բազմաթիվ գյուղատեղիներ են: Առաջին անգամ էի շփման գծի այդ հատվածում... Այն, որ ամենուրեք ռազմական

ԱՐՑԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ

բնույթի նախապատրաստական աշխատանքներ էին տարվում, այլևս չէր զարմացնում: Իսկ ԼՂՀ ՊԲ մարտական հզոր դիրքերը միայն հպարտություն էին ներշնչում մեզ:

Ապշեցնող էր հատկապես տեղանքի ռելիեֆը՝ թավ անտառներով ծածկված:

Առավել ապշեցնող էր դժվարամատչելի այդ վայրերում հայկական ռազմական ստորաբաժանումների արհեստավարժ ու վստահ պահվածքը:

Ես, անշուշտ, հեռու եմ փորձագիտական բնույթի եզրակացություններ անելու հավակնությունից, բայց չեմ կարող չասել՝ աշխարհի ոչ բոլոր բանակները կարող են մնան տեղանքում վստահ ու արդյունավետ գործել: Սա, հիրավի, աշխարհի այն հատվածներից է, որտեղ, որքան էլ տեխնիկան առաջադիմություն ապրի, որոշիչը լինելու է զինվորը՝ իր մարտական ոգով ու ֆիզիկական կոփվածությամբ:

Եղնիկներ բարձրանալու ճանապարհին անցանք Տոնաշեն գյուղի մերձակայքով: Այդ գյուղի հիմնադրման մասին ավանդույթը եւս Վաչագան թագավորի անունն է հիշում: Նրա տոհմակից Տոնին (Դոնին) է հիմնադրել գյուղը, որտեղ էլ ժամանակին կառուցվել է Սուրբ Գեորգ եկեղեցին:

Իշխող լեռան գագաթին Գորիսի, Մեղրու, Քաջարանի կամավորական ջոկատներն էին՝ ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումների հետ հաստատուն կանգնած:

Այդ ջոկատի մարտիկները նույնպես ոգևորությամբ ընդունեցին Սուրեն Խաչատրյանին: Տպավորությունն այն էր, որ Սուրեն Խաչատրյանը նրանց համար սոսկ մարզպետ չէ, այլ հրամանատար. անձամբ ճանաչում է յուրաքանչյուրին, իսկ նրանք՝ մարզպետին: Ճանաչելն էլ մի կողմ, իրար վստահում են, միմյանց հավատում...

Կամավորականների մասին այս օրերին շատ բան կարելի է լսել, մասե հակասական, բայց նրանք մեծ մասամբ արժանապատիվ տղաներ են, պինդ, համարձակ, ամենադժվար պայմաններում անզամ երկրին ծառայելու պատրաստ: Միաժամանակ, անկեղծ լինենք, այնքան էլ դյուրին չէ նրանց կառավարելը: Սակայն վերստին հանգվեցինք՝ Սուրեն Խաչատրյանի հրամանատար լինելը հաճո է նրանց, ինչպես եւ Մելիքսեթ Պողոսյանի, Աշոտ Մինասյանի, Մանվել Օհանյանի, Սուրիկ Բաղդասարյանի



հրամանատար լինելը...

Իսկապես, կամավորական ջոկատում հրամանատար չի նշանակվում, նրանք ծնվում են ժամանակի մեջ եւ բոլորի կամքով...

Լեռնագագաթին եւս մարզպետի հետ քննարկումներ էին, մտքերի փոխանակում, անհապաղ լուծում պահանջող հարցերի վերհանում, այնուհետեւ՝ շրջայց հարյուրավոր մետրերով ձգվող խրամատներ...

1990-ականների պատերազմի ժամանակ Սյունիքի ինքապաշտպանական ջոկատները կռվում էին կրակագծի հարավային թեւում, եւ ամեն քարն ու

ապառաժը նրանց ծանոթ էր:

Հյուսիսային թեւը նոր միջավայր է տղաների համար: Եվ պետք էր ոչ միայն տեղանքին ծանոթանալ, այլեւ դիրքերն ուժեղացնել, նոր խնդիրներին համապատասխանեցնել, ու, փառք Աստծո, այդ խնդիրները լուծվում են կամ գրեթե լուծվել են: Մելիքսեթ Պողոսյանի հրամանատարությամբ որոշ չափով բարելավվել են մեր խրամատները, պաշտպանական նշանակության մյուս կառույցները: Հաճելի էր այդտեղ տեսնել Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանին, ով հրամանատարն է Քաջարանի կամավորական ջոկատի:

ԱՐՅԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ

Առաջնագիծ գնալուց հետո հնարավոր չէր հեռախոսով կապ հաստատել նրա հետ, այնպիսի տեղանքում է դիրքավորված ջոկատը, որ միայն ներքին կապով կարելի է խոսել: Ձինվորական հանդերձանքով ու հրազենով քաղաքապետի տրամադրությունը բարձր էր, հոգնածություն չկար նրա դեմքին:

Այնտեղ էին Սեդրու հրամանատարները՝ քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանն ու փոխգնդապետ Սամվել Հայրապետյանը: Վերջինս էլ Արցախյան ազատամարտի վետերան է եւ խրոխտ պահվածքով ու հարուստ փորձով ժամկետային զինծառայողների կողքին է:

Առաջնագծում եղանք մի դիրքում, որի պահպանությունը վստահված էր կորնիձորցիների ջոկատին: Այնտեղ էր Լարիսա Գալստյանը, ով ապրիլի 3-ին սյունեցի կամավորականների շարքում մեկնել էր սահման (այդ մասին՝ «Սյունյաց երկրի» 2016թ. ապրիլի 8-ի համարում):

Ի՞նչն էր նաեւ ուշագրավ՝ ՊԲ ժամկետային ծառայողները եւ կամավորականները, որ կողք կողքի նույն խնդիրն էին լուծում, այնքան էին մտերմացել, որ, կարծեք, տարիների մարտական ընկերներ լինեն: Դա էլ բնական է, թեւեւ տարբեր կարգավիճակով, բայց նույն առաքելությամբ են խրամատում հայտնվել...

Իրիկնամուտ էր, երբ եղնիկներից հետդարձի ճանապարհը բռնեցինք: Խրամատներից պարզորոշ երեւացող հրաշք Գյուլիստանը՝ մերօրյա Շահունյանի տարածքը՝ բռնազավթված Ադրբեջանի կողմից, մնաց հետեւում:

Մենք չտեսանք, սակայն, Մռավի գագաթը: Համոզված ենք՝ թախծոտ չէր, այլ հպարտ էր, ինչպես դարեր շարունակ. պարզապես օրն էր ամպամած: Ի վերջո, չէր էլ կարող այդ լեռ-խորհրդանիշը հպարտ չլինել, քանզի մնան գավակներ ունի:

Դրանում համոզվեցինք նաեւ Մարտակերտում, որտեղ կյանքը բնականոն հուն էր վերադառնում: Իսկ մարտակերտցիների տրամադրությունը բնութագրելու համար վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Ռադիկ Առուշանյանը վերջին օրերին տարածված մի խոսակցություն պատմեց մեզ:

Մարտակերտի շրջանի ռմբակոծությունից հետո շրջան էին ժամանել նաեւ արտասահմանցի լրագրողներ: Թալի-

շում նրանցից մեկն արցախցի լրագրողի ուղեկցությամբ այցելում է գյուղի 101-ամյա տատիկին՝ հարցնելու նրա որպիսությունը, իմանալու գյուղացիների տրամադրությունը (հինգ թալիշցիներից մեկն էր, ով ադրբեջանական ներխուժման ժամանակ դուրս չէր եկել գյուղից):

Տեսնելով արցախցի լրագրողին՝ մեծ մամեն նրան է դիմում.

- Ա՛ խոխա, դեմքդ է ինձ ծանոթ աս:
- Արցախի հեռուստատեսությունից եմ, երեւի հեռուստաթերթից եք ինձ ճանաչում:
- Հա՛, բալա՛, հիշեցե, հիշեցե, - ասաց մամիկն ու շարունակեց, - բա է՛ն մինը հուլա՞:
- Է՛ն մինն ալ Բրյուսելից ա, լրագրող ա:
- Վա՛յ քուռամամ ես, ընդեղ դրությունը փիս ա, ասի մղայիտ կե՛նա, մուք պընդ եք, թող մեզ հետա մտածե վե՛չ...

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

14.04.2016թ.,

«Սյունյաց երկիր», N12, 22 ապրիլի 2016թ.

Ապրիլի 13-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը դարաբաղա-ադրբեջանական շփման գծի հյուսիսարեւելյան շրջանում էր՝ սյունեցի կամավորականներին հանդիպելու եւ նրանց գործունեությունը լուսաբանելու նպատակով: Եղնիկներ կոչվող հատվածում հանդիպեցինք Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ խնդրեցինք հընթացս պատասխանել մի քանի հարցի:

- Պարոն մարզպետ, Դուք եղաք Մատաղիսի եւ Եղնիկներ կոչված վայրի դիրքերում, շփվեցիք տղաների հետ, ովքեր զենքը ձեռքին խրամատում են, Ձեր տպավորությունները:

- Ուղիղ տասը օր է, ինչ տղաներն այստեղ են: Հասնելուց կես ժամ հետո դիրքեր բարձրացան՝ Մատաղիսի եւ այստեղի: Մարտունակ, պատրաստակամ, բարձր տրամադրությամբ են, գիտակցուն են, որ սրբազան հողի պաշտպանության խնդիր են լուծում, նաեւ այս սրբազան հողի համար զոհվելը պատիվ է, բայց Աստված տա, որ ոչ ոք չզոհվի:



ԱՐՑԱԽՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՍ

Ինքներդ եք տեսնում, որ այստեղ տղաների ոգին շատ բարձր է: Յուրաքանչյուր դիրքի ամրությունը, զինվորների կարգապահությունը պահելու համար անհրաժեշտ են փորձառու հրամանատարներ: Այսօր ունենք նման հրամանատարներ, այս հատվածում հրամանատարը գնդապետ Մելիքսեթ Պողոսյանն է, 35 կմ սահման են պահում, ներքեում՝ Աշոտ Մինասյանը՝ երկուսն էլ Արցախյան պատերազմի բովով անցած, մարտական իրադրություններին ամբողջովին տիրապետում են: Ես համոզված եմ, որ այս դիրքերը շատ ամուր են, սա ուզում եմ հատկապես նշել: Փառք ու պատիվ հայոց բանակին, Արցախի պաշտպանության բանակին, ժամկետային զինծառայողներին: Այդ 18-20 տարեկան տղաները թեև մեզ համար երեխաներ են, բայց այսօր տեսնում ենք՝ խիզախ մարտիկներ են, հայրենապաշտ տղաներ՝ պատրաստ իրենց կյանքի գնով հայրենի հողը պաշտպանել: Այս ամենը շատ է ոգևորում: Վերջին տասը օրվա ընթացքում հանրապետության գրեթե բոլոր տարածքներից այստեղ ժամանած երկրապահներն իրենց փորձառությանը մեցուկ են երիտասարդներին եւ հպարտ են, որ իրենց գործը շարունակողներ կան:

- Մի քանի ժամ է՝ այստեղ ենք, բառերով դժվար է նկարագրել ռելիեֆային դժվարությունները: Անսովոր դժվարին պայմաններ են, այս ամենը, անշուշտ, տեխնիկայի օգտագործման, ծառայության դժվարություններ է ստեղծում:

- Ինչքան էլ տեղանքն անսովոր է եւ դժվարին, դա մերն է, մենք պիտի պաշտպանենք: Նվիրյալների համար դժվարություններ չկան: Այս ամենը հարստություն է, որը պիտի պաշտպանենք, նաեւ հայ ժողովրդի պարտքն է, փառք Աստծո, մեր ժողովուրդն այսօր միակամ է, համախմբված է եւ պատրաստակամ: Ընդամենը մենք այսօր խնդիր ունենք, որ մեր սպառազինությունն ու հակառակորդինը հավասարակշռված լինեն: Մարտական ոգին շատ բարձր է, սպառազինության հավասարակշռություն ստեղծելուց հետո ավելի կիզորանանք, եւ խիղճներս հանգիստ կլինի, որ այս տարածքներում թշնամին երբեք ոտք չի դնի եւ հաջողություն չի ունենա:

- Բնականաբար, այսքանը տեսնելուց ու աշխատավայր վերադառնա-

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Թող տեսնեն, թե այստեղ ինչ մարտական ոգի կա՝ թե՛ 18 տարեկան պատանու, թե՛ 60 տարեկան տղամարդու մեջ»

լուց հետո, ո՞րն է լինելու Ձեր առաջին խնդիրը:

- Ես մշտապես կապ ունեմ այստեղի հրամանատարների հետ, ինչ-որ անհրաժեշտ է լինում, օպերատիվորեն հասցվում է այստեղ, այսօր ցանկացա լինել դիրքերում, իմ աչքով տեսնել կաշխատենք, որ անհրաժեշտ պարագաները լինեն դիրքերում, որ տղաները ոչնչի կարիք չունենան:

- Վերջին հարցը վերաբերում է հերթափոխին: Դիրքերում գտնվողները հանգստանալու կարիք ունեն նաեւ:

- Յերթափոխը պատրաստ է, փոխարինողների թվաքանակը ապահովված է, ապրիլի 18-ին հերթափոխը ճիշտ ժամանակին արվելու է, փորձառու հրամանատարների միջոցով մեր դիրքերը պահպանվելու են:

- Մենք այսօր այստեղ շտապ օգնության մեքենա տեսանք, արդյոք դա նշանակո՞ւմ է, որ վիրավոր ունենք:

- Այսօր վիրավոր չունենք, բայց այսպիսի պայմաններում շտապ օգնության մեքենաները պիտի հերթապահեն:

- Շնորհակալ ենք գրույցի համար: Ի՞նչ կմաղթեիք դիրքապահներին:

- Չաջողություն մեր տղաներին՝ դարբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով կանգնած մեր զինվորներին: Չաջողություն մաղթենք բոլորին, եւ տա Աստված, այլեւս զոհ չունենանք:



Մեկ զոհն էլ մեզ համար շատ-շատ է: Ինչ եմ ուզում նշել. կուզեի եւ մտավորականները, եւ գործարարները, եւ շարքային քաղաքացիները, ես պայմաններ կստեղծեմ, զան եւ իրենց աչքերով տեսնեն, թե այստեղ ինչ մարտական ոգի կա՝ թե՛ 18 տարեկան պատանու, թե՛ 60 տարեկան տղամարդու մեջ:

**Զրույցը՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ
13 ապրիլի 2016թ.**

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ



ՍԵՅՐԱՆ ՕՐԱՆՅԱՆ ՀՀ պաշտպանության նախարար

Յարգելի Սուրեն Սերգեյի Դուք մեծ վաստակ ունեք Արցախյան ազատամարտի տարիներին Հայաստանի ամենավտանգված շրջաններից մեկի՝ Գորիսի ինքնապաշտպանության եւ Հայոց երկու նորանկախ պետությունները միմյանց կապող ճանապարհի պաշտպանության կազմակերպման, Սյունիքի, ինչպես նաեւ Արցախի հարավ-արեւմուտքում գտնվող շեներին սպառնացող թշնամական հենակետերի լռեցման, իսկ 1994 թվականին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարավային սահմաններն անառիկ պահելու գործում:

Նույնքան մեծ է Ձեր ներդրումը տեղական ինքնակառավարման ու տարածքային կառավարման ինստիտուտների կայացման եւ Գորիսի տարածաշրջանի ու ողջ Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովելու ասպարեզներում: Արցախյան ազատամարտի սկզբից ի վեր Դուք դարձաք հեռատես, եռանդուն ու վճռական հրամանատարի բնութագրական օրինակ, եւ նույն որակները լավագույնս դրսևորեցիք քաղաքապետի ու մարզպետի պարտականությունները կատարելու, Երկրապահ կամավորականների միության մարզային բաժանմունքի աշխատանքները համակարգելու, իսկ 2016 թվականի ապրիլյան դժվարին օրերին այուներցիների համախմբելով՝ վտանգված Արցախին սատար կանգնելու ընթացքում: Մենք դեռ շատ խնդիրներ պիտի լուծենք ու բազում մարտահրավերների դիմա-



20 հունիսի 2014թ., Գորիսում նշվեց 1-ին բանակային կորպուսի հիմնադրման 18-րդ տարեդարձը

21 հոկտեմբերի 2014թ., Սեյրան Օհանյանն ու Սուրեն Խաչատրյանը կտրում են Ազարակի ռազմատեխնիկական հավաքակալայանի ժապավենը, որից հետո ծանոթանում հավաքակալայանի հնարավորություններին



Իսկական ընկերոջ չափանիշ է



ՍՐՄԵՆ ԴՈՒՆՐՅԱՆ

ՀՀ քաղաքաշինության
Մախարարի տեղակալ

Կայենք՝ մեր երազած նպատակներին հասնելու եւ պաշտպանված ու բարեկեցիկ հայրենիք կերտելու համար: Եվ այդ դժվարին գործում միշտ անհրաժեշտ են լինելու Ձեր կամքը, փորձառությունն ու աշխատասիրությունը:

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան 60-րդ տարեդարձի առթիվ, մաղթում եմ առողջություն, ընտանեկան երջանկություն, աշխատանքային նորանոր հաջողություններ եւ ամենայն բարիք: ■



Օգտվելով ընծեռված հնարավորությունից՝ ջերմ շնորհավորանքներս եմ հղում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին՝ 60-ամյա հորելյանի առթիվ, ցանկանալով նրան ուժ, կորով իր նախաձեռնած յուրաքանչյուր հարցում եւ, որ ամենակարեւորն է, առողջություն:

Սուրեն Խաչատրյանի մասին կարելի է խոսել երկար, ու չի գտնվի դրական մի հատկանիշ, որն ինքը չկրի իր մեջ, իսկական ընկերոջ չափանիշ է:

Աստված շատ փորձությունների միջով տարավ, ինչը սակայն նրան չկտրեց երբեք: Ուժեղ ու անկոտրում բնավորության տեր է, կամեցող, բարի, մարդ մեծատառով: Հյուրասիրելով չի հագնա՝ երբեք չսպասելով, որ նույնը պիտի իր հանդեպ անես: Ընկերոջ կյանքով հարազատորեն ապրող, նրա համար ամեն ինչի պատրաստ անձնավորություն է: Այդպես է նաեւ բարեկամ-հարազատների, իր շրջապատի մարդկանց համար:

Առհասարակ, ընկերոջ մասին խոսք ասելու իրավունք ունենալը մեծ պատիվ է ամեն մի մարդու համար: Հատկապես Սուրեն Խաչատրյանի նման անձնավորության մասին,

մարդ, ով կյանքում պատասխանատվություն է զգում ամեն ինչի համար, որեւէ նախաձեռնություն կյանքի կոչելու համար նրան խնդրել կամ հանդել պետք չէ, ինքը զգում է դա՝ տարանջատելով կարեւորը երկրորդականից:

Գաղտնիք չէ, որ Սուրեն Խաչատրյանը վերջին տարիներին հսկայածավալ աշխատանք է կատարել ազգի երեւելիներից շատերի գիտական ժառանգությունը վերահրատարակելու եւ մտավորականներին մեծարելու ու հովանավորելու ուղղությամբ:

Անսահման նվիրված է իր ընտանիքին եւ մեծ հարգանքով է լցված հայ օջախի, հայ բարեպաշտ յուրաքանչյուր ընտանիքի նկատմամբ:

Սակայն նրան ճանաչող յուրաքանչյուր անձ կփաստի, որ նրա համար ամեն ինչից վեր սերն է դեպի հայրենիքը, դեպի միացյալ Հայաստան եւ Արցախ ունենալու գաղափարը: Երկրորդ, որ զուգորդված է առաջինի հետ՝ մանկական, երիտասարդական ու, այսօր արդեն հասուն տարիներով շաղախված, նվիրումն է իր բժօրանին՝ Սյունյաց աշխարհին: Էությամբ ազգի զինվոր է՝ վստահ սեփական ուժերին:

Սուրեն Խաչատրյանն իր կյանքում ունի ձեւավորած հստակ սկզբունք՝ փոխադարձ վստահությունը վեր է պայմանագրով ամրագրված պարտավորություններից, նրա համար պարտքի զգացումն ու պատիվը կյանքում ամենակարեւորն են: Նա՝ ով չի կարողանում պահել իր խոսքը, երբեք չի կարող Խաչատրյանի հարգանքին արժանանալ:

Սուրեն Խաչատրյանն ունի տիտանական աշխատասիրություն, պետական մտածելակերպ: Մարզպետի բազմազբաղ աշխատանքի հետ մեկտեղ ուշագրավ պատմական ուսումնասիրություններ է կատարել: Եվ պատահական չէ, որ առաջնորդվում է. «Կարողալ ինչքան հնարավոր է շատ» նշանաբանով:

Հիշում եմ՝ մի անգամ ընկերական սեղանի շուրջ պատմեց, թե ինչպես է իր պապը դեռեւս պատանի Սուրիկին պատգամել հետեւյալ իմաստուն միտքը. «Հավատա ինքդ քեզ, քո ուժերին եւ մի ասա՝ ում հետ եմ ես, այլ՝ ով կա ինձ հետ»: Իսկ նման սկզբունքով առաջնորդվելու համար մեծ ոգի է պետք ունենալ, որը, անշուշտ, իր մեջ կրում է Սուրեն Խաչատրյան անհատը: ■

ՐԱՄԱՐԻ ՖՈՏՈԱԼՈՍԸ

Այունյաց աշխարհում ազգային ոգին կենսունակ պահող հին ու նոր ավանդույթներն արժեւորելու հանձնառությամբ



16 հոկտեմբերի 2010թ., Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին նվիրված համաժողովրդական տոնակատարություն (դրվագ):

Մեղրի, 25 հոկտեմբերի 2009թ., 23 տարի ընդմիջումից հետո կազմակերպվեց «Արեւիք-Մեղրի» երգի եւ բերքի տոնը:



Սիսիան,
Հացի տոն
Սիսիանում:

5 հունիսի 2015թ.,
Սիսիանում տեղի ունեցավ համահայկական ծաղկի փառատոն:





Գորիս, 4 հուլիսի 2015թ., «Այունիքի բարիքներ» փառատոնը Գորիսում:



Ագարակ, 23 հոկտեմբերի 2010թ., տոնակատարություն քաղաքում:



Քաջարան, 7 հոկտեմբերի 2008թ., Քաջարանը նշեց իր կեսդարյա հոբելյանը:



12 սեպտեմբերի 2010թ., Կապանի տոնը:



19 հոկտեմբերի 2014թ., Կապանի տոնը:



26 հուլիսի 2015թ., Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջախը՝ Կապանում:



2 հոկտեմբերի 2011թ., Կապանի տոնը:



ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Տարածաշրջանում կառուցվեցին նոր բժշկական կենտրոններ եւ հիմնանորոգվեցին գործող կենտրոնները



Սեդրու բժշկական կենտրոնում

2010 թ. դեկտեմբերի 28-ին հանդիսավորությամբ բացվեց Գորիսի բժշկական կենտրոնը: «Կենտրոնն ամբողջովին վերազինվել է նորագույն բժշկական տեխնոլոգիաներով: Սյունիքի տարածաշրջանի համար այն ունի մեծ նշանակություն: Կենտրոնը կառուցվել է Համաշխարհային բանկի «Առողջապահական համակարգի արդիականացում» վարկային ծրագրի շրջանակում: Ստեծվել է Գորիսի Ռ.Յոլյանի անվան հիվանդանոցի եւ քաղաքի Ս.Ամիրյանի անվան պոլիկլինիկայի միաձուլման արդյունքում: Այն 110 մահճակալ հզորությամբ բազմապրոֆիլային բժշկական կենտ-

րոն է: Ամբողջովին հիմնանորոգվել է հիվանդանոցի եռահարկ շենքը՝ 3200քմ ընդհանուր մակերեսով, որին կից կառուցվել է եռահարկ նոր շինություն՝ 1100քմ ընդհանուր մակերեսով: Հիմնանորոգումից հետո հիվանդանոցի նորակառույց կցակառույցի առաջին հարկում տեղակայվել են ախտորոշիչ ծառայությունների մի մասը, ռենտգեն եւ ուլտրաձայնային հետազոտության բաժինները եւ շտապ օգնության ընդունարանը, երկրորդ հարկում՝ ծննդաբերական, իսկ երրորդում՝ վիրահատական բլոկները: Հիմնական մասնաշենքում տեղակայվել են մնացած ախտորոշիչ ծառայությունները եւ լաբորատորիան, մանկական բաժանմունքը,

երկրորդում՝ ինֆեկցիոն եւ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքները: Ծրագրի շրջանակներում հիվանդանոցը հագեցվել է հիմնական արդիական սարքավորումներով՝ նախատեսված ընդունարանի, ինտենսիվ բուժման, ախտորոշիչ բաժանմունքների եւ վիրասրահների համար: Մատակարարվել է նաեւ նոր բժշկական եւ կենցաղային կահույք:

* * *

2015թ. հոկտեմբերի 17-ին տեղի է ունեցել Կապանի բժշկական արդիականացված կենտրոնի բացման արարողությունը: Նորաբաց կենտրոնի շնորհիվ Սյունիքի մարզի եւ հատկապես Կապանի տարածաշրջանի բնակչությանն իրենց բնակավայրերում կմատուցվեն որակյալ, մատչելի եւ արդիական բժշկական ծառայություններ: Հիվանդանոցը հիմնանորոգվել է, հագեցվել գույքով եւ սարքավորումներով ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ ՀՀ կառավարության եւ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակում: Արդիականացման գործընթացի շրջանակում հիվանդանոցն ապահովվել է հեռաբժշկության հնարավորություններով: Ամբողջովին փոխարինվել են երկու մասնաշենքի տանիքների ծածկերը, վերակառուցվել են միջնապատերը, տեղադրվել են բժշկական նոր վերելակներ, փոխարինվել են դռները, ինժեներական բոլոր ներքին ենթակառուցվածքները: Մոնտաժվել են նաեւ օդափոխության, քույրական ազդակառնչի, հակահրդեհային ազդարարման համակարգերը, համակարգչային ու հեռախոսակապի ներքին ցանցերը: Մրցութային գործընթացի արդյունքում տնտեսված միջոցների հաշվին տեղադրվել է ջեռուցման եւ տաք ջրամատակարարման նոր կաթսա, դիզելային գեներատոր, իրականացվել են նաեւ կենտրոնի արտաքին տարածքի բարեկարգման աշխատանքները, ներառյալ՝ ասֆալտապատում, արտաքին լուսավորության եւ եզրաքարերի տեղադրում, տարածքը եզրագծող ցանկապատի վերանորոգում: Երկու մասնաշենքերի միջեւ կառուցվել է նոր վերգետնյա անցում, վերանորոգվել է էլեկտրական ենթակայանը: Ծրագրի շրջանակում Կապանի բժշկական կենտրոնը հագեց-

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ԾՐԱԳՐԵՐ



Կապանի բժշկական կենտրոնում



Գորիսի սրտաբանական կենտրոն



Գորիսի բժշկական կենտրոն

վել է նաև ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով եւ պարագաներով: Կենտրոնին տրամադրվել են բարձր արտադրողականություն ունեցող բազմաֆունկցիոնալ ռենտգեն համալիր, ուլտրաձայնային հետազոտման եռաչափ սարք, որը կարող է իրականացնել նաև սրտի եւ անոթների հետազոտություն, տրեդմիլ համակարգ, թոքերի արհեստական օդափոխության սարք, դեֆիբրիլատոր (սինխրոնիզացիայի հնարավորությամբ), ինչպես նաև ժամանակակից լաբորատոր եւ այլ սարքեր: Վիրասրահը հազեցվել է արդիական անհրաժեշտ միջոցներով: «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի երկրորդ

փուլի լրացուցիչ վարկային ծրագրով «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվել է 1.4 մլրդ ՀՀ դրամի (շուրջ 3 մլն 154 հազար ԱՄՆ դոլար) ներդրում:

* * *

2016թ. փետրվարի 6-ին Մեղրիում բացվեց բժշկական կենտրոնը: «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնը» ստեղծվել է «Մեղրու բժշկական կենտրոն» եւ «Ագարակի հիվանդանոց» ՓԲԸ-ների միավորման արդյունքում պահպանելով ամբողջ բժշկական անձնակազմը: Արդիականացված նորաբաց բազմապրոֆիլ բժշկական կենտրոնը հնարավորություն կընձեռի Մեղրու տա-

րածաշրջանի բնակչությանը մատուցել ժամանակակից, որակյալ եւ հասանելի բժշկական ծառայություններ: ՀՀ կառավարության եւ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի շրջանակներում այս բուժաստատությունում իրականացվել է շուրջ 1.62 մլրդ դրամի ներդրում: Նորակառույց կենտրոնը հազեցվել է ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով եւ անհրաժեշտ պարագաներով: «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնում» առկա է նաև հեռաբժշկության հնարավորություն:

* * *

2010թ. հոկտեմբերի 16-ին Գորիսում ավարտվեց Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի կառուցումը, իսկ 2013թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ կենտրոնի բացման հանդիսավոր արարողությունը: Կենտրոնում գործում են էլտկարդիոգրաֆիայի, էլեկտրակարդիոգրաֆիայի, ռենտգեն, սթրես-տեստավորման, զոնդավորման, ստենտավորման, վերակենդանացման կաբինետներ, արյան լաբորատորիա: Այն համալրված է հմուտ բժիշկ-սրտաբաններով եւ ժամանակակից սարքավորումներով:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Մեղրի-Ծավ- Կապան ավտոմայրուղին հանձնվեց շահագործման

Ուղղաթիռում արդեն քննարկում էինք այս ճանապարհի շարունակության՝ Կապան-Սիսիան հատվածի շինարարության խնդիրը: Այս ճանապարհը գործողին այլընտրանք կլինի: Կրկին շնորհակալություն շինարարներին:

Ի դեպ, այս ճանապարհի շինարարությունն սկսվել է 2005թ. մայիսին (շինարարությունն արել են 4 կապալառու ընկերություններ՝ «Մեղրու ճՇՇՁ» ԲԲԸ-ն, «Դորոժնիկ» ՍՊԸ-ն, «Կապավոր» ՍՊԸ-ն եւ «Կապանի ճՇՇ» ԲԲԸ-ն): Գումարը հատկացվել է պետական բյուջեից՝ ընդհանուր առմամբ, ըստ տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանի, 15 մլրդ 275 մլն դրամ: Ճիշտ է, նախորդ՝ գործող ճանապարհից



Առաջին հերթին պետք է շնորհակալ լինել այն մարդկանց, ովքեր կառուցել են այս ճանապարհը: Իմ խնդիրը որոշում կայացնելն էր, ստիպելը, գործի ընթացքին հետեւելը, - Մեղրի - Շվանիձոր - Վերիշեն - Ծավ - Կապան ավտոճանապարհի բացման արարողությանը նշեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: - Մինչ այս գործող ճանապարհը խորհրդային տարիներին վեց տարում է կառուցվել: Մենք սա երեք տարում կառուցեցինք: Սա փաստում է, որ մեր մասնավոր ընկերությունների, շինարարների հնարավորություններն ավելի լուրջ են, քան կարծում ենք: Բայց սրանով չենք բավարարվելու... Այս ճանապարհն անցնում է վեց գյուղերի միջով, որոնք, ըստ էության, մոռացված էին: Այսօր այդ գյուղերը շունչ կստանան: Իրանից բեռնափոխադրումներն այս ճանապարհով են անցնելու:

դեռ 12 կմ էլ երկար է, բայց հարավային լանջերով է անցնում, ավելի արեւկող է եւ ձմռանն էլ անցանելի: Ճանապարհի երթեւեկելի մասի նվազագույն լայնությունը վեց մ է, առավելագույն երկայնական թեքությունը ինը տոկոս է: Առավելագույն բարձրանիշը ծովի մակերեւոյթից 2215 մ է: Ճանապարհի կրողունակությունը կազմում է 11.5 տոննա փոխադրամիջոցի յուրաքանչյուր սոնու հաշվով կամ առավելագույնը 80 տոննա՝ 1 ժանրաքաշ փոխադրամիջոցի ընդհանուր քաշի հաշվարկով: «Այս ճանապարհի շինարարության գաղափարը մեր երկրի նախագահինն է: Այս շինությունը կառուցելը բարդ էր, ինչպես Սելիմի լեռնանցքը, Դիլիջանի թունելը եւ այլն: Բայց կառուցվեց», - նկատեց Անդրանիկ Մանուկյանը:

«Այունյաց երկիր»

31 հոկտեմբերի 2007թ., N19 (131)

Վերականգնվել է Շաքե-Սիսիան-Տուրս ճանապարհը

Վերականգնված ճանապարհի ընդհանուր երկարությունը կազմում է 29.03 կմ, բաղկացած է երկու հատվածից: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 2.5 մլրդ դրամ: Առաջին հատվածի (Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհից մինչեւ Սիսիան քաղաքի վերջամասը) շինարարական աշխատանքներն սկսվել են 2015թ. հունիսի 3-ից, ավարտը նախատեսված է 2016թ. հոկտեմբերի 27-ին: Վերականգնվող 9.94 կմ ճանապարհահատվածից ասֆալտապատվել է շուրջ 7.9 կմ-ը: Երկրորդ հատվածի (Սիսիանի վերջամասից մինչեւ Դաստակերտ համայնք) շինարարական աշխատանքներն սկսվել են 2015թ. հունիսի 11-ից, ավարտը նախատեսված է 2016թ. դեկտեմբերի 4-ին:

«Այունյաց երկիր», N27 (370)

17 հոկտեմբերի 2015

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Գորիսն ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարմամբ

Դարերի վեր Գորիս գյուղում, ապա քաղաքում խմելու ջրի հարցը լուծվել է տեղական աղբյուրների միջոցով: 1930-ականներին այդ աղբյուրներն այլևս չէին բավարարում ջրի պահանջարկը՝ բնակչության թվաքանակն ավելանալու պատճառով: Եվ 1934-37թթ. վերիշեն գյուղից հյուսիս գտնվող աղբյուրների խմբից՝ Ակներ անվանյալ, որտեղից սկիզբ է առնում Գորիս կամ Վարարակն գետակը, խմելու ջուրը հասցվեց Գորիս: Տարեց գորիսեցիները պատմում են, որ ջրատարի կառուցման աշխատանքները ղեկավարում էր Անդրեաս Սուլեյմանյանը (Գորիսի նախկին ճարտարապետ Սուրեն Դարբյուրյանի հայրը): Այդ աղբյուրների ջրերով է միջնադարում ոռոգվել նաև Տաթևի վանքապատկան հողերի Ցաքուտ կոչվող տեղամասը, որի համար 932թ. 21 կմ երկարությամբ ջրանցք է կառուցվել՝ Տաթևի Դակոբ Եպիսկոպոսի եւ Սյունիքի Փիլիպե իշխանի ջանքերով, որի վերաբերյալ մինչեւ հիմա էլ Ակներում պահպանվում է վիմագիր արձանագրություն:

1970-ական թվականներին Գորիսում կրկին սրվել էր խմելու ջրի հարցը, մասնավորապես որ Ակների ջրից մերձակա գյուղերին նույնպես բաժին էին հանել: Այդ իսկ պատճառով ձեռնարկվեց Ջորգորի ջուրը Գորիս հասցնելու դժվարին գործը: 1983թ. մեկնարկած աշխատանքների առաջին փուլը (ջուրը հասցվեց Գորիսի մուտքի ջրավազան, որտեղից պիտի մատակարարվեր եւ Գորիս քաղաքին, եւ մի քանի գյուղերի) ավարտվեց 1986թ.: Այդ տարվա նոյեմբերի 29-ին Գորիսի մուտքը խորհրդանշող ժայռակոթողի մերձակայքում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն: Ջրատարի բացման պատիվը տրվեց ԴԿԿ շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանին, Դայաստանի գլխավոր ջրաշինարարական վարչության պետ Մառլեն Գեւորգյանին, հանրապետության բնակարանային եւ կոմունալ տնտեսության մինիստր Ռաֆիկ Մինասյանին: Ջորգորի



ջրատարի կառուցումն այնքան խանդավառություն էր առաջացրել Գորիսում, որ Ամենայն հայոց աշուղ Աշոտը ծնունդ տվեց հերթական իր երգին՝ «Ջորավոր Ջորգոր», որը հնչեց այդ օրվա տոնախմբության ժամանակ: Բոլորին թվում էր, թե Ջորգորի օգնությամբ կլուծվի Գորիսի եւ մերձակա գյուղերի ջրամատակարարման հարցը, սակայն հետագայում պարզ դարձավ, որ եռաստիճան պոմպակայաններով, էլեկտրագիտի հսկայական ծախսերով համակարգի կայուն գործունեության ապահովումը հնարավոր չէ եւ, առհասարակ, թանկ հաճույք է նման համակարգի օգտագործումը: Ջրատարի գործարկումից շատ ժամանակ չէր անցել, երբ քաղաքը կրկին գործ ունեցավ խմելու ջրի դեֆիցիտի եւ անկայուն ջրամատակարարման հետ: Այդ ժամանակ էր, որ Բագարչայի ստորոտավայրերում գտնվող Ջույգ աղբյուր եւ Մուխուրթունյան աղբյուրներից ջուրն ինքնահոս եղանակով Գորիս հասցնելու խնդիր դրվեց: Այդ ջրատարի կառուցումը, որի մասին երբեւէ պետք է երախտագիտության խոսք ասվի, դարձել էր հետպատերազմյան Գորիսի հարվածային կառույցը, որը գլխավորում էր Գորիսի այդ օրերի քաղաքապետ Սուրեն Խաչատրյանը: Կառույցի առաջին փուլի աշխատանքները (Ջույգ աղբյուր-Գորիս ջրատարի առաջին փուլ համարվեց Մուխուրթունյան-Գորիս ջրագծի կառուցու-

մը) ավարտվեցին 1998թ., ինչը նշվեց մեծ հանդիսավորությամբ: Հոկտեմբերի 31-ին տեղի ունեցած տոնախմբության ժամանակ (դարձյալ տեղի ունեցավ Գորիսի մուտքը խորհրդանշող հուշակոթողի մոտ) ելույթ ունեցան ԴԿ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Գորիսի այդ ժամանակվա քաղաքապետ Սուրեն Խաչատրյանը: Երկրորդ փուլի աշխատանքներն ավարտվեցին 2008թ.:

Ջույգ աղբյուր-Գորիս ջրատարի երկու հերթի կառուցման արդյունքում Գորիսը վայրկյանում ստացավ մոտ 250 լիտր ջուր (այդ ջրատարի շնորհիվ խմելու ջուր ստացավ Գորիսի 8 գյուղ եւս): Սակայն Գորիս քաղաքի ջրամատակարարման խնդիրը չէր կարող լուծված համարվել, քանի դեռ չէր վերանորոգվել 1930-50-ականներին կառուցված ներքին ցանցը: Ահա այս խնդրի լուծման նպատակով է, որ 2008թ. Գորիսում մեկնարկեց «Ասիական զարգացման բանկի» վարկային ծրագիրը՝ երկու փուլով: Առաջին փուլն իրագործվեց 2008թ., երկրորդ փուլը՝ 2009-2010թթ.: 750 մլն դրամ արժողությամբ ծրագրով Գորիս քաղաքում վերակառուցվեց ներքին ջրատար ցանցի մոտ 40%-ը (կառուցվեց 36 կմ երկարությամբ նոր ջրատար): Լրացուցիչ աշխատանքներ կատարվեցին նաև ջրաղբյուրներում: Արդյունքում Գորիս քաղաքն այսօր Մուխուրթունյան-Ջույգ աղբյուր ջրաղբյուրներից վայրկյանում ստանում է մոտ 250, Ակներից՝ 130 լիտր ջուր եւ դա, ներկայիս նորմալ ներքին ցանցի պարագայում, հնարավորություն է տալիս շուրջօրյա ջրամատակարարում ապահովել Գորիս քաղաքում: Ահա այդ սպասված իրադարձությանն էր նվիրված հունիսի 17-ին Գորիս քաղաքի Մխիթար Սպարապետի անվան հրապարակում տեղի ունեցած տոնախմբությունը՝ հարյուրավոր գորիսեցիների մասնակցությամբ: Հավաքվածների առջեւ ելույթ ունեցան եւ գորիսեցիներն շնորհավորեցին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, «Հայքըմուղկոյուղի» ՓԲԸ տնօրեն Պատրիկ Լորենը: Այնուհետեւ համերգային ծրագրով հանդես եկավ Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի ժողգործիքների համույթը՝ Արկադի Մարդյանի գլխավորությամբ:

ԱՐԱՎԻԻ ՆԱՎԱՍՏՐՈՒՄ
«Այունյաց երկիր», N12 (231)
30 հունիսի 2011թ.

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Մարզում կառուցվել է 12 նոր դպրոց

(Նոնաձոր, Լիճք, Վարդանիձոր, Իշխանասար, Խոզնավար, Արավուս, Սրաշեն, Եղեգ, Տեղ, Բնուցիս, Շամբ, Կապան)



Կապանի N2 ավագ դպրոց



Սրաշենի դպրոց



Եղեգի միջ. դպրոց

Վերածնված

2016թ. հոկտեմբերի 16-ին Տաթև-Յալիձոր ճոպանուղու գործարկմամբ մեկնարկեց «Տաթևի վերածնունդ» ծրագիրը: Այդ օրը Տաթև մոտ 600 հյուր էր ժամանել:

Միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել 33 նախագահ Սերժ Սարգսյանը, ԼԳՅ նախագահ Բակո Սահակյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, 33 վարչապետ Տիգրան Սարգսյանը, նախարարներ, բազմաթիվ այլ բարձրաստիճան անձինք, գործարարներ, հյուրեր աշխարհի տարբեր ծայրերից, որոնց մեջ նաև ծրագրի բարերարներն էին:

Ծրագրի իրականացումը վստահվել է «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամին»: 2008թ. տարբեր ազգության եւ կրոնական պատկանելության մարդիկ միավորվեցին Տաթևի վանական համալիրի վերածննդի գաղափարի շուրջ՝ մոսկվաբնակ հայ գործարար Ռուբեն Վարդանյանի եւ Վերոնիկա Ջոնաթենի գլխավորած «Տաթև» հիմնադրամի շրջանակներում: 28 մլն դոլարի նվիրատվություն կատարած Ռ.Վարդանյանին հաջողվել է իր գաղափարով ոգեւորել մոտ 100 հայ եւ օտարերկրյա բարերարների, որոնց աջակցությամբ կառուցվել է ճոպանուղին, վերականգնվել վանք տանող ճանապարհը, վանական համալիրի մի քանի շինություններ ու բարեկարգվել համալիրի շրջակայքը:

ճոպանուղին կրում է «Տաթևի թեւեր» անունը, այն 5.7 կմ ձգվում է Որոտան գետի խոր կիրճի վրայով՝ կապելով Տաթև եւ Յալիձոր գյուղերի մոտակայքում տեղադրված երկու կայանը: Յուրաքանչյուր խցիկ կարող է 25 ուղեւոր տեղափոխել: ճոպանուղու ամենաբարձր արագությունը 37 կմ/ժ է, ուղեւորությունը մոտ 11 րոպե է տեւում, ամենաբարձր կետը 320 մետր է:

ճոպանուղու կառուցումը տեւեց 11 ամիս, կառուցողը շվեյցարաավստրիական «Garaventa Doppelmayr» ըկերությունն է, շինարարության արժեքը 13 մլն եվրո է: Իսկ Երեւանի մայրուղուց մինչեւ Տաթև տանող

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Տաթել...



26կմ ճանապարհը ծրագրի շրջանակներում վերակառուցվել է ՀՀ կառավարության կողմից. մինչև Սատանայի կամուրջ այն ասֆալտապատ է, դրանից հետո՝ մինչև վանք բարեկարգվել է:

Ճոպանուղու բացումը կատարեց ՀՀ նախագահը, որից հետո Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսը օծման արարողակարգ մատուցեց: Ի դեպ, բացման արարողությունը կատարվեց ճոպանուղու Հալիձորի կայանում,

իսկ հյուրերին ու լրագրողներին մինչ այդ հասցրել էին վանական համալիրի տարածք, եւ Տաթելում նրանք այդ արարողությանը հետեւում էին էկրանների միջոցով, այնուհետեւ դիմավորեցին ճոպանուղու առաջին պաշտոնական երթի ուղեւորներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին եւ երեխաներին:

«Տաթելի վերածնունդ» ծրագրի ընդհանուր արժեքը 50 մլն դոլար է: Այն ու-

նի հետեւյալ բաղադրիչները՝ համալիրի պահպանում, վանական եւ գիտական ավանդույթների վերականգնում, զբոսաշրջային արդյունքի մշակում Որոտանի կիրճում ու հարեւան գյուղերում եւ աշխարհի ամենաերկար ճոպանուղու կառուցում: Ծրագիրը ներառում է Տաթել, Հալիձոր, Տանձատափ, Սվարանց, Խոտ եւ Շինուհայր գյուղերը:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

«Այունյաց երկիր», N18 (215), 2010թ.

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅԱՄԲ



27 մայիսի 2015թ., գիտաժողով Տաթևում, թեման՝ «Տաթևի վանքը՝ հոգեւոր-մշակութային եւ դպրութեան կենտրոն» թեմայով:



2 հուլիսի 2011թ., գիտաժողով Գորիսում՝ Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին նվիրված:

19 դեկտեմբերի 2009թ.,
Գորիսում ԳԳ ԱԱ
Նախագահ Ռադիկ
Մարտիրոսյանի
մասնակցությամբ տեղի
ունեցավ գիտաժողով՝
նվիրված հայ մեծ
լուսավորիչ Խաչատուր
Աբովյանի 200-ամյակին:
Մարզպետը նրան
հանձնեց Ա.Բակուցի
ստեղծագործու-
թյունների
ընտրանին՝ նախօրեին
լույս տեսած, ինչպես
եւ Ղ.Ալիշանի
«Սիսականը»:



Գիտաժողովներ՝ հանրապետության առաջադար գիտնականների մասնակցությամբ



26-27 ապրիլի 2011թ., Տաթև, գիտաժողով՝ նվիրված Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին եւ Լեռնահայաստանի 90-ամյակին:



2 դեկտեմբերի 2011թ., գիտաժողով Սիսիանում՝ նվիրված Նիկոլայոս Աղոնցի գիտական ժառանգությանը:



20 հոկտեմբերի 2009թ., գիտաժողով Կապանում՝ նվիրված Արամ Մանուկյանին:

ՎԱՍԱՐԻ ՖՈՏՈԱԼԲՈՄԸ (ԸՆՏԱՆԻՔԸ)



Սոր՝
Դեզիկ Բաղդա-
գյուլյանի հետ



Ս. Խաչատրյանը
տրվելով՝ Լորեսոա
Բարսեղյանի հետ



21 դեկտեմբերի 2014թ., Երևան,
Ս. Խաչատրյանի ավագ որդու՝
Տիգրանի և Մարիի հարսանեկան
հանդիսությունը



Ս. Խաչատր-
յանի կրտսեր
որդին՝ Տրդատ
Խաչատրյանը



Ս. Խաչատրյանի
դուստրը՝ Սիրան
Խաչատրյանն ամուսնու՝
Ռուբեն Գալստյանի և
զավակների հետ



Ս. Խաչատրյանի
դուստրը՝ Սվետլանա
Խաչատրյանն ամուսնու՝
Էրիկ Չամբարձումյանի և
զավակների հետ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ձեր ապրած փարիների կեսից ավելին միահյուսված է մարզի կենսագրությանը



ԱՐՇԱԿԻ ՐՈՎԻՆՆԻՍՅԱՆ Մեղրի համայնքի ղեկավար

Յարգարժան պարոն մարզպետ Ծննդյան տարեթիվը վավերացնող փաստաթուղթը վկայում է, որ Դուք բոլորում եք Ձեր կյանքի 60-րդ տարեդարձը: Անկեղծ ասած, մի տեսակ դժվարանում եմ հավատալ, որ արդեն հասել եք կյանքի այդ բարձունքին: Թերահավատ եմ, որովհետեւ ինձ միշտ զարմացրել են Ձեր երիտասարդական եռանդը, սահման չճանաչող հիշողությունը, անսպառ աշխատասիրությունը: Դիացել եմ արագ կողմնորոշվելու, կազմակերպելու Ձեր մեծ ունակությամբ, մեր մարզի պատմական անցուդարձի փայլուն իմացությամբ: Աշխատանքի բերումով հաճախ եմ մասնակից ու ակնատես եղել, թե ինչպես, անտեսելով առողջական խնդիրները, մեկ օրում Արաքսի հովտի համայնքներից հասնում եք Սիսիանի տարածաշրջան՝ ճանապարհին ծանոթանալով եւս մի քանի համայնքի աշխատանքների, տալ հստակ հանձնարարականներ: Ինձ

ապշեցրել են համայնքների Ձեր հիանալի ճանաչողությունը, համայնքների ուժեղ եւ թույլ կողմերի ճիշտ վերլուծությունը, մարդկանց անձնապես ճանաչելու, նրանց հոգսերի ու մտահոգությունների Ձեր իրազեկվածությունը: Դարձապես եմ հայրենասերի Ձեր կերպարով, հիվանդին, անօգնականին, նեղության մեջ հայտնվածին սատարելու Ձեր պատրաստակամությամբ, ինչպես եղավ անցյալ տարի ամռանը մեր քաղաքում՝ մի բազմաբնակարան շենքի հրդեհի ժամանակ: Իմ պատկերացմամբ՝ Ձեր ապրած 60 տարիների կեսից ավելին անխաղաղորեն միահյուսված է մարզի կենսագրության հետ: Սյունիքն ասես Ձեզ համար այն ամրոցն է, ուր վախկոտն ու չարագործն անելիք չունեն: Մի տեսակ հոգիս փառավորվում է, երբ լսում եմ Ձեր բնութագրումները հայրենասեր ու աշխատասեր սյունեցու մասին, հպարտանում նրա ներուժի նկատմամբ Ձեր անսասան հավատով, սյունեցի մեծերի նկատմամբ տածած խորին հարգանքով:

Դարգելի հրեյար՝ Սուրեն Սերգեյի, շնորհավորում եմ Ձեր ծննդյան տարեդարձի առթիվ: Մաղթում եմ, որ այսուհետ եւս ունենաք Ձեր կամքի նման ամուր առողջություն, երկար տարիների կյանք՝ ի շահ ոչ միայն Ձեր ընտանիքի, ընկերների ու մտերիմների, այլեւ մարզի, որի զարգացման ու շենացման համար ներդրել եք առավելագույնը եւ շատ ծրագրեր ու անելիքներ ունեք դեռ:

Նրա համար Սյունիքն աշխարհի կենտրոնն է



ԱՐԱՍԻ ՀԱՎՈՐԱՆՅԱՆ Սիսիան համայնքի ղեկավար

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հետ ժամոթ ենք երկու տասնամյակից ավելի, իսկ 2008 թվականից հարաբերվել ենք որպես Սյունիքի մարզպետ եւ Սիսիանի քաղաքապետ: Դանտեղ աշխատանքային տարիների ընթացքին հետհայաց անդրադարձ անելով կարող եմ ասել, որ պարոն Խաչատրյանը բացառիկ բարձրաստիճան պետական պաշտոնյաների թվում է, ով մարզի յուրաքանչյուր բնակչի կարիքի պահին հասանելի է, ցանկացած ոք հնարավորություն ունի անձամբ դիմելու նրան:

Սիսիանցիների հետ ջերմ հարաբերությունները ձեւավորվել են նախքան մարզպետի պաշտոնում նշանակվելը: Պատահական չէ նրա մշտական մասնակցությունը սիսիանյան իրադարձություններին: Ամեն տարի ապրիլի 14-ին նա Սիսիանում է՝ ծննդյան տարեդարձի առիթով հարգանքի տուրք մատուցելու մեծ քնարերգու Դանո Սահյանի հիշատակին: Բազմաթիվ անգամներ մարզպետն անձամբ մասնակցել է մեր համայնքում կատարվող սզո արարողություններին, ուրախության



ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ զՆԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ

հանդիսություններին, որոնք առաջին հայացքից ամենեւին պայմանավորված չեն պաշտոնեական դիրքից ենթադրվող պարտականություններով:

Բոլորը, ովքեր ճանաչում են Սուրեն Սերգեյիչին, կարող են վկայել, որ նա սիրահարված է իր Սյունիքին, նրա պատմությանը, նրա ամեն մի քարին ու թփին: Նրա համար Սյունիքն իսկապես աշխարհի կենտրոնն է, ինչպես մի առիթով կատակել էր:

Ինձ համար՝ որպես Սիսիան համայնքի ղեկավարի, որպես սյունեցու, շատ կարեւոր է, որ մարզը ղեկավարում է անձ, որի ընկալմամբ Սյունիքը հայոց աշխարհի հիմնաքար սյունն է, որ Սյունիքը պիտի մշտապես պահպանի իր առաջնակարգ դիրքը հայոց տանը, ինչպես եղել է մեր ժողովրդի պատմության ամբողջ ընթացքում: Պարոն Խաչատրյանի այդ ընկալումը շատ կարեւոր է, որովհետեւ մարզի եւ, մասնավորապես, Սիսիան համայնքի համար յուրաքանչյուր խնդիր, որ պահանջում է կառավարության աջակցությունը, միջամտությունը, հաստատապես դրական լուծում է ստանում մարզպետի ջանքերի շնորհիվ:

Որպես անհատականություն ուժեղ է, որպես մարզպետ կայացած ու սկզբունքային: Մաքսիմալիստ է, հետեւաբար ջանք չի խնայում իրեն եւ իր ժողովրդին տեսնելու միմիայն առաջին շարքերում: Պատահական չէ, որ նրա կառավարման տարիներին Սյունիքը, նաեւ Սիսիանը լուրջ քայլերով առաջընթաց են ապրել:

Անձամբ իմ ու Սիսիան համայնքի անունից շնորհավորում են Սուրեն Սերգեյիչին՝ ծննդյան 60-րդ հոբելյանական տարեդարձի կապակցությամբ, մաղթում նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք՝ համոզված, որ հետագա բոլոր տարիներին Խաչատրյանը կարունակելու է նույնքան անձնուրույն լուծումով ծառայել մեր երկրին, Սյունիքին:

Սյունիքի հանդեպ սերը նրա դավանանքն է



ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱԼ

Ազարակ համայնքի ղեկավար

Երկիրը հայրենիք է դառնում Գլխավոր մարդկանցով, տիրոջ ու մշակի առաքելությամբ ասպարեզ իջած անհատականություններով: Սուրեն Խաչատրյանն այդ անհատականություններից է: Չափազանցություն թույլ տված չեն լինի, եթե ասեմ՝ մեր փոքր հայրենիքի՝ Սյունիքի հանդեպ սերը նրա դավանանքն է եղել ու մնում:

Սուրեն Խաչատրյանը նա է, ում ժամանակն էր կանչել, ում ժամանակն էր սպասում: Նրան էր վիճակված մեր նորագույն պատմության վերջին տասներկու տարին գլխավորել Հայաստանի Հանրապետության ամենաազնավարական մարզը՝ Սյունիքը: Նրան էր վիճակված ի մի բերել, միավորել բոլոր սյունեցիների ջանքերը եւ ուղղել դրանք հայրենամայաստ հուն:

Իր մեծ, լիարյուն, լիաբուխ ներկայությամբ ոգեւորում է մեզ եւ գործի մղում: Իսկական տանտիրոջ պես է՝ մի կողմից ուրախանում է հաջողություններով, մյուս կողմից՝ մտահոգվում առկա խնդիրներով եւ հավատավոր աշխատանքով լծվում դրանց լուծմանը:

Վաղուց ինքն իրենը չէ, ինքն իրեն

չի պատկանում: Մեր հաջողությունների, կատարածի համար մեզանից առաջ եւ մեզանից շուտ ինքն է ուրախանում: Միշտ էլ զգացել է ժամանակի մարտահրավերները եւ գալիք օրերի շունչն ու տանուտիրաբար իր ներդրումն ունեցել երկրի հարավային սահմանների պաշտպանունակության ամրապնդման գործում: Հայ-ադրբեջանական սահմանի նախիջեւանյան հատվածի հանդեպ նրա հոգածությունն ասվածի վկայությունն է:

Իրավիճակն ընկալելու, ըմբռնելու եւ նպաստելու անսահման կամեցողություն եւ կարողություն է ի վերուստ տրված նրան: Չեմ հիշում մի ողջամիտ առաջարկություն կամ նախագիծ, որ արժանացած չլինի նրա աջակցությանը: Միայն Սեդրու տարածաշրջանում մի քանի խոշոր ծրագրեր իրագործվեցին, որոնց արդյունքում որոշակիորեն փոխվեց շրջանի դեմքը:

Սյունիքում առայսօր նա փնտրում է բոլորի միասնությունը եւ դրա համար ոչինչ չի խնայում միասնության, համախմբվածության մեջ տեսնելով մարզի հզորացման գլխավոր երաշխիքներից մեկը:

Տպավորիչ են նրա աշխատասիրությունը, ընկալունակությունը, հարադրող-վերլուծող միտքը, վարքի քաջությունը, եզակի հիշողությունը, անընդհատ նորոգվող, անընդհատ լցվող եւ հորդող էությունը: Մխաված չեն լինի, եթե ասեմ՝ Սյունիքում նա ստեղծողների մեջ առաջիններից է, եթե ոչ առաջինը:

Եվ այդ ամենը՝ ոչ թե պարտականության, պաշտոնի բերումով, այլ՝ էությամբ: Հայրենիքի իսկական զավակի, իր արմատներին հավատարիմ մարդու, տնից անբացակա որդու պահվածք է դա:

Շատերը տարիներ շարունակ փորձեցին ստվերել, աղավաղել, մոռացության տալ նրա անվիճելի արժանիքները, բայց արդյունքի չհասան: Ոչ մի քարոզ ի գորու չեղավ փոքր-ինչ անգամ խաթարել բազում սյունեցիների անկեղծ սերն ու հարգանքը, վստահությունը Սուրեն Խաչատրյանի հանդեպ:

Շնորհավորում են հոբելյարին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, մաղթում նրան քաջառողջություն եւ ստեղծագործ աշխատանքի շարունակում ի նպաստ Սյունյաց աշխարհի եւ Հայաստանի Հանրապետության:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Սյունեցին, հանձին Սուրիկ Խաչատրյանի, Տեր ունի



ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ

Կապան համայնքի ղեկավար

Լրանում է Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ծննդյան 60-ամյակը, եւ հորեյսանն առիթ է ոչ միայն շնորհավորական խոսքերի, այլեւ նրա գործունեության ամփոփման եւ աշխատանքի մասին գնահատականներ ու կարծիքներ հնչեցնելու համար. իսկ գործունեությունն այդ տեսանկյունի է մարզի ամեն ծագերից, բայց առաջին հերթին՝ մարզկենտրոն Կապանից: Տարեդարձի կապակցությամբ, նախեւառաջ, իհարկե, սրտանց շնորհավորում են Ա.Խաչատրյանին, մաղթում նույնքան բեղմնավոր աշխատանք ի շահ Սյունյաց աշխարհի, որքան եղել են նրա պաշտոնավարման անցած տարիները: Կարելի է բազում դրվագներ թվարկել մարզպետի աշխատանքային կենսագրությունից, բայց նշեն ինձ համար ամենակարեւորը. դա Կապան-Մեղրի նոր՝ այլընտրանքային ճանապարհի կառուցման սկզբնական նախագծի փոփոխումն էր, որն իրականություն դարձավ Սուրիկ Խաչատրյանի ջանքերի շնորհիվ, եւ բացառվեց բակունցյան կուսական Մթնածորի տարածքով նոր ճանապարհի կառուցումը:

Ուզում են նշել նաեւ հորեյսարի հիմնած՝ ՏԻՄ-մարզային իշխանություն, մարզային իշխանություն-կառավարություն կառուցողական հարաբերությունները, որոնց շնորհիվ համայնքների ծայրը լսելի է դառնում բարձր ատյաններում, եւ հնարավորության սահմաններում գտնվում են առաջնահերթ շատ խնդիրների լուծման բանալիները: Իբրեւ սահմանամերձ քաղաք՝ Կապանը չի կարող չգնահատել նաեւ Ա.Խաչատրյանի հրամանատարի դերը հայրենիքի սահմանների պաշտպանության գործում, որը դրսեւորվեց եւ Արցախյան գոյամարտի տարիներին, եւ այս տարվա ապրիլյան գործողությունների ընթացքում: Առանձնացնեն նաեւ նրա՝ թե՛ մարզի խնդիրների լուծման գործում տեսանկյունի հոգածությունը, թե՛ հատուկ ուշադրությունն ու սրտացավությունը մարզի բոլոր քաղաքացիների խնդիրների հանդեպ: Գնահատում են Կապանում առկա գործազրկության բարձր ցուցանիշի վերաբերյալ ունեցած նրա մտահոգությունն ու դրա նվազեցմանն ուղղված ջանքերը եւս: Չի կարելի չնկատել մարզպետ Խաչատրյանի հոգատար վերաբերմունքը Սյունիքի բոլոր համայնքների հանդեպ՝ սկսած ամենախեղձավոր եւ փոքր թվացողից մինչեւ մարզկենտրոն Կապան, եւ նրա ուրախությունը, երբ համայնքում քարի վրա դրված մի նոր քար է տեսնում. համոզված են՝ նա ցանկանում է շենացած տեսնել իր ղեկավարած մարզի ամեն բնակավայր: Եվ նրա ուշադրության կենտրոնում մարզային կյանքի բոլոր ոլորտներն են՝ քաղաքաշինությունից մինչեւ սոցիալ-տնտեսական ու մշակութային-հոգեւոր կյանք... Իսկ թե ինչպես է նա հպարտանում յուրաքանչյուր սյունեցու ձեռքբերումով, մանավանդ երբ մեր մարզի սահմաններից դուրս է բարձր պահվում Սյունիքի պատիվը, գիտենք ամենքս: Սյունեցին, հանձին Սուրիկ Խաչատրյանի, հիրավի Տեր ունի, եւ եւս մեկ անգամ շնորհավորելով նրան՝ մաղթում են քաջառողջություն, նոր եռանդ եւ անսպառ ավյուն՝ Սյունիքի մարզի բարօրության համար ծավալվող գործունեության մեջ:

Հայրենի եզերքի հանդեպ նրա նվիրումը վարակիչ է



ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քաջարանի համայնքի ղեկավար

Սուրեն Խաչատրյան անհատականության հետ շփվելը, աշխատելը, համագործակցելը եւ շատ դժվար է, եւ չափազանց դյուրին: Դժվար, քանզի մշտապես անհրաժեշտ է պատրաստ լինել հաշվետու լինելուն, դա կվերաբերի աշխատանքին, պարտականությունների կատարմանը, ընկերություն անելուն, թե... Դյուրին, քանզի մշտապես ունեն կայուն հենարան, սրտացավ մարդ, ով պատրաստ է օրվա յուրաքանչյուր ժամին, եղանակին, անկախ գբաղվածության աստիճանից, ընդառաջել լավ նախաձեռնությանը, աջակցել ազգանպաստ ձեռնարկումներին, սատարել եւ ընթացք տալ:

Նրա մեջ խստապահանջ, անաչառ բնավորությանը զուգորդվում են բարությունը, ազնվությունը, թուլյին, տկարին, կարիքավորին, դժվար իրավիճակներում հայտնվածին աջակցելու, օժանդակելու պատրաստակամությունը: Հայրենի եզերքի նկատմամբ մարզպետի նվիրումը քիչ ասել է թե վարակիչ է: Անընդհատ խոսքի մեջ Սյունյաց մեծերի

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԴՐՎԱԳ

26 հունիսի 2009թ.

ՀՀ կառավարության արտագնա նիստի Այունիքում

քաջագործությունների, խոհեմության, հայրենասիրության մասին հիշատակումներն ինքնին վկայում են նրա շրջահայացության մասին՝ ավելի հզոր ու համերաշխ դարձնել Այունիքը:

Շատ բան են տեսել եւ առավել եւս շատ բան սովորել նրանից: Կարելու է մի հատկանիշ, որ ինձ համար հատկապես զրավիչ է, պարոն Խաչատրյանի հիշողությունն է, որ երբեք չի վերաճում հիշաչարության ու վրեժխնդրության: Եվ հանդգնած եմ, որ հստակ հիշողություն ունեն այն մարդիկ, ովքեր երբեք չեն ապրում ներկայով, այլ անցյալն ու ապագան զնահատում են իրենց կյանքում: Առօրյա աշխատանքում ակներեւ է, որ նրա համար չկան մանրուքներ, ամեն ինչ կարելու է, եւ ոչինչ չի վրիպում սեւեռում ուշադրությունից:

Իրավիճակներ եւ ժամանակներ կան, երբ խիստ կարելու է նախագահի դերը: Սուրեն Խաչատրյանի համար այդպիսին եղավ Արցախյան ազգային-ազատագրական շարժումը, այնուհետեւ հարեւան հանրապետության կողմից մեզ պարտադրված պատերազմը: Իսկ նա հայրենիքը վտանգի մեջ լինելու պահին ոչ միայն հեռվից ֆինանսական օժանդակություն ցուցաբերեց, այլեւ նախընտրեց լինել իրադարձությունների հորձանուտում անմիջական մասնակցություն ունենալով մերօրյա ազատամարտին՝ որպես գումարտակի հրամանատար: Եվ հիմա էլ իր մարտական ընկերները, նաեւ զոհված ազատամարտիկների ընտանիքի անդամներ, վիրավոր ազատամարտիկներ (ոմանց հետ պատերազմում նույնիսկ առիթ չի եղել շփվել), չի տարանջատում իր հարազատներից, միշտ մտահոգված է վերջիններիս հոգսերով, խորամուխ է լինում դրանց մեջ, ջանում լուծում տալ:

Ծննդյան օրվա, մանավանդ հոբելյանների առիթով միշտ ցանկանում ես մարդուն սրտանց մաղթանքներ հղել: Սուրեն Խաչատրյանին քաջառողջություն են մաղթում, նրա նախանշած ծրագրերին՝ անձնական կյանքին ու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առնչվող, հաջողություններ եւ ամենակարելու՝ միշտ կարողանալով նրան շնորհավորանքի խոսքեր ուղղելու հնարավորություն ունենալ: Նաեւ՝ բեղուն գործունեություն, որ ունեցել է մինչեւ հիմա: ■

Նիստը վարող ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ այն Այունիքի կյանքում պատմական իրադարձություն է, քանի որ հարցերի զգալի մասը միտված են մարզի հիմնախնդիրների լուծմանը, իսկ կառավարության անդամներն էլ ծանոթանում են մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակին, բնակչությանը հուզող խնդիրներին: Նիստի օրակարգում 56 հարց էր ընդգրկված, որից Այունիքին առնչվում էր 10-ը:

Նիստը սկսվեց մարզի 2009թ. սոցիալ-տնտեսական վիճակի, առկա խնդիրների, ծրագրերի մասին Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հաշվետվությամբ: Մարզպետն ըստ բնագավառների ներկայացրեց նաեւ 2009թ. առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրները:

Գործադիրը հաստատեց Այունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որոշեց վարկեր տրամադրել հանքարդյունաբերական ոլորտի երեք ընկերության (ընդհանուր առմամբ՝ 44 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում՝ սա հատկացվեց ՀՀ ստացած ռուսական վարկից:

Մեկ այլ որոշմամբ կառավարությունը որոշեց «Տաթև» վանական համալիրը եւ հարակից Խոտ, Շինուխայր, Հալիձոր, Տաթև, Սվարանց, Տանձատափ, Աղվանի եւ Բարձրավան համայնքները հայտարարել զբոսաշրջային կենտրոն՝ անվանելով «Տաթև» զբոսաշրջային կենտրոն, հաստատել «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները եւ գերակա խնդիրները: ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց նաեւ Հալիձորի գյուղական համայնքի քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու եւ

հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին: Որոշման ընդունումը պայմանավորված է նրանով, որ «Տաթևի վանական համալիրի վերակառուցման ծրագրի» շրջանակում իրականացվելու են ճոպանուղու եւ հյուրանոցային համալիրի կառուցման աշխատանքներ: Գործադիրն անդրադարձել է նաեւ Սիսիանի «Ջորաց քար» հուշարձանախմբին եւ որոշել ստեղծել «Ջորաց քար» բնակատեղի» պետական պատմա-շակութային արգելոց, որի տարածք է սահմանել հուշարձանախմբի եւ դրան հարակից բնական լանդշաֆտը: Հավանություն տրվեց Այունիքի մարզի մշակութային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ցանկին:

Կառավարությունն ի գիտություն է ընդունել Այունիքի մարզից իշխանության կենտրոնական մարմիններ ուղղված քաղաքացիների դիմումների, բողոքների եւ առաջարկությունների վերլուծության արդյունքների մասին ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի հաղորդումը: Նշվել է, որ մյուս մարզերի համեմատ Այունիքից զգալիորեն քիչ դիմում-բողոքներ են ստացվում: Գործադիրը հաստատել է Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ, Էջմիածին, Աշտարակ, Գորիս, Տաթև, Հալիձոր համայնքներում (բնակավայրերում) առանձնացվող քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքները:

ՀՀ կառավարությունն ընդունել է նաեւ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի համար նոր շենք եւ շինություններ կառուցելու անհրաժեշտության մասին ՀՀ արդարադատության նախարարի առաջարկը եւ համապատասխան հանձնարարականներ տվել ՀՀ քաղաքաշինության եւ ՀՀ ֆինանսների նախարարներին:

«Այունյաց երկիր», N16 (188), 2009թ.

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ

Նորոյա բարեկամություն վաղնջական հարեւանի հետ

Հ եւ Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի նախարարությունների, Հայաստանի գրողների միության եւ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը Մեղրիում անցկացվեց Հայ-իրանական բարեկամության օրեր՝ նվիրված Հայաստանի եւ Իրանի Իսլամական Հանրապետությունների միջեւ վերահաստատված բարեկամության 20-ամյակին: Երկու տասնամյակ առաջ՝ Հայաստանի անկախացումից հետո, Իրանի հետ աստիճանաբար սկսեցին հաստատվել սերտ, բարիդրացիական հարաբերություններ գրեթե բոլոր բնագավառներում: Արդյունավետ համագործակցություն ծավալվեց էներգետիկայի, բնապահպանության, առողջապահության, գյուղատնտեսության, կրթության եւ բազում այլ ոլորտներում: 2004թ. ստորագրվեց Իրան-Հայաստան գազատարի կառուցման վերաբերյալ համաձայնագիրը (գազատարը կառուցվեց 2004-07թթ.): 1995թ. շահագործման հանձնվեց մայր Արաքսի վրա կառուցված կամուրջը (մինչ այդ գործում էր ժամանակավոր պոնտոնային կամուրջ), որն էլ խթան հանդիսացավ ավելի սերտացնելու երկու երկրի միջեւ բարեկամական հարաբերությունները, ինչի հերթական դրսեւորումն էր սույն միջոցառումը Մեղրիում:

Հանդիպում Մեղրու մաքսակետում

Հայ-իրանական բարեկամության



օրերը մեկնարկեցին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Սյունիքի տարածաշրջանի Մեղրու մաքսային կետում: Իրանական պատվիրակությանն աղ ու հացով դիմավորեցին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ՀՀ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությունը ղեկավարում էր ԻԻՀ մշակույթի փոխնախարար Համիդ Շահաբադին: Պաշտոնական գրույցի ժամանակ երկու երկրի ներկայացուցիչները նշեցին, որ այսպիսի հանդիպումները պետք է ավելի հաճախակի լինեն, որոնք կնպաստեն թե՛ հայ-իրանական բարեկամության, թե՛ երկու երկրների մշակութային կյանքի սերտացմա-

նը: Հանդիպման ընթացքում Սյունիքի մարզպետը նշեց. «Մենք շատ երջանիկ սերունդ ենք, որովհետեւ նույնիսկ պատերազմը չկարողացավ խափանել մեր բարեկամ երկրների հետ ունեցած հարաբերությունները: Այսօր մի նոր մշակութային էջ ենք բացում երկու հարեւան երկրի համար, որը պատասխանատու է, միաժամանակ, հաճելի քայլ է»:

«Հայ-իրանական բարեկամության օրեր» ծրագիրը համագործակցության նոր դրսեւորում է, որը կդառնա ավանդական: Եվ ինչպես ԻԻՀ մշակույթի փոխնախարարն է ասում. «Շատ ուրախ ենք, որ այսօր կարողացանք ֆիզիկապես ձեւավորված հարաբերություններին մշակութային կենսակերպ հաղորդել: Մեր ֆիլիհարմոնիկ երգչախումբը ստեղծման առաջին իսկ օրվանից հաճույքով կատարում է հայ հայտնի կոմպոզիտորների երգերը: Մենք պատրաստ ենք արվեստի տարբեր բնագավառներում համատեղ ներդրումներ անել»:

Պաշտոնական հանդիպման ավարտին Սյունիքի մարզպետն առաջարկեց ստեղծել համատեղ աշխատախումբ, որը կամրապնդի մեր համագործակցությունը եւ նոր ծրագրեր կներկայացնի այդ ուղղությամբ: Իսկ բարեկամ երկրների փոխնախարարները կդառնան այդ հանձնախմբի համանախագահներ, որոնք էլ կհավաքեն իրենց աշխատախումբը եւ կսկսեն գործել:

Համատեղ ցուցահանդես եւ համերգ Մեղրու

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ

Նշակույթի պալատում

Սեպտեմբերի 30-ին Մեղրու նշակույթի պալատում տեղի ունեցավ հայկական եւ իրանական գեղանկարչության, ժողարվեստի ցուցահանդես: Ցուցահանդեսում էին երկու երկրի գեղանկարիչների ստեղծագործությունները: Թե՛ հայ, թե՛ պարսիկ արվեստագետները ներկայացել էին յուրովի՝ իրենց ավանդույթներին բնորոշ գործերով: Արվեստագետներին ողջունեց Սյունիքի մարզպետը եւ նշեց, որ նշակույթի միջոցով մենք մեր բարեկամների հետ հաստատելու ենք էլ ավելի ջերմ հարաբերություններ: Իսկ ԻԻՀ-ի նշակույթի փոխնախարար Յամիլ Շահաբադին հավելեց, որ այս ցուցահանդեսը նպաստում է, որ երկու երկրի ներկայացուցիչներն իրար հետ խոսեն նշակույթի եւ արվեստի լեզվով:

Ցուցահանդեսում ներկայացվել էին նաեւ հայ եւ պարսիկ գրողների գրքեր, որոնք նվիրվեցին Մեղրու համայնքային գրադարանին եւ հանրակրթական դպրոցներին: Իր ձեռով ու բովանդակությամբ միջոցառումը բացառիկ էր, քանի որ շատերը կարողացան անմիջականորեն հաղորդակից լինել Իրանի նշակույթին ու արվեստին: Մեղրու բնակիչ Արուսյակ Ազատյանը ցուցահանդեսին ներկայացել էր սեփական գործերով, որոնց մեջ հիմնականում Մեղրու խայտաբղետ գույներն էին: Ցուցահանդեսից անմիջապես հետո Մեղրու նշակույթի պալատի դահլիճում կայացավ Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական եւ Իրանի ժողգործիչների անսամբլի համատեղ համերգը, որն արդեն իսկ վկայում է համատեղ նշակութային ծրագրերը կյանքի կոչելու մասին:

Հայ-իրանական բարեկամությունը խորհրդանշող հուշաքարի բացում

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը եւ ԻԻՀ նշակույթի փոխնախարար Յամիլ Շահաբադին հայ-իրանական սահմանի վրա հոկտեմբերի 1-ին բացեցին հայ-իրանական բարեկամությունը խորհրդանշող հուշաքարը, որից հետո երկու երկրի պատվիրակությունները մտերմիկ զրույց ունեցան «Եդեմ» ռես-



տորանային համալիրում: Մեղրի քաղաքի մասին հիացմունքով արտահայտվեց ԻԻՀ փոխնախարարը՝ ասելով. «Երեկոյան Մեղրին շատ գեղեցիկ է: Փողոցներով զբոսնելիս ես զգացի, որ այստեղ հայ մարդը ապրում է լիարյուն կյանքով: Նկատեցի նաեւ, որ մենք ունենք ընդհանուր ավանդույթներ, սովորույթներ եւ մեր արմատները պատմության մեջ ավելի խորն են»: Այնուհետեւ հյուրերն այցելեցին քաղաքի նշակույթի պալատի ճեմասրահ ու մասնակից եղան «Հայ-իրանական գրական կամուրջներ» միջոցառմանը, որը սկսվեց իրանցի երաժիշտների համերգով: Համերգային ծրագիրն ունկնդրելուց հետո ելույթ ունեցան Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, բանաստեղծ Գագիկ Դավթյանը, ԻԻՀ նշակույթի նախարարության արվեստի վարչության պետ Իսա Քեշավարձը: Միջոցառումն ավարտելուց հետո երկու երկրի պատվիրակության ներկայացուցիչները Մեղ-

րու համայնքային մանկապարտեզին ու դպրոցներին նվիրաբերեցին 400-500 կտոր գեղարվեստական գրականություն: Այնուհետեւ պատվիրակության անդամները վերահաստատեցին փոխշահավետության վրա հիմնված երկկողմ նշակութային հարաբերությունները զարգացնելու պատրաստակամությունը՝ նշելով, որ բարձր մակարդակով փոխադարձ այցելությունների հաճախակիությունը կնպաստի համագործակցության առավել ամրապնդմանը: Համիլ Շահաբադին 2012թ. հայկական պատվիրակությանը հրավիրեց Իրանի Իսլամական Հանրապետություն՝ երկու հարեւան ու բարեկամ երկրի նշակութային փոխհարաբերությունները խորացնելու ու նոր շունչ հաղորդելու համար:

ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
«Այունյաց երկիր», N18 (237)
25 հոկտեմբերի 2011թ.

ՐԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հայոց ցեղասպանության 100-րդ փարեւիցը

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարյուր տարի անց էլ հայոց ազգային վերքը չի սպիացել, քանզի դա անամոռելի է:

Հարյուր տարի անց էլ Հայոց ցեղասպանության հետեւանքները չեն վերացել, եւ մեր պահանջատիրությունը շարունակում է չլուծված մնալ:

Այսօր էլ չենք կարող անհույզ եւ անվրդով չհիշել հայ ժողովրդի բազմադարյան պատմության այն էջը, որ անվանում ենք Հայոց ցեղասպանություն, որի հետեւանքով ոչ միայն մեկուկէս միլիոն հայ թուրքական յաթաղանի զոհ դարձավ, այլեւ հայրենագուրկ եղանք:

Հայոց ցեղասպանության տարիներին եւ հատկապէս 1915թ. ու դրան հաջորդող ժամանակաշրջանում Սյունիքը եղավ այն հուսալի եւ ապահով օջախներից մեկը, որտեղ հանգրվանեցին եղեռնից մազապուրօ եղած տասնյակ հազարավոր գաղթականներ ու որբեր: Նրանցից շատերն ընդմիշտ մնացին Սյունիքում, մերվեցին տեղի բարքերին, ճյուղավորվեցին եւ ահա, որբերորդ սերունդն է, նվիրումով մասնակցում են մեր լեռնաշխարհի ընթացքին, Սյունյաց աշխարհը համարում իրենց բնօրրանը:

Չենք կարող չհիշել կամավորական եւ ցարական բանակին զինվորագրված սյունեցիներին, ովքեր 1914-1918թթ. հերոսաբար կռվում էին հանուն Երկիր Նաիրիի ազատության:

Անհնար է չհիշել ականավոր սյունեցիներին, ովքեր արեւնտահայության ազատամարտի կազմակերպման եւ գաղթականության կյանքի ու անվտանգության ապահովման գործում, նաեւ Հայ դատի համար պայքարում բացառիկ դեր խաղացին՝ Պողոս փաշա Նուբարյան, Արամ Մանուկյան, Փա-

րամազ (Մատթեոս Սարգսյան), Ներսես Մելիք-Թանգյան, Ակնունի (Խաչատուր Մալունյան) եւ ուրիշներ:

Մեծ եղեռն վերապրած հայի ճակատագիրը հետագայում էլ եղավ նշանավոր սյունեցիների մտահոգության առարկան: Բավական է հիշել թեկուզ եւ Ակսել Բակունցի անզուգական «Ծիրանի փողը» պատմվածքը, Սերո Խանգաղյանի «Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպն ու «Մեռելները հիշում են» վիպակը, մեծն Նիկողայոս Ադունցի՝ Հայոց ցեղասպանությանը եւ առհասարակ Հայ դատին նվիրված բացառիկ ողջամիտ ուսումնասիրություններն ու հրապարակախոսական հոդվածները՝ առայսօր իրենց արդիականությունը պահպանող:

Տարիներ շարունակ Հայոց ցեղասպանության տարեւիցքները նշելիս կամ 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի ողբերգական իրադարձությունները հիշելիս Սյունիքում հպարտությամբ հիշել ենք այդ ժամանակաշրջանի ինքնապաշտպանական կռիվների հերոսներին: Նրանց սխրանքը եղել է մնում է ոգեշնչման աղբյուր հետագա սերունդների համար:

Պատահական չէ, որ Արցախյան պատերազմի օրերին ճակատամարտ մեկնող ազատամարտիկները երդվում էին հենց նրանց հուշարձանների մոտ, իրենց ջոկատները կոչում նրանց անուններով:

Պատահական չէ, որ Սյունիքի մի շարք վայրերում ժամանակին կանգնեցվել են այդ կռիվների առասպելական կազմակերպիչների հուշարձանները՝

Մեղրիում՝ Փարամազինը, Կապանում՝ Արամ Մանուկյանինը, Գարեգին Նժդեհինը, Գորիսում՝ Անդրանիկինը, Գարեգին Նժդեհինը, Խաչատուր Մալինցովինը, Յապոնինը (Հովհաննես Պարոնյան), Անգեղակոթում՝ Ջորավար Անդրանիկինը:

Դրվատելի է, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակի օրերին, առաջին անգամ, ազգային այդ հիմնախնդրի վերաբերյալ ընդունվեց համայն հայության մոտեցումներն ընդհանրացնող, մեր անելիքները հստակեցնող փաստաթուղթ: Նկատի ունենք 2015թ. հունվարի 29-ին ընդունված Հայոց ցեղասպանության 100-րդ տարեւիցի համահայկական հռչակագիրը:

Տեսանելի է նաեւ հայոց քաղաքական մտքի կողմից մեր ռազմավարության եւ մարտավարության որդեգրումը Հայոց ցեղասպանության ճանաչման, հետեւանքների հաղթահարման ու պահանջատիրության հարցերում մեր անելիքների հստակեցումը, այդ ամենն իրականության եւ ողջախոհության ռելսերի վրա դնելը:

Այսօր, կարծեք, ազգովի գիտակցում ենք, որ դեռեւս շատ



ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՎԵՐՏ

Սուրեն Խաչատրյանի հեղինակած գրքերը

անելիքներ ունենք Հայոց ցեղասպանության հետեւանքները հաղթահարելու, պատմական այդ իրողությունն աշխարհում մինչեւ վերջ ճանաչելի դարձնելու, ազգային մեր պահանջատիրությանը լուծում տալու, Հայոց ցեղասպանության տարիների իքնապաշտպանական կռիվները վերջնական ու զիտական զնահատականի արժանացնելու հարցերում:

Թուրքական ժխտողականության պայմաններում այդ աշխատանքները հետեւողականություն են նպատակաւացություն են պահանջում, զիտական ու հասարակական բոլոր օղակների ջանքերի մեկտեղում:

Ինչպէս նախկինում, այնպէս էլ այսօր այն համոզմունքն ունենք, որ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու ողջամիտ ուղին մեր նոր պետության՝ Հայաստանի Հանրապետության հզորացումն է: Հայոց հզոր եւ արժանապատիվ պետականությունն է հուսալի եւ անզերազանցելի գրավականն այն բանի, որ երբեք ու ընդմիշտ հայ ժողովուրդն այլեւս ողբերգությունների մեջ չհայտնվի, որ Հայ դատի լուծումը հասնի ցանկալի հանգրվան: Միայն ու միայն հզոր եւ արժանապատիվ հայոց պետության հետ աշխարհը կարող է հաշվի նստել եւ ցեղասպանության ճանաչման, եւ ցեղասպանության հետեւանքների հաղթահարման ու պահանջատիրության հարցերում:

Ահա այսպիսի հավատամքով էլ նշում ենք Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը, գլուխ խոնարհում ցեղասպանության զոհ դարձած մեր հայրենակիցների ու բոլոր այն հերոսների անհայտ եւ հայտնի շիրիմների առջեւ, ովքեր մեր պատմության դժվարագույն օրերին հերոսաբար գլխավորեցին հայ ժողովրդի ինքնապաշտպանական կռիվներն ընդդէմ թուրք եղեռնագործների:

«Այունյաց երկիր», N10 (353),
2015թ.

- *Ինքնավար Սյունիք (ստեղծման, գործունեության եւ անկման պատմությունը), Գորիս 2008, ԳՊՀ հրատարակչություն, ծավալը՝ 6,5 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրվել է «Գրիգոր Տաթևացի» տպարանում:*

- *Հայկական պետականության վերականգնումը Ձանգեզուրում, 20-րդ դար, Գորիս 2011, ԳՊՀ հրատարակչություն, տպաքանակը՝ 200 օրինակ, տպագրվել է «Գրիգոր Տաթևացի» տպարանում:*

- *Պետականության հիմնահարցերը Սյունիքում, Գորիս 2013, ԳՊՀ հրատարակչություն, ծավալը՝ 39,5 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրվել է «Գրիգոր Տաթևացի» տպարանում:*



ՆԱՄԱԿԱՆԻ



Բաց Նամակ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին

Սեծարգո՛ մարզպետ.
Չայ գրականությունն ու մշակույթը մեր ժողովրդին ազգային գիտակցության շուրջ համախմբող ամենամեծ արժեքներն են: Համաշխարհայնացման այս արագ գործընթացների մեջ այդ արժեքների դերը էլ ավելի է բարձրանալու: Հաշվի առնելով այդ հանգամանքը եւ Ձեր հոգածությունը հայ մեծ գրող եւ Ձեր համաքաղաքացի Ակսել Բակունցի անձի ու գործի նկատմամբ, դիմում եմ Ձեզ հետեւյալ առաջարկություններով:

Հարկավոր է ամեն ինչ անել՝ գտնելու Ակսել Բակունցի (նաեւ Եղիշե Չարենցի եւ 1937-ի զոհ մյուս անվանի գրողների ու մշակույթի գործիչների) գերեզմանը: Անհնար է, որ համապատասխան մարմինները ժամանակին գրանցումներ արած չլինեն այդ կապակցությամբ: Բոլոր հնարավոր միջոցները պետք է

գործադրել՝ գտնելու այդ անմեղ նահատակների, այդ թվում՝ ամենածանր հալածանքների ենթարկված զոհի՝ Ակսել Բակունցի գերեզմանը, զննակահարության տեղը: Հետագա սերունդները մեզ չեն ների այդ անփութության համար:

Ստալինյան վարչակարգը Բակունցին եւ մյուսներին հռչակեց «ժողովրդի թշնամի» եւ դաժանորեն ոչնչացրեց: Մենք պետք է մաքրենք պատմության այդ ամոթը եւ ամեն ինչ անենք ոչ միայն խոսքով, այլեւ գործով նրանց հիշատակը վառ պահելու համար:

Ամեն ինչի մեջ օրինակելի գերմանացիները գտան 1941-1945թթ. համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանում սպանված իրենց զինվորների թաղման տեղերը եւ հուշակոթողներ կանգնեցրին նրանց հիշատակին: Մի՞թե Բակունցը, Չարենցը եւ մյուսները արժանի չեն հիշատակի, արժանի չեն մի պարզ շիրմաքարի:

1976-1984թթ. ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը լույս ընծայեց Ա. Բակունցի «Երկեր»-ի քառահատոր ժողովածուն: Դրանից հետո, եւ հատկապես նրա ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, մամուլում լույս տեսան բազմաթիվ ուշագրավ նյութեր, որոնք լրացնում են նրա կյանքի ու ստեղծագործության էջերը: Բոլոր այդ հրապարակումներն անհրաժեշտ է ի մի բերել առանձին ժողովածուի մեջ՝ որպես քառահատորյակի շարունակություն կամ լրացուցիչ՝ 5-րդ հատոր:

«Խաչատուր Աբովյան» վեպից պահպանվել են այն հատվածները, որոնք ժամանակին տպագրվել են մամուլում: Մինչդեռ հայտնի է, որ Բակունցը վեպն ավարտել է: Հայտնի է նաեւ, որ Մարիետա Շահինյանի ամուսինը՝ Հակոբ Խաչատրյանը, այն թարգմանել է ռուսերեն, որը 1936-ին պետք է լույս տեսներ Մոսկվայում «Гослитиздат» հրատարակչությամբ:

Այդ ձեռագրի հետքերը գտնելու նպատակով ժամանակին քայլեր արվել են, բայց ջանքերն անցել են ապարդյուն: Կարծում եմ՝ պետք է նոր որոնումներ կատարել Մոսկվայի համապատասխան պահոցներում եւ փորձել գտնել վեպի ռուսերեն թարգմանությունը: Հայերեն բնագիրը գտնելու հույսերն ավելի քիչ են, որովհետեւ 1937-ին այն ոչնչացրել են: Բակունցի ձեռագրերի ողբերգական ճակատագրի մասին իր հուշերի

մեջ տեղեկացնում է նրա եղբայրը՝ Վահան Բակունցը: Բակունցի կյանքի եւ ստեղծագործության ուսումնասիրողն այդ կապակցությամբ գրել է. ««Խաչատուր Աբովյան» վեպն ավարտված էր 1936թ. մայիսի 15-ին, երբ մեկնեց Մոսկվա: <...>: Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպը եղել է ավարտված եւ մտել «Гослитиздат» (ГИХЛ)-ի եւ Հայպետհրատի 1936թ. պլանի մեջ» (1):

Նույնը նաեւ մյուս վեպերի մասին.
«...կան նաեւ տեղեկություններ, որ վեպը [«Կարմրաքար»] ավարտված է եղել» (2): «1931թ. «Կարմրաքարը» գրված է եղել, բացի վերջին գլխից, որտեղ պետք է պատկերվեր համատարած կոլեկտիվացումը եւ Կարմրաքար գյուղում կոլտնտեսության ստեղծումը» (3): Ավարտված է եղել նաեւ «Ռոդի որոտման» վիպակը (4):

Հարցաքննությունների ժամանակ եւ բանտից հանրապետության ղեկավարությանը հասցեագրած դիմումներում Բակունցը հաճախակի է հիշատակում իր «Հայկական մանրէ» երգիծական վիպակը եւ պահանջում այն կցել իր մեղադրական գործին: Նաեւ ասում է, որ այդ վիպակին ծանոթ է եղել Աղասի Խանջյանը եւ տպագրության համար հանձնել պետհրատի տնօրեն է. Չոփուրյանին: Որոնումներ պետք է անել նաեւ այս վիպակը գտնելու ուղղությամբ: Քանի որ վիպակի ինքնագիր (նաեւ մեքենագիր) օրինակները գտնվել են ոչ թե Բակունցի անձնական-ընտանեկան պահոցում, այլ հրատարակչությունում, հնարավոր է, որ պահպանված լինեն:

Անհրաժեշտ է հիմնանորոգման ենթարկել Գորիսի տուն-թանգարանը: Պետք է նորոգել տունը, թարմացնել ցուցադրակները, արդիականացնել ցուցավահանակները, հարստացնել ցուցանուշները: Ամեն ինչ համապատասխանեցնել ժամանակակից թանգարանագիտության պահանջներին: Բակունցի տուն-թանգարանը պետք է վերածվի բակունցագիտության կենտրոնի: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ձեռք բերել բակունցյան բոլոր հրատարակությունները (նրա գրած եւ նրա մասին գրված), մամուլի հավաքածուները եւ այլն: Գրական այս ուխտատեղին պետք է ծառայի բակունցագիտության զարգացմանը:

Սեծարգո՛ պարոն Խաչատրյան.
2008 թ. հունիսի 13-ին Գորիսում Ձեր

ղեկավարությամբ նշվեց Ա. Բակունցի ծննդյան 109-ամյակը: Հաջորդ տարին հոբելյանական է, որին պետք է նախապատրաստվել այսօրվանից: Առաջարկված միջոցառումների ծրագրին, որը կարող ենք իրականացնել Ձեր անմիջական աջակցությամբ եւ հովանավորությամբ, կարելի է ավելացնել եւս մեկը՝ կազմակերպել բակունցյան ընթերցումներ եւ այդ նյութերը եւս տպագրել առանձին գրքով:

Ա. Բակունցն արժանի է ամենաբարձր վերաբերմունքի, եւ մենք պարտավոր ենք անել առավելագույնը:

Հարգանքներով՝ Դավիթ Գասպարյան

«Գրական, թերթ», 2008, թիվ 24, 4 հուլիս:

Ծանոթագրություն

1. Ա. Բակունց, Երկեր, հ. 3, էջ 650-651:
2. Նույն տեղը, էջ 624-625:
3. Նույն տեղը, էջ 625:
4. Տես նույն տեղը, էջ 623:



ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՎԵՐՍ



1 օգոստոսի 2011թ., Գորիս, ՀՀ Աժ նախագահ Դավիթ Աբրահամյանը Սուրեն Խաչատրյանին է հանձնում Ազգային ժողովի պատվով մեդալը



13 հոկտեմբերի 2015թ., Կապան, քաղաքի Գ.Նժդեհի անունն կրող հրապարակում տեղի ունեցավ ժամանակակից սարքավորումներով հագեցած շատրվանների բացում (աշխատանքներն իրականացվել են «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ միջոցներով)



10 հունիսի 2015թ., Ս.Խաչատրյանը Մեղրու ռուսական սահմանապահ ջոկատում՝ զորամասի կազմավորման 60-ամյակի կապակցությամբ՝ ջոկատի հրամանատար Անդրեյ Կորչանովի եւ Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանի հետ

ՆԱՄԱԿԱՆԻ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ռադիկ Մարտիրոսյանին



Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան 2015թ. դեկտեմբերի 3-ին լրանում է հայ ակադեմիայի արձակագիր, հրապարակախոս ու ազգային գործիչ Սերո Խանգադյանի ծննդյան 100-ամյակը:

Սերո Խանգադյանի հորեյանն ըստ պատշաճի նշելու համար արդեն իսկ ձեռնարկում ենք քայլեր: Խնդրի բարդությունն այն է, որ վերջին քսան տարում նրա գրական ժառանգության տարածումն ու նորովի արժեւորումը գրեթե դուրս են մնացել ուշադրությունից: Բաց թողնվածն ինչ-որ չափով լրացնելու համար տեւական աշխատանք է պահանջվում:

Չորեյանի նախապատրաստական աշխատանքների գլխավոր ուղղություններից մեկը, կարծում ենք, Սերո Խանգադյանի ստեղծագործական ժառանգության իրատեսական գնահատումն ու արժեւորումն է:

Մենք հնարավորությունների սահմաններում որոշակի աշխատանք ենք կատարում այդ ուղղությամբ: Սակայն մեր ուժերով մնան դժվարին ու պատասխանատու խնդրի շատ թե քիչ ամբողջական լուծումը գրեթե անհնար է: Ուստի եւ խնդրում ենք ձեր աջակցությունը:

Մասնավորապես՝ հայցում ենք ձեր օգնությունը՝ պատրաստելու (պատվիրելու) գիտական հոդվածներ կամ գրականագիտական ուսումնասիրություններ ստորեւ ներկայացվող թեմաների վերաբերյալ:

1. *Սերո Խանգադյանի մանկապատանեկան արձակը:*
2. *Սերո Խանգադյանի հրապարակախոսությունը:*
3. *Գրականությունը եւ Սերո Խանգադյանի պատկերացումները:*
4. *Սերո Խանգադյանը եւ Ղարաբաղյան շարժումը:*
5. *Հայոց մեծ եղեռնի թեման Սերո Խանգադյանի ստեղծագործություններում:*
6. *Սերո Խանգադյանը՝ բանահավաք:*
7. *Հայրենական մեծ պատերազմի թեման՝ Սերո Խանգադյանի ստեղծագործություններում:*
8. *Սերո Խանգադյանի հասարակական-քաղաքական եւ ազգային գործունեությունը:*
9. *Հայ ժողովրդի պատմության արտացոլումը Սերո Խանգադյանի ստեղծագործություններում:*
10. *Ակսել Բակունց-Սերո Խանգադյան. տիպաբանական առնչությունները:*
11. *Սերո Խանգադյանի բանավիճային հոդվածները:*
12. *Սերո Խանգադյանի հուշապատումների «Հայրենապատում» շարքը:*

13. *Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման արտացոլումը Սերո Խանգադյանի ստեղծագործություններում:*
14. *Սերո Խանգադյանի լեզուն եւ ոճը:*
15. *Առասպելականն ու միֆականը Սերո Խանգադյանի ստեղծագործություններում:*

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան

Դուք, անշուշտ, կարող եք նոր թեմաներ առաջարկել կամ փոփոխություններ կատարել առաջադրված թեմաների մեջ, եթե նպատակահարմար գտնեք:

Այդուհանդերձ շատ ցանկալի ենք համարում այդ աշխատանքներն ավարտին հասցնել մինչեւ 2015թ. ապրիլ-մայիս: Դրանից հետո մենք կձեռնարկենք դրանց հիման վրա գրողի ծննդավայր Գորիսում գիտաժողովի անցկացումը:

Պատրաստված նյութերը կտպագրվեն «Այնույնաց երկիր» թերթի՝ Սերո Խանգադյանի հորեյանին նվիրված բացառիկ համարում:

Ակնկալում ենք ձեր աջակցությունը, ինչի համար նախապես մեր երախտագիտությունն ենք հայտնում:

Միաժամանակ պատրաստականություն ենք հայտնում սատարել ձեր բոլոր նախաձեռնություններին՝ ուղղված Սերո Խանգադյանի գրական ժառանգության ուսումնասիրմանը եւ տարածմանը:

Հարգանքով՝ Սուրեն Խաչատրյան
Սյունիքի մարզպետ
3 դեկտեմբերի 2014թ.

ՆԱՄԱԿԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանին

Ծայրագույն պայրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ին



Մեծարգո՝ նախագահ Հայաստանի Հանրապետության Վեհափառ Տեր

Ս.թ. ապրիլի 23-ին, երբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում սրբադասվում էին Հայոց ցեղասպանության նահատակները, մեր հոգեւոր հայրերի աղոթքներում ու աստվածական խոսքերում քանիցս հնչեց նաեւ Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոս, տիեզերահռչակ ու բազմապատիկ լուսավորիչ հայոց, Սուրբ Էջմիածնի վերստին նորոգող, Հայ առաքելական եկեղեցու վերջին սուրբ Մովսես Տաթևացու (Խոտանանցու) անունը:

Հայոց մեծահամբավ այդ վարդապետի շիրիմը, սակայն, միլիոնավոր հայերի համար գտնվում է անհայտության մեջ:

Տասնամյակներ շարունակ, հայտնի պատճառով, անտարբեր վերաբերմունք է ցուցաբերվել նրա հիշատակի հանդեպ:

Կարծում ենք՝ եկել է ժամանակն անդրադառնալու այդ հարցին:

Մովսես Տաթևացին մահկանացուն կնքեց 1632թ. մայիսի 14-ին եւ թաղվեց Երեւանի հնագույն գերեզմանոցներից մեկում՝ Կոզեռնի գերեզմանատանը՝ 10-11-րդ դարերի հայոց մեծ վարդապետ Յովհաննես Կոզեռնի եւ Մելիքսեթ Վժնեցի վարդապետի մեջտեղում: Հետագայում այդտեղ՝ դրանց գերեզմանների վրա, շինվեց մի վայելուչ մատուռ՝ կոչվելով «Կոզեռնի մատուռ», որը 1829թ. հիմնանորոգվեց: Այդ մատուռը ժամանակին համարվել է մեծ սրբավայր, այնտեղ մնջող սրբի հիշատակին հաճախ Սուրբ պատարագ է մատուցվել:

Սակայն, Երեւան քաղաքի ընդարձակման նկատառումներով, 1934թ. որոշում է կայացվել տեղափոխել Կոզեռնի գերեզմանոցը: Աստծո ողորմությամբ, մինչդեռ, մատուռը կանգուն է մնացել, թեւ արտաքինից չի երեւում:

1955 թվականից մատուռը դարձել է բնակելի տուն՝ որոշակի վերափոխում-

ների ենթարկվելով:

Բազմաթիվ մասնագետների կարծիքով՝ բնակության համար հարմարեցված մատուռի այլեւս բետոնապատ հատակի ներքո են Մովսես Տաթևացու, Յովհաննես Կոզեռնի եւ Մելիքսեթ Վժնեցու սրբասուն նշխարները:

Մովսես Տաթևացու շիրմի շուրջ ստեղծված վիճակի հանդուրժումը մեր օրերում անհասկանալի է դառնում:

Եթե բազում մարդկանց բնակարանային պայմանների բարելավման եւ նոր բազմահարկերի կամ ենթակառուցվածքների շինարարության համար մաքրում ենք մայրաքաղաքային բազմաթիվ տարածքներ (այդ ամենը հայտարարելով հանրային գերակա շահից բխող քայլ), ապա ինչո՞ւ նույն սկզբունքով չառաջնորդվենք այս դեպքում եւս:

Կամ՝ հայ ժողովրդի նշանավոր զավակներից քանի-քանիսի աճյունն ենք օտարությունից վերադարձրել մայր հայրենիք: Ինչո՞ւ նույնպիսի հոգատարություն չցուցաբերենք հանրապետության տարածքում անհայտության մեջ հայտնված մեր մեծերի շիրիմների հանդեպ:

Եվ, ի վերջո, եթե պատշաճ վերաբերմունք չմատուցենք մեր իսկ հանրապետությունում հանգչող մեր մեծերի հիշատակներին, ապա էլ ի՞նչ պահանջենք հարեւան ազգերից:

Հավատում ենք, որ Դուք ակնածանք կտածեք սուրբ Մովսես Տաթևացու հիշատակի հանդեպ եւ պատշաճ վերաբերմունք կմատուցեք նրա շիրմին՝ նվիրական այդ վայրը բարեկարգելով, ուխտատեղին վայելուչ տեսքի բերելով, ինչի համար անհրաժեշտ կլինի նախելառաջ հոգալ այն մարդկանց բնակարանային պայմանների մասին, ովքեր ճակատագրի կամոք բնակվում են Կոզեռնի մատուռի մեջ (տարածքում):

Խնդրի լուծման տարբերակներից մեկն էլ Մովսես Տաթևացու նշխարների վերաթաղումն է Սուրբ Էջմիածնում կամ Տաթևի վանքում:

Հավատում ենք նաեւ, որ այդ քայլով եւ Դուք, եւ մենք՝ բոլորս, կարժամանք սուրբ Մովսես Տաթևացու բարեխոսությանն առ Աստված, որպեսզի Բարձրալի ողորմության դռները բացվեն Հայոց աշխարհի վրա:

Հարգանքով՝ Սուրեն Խաչատրյան
Սյունիքի մարզպետ
«Սյունյաց երկիր» N23 (366), 2015թ.

/ ՄՊԱՍՎԱԾ ՎԵՐԱԴԱՐՁ



Սեպտեմբերի 26-ին Սիսիանում, Գորիսում եւ Կապանում առանձնահատուկ ջերմությամբ, աղուհացով, երգ-երաժշտությամբ դիմավորեցին Սյունիքի նորանշանակ մարզպետ Սուրեն Խաչատրյանին: Գորիսում Սուրեն Խաչատրյանի դիմավորումը վեր էր ածվել համաժողովրդական յուրօրինակ տոնակատարության:

Յայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ Սուրեն Խաչատրյանը նշանակվել է Սյունիքի մարզպետ: ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի ուղեկցությամբ նորանշանակ մարզպետը սեպտեմբերի 26-ին ժամանեց մարզ եւ անցավ իր պարտականություններին:

Սուրեն Խաչատրյանին այունեցիները դիմավորեցին շուքով: Մարզի դարպասների մոտ (Գորայքում) նախնական ընդառաջ էին եկել սիսիանցիները:

Սուրեն Խաչատրյանին այունեցիները դիմավորեցին շուքով

Գորիսի մուտքն ազդարարող հուշակոթողի մոտ Սուրեն Խաչատրյանին դիմավորելու էին եկել հարյուրավոր գորիսեցիներ: Իսկ Վանանդաձորում (Չայգամի) նորանշանակ մարզպետին ընդունեցին Կապան քաղաքի եւ տարածաշրջանի համայնքների, ինչպես եւ Մեղրի ու Ագարակ քաղաքների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Այնուհետեւ Սյունիքի մարզպետարանի դահլիճում ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը մարզպետարանի աշխատակազմին ներկայացրեց Սուրեն Խաչատրյանին՝ մաղթելով

նրան բեղմնավոր գործունեություն: Հանդիպմանը ելույթ ունեցավ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ով շնորհակալություն հայտնեց հանրապետության կառավարությանը՝ վստահության, այունեցիներին՝ ջերմ ընդունելության համար: Սուրեն Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց նաեւ նախկին մարզպետ Վահե Հակոբյանին՝ Սյունիքի մարզպետի պատասխանատու պաշտոնում մեկամյա գործունեության համար:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Այունյաց երկիր», 30 սեպտեմբերի
2014թ., N24 (332)

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

«...Որ փղամարդը գլուխը բարձր բացի իր փան դուռը»



ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Սարդը միանշանակ մեկ միավոր-անհատ չէ: Նա էլ իր «ես»-երի տարբեր դրսևորումների, աշխարհի հետ տարբեր շփումների համրագումար է: Տեսնում ենք մարդկանց փողոցում ձիգ, ինքնագոի քայլելիս, խառն ամբոխի մեջ... մենակ, կինոկան հեռուստատեսության, պաշտոնական ընդունելությունների կիզակետում կամ դատարկ մի զբոսայգում՝ լքյալ մի նստարանի՝ գլուխը արմունկին... Ոմանց իսպառ չգիտենք, ու մեր հիշողությունը նրանց պահում է որպես հպանցիկ կադր կամ արտանետում է, ոմաց, թվում է, գիտենք՝ անվերջ լսում ենք, տեսնում, նրանց շուրջը ծավալված զրույցների մասնակիցը դառնում, բայց իրականում, պարզվում է, այնքան էլ չգիտենք, որովհետև յուրաքանչյուր ոք, պրեզիդենտ կամ վարսահարդար լինելուց առաջ, նախ մարդ է՝ ֆիզիկական միավոր ու անհատ:

Սուրեն Խաչատրյանին կամ Խաչատրյան Սուրիկին մեզանում, խոստովանենք, բոլորը գիտեն: Գիտեն ուղիղ ու ծուռ պատումներից, թարս ու շիտակ նկարագրություններից, թերթերից ու էկրաններից, տեսաֆիլմերից: Նա ինձ հետաքրքրեց որպես սովորական մի մարդ,

մի գորիսեցի, որպես մեր համաքաղաքացի, եւ ցանկացա ամենամանրիշական, գուցե մի քիչ էլ շատ անկեղծ զրույցով գտնել, բռնել նրա նկարագրի հիմնական դիմագիծը եւ հասկանալ, թե որտեղի՞ց են նրա հոլովվող... ամենագրությունը. լծակներն են իշխանական, սոցիալական անգույն ֆոնն է նպաստավոր գույների խտացման համար, թե՞, պարզապես, նկարագիր է: Այդպես էլ կայացավ մեր զրույցը: Եվ այս հրապարակման մեջ նպատակ չկա խոսելու նրա մասին որպես ԵԿՄ-ի Սյունիքի մասնաճյուղի նախագահի՝ թվարկելով պատերազմական եւ խաղաղ ժամանակների նրա գործերը, որպես խորհրդանշական կոթողների, եկեղեցաշինության նախածեռնողի ու հովանավորի, որպես բազում բարեգործությունների հեղինակի, որպես «Միկրոշարժիչ» գործարանի նորովի վերագործարկման նախանձախնդրի, որպես Աժ-ի պատգամավորի: Խոսակցության «օրակարգում» չէին ոչ կուսակցական պատկանելիությունը, ոչ քաղաքական համակարանները (կամ՝ հակառակը), ոչ ընտրությունները առաջիկա եւ ոչ էլ այդառիթ վերաբերմունք-մոտեցումները... Բնականորեն, թե տեքստում, թե ենթատեքստում զրույցը կամա թե ակամա հարեց այդ ոլորտները: Ընդամենը հարեց:

* * *

Գորիսը փոքրիկ քաղաք է: Գորիսեցին էլ հայաստանցի է՝ պլյոս, թե՞... միևնու քաղաքի ավանդական ու ավանդվող «օրենսդրությունը», իրար մինչեւ ուղն ու ծուծը ճանաչելը: Էլի՞...

Գուցե արտաքուստ ոչ տեղին է թվում այդ ընդգծված առանձնացումը, բայց երբ խոսքը գորիսեցուն կամ ընդհանրապես սյունեցուն է վերաբերում, ասելու բան, իրոք, կա: Կա այն, որ նա իր բնության պես եւ զեղեցիկ է, եւ կոշտ, եւ բարձր է, եւ խորք ունի, եւ խորհրդավոր է, եւ էս ու էն ծերից անակնկալներ կարող է մատուցել: Գիտի իր «այո»-ի ու «ոչ»-ի արժեքը, գիտի, որ իր հայրենի տունը առաջինը հենց ինքը պիտի

պահի, պաշտպանի, գիտի, որ իր տան պապը որքան էլ ծերանա՝ օջախի Սեծը պիտի մնա, գիտի, որ երեխան թանկ է, դաստիարակությունը՝ ավելի, գիտի կրթության հարգը: Բայց վախկոտ ու տմարդի սյունեցի էլ կա, եւ՝ ոչ սյունեցի կորյուններ էլ...

Գորիսի երեկը, այսօրը... Վաղը ի՞նչ երանգներ կունենա:

Ամեն գալիքի արմատ, ներկայի միջով, անցյալից է գալիս: Ժամանակների հեռվից ընդունված է ասել՝ փառահեղ, հերոսական անցյալ: Բայց երբ այդ անցյալը ներկա էր, հարց է՝ բնութագրումն ինչպիսի՞ն էր: Այնպես որ, այսօրն էլ անցյալ է դառնալու, ու բոլոր երանգները բոլոր ժամանակներում եղել են, կան ու լինելու են: Բայց փաստ է եւ, որ մեր անցյալից դասեր առնելու շատ բան կա: Իսկ կոնկրետ գալիքի երանգը կախված է մեծապես այն բանից, թե որքանով մենք միաբան կլինենք, արտաքին քաղաքականության մեջ ճկուն կգտնվենք, ազգային արժեքները պինդ կպահենք:

Ի՞նչն է բոլոր ժամանակներում Ձեզ համար ամենակարեւորվածը:

.....

|| Միասնությունը: Ամեն իսկական սյունեցի, գորիսեցի պիտի հիշի, որ այստեղ է ապրել իր պապի պապը, ապրելու է իր թոռան թոռը, ծոռը նրա: Սա բոլորիս տունն է եւ, եթե մի պատի վրա մի քար կամ որեւէ մի տեղ մի ծառ է ավելանում, պիտի, գոնե, չտխրել, որովհետեւ դրա պտուղը գուցե իր էլ իր այսօրվա «թշնամու» սերունդների հետ բարեկամացած որդիներն են վայելելու: Եվ՝ ոչ միայն Գորիսում, Սյունիքում...

.....

Եվ մեծ Միասնությունը այստեղից էլ սկսվում է:

Գորիսեցին նաեւ մարդուն ներսից, դրսից, կողքերից նայել սիրող մարդ է, անուն կպցնող, ընդունող կամ մերժող է: Այնպես որ, հեշտ չէ նրա թրին դիմանալը: Դուք էլ, կարծում եմ, նրա «ախտորոշման գործընթացից» դուրս չմնացիք. ասաց, խոսեց, բարձրաձայնեց, փսփսաց, մերժեց, ընդունեց, հետո մի պահ կանգ առավ. դուք հետաքրքրեցիք նրան՝ «Հը՞, ոնց որ էս մարդը...»: Ու

վստահության դիագրամը սկսեց... չիջնել: Ի՞նչ է Ձեզ համար հասարակական կարծիքը:

Կեղծ կինչի, թե ասեն, որ ինձ համար հասարակական կարծիքը եական չէ: Բայց ես յուրաքանչյուր քայլից առաջ հասարակական կարծիքը ինձ դատավոր չեմ կարգում, որովհետեւ հաճախ ցավալիորեն սխալվում եմ երկարբարակ, շատ երկար մտածողները: Ընդունում եմ «Յոթ անգամ չափել, մեկ անգամ կտրելը», բայց երբեմն, յոթ անգամ չափելուց հետո, էլ կտրել-չկտրելը արժեք չի ունենում: Մարդս մի քիչ պահի զգացողություն պիտի ունենա: Անսխալական լինեի, գուցե, ինքս ինձ էլ հետաքրքիր չլինեի: Վրիպումներ՝ ծանր թեթեւ, ես էլ ունեցել եմ: «Ախտորոշման գործընթացով» անցնելիս ավելի արագ ես շտկվում, եթե, հիարկե, նյարդերդ թույլ չեն: Իսկ ինչ վերաբերում է վստահությանը, չեմ թաքցնում՝ միշտ էլ հաճելի է լսելը, չնայած անվստահության հիմքեր ինձ ծնած ու դաստիարակած ընտանիքը չի տվել. ծնողներս աշխատավոր մարդիկ էին, մայրս ասում էր, թե որ կինը լույսը բացվելիս տան գործերը պրծած չլինի, ի՞նչ կին է որ: Հայրս էլ ծեփց մինչ ուշ գիշեր աշխատում էր, չնայած կարող էր տերողորմյալով ծերությունը, գոնե, վայելել: Ես մանկուց գիտեի աշխատանքի ե... դառը հանը: Մի բան էլ կա, ժողովուրդը, կարծես, չէր հանդուրժում, որ «ռայկոմի» քարտուղարը տոհմիկ չլինի կամ անասնապահի որդին էլ իշխանության աստիճաններով բարձրանա: 30 տարի առաջ էլ դեմոկրատիա չկար, բայց իմ մայրը ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ էր...

Ի տարբերություն տեղական լրատվամիջոցների, որոնք երբեմն ձեզ ձոներ են ներբողում, հանրապետական որոշ թերթեր ձեր խայծը ցայսօր էլ հաճախ են նետում:

Սեզանում խոսքի ազատությունը հունից էլած է: Թող ասեն, գրեն էլ, եթե կրնկրեն հիմքեր կան, բայց անբարո է ու նազարավարի ասելը, օրինակ. «Ինչպես չար լեզուները վկայեցին...», «Լուրեր են պտտվում...», «Ինչպես վստահելի աղբյուրներից տեղեկացանք...»: Թող ներեն, թե վազը մինչ... «մարագն» է, դա արդեն ոչ կարգին լրագրողի ե ոչ էլ՝ կարգին քաղաքացու նկարագիր է: Իսկ սրան հակառակ, ճշմարիտ, համարձակ լրագրողը, անկասկած, եւ վարկանիշի առումով է շահում, եւ մյուսի հերոսին է ցնցելով օգնում, եւ հանրօգուտ գործ է կատարում: Իսկ անորոշ խոսքի մասնագետների հորինվածքները ընդամենը

արագ մարող աղմուկի առիթ են: Իսկ ինչ վերաբերում է ձեր ասած ներբողներին, կարծում եմ, դա լրագրողի մասնագիտական կարողությունների ու մարդկային նկարագրի հարց է:

II Դուք օրենսդիր ու գործադիր տարբեր կառույցներով, տարբեր ընտրություններով եք անցել: Ձեր համակիրներն էլ: Անկասկած, գիտեք, թե ովքեր Ձեզ հետ չէին: Եվ ի մչ, հանրությունը չէր... քարտեզագրվում:

Անկասկած, որեւէ թեւ մյուս թեւին չի փառաբանում, բայց ես ինքն իրեն հարգող որեւէ թեւ մյուսին չի թերարժեքում: Ընտրություններին նորմալ նախապատրաստվել էլ մյուսին նսեմացնելու համար չէ: Սովորաբար, ընտրված կողմը երբեւէ քարտեզագրվելու կարիք չի ունենում, մյուս կողմը կամ կողմերն են իրենց մեկուսացած, ճնշված հայտարարում եւ ձեր ասած քարտեզի սահմանները մզացնում: Իսկ այդ սահմաններից այն կողմ ընկեր-բարեկամներ են, համաքաղաքացիներ: Խղճում եմ հեքիաթի արքայադստեր պես բոլորին կողմ քվեարկող անդեմներին: Իրականում հենց նրանք են կրակի վրա յուղ լցնողները, նրանք են քարտեզի սահմանները մզացնողները: Սեզանում ամենամեծ ողբերգությունն այն է, որ ոմանք ընտրված-չընտրվածը հավասարեցնում են հաղթած-պարտվածի հետ, եւ մեկը մյուսին «պասպեկան» թշնամի հայտարարում: Սովորաբար այդպիսիք ընտրություններից զուտ իրենց համար ակնկալիք ունեցողներն են:

Որքան էլ թեման քննարկումի համար անցանկալի լինի ու շահարկում թվա, փաստ է, որ փոքր քաղաքում, մասնավոր՝ մերօրյա, ծով աշխատատեղեր չկան, պաշտոն-հաստիքներն էլ սահմանափակ են: Առանձին անհատներով ու նրանց կուսակցություններով պայմանավորված... կշեռքի հավասարակշռությունը չի՞ խախտվում, եւ խաղից դուրս մարդիկ չե՞ն մնում: Եվ՝ մասնագետներ...

Մեր օրերում յուրաքանչյուր խելահաս ղեկավար աշխատանքի է ընդունում ամենաբանիմացին, շնորհալիին: Աշխատավարձի վրա նստելու մասին որեւէ ղեկավարի քույր, եղբայր կամ խնամի չեն կարող հավակնել: Այնպես որ, եթե մեկը դժգոհում է, որ ինքը «հզոր մասնագետ է, խելքը տեղը, որ իր համար այս քաղաքում տեղ չկա...», ընդամենը գու-

ցե ուսյալ, բայց մինչ կեսօր քնել սիրող ծուլ է կամ՝ դատարկ մեծամիտ: Այնպես որ, եթե կշեռքի հավասարակշռությունը խախտվում է կամ խաղից դուրս մարդիկ են հայտնվում, ուրեմն խաղից դուրս վիճակում չգտնվելը նրանց ուժերից վեր է: Ավելացնեն, մարդկային մի տեսակ էլ կա, որ սպասում է, որ իրեն անպայման նկատեն, հիշեն, սկուտեղի վրա մատուցեն, իսկ ժամանակն անցնում է: Մի քիչ էլ ակտիվություն է հարկավոր, սեփական արժանիքները ոչ միայն գնահատելու, այլեւ ճիշտ ներկայացնելու հմտություն՝ իրեն ընձեռված պահը չկորցնելու: Ինչու չէ, եւ՝ ճկուն դիվանագիտություն: Պիտի ընդունել, որ մեր ժամանակները մտքի, կողմնորոշման արագություն են պահանջում. պասիվությամբ ամեն ոք առաջին հերթին իրեն է վնասում:

Եվ, հետո, մի բան էլ ավելացնեն. խաղից դուրս վիճակում իրենց, որպես կանոն, համարում են համեմատաբար տարեց, իրենց զբաղեցրած ոլորտներում երբեմնի կայացած մարդիկ: Բայց նրանք դժվարանում են խոստովանել, որ անկախ իրենց ավանդաշատ անցյալից, այսօր ի վիճակի չեն դիմանալու ժամանակակից տեխնոլոգիաների թելադրած պահանջներին, շուկայական հարաբերությունների պարտադրած տեմպին, հարկային դաշտի խստությանը, ամընդհատ նորացող գործընթացներին:

II Մի ճշմարտություն էլ կա. դժվար, անհասկանալի, անվստահելի անհատները որեւէ ղեկավարի ցանկալի չեն: Եվ դա օրինաչափ է:

Իսկ շնորհաշատ երիտասարդները: Մի՞թե նրանք «գետնին» են մնում. նրանց շուտ նկատելն ու աշխատանքի ընդունելը արդեն իսկ հաջողություն է տվյալ հաստատության, ղեկավարի համար:

Բայց, ի վերջո, չիղեալականացնեք. բացառությունները ուրախալի կամ ցավալի, բոլոր ժամանակներում էլ եղել են, լինելու են, եւ, ի վերջո, խոստովանեք, որ այս՝ «թեւ ու քարտեզ» ասվածները այնքան ռեալ չեն, որքան՝ գունազարդված, չնայած փոքր քաղաքում մարդկանց իրար լավ ճանաչելը պլյուսներ եւ շատ էլ միմուսներ ունի...

Ժողովրդի մեջ օրավուր ծովացող հուսահատություն, անկումային տրամադրություն կա: Մարդիկ էլ չեն հավատում գյուղապետին, քաղաքապետին, օրենսդիրին, գործադիրին, Աժ-ին: Գուցե վերջից էլ սկսե՞նք:

Ցնցող չէ. կիսաբաղջ, աշխատանք չունեցող մարդը որեւէ հողեղենի, Աստծուն էլ չի հավատալու: Նախկին հասարակարգը՝ ՄՍՀՄ-ը, ուրիշ էր. քաղաքում խումբ-խումբ թրեւ եկող, էստեղ-էնտեղ պագածներին հավաքում, տանում, աշխատանքի մեջ էր ներգրավում: Գործազուրկ բառը մեզ ընդամենը... Արեւմուտքի գոյության մասին էր հուշում: Մեր սերնդակիցներից որեւէ մեկը հիշո՞ւմ է, որ իր ծնողները օրի, լույսի, հողի հարկերը չկարողանային մուծել, եւ դա ընտանիքում քննարկման նյութ դառնար: Չնայած էն ժամանակ էլ կարելի էր լսել՝ «է՛, սա կյանք ա՛...»:

Մեր օրերի բացերը չուրանալով՝ պիտի շատ իրատես լինել ու ընկալել, որ ներկա իշխանությունների ժառանգություն ստացածի վրա Ամերիկա չես կառուցի: Տնտեսության կաթվածահար ոտքերը պիտի ամրացնել, «արեւի տակ» մեր տեղը ծշտել եւ, հետո, պարտավորվածություններն ու պարտականություններն այնքան պիտի հստակվեն, որ լիազորություններն ինքնըստինքյան բխեն: Ժողովրդին հաճախ, զուցե բնականաբար էլ, այս ամենը չի հետաքրքրում. մտածում է՝ ծնվել եմ, կամ, պիտի ապրեն ու հայրենիք է՝ թող ինձ պահի: Այստեղ ամենալուրջը մեր երբեմնի բանվոր դասակարգի, միջին անձնակազմի վիճակն է, որոնց աշխատանք չունենալը ծայրագույն աղքատության է մատնել նրանց ընտանիքներին: Նրանցից մեկին անգամ աշխատանքի տեղավորելիս ես գոհացում եմ ապրում: Այսօր վերագործարկված «Միկրոշարժիչ» գործարանում մոտ 80 մարդ է աշխատում՝ 15-20 հազար կանոնավորապես վճարվող միջին աշխատավարձով:

Ժողովրդի հավատի մասին խոսելը վարկանիշ բարձրացնող թեմա է, բայց իրական կյանքը շատ բարդ է, հեքիաթ չէ, եւ «երեք խնձորը» հենց այնպես եւ միշտ չի վայր ընկնում:

Հիմա՝ Աժ-ի մասին: Ժողովուրդը դեռ շուտ չի հավատալու, որովհետեւ, չնայած իր որոշակի տարիքին, Աժ-ն դեռեւս երկրի կայացումի «արմատուրան» է հյուսում, երբեմն քանդում, վերակառուցում է, որի ամրությամբ ու ճշգրտությամբ էլ կկանխորոշվի հետագա կառույցի հուսալիությունը: Բայց ամեն «կարճատես» մարդ, եթե անգամ չուզենա էլ, տեսնում է, որ Հայաստանի տնտեսությունը տեսնալ է հավաքել, որ ներդրողները վստահ են, որ Հայաստանը ուշադրությունների խաչմերուկում է: Ինձ թվում է՝ ազգովին մի որակ պիտի խորացնենք, տեսնենք լավն ու առաջադիմականը եւ այդ մա-

սին չզլանանք ասել: Անվերջ վատի, հավատի կորստի, հուսահատության մասին խոսելը հոգեբանությունից բնավորություն ու դիմագիծ է դառնում...

Ժողովրդի՝ իր ընտրյալի գնահատման չափանիշները հաճախ ուղղակի են. Աժ պատգամավորի աշխատանքի արդյունավետությունը ուղիղ համեմատական է համարում ամբիոն-խոսափողին մոտենալու, քննարկումներին մասնակցելու նրա ակտիվությանը: Այդ առումով Դուք... թիրախում էիք: Եվ...

Հարցը հստակ էր: Եթե ուղիղ պնդումը ճիշտ է, հակառակն էլ պիտի ճիշտ լինի: Եթե շատ խոսելը ուղիղ համեմատական լինի պատգամավորի կատարած աշխատանքի արդյունավետությանը, ապա, ըստ որոշ պատգամավորների խոսքի թողած տպավորության, Հայաստանը վաղուց պիտի դրախտ լիներ: Ոչ այնքան տեղին թվացող մի համեմատություն անեմ. երբ հազարավոր կանավորներ մեկնեցին վտանգված հայրենին փրկելու, ոչ ոք զնալուց առաջ հայրենասիրական ծառ չասաց, ծայնագրություններ չթողեց: Դա գործ էր՝ արժանապատվության, խելքի, զենքի, բազկի: Բայց պատերազմը օտարագոհ... կնոջ՝ Ցվետանայի ֆիլմերից տեսած փայլուն խոսքի որոշ վարպետներ, ամեն կուշտ ուտելուց առաջ, առաջարկում են հոտնկայս խմել... «...մեր արժիվ տղաների» կենացը: Տպավորություն է... Իսկ թե որտե՞ղ են նրանց երեխաները, կո՞ւշտ են, սովա՞ծ, Նոր տարին առանց տոնածառի՞ն են, թե՞ անլույս ու անվառարան, դա արդեն...

Խոսք եղավ պատերազմի մասին եւ էլի՝ չմարդ մի թեմա: Խորապես գնահատելով Ձեր, բոլոր նվիրյալների տեղը Արցախյան պատերազմում՝ այնուամենայնիվ մի արձանագրում մտայնություններ ծնեց. ամենավերին ատյանից սկսած՝ երկրի մեծ ու միջակ ղեկերի մոտ կանգնեցին կռված հայրդիք: Ինքնասպասարկման չէ՞ր նման, եւ հաղթանակները... չէ՞ժանացա՞ն:

Այստեղ մի զարմանալի տրամաբանություն կա. երբ մեր երկրից կամ խաղաղ ու ապահով սփյուռքից երիտասարդության ընտրանին իր կյանքը չխնայեց, ոչ ոք չասաց, թե ինչո՞ւ այս հայրդիքն, որ, օրինակ, 7 լեզու գիտեր կամ գիտնական էր խոստումնալից, կամ երիտասարդ էր մատղաշ, թիկունքում չծավալեց իր գործունեությունը եւ, էլի՛ ազգի համար, չխնայեց իրեն: Ինչո՞ւ ասեին՝ ազգի համար էր, հանուն հայրենիքի էր... Եվ ինչո՞ւ վտանգված երկիրը կարելի է նրանց վստահել, իսկ ե՛ւ նրանց

ջանքերով վերագտնված խաղաղ երկիրը՝ ոչ: Թե՛ նրանց սիրտը պակաս է ցավում այս երկրի համար: Երբ նրանց մասին, որպես մարտիկի են խոսում, ասում են՝ ազգի քաջարի որդիք, սերունքը... Իսկ մեր օրերում ասում են՝ ինչո՞ւ նրանք էլ... Իհարկե, մեր քննարկումից, կարծում են, դուրս են բախտախնդիրները, որոնք ոչ քանակ են եւ ոչ էլ, փառք Աստծո, որակ:

Մեր օրերում ընկերություն պահպանելը շատ է դժվարացել: Նյութակա՞ն է պատճառը, տրամադրությունը, անշահախնդրության տեղի տա՞լը: Որքանով նկատելի է, այդ օրինաչափությունը ձեր պարագայում, կարծես, չի գործում: Սա թիմային ընկերություն է, թե՛...

Ընկերությունը, ինձ թվում է, այս դեպքում շփոթվում է շրջապատի, գործընկերների հետ, որոնք հեռվից միանշանակ որպես ընկեր են ընկալվում:

Ընկերությանը՝ ճշմարիտ ընկերությանը, համոզված եմ, որ չեն սպառնում ոչ դիրքը, ոչ սոցիալական վիճակը: Սա հոգու կապն է: Ինձ համար ընկերությունը խզվում է այնտեղ, որտեղ վերջանում են անկեղծությունն ու կանեցողությունը:

Սրանում համոզված եմ: Թիմային ընկերություն չի լինում. այս երկու բառերը իրար կողքի անելիք չունեն:

Բարձր ատյաններով անցած մեծամեծերին, բարվոք կյանքերի մասին, գոնե, պատկերացում ունեցող մարդկանց Գորիսը հանկարծ նեղ, հեղձուկ, անհեռանկար է թվում: Ու՛ երեւաններ, արտերկիր: Օձիք արծակելու զգացողությունը ձեզ չի՞ հետամտում. երեխաներ, կարիերա...

Չնայած մարդուս կյանքը անկանխատեսելի որեւէ շրջադարձից ապահովագրված չէ, բայց մի բան ինձ համար հաստատ է. անկախ որեւէ հեռու փայլի գրավչությունից՝ Գորիսը իմ ծննդավայրն է եւ, ըստ իս, ավելի ճիշտ դաստիարակություն, քան զավակիս հետ իր պապ-ապուպայերի գերեզմանին խոնարհունով ծաղիկ դնելը, կարծում եմ, չկա:

Ձեր մաղթանքը, որին հավատում եք: Աշխատատեղեր, աշխատանք: Որ տղամարդը գլուխը բարձր բացի իր տան դուռը:

«Համայնք» ամսագիր,
թիվ 6, 2002թ.

ՄՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

ՄՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ.

«Որ գալիք սերունդները ամեն
ինչ Նոր փողից չսկսեն»



ԱՎԿԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ձանգեզուրի չոր
չուկերը ծաղկալ են

Ամեն իրիկուն մանկական զբոսա-
գուն երգուն է Ազոն: Ամեն իրիկուն, որով-
հետեւ Գուսան Աշոտի այդ երգը հիմն է
Գորիսի, որ գնալու է դարեր:

Ազոյի երգը արծազանքում է հազա-
րածայն Դրնգանի ծորում, Խաչուն...

- Քանի՞ անգամ ես Խաչ բարձրացել, -
երեւանում ապրող գորիսեցուն այս հար-
ցը միշտ կտա Սուրեն Խաչատրյանը:

Խաչ գնալը դժվար է, ծորեր, քա-
րեր, մացառներ, ժայռեր, թեթևություններ:
Անմատչելի իր բարձունքից Խաչն ամեն
օր Աստծո օրհնանքն է տարածում քաղա-
քի վրա:

Թե երեւանաբնակ գորիսեցին գլուխը
բացասական շարժեց, Սուրենը կասի՝

- Դու իրավունք չունես կյորեսեցի կոչ-
վելու, ազգությունդ փոխի:

Յուրահատուկ հունոր ունի Սուրենը:
Երբ քաղաքապետ էր, քաղաքն էլ ֆուտ-
բոլի թիմ ուներ, թիմն էլ մրցումների էր
զնում եւ մի անգամ էլ խոշոր հաշվով
պարտվեց, Սուրենը դառնալով մարզչին
ու ֆուտբոլիստներին ասաց.

- Երեւի մոռացել եք դարպասապահ
տանել:

Բոլոր գորիսեցիներին Սուրեն Խա-
չատրյանը գիտի հինգ մատի պես,
նրանց ծագումը, շառավիղները: Իսկ
Սուրենի ծագումը, նրա ծնողները՝ Սե-
րյոժա Խաչատրյանը եւ Դեզիկ Բաղդա-
զյուլյանը Գորիսում հայտնի մարդիկ են
իրենց աշխատասիրությամբ: Դեզիկը
մասնակցել է հանրապետական, միութե-
նական համագումարների, եղել է ԽՍՀՄ
Գերագույն խորհրդի պատգամավոր:
Ծնողների կենսագրությունը Ս.Խաչատ-
րյանի այցետոմսն է, մարդ պետք է նա-
մուս ունենա, - ասում էին ծնողները: Թե
մարդ նամուս չունեցավ, ձեռք քաշիր
նրանից, դավաճանից էլ բեթար մարդ է
նա: Նամուսը տվին շանը՝ չկերավ: - Բա
դա նամո՞ւ է, որ ադրբեջանցին հոխոր-
տում է մեր սահմաններում, - ինքն իրեն
ասաց Սուրենը եւ Ռուսաստանից հասավ
Հայաստան, որպեսզի իր «ես»-ը խառնի
հայոց ոգուն, որ ի գեն կոչելով գորիսե-
ցի փոթորիկ տղաներին տանի հանուն
ճշմարտության:

- Յուրաքանչյուր ազգի ճակատագիրը
իր որդիների ձեռքերում է, եւ նրանց հայ-
րենասիրությամբ է ազգը խարսխվում ժա-
մանակի մեջ: Դա աքսիոմ է, սերունդների
փորձով բազմիցս թրծված, ժամանակի ու
իրականության պրիզմայով անցած: Այն
ազգը, որի որդիները անձնականը վեր
դասեցին հայրենիքից, դատապարտված
է կործանման: Սա հատկապես վերաբե-
րում է փոքր ազգերին, որոնց մոտ արյան
եռքն ու հոսքը ուրիշ բնույթ պետք է ու-
նենան, որի հայտարարն արդեն հայրե-
նասիրությունն է, բոլոր ժամանակների
ամենաարդիական եւ հուժկու զենքը, -
ասում էր Ս.Խաչատրյանը:

Գորիսը եռացող կաթսա էր այն ժա-
մանակ: Գորիսում մույնպես շուտ հաս-
կացան, որ հայոց անկախությունը, հայոց
Արցախը ցույցերով, միտինգներով, գոր-
ծադրվներով, դիմումներ հղելով հնարա-
վոր չէ գնել:

Պայքար էր պետք, պայքար, որ ինչ-

պես 9-րդ ալիք, պիտի բշեր-տաներ հնա-
ցածը, փտածը... Եվ Սուրեն Խաչատ-
րյանն այդ փոթորկածիների գլուխն
անցած, Թորգոմա տան անկախությունը
պահողների շարքերում էր:

Գորիսեցու արժանապատվությանը
հարիր չէին իր տան իրետակոնությունը,
իր տան անդամի ամբուստությունը: Եվ հետո
էլ հայոց տան ճակատագիրը որոշվում էր
նաեւ Գորիսի մատույցներում:

Իսկական տղամարդ էին Սամվել
Աղաջանյանը, Սանասար Բեգլարյանը,
Մելիքսեթ Պողոսյանը, բոլոր-բոլոր երկ-
րապահները Գորիսի, որ կանգնեցին
թշնամուն դեմ հանդիման:

Լավ զինված թշնամուն դիմագրավե-
լը հեշտ չէր, - ասում է Ս.Խաչատրյանը: -
Բայց հեշտ էր այն տեսանկյունից, որ մեր
տղերը անձնագրի էին, իսկ ժողովուրդը
չլքեց քաղաքը, գյուղերը: Ժողովուրդը
մնաց, փույթ չէր, թե օրվա մեջ քանի-քա-
նի անգամ էին գնդակոծվում, փույթ չէր,
որ թշնամու գնդակից զոհված հարա-
զատին գնդակների տարափի տակ էին
մի կերպ հողին հանձնում: Ժողովուրդը
մնաց, ու երեխաներ ծնվեցին, ու երբեք
ոչ մի դպրոցի զանգ չմարեց, այլ իրենց
ղողանջով ոգի տվեցին երկրապահին:
Իսկ իրետակոնված-վառված յուրաքան-
չյուր տուն անմիջապես վերականգնվում
էր, թեեւ գիտեին, որ հաջորդ պահին այն
կարող էր կրկին իրետակոնվել:

Թիվ 3 պայմանագրային
գումարտակ

Ս.Խաչատրյանի գումարտակն է.
պատերազմական երկար ճանապարհ
է անցել, մասնակցել բազում
ճակատամարտերի. Կուբաթլի, Հորադիզ,
Լաչինի միջանցք, Ձանգեղան, Սաֆյան,
Գորիսի սահմաններ...

Ավաղ, գումարտակը գոհեր ունեցավ:
Վասն հայրենյաց զոհված տղաներին այ-
սօր Գորիսը շատ է պարտական: Նրանք
զոհվեցին, որ Գորիսը դարերում իր տեղը
ունենա:

Ո՛ր են փղերը,
որ ելան մարտի

Ս.Խաչատրյանը, որ ԵԿՄ Սյունիքի
մարզային խորհրդի նախագահն է, ասում
է.

- Սյունեցի երկրապահը հիմնարկ չի
թալանել, մեքենա չի բռնագրավել եւ ոչ էլ

շահարկել կամ շահարկում է հայրենիքին մատուցած իր ծառայությունները: Նա իր համեստ կեցվածքով, առաքինությամբ հիացնում էր պատճառում: Ես աշխատում եմ հնարավորության սահմաններում հոգալ երկրապահների ցավերը, տեղավորել նրանց աշխատանքի: Աստված չանի, եթե նորից պատերազմ լինի, Սյունիքի երկրապահը դարձյալ հոգու մղումով սահման է նետվելու, լինելու է առաջին գծում 18-20 տարեկան նորաթուխ զինվորների կողքին:

Բոլոր երկրապահները գիտեն՝ նոր տարի է, իրենց երեխաները տոնածառու նվեր են ունենալու, ամառ է՝ ուրեմն ճամբար կզման երեխաները, թե դպրոցն է ավարտել երկրապահի երեխան, կրթության հարցը կլուծի Ս.Խաչատրյանը:

Ազգային ազատագրական պայքարի մարտիկը 1994թ. անցավ խաղաղ աշխատանքի, Գորիսի քաղաքի փոխնախագահն էր, հետո նախագահը, հետո էլ քաղաքապետը:

- 1994թ. մայիսին մի այլ պատերազմ էր քաղաքում, որ սազական չէր կռվի բովով հաղթական անցած գորիսեցուն: Լարված հարաբերություններ էին քաղաքային, շրջանային խորհուրդների պատգամավորների միջև: Իրադրությունը հարկավոր էր կայունացնել, հակառակ դեպքում նշանակում էր թշնամու ջրաղացին ջուր լցնել: Ես դիմեցի մեծ ռիսկի՝ աշխատանքի անցնելով քաղաքի գլխավորին, Գորիսի շրջանի մթնոլորտը փոխելու համար, ես դա ինձ հաջողվեց, - ասում է Ս.Խաչատրյանը: 1994թ. Գորիսում վերջակետվեցին պատգամավորների կողմից ստորագրությունների հավաքումը, արտահերթ նստաշրջանների գումարումը, նախագահների հրաժարականների պահանջումը: Ս.Խաչատրյանը միաբանեց բոլորին: Իսկ այսօր, երբ նա Աժ պատգամավոր է, ասում է.

- Միասնության գաղափարը մեր տարածաշրջանում արդեն քննություն բռնած գաղափար է: Որպես Աժ պատգամավոր իմ գործունեության ընթացքում փորձում եմ նպաստել միասնության ամրապնդմանը, զերծ մնալ համայնքային մտածելակերպից: Ծանր տարիների ձեռք բերած միասնությունը չպետք է խախտել, ընդհակառակը, նոր ժամանակներում նոր ձեռով այն պետք է կատարելագործել, ամրապնդել, նոր որակի հասցնել:

Այսօր սոցիալ-տնտեսական շատ դժվարություններ կան, որոնց լուծումը դուրս է մեկ համայնքի հնարավորություններից, եւ միայն միասնական ուժերով է հնարավոր լուծել այս կամ այն խնդիրը:

Այդ դեպքում դուք, որպես միասնության շարժառիթ, ինչն է հեռացաք «Միասնություն» դաշինքից

- Հոկտեմբերի 27-ի դեպքից հետո հանրապետությունում կտրուկ փոխվեց քաղաքական վիճակը, ինչը չէր կարող չներգործել նաեւ Աժ քաղաքական ուժերի հարաբերակցության վրա: «Միասնությունը» ներքին հակասություն էր ապրում: Նման քաղաքական կացության մեջ «Միասնությունից» անջատվեցին երկրապահ կամավորները, որոնք կազմեցին առանձին խմբակցություն: Տվյալ դեպքում ինձ համար առաջնայինը մարտական ընկերոջ գործուն էր, ոչ թե քաղաքական շահարկումները, շարժառիթները, եւ ես չէի կարող չնիսնալ իմ մարտական ընկերներին, որոնք կազմում էին առանձին խմբակցություն: «Հայաստանը» Աժ ազդեցիկ խմբակցություններից է, նրա հիմնական նպատակը կառուցողական դիրքորոշումն է, հեռու է էժանագին ընդդիմությունից կամ քաղաքական խնդիրների շահարկումից:

Մեր նպատակն է նպաստել երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական դժվարությունների հաղթահարմանը:

Գորիսեցին գիտի, որ այդ դժբախտությունները ձախող օրերի նման կզան ու կանցնեն: Դու ասա մարդը մարդ մնա:

- Սոցիալական լարվածության առաջացման հիմնական պատճառը բնակչության զբաղվածության խնդիրն է: Քանի որ տարածաշրջանը գյուղատնտեսական է, բնականաբար զբաղվածության խնդիրը գյուղական համայնքներում այնպես սրությամբ չի արտահայտվում, ինչպես Գորիսում: Սակայն այստեղ էլ արդեն որոշակի քայլեր են արվում զբաղվածության խնդիրը լուծելու համար, - ասում է Ս.Խաչատրյանը, - դրա վկայություններից մեկն էլ «Միկրոշաքի» գործարանն աշխատեցնելն է, որը դադարել էր աշխատելուց 1996 թվականին՝ արտադրանքի իրացման շուկա չունենալու պատճառով:

Արտադրում ենք էլեկտրական պոմպեր, ունենք պայմանագրեր Իրանի, Ռուսաստանի հետ: Հունիսից աշխատող ձեռնարկության մարդիկ կանոնավոր աշխատավարձ են ստանում:

Նախատեսվում է աշխատեցնել նաեւ զարեջրի գործարանը, որի հանրահայտ զարեջուրը կրկին շուկաներ կգրավի:

Բայց դրանից, խոսակցություններ են վարվել Հայաստանից դուրս ապրող գործարարների հետ առանձին արտադրատեսակների թողարկման, իրացման

համար:

Որոնք են հաջողության գումարեկները

- Նվիրումը, ռիսկը, նպատակին հասնելու բուռն ձգտումը: - Հարցիս այդպես պատասխանեց Աժ պատգամավորը, հետո հատ-հատ շեշտված ասաց.

- Իմ կյորեսեցու խիզախությունը, նվիրումը, հայոց եռագույնին հավատարմությունը, հայոց պետականության կայացմանը նպաստելը:

Եվ թիչ լռելուց հետո շարունակեց.

- Ես իմ սրբազան պարտքն եմ համարում հաղթող կյորեսեցու ոգին միշտ արթուն պահելը:

Որովհետեւ դա այն ոգին է, որ արթուն պահեց հայոց հարավային դարպասը: Ես խոնարհվում եմ կյորեսեցու ոգու առջև, խոնարհվում եմ մեծից մինչեւ փոքրի առջև:

Իսկ այդ խոնարհումը իրեղեն գործերով է արտահայտվում: Նա սատարում է Երեւանում սովորող ծնողազուրկ երեխաներին, գորիսեցի երիտասարդներին ասպիրանտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորման, Գորիսի կրթահամալիրի մանկավարժական դեպարտամենտի բացման եւ այլ հարցերում: Դրա համար էլ նրա աշխատատեղի դուռն ասես խաչի դուռ է:

Գալիս եմ մարդիկ հոգսաշատ, տխրաշատ: Գալիս եմ, որ իրենց տղան՝ Սուրենը, դեղ ու դարման անի իրենց դարդին:

Եկեղեցի ու կամուրջ, ջրատար ու մարզադաշտ, քաղաքի մուտքի կրթող կառուցած, 1997թ. աննախադեպ սելավներից քաղաքի վերքերը բուժած այրը չի հոգնել մարդկանց կարեկից լինելուց: Նրա կյանքի իմաստը իր նմաններին զորավիգ կանգնելն է: Որովհետեւ այդ նրանք են, որ կրում են այս քաղաքի ճակատագիրը, այդ նրանք են, որ պատերազմի դաժան տարիներին չլքեցին քաղաքը:

- Թե հոգնեցի, ուրեմն էլ անելիք ու ասելիք չունեմ, - ասում է նա, - պիտի հեռանամ: Եվ հետո հոգնելու իրավունք էլ չունեմ, մարդիկ վստահել են ինձ, այս ժամանակահատվածում նավի թիավարման դեկը ինձ են հանձնել, իսկ ես պետք է նավը վարեմ, բազմապատկեմ այս քաղաքի փառքը, որ գալիք սերունդները ամեն ինչ նոր տողից չսկսեն:

«Սյունյաց աշխարհ»,
N29 (67), 30 նոյեմբերի 2002թ.

ՄՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

ՀՀ ազգային ժողովի պարզամավորության թեկնածու թիվ 70 ընտրապարածքում

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

1988 թվական: Ինքներս մեզ ճանաչելու յուրօրինակ ժամանակը եկել էր, ժամանակ, որին բնորոշ էին ստանդարտները, կոմպլեքսները, ժամանակ, որի միջից կարծրացած-արմատացած մտածողությունը ճեղքելով, ողջ հասակով մեկ կանգնեցին երեկ վեթի ու ջնջլախտի խաղացող տղաները, որ ուտուպիա դարձածը ճշմարիտ կյանքի ու կենսակերպի իրական վավերագիր դարձնեն: Կանգնեցին առանց դափնու ակնկալիքի եւ ցեղի ուժին ու իմաստությանը ապավինած՝ նրանք գնացին սեփական կյանքով դարբնելու հայոց անկախությունը, հայոց ճակատագիրը:

2 կանգնել չէիք կարող, – պատմում է Սուրեն Խաչատրյանը: Եվ դա ազգովին կանգնելու ժամանակն էր, եւ որդիների հայրենասիրությունից էր կախված հայրենի տան ամրությունն ու գոյատևումը: Երբ սկսվեց շարժումը, Սուրեն Խաչատրյանը Ռուսաստանում էր, ուր լավ աշխատանք ուներ, լավ վաստակ, ընկերական շրջապատ: Թողեց ամեն ինչ ու մի շնչում հասավ Հայաստան, որ իր «ես»-ը խառնի հուժկու «մենք»-ին, որ իր ոգու կրողը խառնի հայոց մեծ Ռզուն ու սրբանա-գորանա, որ ի գեմ կոչելով՝ գորիսեցի փոթորիկ տղաներին տանի ճշմարտության ուղիով:
– Յուրաքանչյուր ազգի ճակատագիրը իր որդիների ձեռքերում է, եւ նրանց հայրենասիրությամբ է ազ-

գը խարսխվում ժամանակի մեջ: Դա արսիում է, սերունդների փորձով բազմիցս թրծված, ժամանակի ու իրականության պրիզմայով անցած: Այն ազգը, որի որդիները անձնականը վեր դասեցին հայրենիքից, դատապարտված է տաժանակիր կործանման: Սա հատկապես վերաբերում է փոքր ազգերի որդիներին, որոնց մոտ արյան եռքն ու հոսքը ուրիշ բնույթ պետք է ունենա, որի հայտարարն արդեն հայրենասիրությունն է, բոլոր ժամանակների ամենարդիական եւ հուժկու զենքը, – ասում էր այն ժամանակ Ս.Խաչատրյանը:

– Բազում դարեր պետություն չենք ունեցել, բնականաբար, նաեւ՝ բանակ: Դրա ստեղծումը բուսելի խնդիր էր: Ժամանակի եւ ժողովրդի բախտը երկրապահի ձեռքում էր, – ասում է Ս.Խաչատրյանը: Եվ լավագույն տղերքը՝ անկախության նվաճողները, դարձյալ արեւնայում են, տղերք, որ ծանոթ չէին ռազմարվեստի գաղտնիքներին, եւ մարտական արվեստը նրանց համար սկսվում ու ավարտվում էր խորհրդային բանակում տեսածով, սովորածով, ուր նրանք ընդամենը սովորական զինվոր էին, եւ նրանցից շատ-շատերը ծառայելու ժամանակ անգամ հրացանի երես էլ չէին տեսել:

II Կանգնեցին տղերքը Սուրիկի, քանզի ճիշտ էին պատկերացնում պահի հրամայականը, պահի պատասխանատվությունը եւ փույթ չէր, որ որոշ հիմնարկների վիլիսներ փախցնելով ու մարտադաշտ տանելով, նրանց ղեկավարների ոչ հաճելի պիտակներին էին արժանանում:

– Իմ նպատակն էր, որ ժողովուր-

դը հավատար երկրապահին, որ Գորիս ասելով բոլորը հասկանային խիզախների օրրան, անձնագրի օրրան, – ասում է Ս.Խաչատրյանը: Մինչեւ ատամները զինված թշնամուն դիմադրավելը հեշտ խնդիր չէր: Բայց հեշտ էր այն տեսանկյունից, որ մեր տղերքը անձնագրի էին, իսկ ժողովուրդը չլքեց գյուղերը, քաղաքը: Ժողովուրդը մնաց, փույթ չէր, թե օրվա մեջ քանի-քանի անգամ էին գնդակոծվում, փույթ չէր, որ թշնամու գնդակից զոհված հարազատին գնդակների տարափի տակ էին մի կերպ հողին հանձնում: Ժողովուրդը մնաց, ու երեխաներ ծնվեցին, ու երբեք ոչ մի դպրոցի զանգ չմարեց, այլ իրենց ղողանջով ոգի տվեց երկրապահին, ժողովրդին:

Գորիսում այն ժամանակ զորախմբերն իրար դեմ հանդիման չէլան: Նրանցը միայն սահմանն էր, թշնամու որջը, գնդակը թշնամու համար էր: Եվ դա շնորհիվ Սուրեն Խաչատրյանի, որ կարողացավ համախմբել բոլորին, ամեն մեկին իր տեղը դնել, իր տեղը ցույց տալ: Մի հայացք, մի բառ, բոլորը հասկանում էին, եւ նրան հարկ էլ չկար ռազմական քարտեզներ բացել: Ս.Խաչատրյանը, որ գումարտակի հրամանատար էր, հինգ մատի պես գիտեր սահմանի յուրաքանչյուր տեղանքը, դրա առանձնահատկությունները: Իսկ մարտական առաջադրանքի գնալիս, երկար-բարակ չէր խոսում մարտիկների հետ, հրամանատարի հայացքը խոսում էր: Նրա գումարտակը իր տարեգրությունում գեղեցիկ էջեր գրեց՝ Լաչին, Կուբաթլի, եւ որպես հրաբուխ նրա գումարտակը ժայթքեց նաեւ Զանգեզուրում, Ֆիզուլիում... Ավաղ, գումարտակը զոհեր էլ տվեց: Փակելով մարտական ընկերոջ աչքերը՝ հրամանատարը լուռ երդվում էր. երդումն այդ ծխելն էր, եւ առանց խոսքի մեկ վայրկյանում շարվում էին գումարտակի տղերքը եւ սպասում նրա մի հատիկ բառին: Իսկ բառն այդ թշնամու որջի անունն էր: Եվ մինչ թշնամին ուշքի կգար ականջի տակ պայթած արկի բամբ ձայնից, տղերքը լավայի պես թափվում էին նրա վրա. ակն ընդ ական, այս էր Ս.Խաչատրյանը սովորեցրել նրանց:

Խիզախ հրամանատարի տղերքը իսկ եւ իսկ նրա նման էին՝ աներկյուղ, անզիջում: Նրանց թուլությունը, ինչպես հրամանատարինը՝ նվիրումն էր, գեներ՝

ՀԱՄԱՐԻ ՖՈՏՈՎԵՐՍԸ



Քիբրոքսիմի գի «Գարեգին Նժդեհ» ակումբի մարզիչ Արա Սարգսյանի եւ մրցանակակիր սաների հետ



Մեծ հայրենական պատերազմի կապանցի վետերանների հետ

խիզախությունը, մարտավարությունը՝ սխրանքը:

II Ազգային-ազատագրական պայքարի մարտիկը 1994թ. անցավ խաղաղ աշխատանքի, քաղտորհրդի փոխմախազահն էր, հետո նախագահը, հետո էլ քաղաքապետը: Հայացքների, հայոց պետականության կայացմանը նպաստելու գործում ռազմավարության փոփոխություն էր դա, թե՞ այլ մի բան:

– 1994թ. մայիսի 10-ին պատերազմն ավարտվեց: Սակայն մի այլ պատերազմ էր քաղաքում, որ սազական չէր կռվի բովով հաղթական անցած գործեսցուն: Լարված հարաբերություններ էին քաղաքային, շրջանային խորհուրդների, պատգամավորների միջև: Իրադրությունը հարկավոր էր կայունացնել, հակառակ դեպքում նշանակում էր թշնամու ջրաղացին ջուր լցնել: Ես դիմեցի մեծ ռիսկի, աշխատանքի անցնելով քաղտորհրդում Գորիսի շրջանի մթնոլորտը փոխելու համար, եւ դա ինձ հաջողվեց:

Ս.Խաչատրյանը միաբանեց բոլորին, եւ այսօր քաղաքի մարդկանց բնորոշը միաբանությունն է, միասնական մտածելակերպը ու գործելակերպը, նույն մեխիստիկան: Եվ քանի որ հենց ինքը՝ քաղաքապետը, գործում է սղոցի եւ ոչ թե ուրագի հոգեբանությամբ, քաղաքում օր-օրի ավելանում է բարեգործական ձեռնարկումների թիվը, հոգուտ դպրոցի, մանկապարտեզի, սոցիա-

լապես անապահով խավի, ուսանողի, հիվանդի: Քաղաքի մանկավարժները գիտեն՝ ուսուցչի օր է, քաղաքապետը հոգալու է այդ մասին եւ հավաքագրելու է Գորիսի բովանդակ ուժերը՝ ֆինանսական առումով, նոր տարի է, դպրոցի, մանկապարտեզի երեխան պիտի մկեր ստանա: Ջարմանում ես, ինչպե՞ս է հասցնում այդքանը քաղաքապետը, Սյունիքի երկրապահների մարզային խորհրդի նախագահը, Ազգային ժողովի պատգամավորը: Քաղաքում, ենթամարզի գյուղերում, ում տանը դժբախտություն է, նա պիտի գնա, սփոփի, ուրախության դեպքում էլ ուրախությունը կիսի:

Իսկ ամիսներ առաջ, գիշեր-ցերեկ, Մուխուրթունյան-Գորիս ինքնահոս ջրատարի շինարարությունում էր: Դրա կառուցման յուրաքանչյուր սանտիմետրը հսկում էր: Այն օրերին թե ուզում էիր Ս.Խաչատրյանին հանդիպել, պիտի գնայիր ջրատար: Ջրատար տանող ճանապարհը մաշվել էր նրա ոտքերի տակ: Գորիսի համար օրախնդիր հնչեղություն ունեցող կառույցն արդեն գործարկվել է: Սակայն քաղաքի ներքին ցանցը, որ կառուցվել է շատ տարիներ առաջ, խախտ է. քաղաքապետը մի բան կմտածի, ասում է ժողովուրդը, մի ծրագիր կհաստատի այդ ուղղությամբ: Փառք Աստծո, արտասահմանյան կազմակերպությունները սիրով են համագործակցում Գորիսի հետ, որովհետեւ Գորիսը այդ գործում դասական օրինակ է ցույց տալիս:

– Այսօր, երբ կազմավորվել է հայոց

ազգային բանակը, ո՞րն է երկրապահի դերը, – հարցնում եմ եկեղեցի կառուցած, պատերազմի, 1997թ. աննախադեպ հեղեղների հետքերը վերացրած Ս.Խաչատրյանին:

– Այն եղել է ու կա: Սյունիքի երկրապահը հայրենիքին անասելի ծառայություն է մատուցել՝ գոց պահելով հայոց հարավային սահմանը:

II Աստված չանի, եթե նորից պատերազմ լինի, Սյունիքի երկրապահը առանց կանչի, հոգու մղումով սահման կնետվի, կլինի առաջին գծում, եւ 18-20 տարեկան նորաթուխ զինվորները, հանձին նրա, հզոր մի ուժ կունենան՝ մանավանդ բարոյական տեսանկյունից:

... Գորիսում ծառերը հարսնացել են, քաղաքը պոնկե-պոնկե լցված գարնան գույների խաղաղ հեքով ու նեղմ ծփանքով, բարին ընկած, ժամանակների միջով, հաստատուն, գալիքի այցետոմսով հավերժության ճամփան է ելել՝ նաեւ շնորհիվ իր Սուրիկ տղայի, որ ցանկանում է աշխարհի կենտրոնն էլ Գորիսը դարձնել:

– Իբր այդպես չէ, – ծիծաղելով ասում է նա, – աշխարհի բոլոր երկրներում քույր քաղաքներ ունենք, աշխարհի բոլոր անկյուններից Գորիս են գալիս: Աշխարհի բոլոր ճանապարհները Գորիս են տանում:

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

«Մեր վաղը արդեն սկսվել է...»



ՍՈՒՍԱՆԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Սուրեն Սերյոժայի Խաչատրյան: Ըստ արեւելյան կենդանակերպային հորոսկոպի՝ ծնվել է Առյուծի համաստեղությունում, 1956 թվականին: Նույն աղբյուրի վկայությամբ, Առյուծը կենդանակերպի համաստեղության կենտրոնական դեմքն է: Բուռն խառնվածք ունի՝ ընդունակ է խիզախության: Իշխող բնավորության հետ միաժամանակ բարի է: Ամենից շատ ապշում է մարդկանց դավաճանությունից: Պատգամավորների Գորիսի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ է ընտրվել 1994 թվականի հունիսի 3-ին: Ներկայացված հարցազրույցը իշխանության ներկայացուցչի եւ լրագրողի խոսակցություն է՝ առանց որեւէ ենթատեքստի:

Դուք քաղխորհուրդ եկաք՝ թողնելով գումարտակի հրամանատարի պաշտոնը: Ձեզ գիտեինք իբրեւ ազգային ազատագրական շարժման կռվող մարտիկ: Ի՞նչը քաղխորհուրդ բերեց Ձեզ:

– Մի մտածեք, թե անհամեստություն է ասածս, բայց մարդիկ, ովքեր ամեն առավոտ հանդիպելով ինձ, իմ օգնությունն էին ակնկալում ինչ-որ հարց լուծելու համար: Չգիտեմ, գուցե պատճառն այն է, որ ես նախընտրում եմ առաջադրված խնդիրը իրականացնել կոնկրետ գործով, առանց քաշքշուկի: Կողմ եմ գործնական գործելաճիհն, եւ երեւի դա վստահություն է ներշնչում:

– Սուրեն Խաչատրյան մարդը՝ առանց ստեղծված իրապատում կամ հրաշապատում լեզունդների:

– Ես սիրում եմ գորիսեցուն: Աշխարհում ոչնչի եւ ոչ մեկի հետ չեմ փոխի Գորիսը: Չեմ էլ համեմատի երբեք: Տարիներ առաջ, երբ Ռուսաստանում էի, առանձնակի տագնապ ունեի ինձ շրջապատող գորիսեցիների անվտանգության հանդեպ: Հետո այստեղ արդեն, մեր սահմաններում, երբ կռվում էինք, խրամատի իմ մարտիկները հիմնականում սակավ ապահովված ընտանիքներից էին: Նրանցից յուրաքանչյուրի ճակատագիրը ինձ անհանգստացնում էր: Գորիսեցիներին պաշտպանելու հնարավորություն ունենալը գերագույն հաճույք է ինձ համար: Դա երեւի պայմանավորված է իմ անհանգիստ խառնվածքով:

– 1991-1994թթ. Գորիսում երեք անգամ փոխվել են քաղաքային իշխանությունները: Ի՞նչ է շահել դրանից գորիսեցին եւ որն է եղել նրանց գործունեության տարբերությունը:

– Ինչ է շահել կամ կորցրել, դժվարաբանում եմ ասել: Գուցե շահել է, որ ժամանակի հետ իրեն ֆիզիկապես ապահով է գզացել:

Պակասել է գործնականությունը:

– Այսօրվա տեղական իշխանության ընտրությունից հետո անցել է ութ ամիս: Ո՞րն է անցած ժամանակաընթացքում Գորիսի համար արված ամենակարեւոր գործը:

– Հետաքրքիր գուզադիպություն է: Այս իշխանությունը ձեւավորվեց բնական աղետից՝ մայիսի 23-ին Գորիսում տեղացած առատ անձրեւներից գրեթե ամմիջապես հետո... Բնության տարերքից՝ հեղեղներից հասած վնասը կազմեց 90 միլիոն դրամ: Եվ բնական է, որ նորընտիր իշխանության օրախնդիրը պիտի դառնար քաղաքային տնտեսության վնասված հատվածի վերականգնումը: Ասել է, թե գետը չհասած, ստիպված բռնիկացանք:

Չնախատեսված ծախսը ակնկալել, առանց այն էլ ֆինանսական սուղ միջոցներ ունեցող կառավարությունից, անօգուտ կլիներ: Եվ համարյա տեղական միջոցներով վերացվեցին բնական աղետի հետեւանքները: Աշխատատար էր եւ զգալի գումար պահանջվեց մանավանդ Սաթյան փողոցի հենապատի (30 մ երկարությամբ) նորոգման համար: Կարեւոր խնդիր էր նաեւ Վարարակն գետի առափնյա հենապատի փլուզման վտանգի կանխումը: Քիչ ջանք չպահանջվեց Գորիս գյուղ տանող ճանապարհի բարեկարգումը: Շինարարները՝ քաղխորհրդի շինվարչության կառուցողները, ստիպված եղան 100 մ երկարությամբ տեղափոխել գետի հունը: Հեղեղներից վնասվել էին նաեւ ջրմուղ-կոյուղու գծերը: Անհրաժեշտություն եղավ կառուցելու 300 մ կոյուղու գիծ:

Քաղխորհրդի կողմից իրականացվող կարեւոր գործ է նաեւ նախկերթաբանների համարյա շուրջտարյա գործունեության ապահովումը: Չմռան սկզբին վտանգ կար, որ այդ հիմնարկները կարող են փակվել, բայց առանձին մարդկանց անձնական նախաձեռնությամբ, հովանավորությամբ հնարավոր դարձավ դրանց գործունեությունը շարունակել:

– Այդ աշխատանքների կատարման կարեւորումը նշեցիք անցյալով: Պիտի ենթադրել, թե քաղաքային խորհուրդը այսօր այլ կարեւոր խնդիրներ է իրականացնում:

– Բնական է: Արդեն այնքան է ասվել եւ գրվել քաղաքային տնտեսության հիմնահարցը դարձած Ձույզ աղբյուրից Գորիս ինքնահոս ջրատարի կառուցման մասին, որ մնում է սկսել շինարարական

աշխատանքները: Ուզում եմ ավելացնել, որ ըստ նախագծի, բավական մեծ գումար է անհրաժեշտ այդ կառույցի համար, ուստի դիմել ենք «Հայաստան» համահայկական հիմնադրամին նրա աջակցությունը ստանալու եւ հիմնադրամի միջոցներով շինարարությունն իրականացնելու համար:

Հույս ունեմ, որ մոտ ապագայում գորիսեցին, որ չնայած յուրահատուկ վերաբերմունք ունի առ աստված, վերջապես աղոթատեղ կունենա, կավարտվի եկեղեցու գմբեթի կառուցումը:

Գործունեության լայն շրջանակներ է թելադրում նաեւ քաղաքի նոր գլխավոր հատակագիծը:

– Խոսելով քաղաքային տնտեսության մասին, զոնե պիտի արձանագրել, որ Գորիս քաղաքի արդյունաբերությունը, շինարարությունը, մշակույթը գտնվում են կաթվածահար վիճակում:

– Խիստ ու ծայրահեղ բնորոշում է, բայց փաստ է, որ արդյունաբերական ձեռնարկությունները չեն աշխատում: Չշահարկելով էներգետիկ ճգնաժամը, տնտեսական շրջափակումը, ուղղակի պիտի ասել, որ ոչինչ չի ձեռնարկվում թողարկված արտադրանքի իրացման տեսականին փոխելու ուղղությամբ: Գորիսում արտադրվող արտադրանքի ներքին ճգնաժամը հաղթահարելու նպատակով քաղաքի ցածր մասերում ստեղծվել է մի ձեռնարկություն, այսպես ասած՝ բազա (այն գրանցված է պետական ռեգիստրում), որը զբաղվելու է թողարկվող տեսականու իրացմամբ: Արդյունաբերության հետագա զարգացման գործում կարելու էր կիսադա սեփականաշնորհումը եւ, որ ավելի կարելու է, ձեռնարկությունների տնօրենների անհատական ձեռներեցությունը:

Մշակույթի մասին ասվածի հետ համահիտ չեն:

– Տարիներ առաջ Գորիսը զբոսաշրջիկների քաղաք էր, եւ որքան էլ այդ մասին ցանկություններ են եղել, տեղական բյուջեն չհարստացավ այդ աղբյուրով:

Հի՞ նախատեսվում, արդյոք, չօգտագործված այդ ռեզերվի ներդրումը:

– Երբ հանրապետության այլ վայրերում խոսվում է Գորիսի մասին, նախ վկայակոչվում է պատերազմը: Բնության հրաշքներով զմայլվելու ցանկությունը հազիվ թե զորեղ լինի անձնական տագնապից: Ժամանակի հետ անպայման երկարատեւ խաղաղություն (ինչու եւ ոչ՝

հավերժական) կհաստատվի եւ, համոզված եմ, մարդիկ Գորիս գալու համար ուղեգրեր կփնտրեն: Եվ եթե նոր «հեղեղներ» չլինեն, հեռանկարում տեսնում եմ նաեւ Գորիսում մանկական հանգստյան տան կառուցում: Ես ինձ պարտավորված եմ զգում մանավանդ զոհված ազատամարտիկների երեխաների ճակատագրով:

– Երբ Դուք առաջադրվեցիք քաղաքային խորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ, շատ էր խոսվում ենթադրվող կադրային կտրուկ քաղաքականության մասին:

– Ջարմանալի է, որ մասնավորեցում եք առաջին տեղակալի, այլ ոչ թե իշխանության վարած քաղաքականությունը: Ինչ որ է: Իմ կարծիքն այն է, որ մասնագիտական հմտություններով հանդերձ, կարելու էր մարդու գործնական խառնվածքն է, ցանկությունը: Թեկուզ օբյեկտիվ պատճառաբանություններով, չարածը չարդարացնելու ունակությունը: Մեկ սկզբունք եմ տեսնում. Գորիսի համար ինչ-որ բան անելու կարողություն:

– Շա՞տ չեն արդյոք անհնարինը ակնկալում սեփականաշնորհումից: Ըստ ձեզ, ո՞րն է սեփականաշնորհման արդարության պահպանման սկզբունքը:

– Եթե ասում ենք շուկայական հարաբերությունների ենթադրյալ, միանշանակ է, որ հույսներս էլ սեփականաշնորհման վրա դնեք: Իսկ արդարության պահպանման սկզբունքը, այնպես, ինչպես ընկալվում է՝ լիովին հնարավոր չէ: Ինչ-որ բան տալիս, առնելիս անպայման մեկը շահում է ավելի, մյուսը՝ քիչ: Բոլոր դեպքերում սեփականաշնորհման քաղաքականությունը պիտի նպատակամղվի ընդհանուրի շահերի պաշտպանմանը: Թող մեկը քիչ ավելի ունենա, բայց կարողանա ապրեցնել նաեւ մյուսներին:

– Ո՞րն է գորիսեցու անվտանգության այսօրվա երաշխիքը:

– Կարծում եմ նկատի ունեք ներքին անվտանգությունը: Անիշխանության լիիրավ բացառումը եւ համագործակցությունը իրավապահ մարմինների հետ:

– Ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ Գորիսի համար ցավոտ հարց է արտագաղթը: Ոմանք մեկնում են ընտանիքներով, ոմանք՝ միայնակ: Պարզ է, զնում են կարիքից դրդված, թեկուզ ավելի լավ ապրելու ցանկությամբ, բայց զնում են: Տագնապ չէ՞ք տեսնում վաղվա Գորիսի համար:

– Ի՞նչ է, հայրենասիրության ճա՞ռ պիտի ասեն: Գնալը՝ ինչ խոսք, ցավալի

երեւոյթ է, բայց անհանգստանալու հիմք չեմ տեսնում: Նա, ում բացակայությունը զգացվում է այս քաղաքում, միեւնույն է, վերադառնալու, ապրելու է Գորիսում, իսկ ով չի գա՝ նշանակում է կարող է եւ առանց Գորիսի: Աստված նրա հետ: Իսկ այսօր կարելու է, որ ամեն գնացող այստեղ՝ այս քաղաքում, զոնե մեկ ընտանիք է պահում, զոնե այս կամ այն կերպ հոգում է մեկի կարիքները: Ժամանակը կհստակեցնի ամեն բան:

– Ի՞նչ է այսօր պակասում Գորիսին:

– Հոգով ուժեղ մարդիկ, ովքեր ինչ-որ տեղ արկածախնդրության հասնող եռանդով գործ կկատարեն Գորիսի համար: Ամեն ինչ պայմանավորված է իմ, քո, նրա ցանկությամբ, կամքով: Մի՞թե չի ձանձրացնում շարունակել վկայակոչել հանրապետական, զուցե եւ համընդհանուր սուբյեկտիվ պատճառաբանությունները: Մինչեւ 1995 թվականը ինձ թվում է մենք մի մակարդակի վրա էինք, որ զրոյից էլ ցածր էր, սկսվել է համազգային վերելքի ժամանակը: Միայն թե կազմավորված իշխանության, նրա ներկայացուցիչներին չչարունակեն քննարկման թեմա դարձնել, չձգտեն իշխանավորին տեսնել այնպես, ինչպես իրենք են կամենում:

Կյանքը ցույց կտա, որ ես իրավացի եմ, եւ մեր վաղը արդեն սկսվել է:

– Արժե՞ նախանձել քաղխորհրդի նախագահի առաջին տեղակալին:

– Միայն նրանով, որ ես ամեն օր, ամեն ժամ ապրում եմ համաքաղաքացիներիս կյանքով:

– Լինել քաղաքի իշխանության առաջատար դեմքերից, նշանակում է պատասխանատու լինել նաեւ քաղաքի ներքին կյանքի համար: Երբեւէ քայլո՞ւմ եք Գորիսի փողոցներով: Գնումներ կատարո՞ւմ եք:

– Թող քաղաքի կենտրոնում ինձ հաճախակի հանդիպողները վկայեն: Իսկ զնումները, միշտ էլ այն կարծիքին եմ, զուտ կանացի գործ եմ:

– Արդեն գարուն է...

– Ռոմանտիկայից հեռու մարդ եմ, բայց գարունը միշտ էլ հույս է ներշնչում: Չեմ ուզում պատրանքներով խաբել գորիսեցիներին, որոնց պարտական եմ իմ ունեցած ամեն ինչի համար: Եթե ինձ հաջողվի ապացուցել իմ սերը Գորիսի նկատմամբ, ինձ մեծապես երջանիկ կզգայի: Անկախ նրանից, թե ով հաշվարկի ինչ սիստեմ ունի Սուրիկ Խաչատրյանին գնահատելու համար:

«Ջանգեզուր»

№5 (7243), 2 մարտի 1995թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Նա արժանացել է ժողովրդական հարգանքի, իսկ դա ամենամեծ գնահատությունն է



ԱՐՏՈՒՇ ԴՈՒԿԱՍՅԱՆ

Գործիսի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գործիսի պետական համալսարանի աշխատակազմի եւ ուսանողության անուկից շնորհավորում եմ Սյունիքի հարգարժան մարզպետ, Գործիսի պետական համալսարանի կառավարման խորհրդի նախագահ Սուրեն Խաչատրյանին՝ վաստակած հոբելյանի առթիվ եւ ի սրտե ուղղում նրան գնահատանքի իմ անկեղծ խոսքը:

Սուրեն Խաչատրյանի հանրանվեր ու օգտաշատ գործունեությունը գնահատելը դյուրին է ու պատվաբեր, քանզի ստիպված չես դիմելու հերթապահ խոսքերի՝ պարզապես պաշտոնահարգությունից դրդված: Հարգանք ու հիացումսրանք են այն գլխավոր զգացումները, որ ունենում ես Սուրեն Խաչատրյանի անվանում ու գործին առնչվելիս:

Նա մարդու, ղեկավարի այն տեսակն

է, որ ձգտում է ամեն կերպ արդարացնել հասարակության սպասումները, եռանդալից մղվել ստեղծարար աշխատանքի եւ կերտել հնավանդ լեռնաշխարհի պատմության այն շրջափուլը, որ իրեն է վստահված, իր հմուտ ու բազմափորձ գործելակերպին: Ս.Խաչատրյանի կենսագրությունը հայրենի երկրին անձնվիրաբար ծառայելու հրաշալի օրինակ է, նա իր կատարած լայնածավալ, ազգօգուտ աշխատանքներով իրապես վաստակել է համերկրացիների հարգանքն ու վստահությունը:

Հայրենի Սյունիքը Սուրեն Խաչատրյանի համար, կարելի է ասել, կյանքի ամենամեծ ազդակն է, եւ ինքն էլ, երկրորդելով Նժդեհի խոսքը, հաճախ է հիացմունքով կրկնում ու հավատացնում բոլորին, թե «Հայ լինելը պատիվ է, սյունեցի լինելը՝ տիտղոս»: Իր հոգեկերտվածքը, խոսքի ու գործի արմատները անխաղճիորեն կապված են ծննդավայրի ու հայրենիքի հնարմատ կենսագրությանը:

Վաղուց ծանոթ լինելով Սուրեն Խաչատրյանին, տեսնելով ու արժեւորելով նրա բազմարդյունք գործունեությունը՝ պետք է հավաստեմ, որ Սյունիքի մարզպետի պաշտոնը զբաղեցնելու առաջին իսկ օրերից նա կարողացավ մարզում բարձրագույն կրթության ոլորտը բարեփոխելու օրախնդիր ազդակներին հաղորդական լինել՝ իրագործելով առավելագույն պահանջներ մերկայացնող այնպիսի կենսաշահ ծրագրեր, որոնք էապես ներազդեցին բնակչության կրթաուսումնական մակարդակի բարձրացման, հոգեւոր ու մշակութաբանական արժեհամակարգի ձեւավորման վրա:

Գործիսի պետական համալսարանը, լինելով բարձրագույն կրթության առաջատարը մարզում, մշտապես եղել է Սյունիքի մարզպետի ուշադրության ու գործնական հոգածության կենտրոնում:

Տարիների ընթացքում գործելով ՀՀ հեղինակավոր ուսումնական հաստատությունների համակարգում՝ բուհն անցել էր բարձրագույն կրթության բարեփոխումների հիանալի դպրոց, կուտակել էր բուհական համակարգի գործունեության հսկայական փորձ: Բուհի ստեղծումը, բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներով տարածաշրջանն ապահովելուն զուգընթաց, ի սկզբանե նպատակ է հետապնդել տարածաշրջանից երիտասարդության արտահոսքի կանխման, Արցախի հետ կապի ամրապնդման եւ բնակչության հասարակական-քաղաքական գիտակցության ակտիվացման: Կենսունակ ու ներգործուն ավանդույթներ ունեցող կրթօջախի հիմքի վրա Սյունիքի մարզպետի անմիջական նախաձեռնությամբ ու առաջարկությամբ 2006 թվականին ստեղծվում է «Գործիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ որպես ինքնուրույն բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համալսարանի կարգավիճակով:

Նորահաստատված համալսարանի կառավարման խորհրդի նախագահ է ընտրվում Սուրեն Խաչատրյանը, ով, գիտակցելով իր հանձնառությունն ու պատասխանատվությունը հանրության ու բուհի առաջ, սկսում է լայնածավալ կրթական բարեփոխումների գործընթաց՝ նպատակաուղղելով համալսարանի գործունեությունը ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարող որակյալ կրթության ապահովմանը: Հետեւում են բազմաշերտ բովանդակային փոփոխությունները եւ դրանցից բխող մարտահրավերները, որոնց այսօր էլ փորձում է դիմակայել համալսարանը:

Կարծում եմ՝ համալսարանի ստեղծումը մարզի զարգացման համար ռազմավարական նշանակությամբ կարեւոր ծրագիր էր, որ ենթադրում էր կարճ ժամանակում ձեռք բերել պետական կրթական հաստատության կայուն վիճակ, մրցունակության բարձր մակարդակ, այսինքն՝ առաջատար դիրք տարածաշրջանի այլ բուհերի նկատմամբ, պրոֆեսորադասախոսական կազմի բավարար

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ



տեսակարար կշիռ, կրթական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, գիտահետազոտական գործունեության զարգացման բարենպաստ պայմաններ եւ այլն: Ի պատիվ Ա.Խաչատրյանի ու համալսարանի ղեկավարության՝ պետք է նշեն, որ համալսարանը, ազգային լավագույն ավանդույթների ու միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ապահովելով կրթության մատչելիությունն ու հասանելիությունը, ձգտեց գերազանցության եւ ունեցավ ռազմավարական ծրագրերին համապատասխանող առաջանցիկ զարգացում:

Այսօր ԳՊՀ-ն համազգային ու տարածաշրջանային դերակատարությամբ կրթական ու գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որ ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալ-տնտեսական, մշակութային բազմազան ու բազմանույթ գործունեություն պայմանավորված՝ վերագնահատում ու վերանայում է իր դերն ու պատասխանատվությունը, փորձում է մեծացնել իր մրցակցային առավելություններն ու ներուժը: Այսօր էլ Ա.Խաչատրյանը համալսարանի կողքին է, ղեկավարում է համալսարանի խորհուրդը՝ ջերմեռանդ պարտապանի նման իր ուսերին կրելով բուհի բազմապիսի խնդիրները:

Ա.թ. հունիսի 10-ին ԳՊՀ-ի խորհրդի նիստում ընտրվելով ռեկտորի պաշտոնում եւ ստանձնելով բուհի ղեկավարությունը՝ կազմել է խորհրդի քննարկման են ներկայացրել համալսարանի

զարգացման ու բարեփոխման հայեցակարգ՝ դիմագրավելու ներկա ժամանակաշրջանում բուհի համար ոչ շահեկան մի շարք գործոնների ազդեցությանը, որոնց թվում են՝ ուսանողների թվաքանակի ու ֆինանսական ռեսուրսների նվազումը, աշխատակազմի թույլ մոտիվացիան՝ պայմանավորված սոցիալական իրադրությամբ, երիտասարդ մասնագետների գիտական գործունեության ոչ գրավիչ դիրքը եւ այլն: Այս եւ այլ խնդիրները տարբեր հանդիպումների ընթացքում քննարկվում են մարզպետի հետ, ով ջանք չի խնայում՝ բարենպաստորեն լուծելու դրանք կամ լուծման ուղիներ կանխագծելու:

Իմ անդրադարձն ամբողջական չի լինի, եթե չմատնանշեն Ա.Խաչատրյանի մշակութամեթոդ գործունեությունը: Մարզպետի աշխատանքը չի սահմանափակվում միայն մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական հրատապ խնդիրների վերաբերյալ անհրաժեշտ մոտեցումներով: Նրա ուշադրության կենտրոնում են ամենամայուն, ամենակարեւոր ու կայուն արժեքները՝ արվեստը, մշակույթն ու գիտությունը: Նա մշտապես գրույցի մեջ է մտավորականության, երիտասարդության հետ, մեծ աշխատանք է տանում մարզում հոգեւոր-մշակութային արժեքների ստեղծման, պահպանման համար, զննահատում ու խրախուսում է գիտնականներին, երիտասարդ կարող ուժերին՝ մարզի հետագա գիտամշակութային զարգացումն ապահովելու, նրանց մասնագիտական

գիտելիքները մարզի տնտեսության մեջ, հետազոտական ու կրթական գործընթացներում օգտագործելու, հասարակության կրթական ու մշակութային մակարդակը բարձրացնելու համար:

Ահա թե ինչու Ա.Խաչատրյանին, ինչպես նաեւ մեզ բոլորիս խորապես մտահոգում է Գորիսի պետական համալսարանի վարկանիշի բարձրացումը հանրապետական ու տարածաշրջանային կրթական համակարգում: Նա, կարելի է ասել, կենդանի դպրոց է, որ հանրության մեջ փորձում է ձեւավորել բարձրաշահմանիչ կրթական արդյունքներով, մշակութային գիտակցությամբ ու հոգեւոր արժեքներով աշխարհին ներկայանալու մղումներ ու մտայնություն: Ինձ միշտ գրավել է նրա մարդկային ու քաղաքացիական առողջ դիրքորոշումը՝ մեր բոլորի ապրած դժվարին տարիների բարդ ու ճակատագրական գործընթացների մեկնաբանման, դրանց լուծման ուղիների որոնման հարցերում: Միշտ լավատես է, հավատում է ժողովրդի հոգեւոր միասնությանն ու հավաքական ուժին եւ համոզված է, որ Արցախի համար ներդրության այս շրջանն էլ կանցնի, ազգը խորքերից իր ուժը կհանի ու կհաղթի:

Արտակարգ մի անձնավորություն, որի ուշագրավ ծրագրերը, մտահղացումները հաճախ անիրագործելի են թվում, բայց զարմանալի կերպով գրեթե միշտ իրագործվում են՝ շնորհիվ իր գերազանցորեն կազմակերպված նկարագրի, կենսական երեւույթների ու մարդկային հարաբերությունների խոր ճանաչողության:

Հաճելիորեն զարմանում ես, թե ինչպես է նա կարողանում առանց արդարացուցիչ նախապայմաններ փնտրելու, բանաստեղծի խոսքով ասած, իր «հեւասպառ, բազմաժխոր առօրյայի» մեջ լինել բոլորի կողքին՝ եւ հասարակ գյուղացու, եւ ուսուցչի, եւ զինվորի, եւ մտավորականի, եւ գրողի ու արվեստագետի, բոլորի:

Առողջ ու ստեղծարար տարիներ մաղթենք Սուրեն Խաչատրյանին՝ ի շահ Սյունյաց աշխարհի բարգավաճման, մեր համալսարանի կայուն զարգացման, մարզի համար բազմաթիվ օգտաշատ ծրագրերի իրականացման:

Նա արժանացել է ժողովրդական հարգանքի, իսկ դա արդեն ամենամեծ գնահատությունն է: ■

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Կրթության ուղորդի Նվիրյալը



ԼԵՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀԱՊՅ Կապանի մասնաճյուղի
տնօրենի Ժ/պ, մանկ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Համամարդկային ընդունելի արժեքներ դավանող յուրաքանչյուր մարդու համար, կարծում եմ, ամենապատվաբեր զգացումներից մեկն ազգի եւ սեփական ժողովրդի կողմից պահանջված լինելու զգացումն է: Ամեն մեկին չէ, որ բախտ է վիճակվում լինելու պահանջված իր ազգի եւ իր ժողովրդի կողմից: Այդ պահանջված անհատականություններից մեկը, իմ խորին համոզմամբ, Սուրեն Սերյոժայի Խաչատրյանն է:

1980-ական թվականների վերջերից սկսված, այնուհետեւ մեզ պարտադրված պատերազմի ժամանակ, երբ՝

առանց չափազանցության, վճռվում էր մեր ժողովրդի, իսկ առաջին հերթին՝ արցախահայության եւ Սյունյաց աշխարհի բախտը, ասպարեզ եկան մարդիկ, ովքեր, կարծես, հենց այդ ժամանակաշրջանի համար էին ծնվել: Դրանցից մեկը Սուրեն Խաչատրյանն է: Արցախյան պատերազմում եւ մեր սահմանների պաշտպանության ժամանակ նրա գործունեությանը ճիշտ կլիներ ավելի ծավալուն անդրադառնալ: Պարզապես հարկ եմ համարում մշել, որ ժամանակի հրամայականով Գորիսում ձեւավորված եւ նրա հրամանատարությամբ գործող զորախումբն այդ դժվարին ժամանակահատվածում պատվով է կատարել իր առաքելությունը:

Պատերազմական տարիներին ընտրվելով Գորիսի քաղաքապետ՝ նա կարողացավ սահմանների պաշտպանության հետ միասին համատեղել համայնքի ղեկավարման գործը, իսկ հետագա տարիներին՝ նոր պայմաններում, երբ նորանկախ պետության ամեն մի համայնք իր խնդիրների մեծ մասը լուծում էր գլխավորապես իր ուժերով, Գորիս քաղաքի համար լուծել է այնպիսի խնդիրներ, որոնք իրենց լուծումը չէին ստացել նույնիսկ խորհրդային՝ տնտեսապես ավելի բարվոք համարվող տարիներին:

Սուրեն Խաչատրյանն աչքի է ընկել նաեւ պատգամավորական իր գործունեությամբ: Ազգային ժողովի պատգամավոր լինելու տարիներին նա կարողացավ օրենսդրական գործունեությունից բացի անմիջական մասնակցությունն ունենալ Սյունիքի մարզում իրականացվող ամենատարբեր ծրագրերին, շատ դեպքերում՝ նաեւ նախաձեռնել դրանք:

Սուրեն Խաչատրյան քաղաքական գործչի եւ ղեկավարի գործունեության մի կարեւորագույն էջ սկսվում է 2004 թվականից, երբ նա ստանձնեց ՀՀ Սյունիքի մարզպետի պաշտոնը: Անվիճելի իրողություն է այն, որ ավելի քան տասը տարիների ընթացքում այդ պաշտոնում կարողացավ եւ այժմ էլ շարունակում է ծառայել իր ժողովրդին, իր մեծագույն նպաստը բերել մարզի տարբեր բնագավառների զարգացմանը: Իսկ բոլորովին վերջերս, երբ մեր թշնամին նախաձեռնեց եւ սկսեց ապրիլյան ավանտյուրան, մենք նորից տեսանք Արցախում գտնվող Սուրեն Խաչատրյան հրամանատարերկրապահին:

Որպես մտավորական առանձնակի կարեւորում եմ նրա նվիրվածությունը կրթության բնագավառին: Քաջ գիտակցելով, որ մեր երկրի ապագան մեծապես պայմանավորված է ներկա եւ վաղվա սերունդի մտավոր կարողությամբ, մասնագիտական կրթությամբ, հայրենիքի հանդեպ ունեցած նվիրվածությամբ, ամեն ինչ անում է Սյունիքի մարզի բոլոր կրօջախների՝ լինի դա մանկապարտեզ, դպրոց, քոլեջ թե բարձրագույն կրթական հաստատություն, պահպանման եւ շարունակական զարգացման ուղղությամբ: Նրա անմիջական մասնակցությամբ եւ հովանավորությամբ տարբեր տարիների կազմակերպվել եւ այժմ էլ կազմակերպվում են գիտագործնական, ուսումնամեթոդական եւ հայրենասիրական ամենատարբեր միջոցառումներ:

Սուրեն Խաչատրյանն այն եզակի անհատներից է, որ անսահմանորեն նվիրված է իր հող ու ջրին, իր լեռնաշխարհին: Կարծում եմ՝ պատահական չէ, որ զերազանց տիրապետում է Սյունիքի պատմությանը եւ ուզածդ պահին ամենայն մանրամասնությամբ կարող է վերլուծել վաղ ժամանակներից սկսած եւ մինչեւ մեր օրերը հասնող ամեն մի պատմական իրադարձություն:

Սրտանց, մեծագույն հարգանքով եւ պատվով շնորհավորում եմ Սուրեն Խաչատրյանին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջառողջություն, երկար տարիների խաղաղ ու երջանիկ կյանք, որ միշտ շրջապատված լինի իր ընտանիքով, իրեն գնահատող մարդկանցով: Ցանկանում եմ բեղմնավոր գործունեություն իր շատ պատասխանատու պոստում՝ ի շահ մեր ժողովրդի եւ Սյունյաց աշխարհի: ■

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՎ ՎԱՍՏԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Այունյաց աշխարհի պես փոկունն եւ ամրակունռ



ՎԻԿՏՈՐՅԱ ՂԱՎԹՅԱՆ

Այունիքի մարզպետի օգնական,
ՀՀԿ Այունիքի տարածքային
կազմակերպության կանանց
խորհրդի նախագահ

Հիշում եմ 2008թ. Սուրեն Խաչատրյանի ոգեւորությունը, երբ նախածեռնեց մարզի Տաթև անունով երիտասարդ աղջիկների մկրտության արարողությունը: Իսկ նպատակը մեկն էր՝ երիտասարդներին հեռու պահել զանազան աղանդներից, դաստիարակել նրանց Հայ առաքելական եկեղեցու դարավոր ավանդույթներով:

2004թ.-ից սկիզբ առած մեր ծանոթությունը հետագայում վերածվեց ամուր ընկերության եւ բարեկամության, իսկ այս տարիների ընթացքում միասին կյանքի կոչած ծրագրերն էլ ավելի ամրապնդեցին միմյանց հանդեպ ունեցած մեր վստահությունն ու հարգանքը:

Կարեւորելով կնոջ, ընտանիքի դերը հասարակության, պետականության առաջընթացի գործում՝ նա մշտապես ուշադրության կենտրոնում է պահում նրանց վերաբերող խնդիրները եւ հնարավորության դեպքում լուծում տալիս դրանց: Ընտանիքի, երեխաների իրավունքների պաշտպանության օրերին նվիրված միջոցառումները, ուսուցիչների, ինչպես նաեւ տարբեր բնագավառներում աչքի ընկնող կանանց մեծարման երեկոները շնորհիվ մարզպետ Սուրեն Խաչատրյանի դարձել են ավանդական ու սպասված տոնակատարություններ բոլորի համար:

Մարզում բազում սոցիալական ծրագրեր իրականություն են դառնում նաեւ նրա տոկունության, կամային ուժեղ հատկանիշների, հաստատականության, ինչու չէ՞, համառության շնորհիվ: Հայրենի բնաշխարհի, հայրենիքի հանդեպ ունեցած սերն ու նվիրվածությունն ինչ-որ առումով վարակիչ են նաեւ շրջապատի մարդկանց համար: Եվ պա-

տահական չէ, որ թե՛ 1990-ական թվականների Արցախյան պատերազմի, թե՛ ապրիլյան վերջին իրադարձությունների ժամանակ նա ամուր կանգնած էր հայրենիքի սահմաններին:

Մատաղ սերնդի դաստիարակության գործում կարեւորելով կրթօջախի դերակատարությունը՝ նա մշտապես հորդորում է հատկապես բարձր մակարդակի հասցնել ռազմահայրենասիրական դաստիարակությունը, քանզի վաղվա զինվորը պետք է ոչ միայն բազկով ուժեղ լինի, այլեւ մտքով ու ոգով:

Բացի բազում քաղաքական, հասարակական ծրագրերի իրագործումից՝ մարզպետ Սուրեն Խաչատրյանը նպատում է մարզում մշակութային կյանքի զարգացմանը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով երիտասարդության գեղագիտական դաստիարակությանը: Այդ են վկայում տարվա ընթացքում կազմակերպվող հոբելյանական տարբեր միջոցառումները՝ նվիրված մարզի երեւելի հոգեւոր, մշակութային գործիչներին, մեր պետականության կազմավորման կարեւորագույն իրադարձություններին՝ Բակունցյան, Սահյանական, Խանգաղյանական, Այվազյանական օրեր, Գուսան Աշոտին նվիրված համերգներ, Բանակի օր, Անկախության տոն եւ այլն:

Ռուս-հայկական համագործակցության շրջանակները լայնացնելու նպատակով՝ նա պարբերաբար նախածեռնում է տարբեր հանդիպումներ, մշակութային միջոցառումներ, որոնք անցնում են ջերմ մթնոլորտում:

Շնորհավոր ծնունդդ, հոբելյար, քեզ ամողջություն, նորանոր հաջողություններ: Թող հայոց երկնականարում մշտապես թեւածի խաղաղությունը, որպեսզի իրականություն դառնան այն բոլոր ծրագրերդ, որոնք կապված են Այունյաց աշխարհի բարեկեցիկ ապագայի հետ: Թող Այունիքի ժողովուրդը մշտապես զգա քո ներկայությունը:



ՃԱԿԵՐԺԱՑԿԵՑ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

ՎԵՐԱՊԱՐՁ



Վազգեն Սարգսյանը ոչ միայն հայոց սպարապետ էր, այլև Արցախյան հերոսամարտի օրերին Արցախին հզոր քիկունք ունենալու համար ստեղծված կառույցի ղեկավար՝ Սյունիքի հարցերով պետնախարար:

2015թ. ապրիլի 2-ին Կապանի Բաղաբուրջ հուշահամալիրում բացվեց Վազգեն Սարգսյանի կիսանդրին:

Ավելի վաղ՝ 2011թ. հունիսի 10-ին, Գորիսի N1 նախադպրոցական հաստատությունը կոչվեց Վազգեն Սարգսյանի անունով:

«**XXI** դարը մերն է լինելու». այս հաստատ համոզմունքն ուներ Վազգեն Սարգսյանը: Ավաղ, նախասահմանված չէր նրան ապրելու եւ իր ծրագրերն իրականացնելու երրորդ հազարամյակում: 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովի դահլիճում պետական ու քաղաքական գործիչը զոհ գնաց ոճրագործի դավադիր գնդակին՝ անավարտ թողնելով բազում մտահղացումներ, որոնց հիմքում ընկած էր հզոր երկրի կառուցման տեսլականը:

Ապրիլի 2-ին մարզկենտրոն Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում տեղի ունեցավ Վազգեն Սարգսյանի կիսանդրու բացման արարողություն, որին մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, քաղաքային եւ գյուղական համայնքների ղեկավարներ, հյուրեր մարզի տարբեր ոստաններից, հին ու նոր երկրապահներ: Հուշարձանը երիզող սպիտակ

ՂԱՎԵՐԺԱՑՎԵՑ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՈՒՆԻՔՈՒՄ



սավանն իջեցնելու պատիվը վերապահվեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, Կապանի քաղաքապետ Աշոտ Չայրապետյանին, Վազգեն Սարգսյանի կրտսեր եղբորը՝ ՅՅ պաշտպանության նախարարի խորհրդական Արմեն Սարգսյանին: Այնուհետև հոգեհանգստյան արարողություն անցկացրեց Կապանի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ Վահան քահանա Չեբոյանը:

«Չայ ժողովրդի զրկանքների ու տառապանքների, հերոսության ու անկյտորում կամքի շնորհիվ սպարապետ Վազգենի առաջնորդությամբ մենք ազատագրեցինք մեր պատմական հայրենիքի Արցախ աշխարհը, Վազգենը հպարտորեն գոչեց. «Ամենակատարյալ ստեղծագործությունն ազատագրված հողն է», – ուրիշ էլ ի՞նչ ասեր, որ արժանապատվորեն ապրած տարիները եւ ասելիքը մնար որպես կարգախոս մի ողջ ժողովրդի համար, – բացման խոսքում ասաց Սյունիքի մարզպետ, ԵԿՄ-ի Սյունիքի մասնաճյուղի նախագահ Սուրեն Խաչատրյանը: Վազգեն Սարգսյան անհատականության, բանակաշինության գործում ունեցած ավանդի, նրա հայրենանվեր գործերի մասին իրենց ելույթներում մանրամասնեցին Երեւա-

նի պետհամալսարանի պրոռեկտոր Արարատ Մալխասյանը, ՅՅԿ Կապանի շրջանային խորհրդի նախագահ Ռոմա Սարգսյանը, երկրապահ կամավորների միության Կապանի բաժանմունքի նախագահ Մանվել Օհանյանը, Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը:

|| «Մարդիկ կատարեցին այս իրաջք գործը, հատկապես Սյունիքում, որտեղ Վազգենը մեծ լուծա ունի զինվորական ու պետական կառույցների կայացման գործում: Ինձ համար մեծ հպարտություն է գտնվել այստեղ եւ շնորհակալություն հայտնել Սյունիքի ամբողջ ժողովրդին», – արարողությունից հետո ասաց Արմեն Սարգսյանը:

Ազգային հերոս Վազգեն Սարգսյանի կիսանդրին կերտել է երիտասարդ քանդակագործ Նարեկ Օրոյանը՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ ու հովհանավորությամբ:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ
«Այունյաց երկիր», N11 (354)
18 ապրիլի 2015թ.

Գորիսի N 1
Նախակրթարանը՝
Վազգեն
Սարգսյանի
անվամբ

Յատկապես 1993-95 թվականներին Վազգեն Սարգսյանի կյանքն ու գործունեությունը մեծ չափով հյուսված էր Սյունիքի, մասնավորապես Գորիսի հետ. այդ ժամանակ նա Սյունիքի հարցերով պետնախարարն էր: Դրանից առաջ եւ հետո էլ առանձնահատուկ հարաբերություններ ուներ մեր երկրամասի հետ, նրա ամեն մի այցը Գորիս իրադարձություն էր: Սովորական համակրություն չէր դա հայոց արեւելքի հանդեպ: Նրա պատկերացմամբ (քանիցս արտահայտվել է)՝ Սյունիք-Չանգեզուրը եղել եւ մնում է հայոց անկախ պետականության հիմնասյուներից մեկը: Նրա պատկերացմամբ՝ հզոր եւ ամուր Սյունիքը եղել եւ մնում է ազատ Արցախի առիվատշյան:

Գորիսում բոլորը՝ մեծից փոքր, ճանաչում էին նրան, ինքն էլ գորիսեցիներին էր ճանաչում: Շատերը նրան գորիսեցի էին կարծում, Գորիսի զավակ համարում, որովհետև պատերազմի ամենադրամատիկ պահերին նա մեր՝ ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած, պատերազմի կրակագիծ դարձած երկրամասում էր:

Նրա պահվածքից հույս ու հավատ էր ճառագում, վաղվա օրվա հանդեպ լավատեսություն էր հորդում: Գորիսի սահմանամերձում դեռ կրակոցները չէին դադարել, երբ նա, երկրի պաշտպանությունը գլխավորելուն ու բանակ ստեղծելուն զուգահեռ, Գորիսում խաղաղ-ստեղծագործ աշխատանքի ձեռնարկումներ էր անում: Դժվարին այդ օրերին, որքան էլ զարմանալի է, Գորիսի մարզահրապարակն էր վերակառուցում եւ այնտեղ, պատերազմող Ղարաբաղի թիմերի մասնակցությամբ, խաղեր անցկացնում: Շրջանա-

ՂԱՎԵՐԺԱՑՎԵՑ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

յին թերթի խմբագրություն, դպրոց ու մանկապարտեզ էր այցելում եւ տիրոջ սրտացավությամբ հարցեր քննարկում: Սյունիք-Արցախ ավտոճանապարհներն էր վերաշինում, տնտեսական կյանքին առնչվող գրեթե բոլոր հարցերի քննարկումներ էր անում՝ պարտադիր կարգով ապահովելով նախարարների, առաջատար գիտնականների մասնակցությունը: Քաղաքային եւ շրջանային խորհուրդների նստաշրջաններում էր ելույթ ունենում, զորահավաքների օրը

ՎԵՐԱ



տոնախմբություն կազմակերպում: Մեր երկրամասի երկարատեւ զարգացման պետական ծրագիր ունենալու մասին էր մտածում եւ հասցրել էր ուրվագծել այդ ծրագիրը: Դա «Սյունիք-Ջանգեզուր» ծրագիրը պետք է լիներ, որը նրանից հետո մոռացության մատնվեց:

Նրա գործիսյան նստավայրը՝ Սղոյի գյուղ կոչվող Քարահունջի ջրամբարի ափին գտնվող բնակչեմքը (նրա գիշերակացի վայրը) յուրօրինակ կենտրոնատեղի էին դարձել եւ Ղարաբաղի, եւ Հայաստանի ղեկավարության համար: Անվտանգության խորհրդի եւ կառավարության նիստեր, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի ղեկավարների հանդիպումներ, պատերազմական շրջանին բնորոշ հավաքներ ու քննարկումներ, դրամատիկ պահեր...

Միգուցեւ պետք էր Գորիսում ավելի վաղ հավերժացնել Վազգեն Սարգսյանի հիշատակը: Միգուցեւ պետք էր այլ

կերպ հավերժացնել նրա հիշատակը: Միգուցեւ այդ հարցին նորից պետք է անդրադառնալ: Բայց... Ներկա պահին ընտրվել է հիշատակի հավերժացման այս կերպը, ինչը, անտարակույս, դրվատելի է: Նաեւ գնահատելի են մարդիկ, որոնց նախաձեռնությամբ Գորիսի N 1 նախակրթարանը հունիսի 10-ին կոչվեց հայոց նորօրյա Սպարապետի անվամբ:

Իհարկե, տեղի ունեցածը կարելի է նաեւ Վազգեն Սարգսյանի նոր վերադարձ համարել, ինչպես եւ վարվում ենք: Սակայն, առավել ճշմարիտ է ասել, որ Վազգենը Սյունիք-Ջանգեզուրի պատմության մեջ հավերժական իր տեղն ունի ի սկզբանե: Եվ թե՛ զուգահեռ անցկացնենք Արցախյան պատերազմի ու 20-րդ դարասկզբի Ջանգեզուրյան գոյակռվի միջեւ, ապա Սյունիքի պատմության մեջ նրա տեղը Անդրամիկ Ջորավարի, Արսեն Շահնազյանի, Գարեգին Նժդեհի կողքին է:

Վազգեն Սարգսյանի հիշատակի հավերժացման օրը Գորիսում, կարելի է առանց չափազանցության ասել, բոլորի շուրթերին Սպարապետի անունն էր: Տարաբնույթ խոսակցություններ եւ հարցեր էին հնչում: Մեկի հարցադրումն առավել արդիական թվաց մեզ. «Ի՞նչ ճանապարհով կգնար երկիրը, եթե Վազգենը մնար ու լիներ»: – Եթե Վազգենը լիներ, ապա երկրի ղեկավարությանն իր իսկ հնչեցրած եւ թեւավոր խոսք դարձած հարցը կկրկներ նախեւառաջ. «Ես ի՞նչ ենք անում, տղերք...», – ասաց Մխիթար Սպարապետի անվան հրապարակում հավաքվածներից մեկ ուրիշը՝ ի պատասխան գրուցակցի հարցադրման: ...Գորիսի N1 մանկապարտեզի անվանակոչության մասին Վահրամ Օրբելյանի հոդվածը՝ 5-րդ էջում:


ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Այունյաց երկիր», N12 (231)
30 հունիսի 2011թ.

ԴԱՐՁ

Երկու հորեյան եւ անվանակոչություն

Գորիսի Մխիթար Սպարապետի անվան հրապարակում աներեւույթ մի սպասում կար եւ օրվա խորհուրդ, այն է՝ քաղաքի թիվ 1 նախադպրոցական հաստատությունը պիտի կոչվեր Հայաստանի ազգային հերոս Վազգեն Սարգսյանի անունով: Կրթօջախի 80-ամյա հորեյանն այս կերպ են որոշել նշանավորել նախակրթարանի տնօրենությունը, տեղական իշխանությունները: Հրավիրյալները եւս երկար սպասել չեն տալիս: Ջերմ ողջագուրանքներով, մտերմիկ խոսքերով դիմավորում են սպարապետի ծնողներին՝ Ջավեն եւ Գրետա Սարգսյաններին, մերձավորներին եւ հարազատներին: «Վազգենը սիրում էր ձեզ, սիրահարված էր այս լեռնաշխարհին, հպարտանում էր ձեզնով», – սա Գրետա մայրիկի արտաբերած առաջին խոսքերն են: Սպարապետի ծնողներին էլ իրավունք է վերապահվում ցած իջեցնելու հուշատախտակը պարփակող ծածկոցը: Մարմարե սալիկին Վազգենի ժպտադեմ դեմքն է եւ զուսպ մի գրություն. «Սյունիքի մարզ, քաղաք Գորիս, Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն»:

Նահապետական վարքն ու բարքն է իշխում մանկապարտեզի նախարահում. աղուհացով, օրհնանքի խոսքերով են պատվական հյուրերին դիմավորում եւ ուղեկցում երկրորդ հարկի այն սենյակը, որը վերածվել է Վազգեն Սարգսյանի անվան թանգարանի: Պարզ ու անպաճույճ վահանակներից մեկի խորագիրն է՝ ասված մանկան շուրթերով. «Երախտապարտ ենք ձեզ խաղաղ ու անվտանգ մանկության համար»: Թանգարանում



ամեն ինչ հիշեցնում է սպարապետի կյանքն ու գործը, իսկ աղանդերի սեղանի շուրջ ծայր են առնում հիշողությունները Սյունյաց աշխարհում նրա իմաստավորված օրերի մասին, որն ամփոփվում է ներկաներից մեկի դիպուկ բնորոշմամբ. «Վազգենի ամենամնայուն գործը բանակ ստեղծելն էր, նա կանգնած է հայոց բանակի ստեղծման ակունքում»: «Վազգենը կռվեց մեր կողմերում, հետո եկավ իրականացնելու «Սյունիք-Ջանգեզուր» ծրագիրը՝ որպես պետնախարար, – ասում է մեկ ուրիշը՝ ընդգծելով նրա պետականությունը կերտելու ձգտումը:

Թանգարանին Սպարապետի կյանքին ու գործին նվիրված գրքեր են տալիս, դրանցից մեկի ընծայագիրն աչքովս է ընկնում՝ երեխաներին միշտ վազգենաբար դաստիարակելու ակնկալիքով (Գրետա մայրիկի մաղթանքն է):

Տոնական տրամադրությունը տեղափոխվում է Գորիսի դրամատիկական թատրոնի դահլիճ, որի բեմահարթակում Հայաստանի եւ Արցախի ազգային հերոսի մեծադիր դիմանկարն է, որի մոտ, որպես երախտագիտության նշան՝ ծաղիկներ են դրվում: Էկրանին վերակենդանանում են Արցախյան պատերազմի կարերը:

II *Շնորհավորելով կրթօջախի հորեյանի առթիվ՝ Գրետա Սարգսյանը հանդմունք*

հայտնեց, որ այն կշարունակի բազում-բազում երեխաներ դաստիարակել՝ ազգային ոգով, ազգային ավանդույթներով, ազգային խառնվածքով:

«Ներկա ենք մի հանդիսության, որն իր բովանդակությամբ մեծ խորհուրդ ունի», – ողջերթի խոսքում փաստեց Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը: Այս անվանակոչումով Գորիս է վերադառնում Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների անկախության երախտավորը՝ Վազգեն Սարգսյանը, բոլորս ենք հիշում նրա գործունեությունը Գորիսում եւ ողջ Սյունիքում, մեր ժողովրդի համար ամենադժվարին պահին դրված էր լինել կամ չլինելու խնդիրը, յուրաքանչյուր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը պատմական օրինաչափությամբ ծնունդ է նաեւ իր առաջնորդին: 1921թ. Գ.Նժդեհը, Սյունիքից հեռանալով, բարձրաձայնեց, եթե Ադրբեջանը փորձի ոտնձգություն անել Սյունիքի վրա, ես նորից կվերադառնամ: Եվ ահա 1988-ից Ադրբեջանի ոտնձգության ժամանակ Նժդեհը վերադաձավ Վազգեն Սարգսյանի կերպարով: Այո՛, նա Սպարապետ էր եւրպամբ, իր մեջ կուտակած ոգու կրակով: Սովորական հրամայող չէր, ոչ էլ կամք թելադրող, նա ավելի շատ ոգու մարդ էր, պարզ, բայց նաեւ ոգու հզորությամբ, համեստ, բայց անասելի վճռական: Նրա մեջ հանդուժողունքն արտահայտվում էր անկտորում սկզբունքայնությամբ, ազատագրական պայքարին իր նվիրվածությամբ, նա մինչեւ ուղն ու ծունդ հասկացավ կամավորականին, ըմբռնեց նրա եւրպունը, առաջնորդեց նրան մինչեւ հաղթանակի ավարտը»:

Երգահան Սասուն Պասկեւիչյանը մանրամասներ ներկայացրեց Վազգենի՝ մահապարտներ հավաքագրելու պատմությունից: Այնուհետեւ բեմահարթակը տրամադրվեց փոքրիկ երգիչ-երգչուհիներին, պարողներին: Ելույթ ունեցան նախակրթարանի նախկին սաները, «Սյունիք» պարային համույթը: Իսկ վերջում կապույտ երկնքից գահավորակին նստած, իջավ արքայադուստրը, եւ սկսվեց շլացուցիչ մի հրավառություն...

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ
«Այունյաց երկիր», N12 (231)
30 հունիսի 2011թ.

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Զերմ
մաղթանքով



ՄՅԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Տարիներ առաջ առիթ եղավ ստանձնելու Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարությունը: Ատենախոսությունը նվիրված է 1917-1921թթ. Չանգեզուրում ծավալված ճակատագրական անցուդարձերին:

Նախնական գրույցների ընթացքում ինձ համար պարզ դարձավ թեմայի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելու գլխավոր դրդապատճառը. դա ատենախոսի անափ ու անհուն նվիրվածությունն է հայրենի եզերքի պատմությանը, մտահոգությունը նրա ապագայի նկատմամբ: Պարզ դարձավ նաև, որ Սյունյաց աշխարհն ատենախոսի մտքին ու հոգուն կպած է ժայռ առ ժայռ, թուփ առ թուփ, առվակ առ առվակ: Եվ ամենեւին էլ պատահականություն չէ, որ Սուրեն Խաչատրյանի նախածեռնությամբ ու հոգածությամբ վերջերս իրականացվեց Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» անգերագնահատելի հատորի շքեղ վերահրատարակությունը:

Ս.Խաչատրյանի ատենախոսության թեման՝ «Ինքնավար Սյունիք. ստեղծումը, գոյատևումը, անկումը», խիստ արդիական է: Այն շարադրված է Արցախյան ազատամարտի խորապատկերի վրա, իսկ Արցախի եւ Սյունիքի ազատագրական պայքարը նույն շրթայի տարբեր օղակներն են:

Մի ուրիշ առանձնահատկություն էլ ունի Ս.Խաչատրյանի աշխատանքը. այստեղ Սյունիքը Դավիթ Բեկի ժամանակներից ի վեր դիտարկված է իբրեւ հայոց պետականության վերականգնման ու կերտման կենտրոններից մեկը, հանգամանք, որը նոր իմաստ է հաղորդում շարադրանքին:

Ատենախոսը գիտական պատշաճ մակարդակով ներկայացրել, ամփոփել ու արժեւորել է հիմնահարցի շուրջ գոյություն ունեցող աղբյուրագիտական ու մատենագիտական մեծամասշտաբ բազան, որով եւ պայմանավորված է շարադրանքի հետագա հաջողությունը: Արժանվույնս գնահատված եւ արժեւորված է հայ պատմաբանների ծանրակշիռ ներդրումը թեմայի մշակման բնագավառում /Արամ Սիմոնյան, Վլադիմիր Ղազախեցյան եւ ուրիշներ/:

Փաստառատ նյութի հիման վրա հեղինակը հանգամանորեն ներկայացրել ու վերլուծել է Ինքնավար Սյունիքի ու

Լեռնահայաստանի Հանրապետության հռչակման քաղաքական ու տնտեսական նախադրյալները, շրջանառվող նյութերին զուգահեռ ներմուծել նաև նորահայտ նյութեր ու փաստաթղթեր, կատարել ուրույն եզրակացություններ ու ընդհանրացումներ:

Աշխատանքում հանգամանորեն շարադրված է հայկական պետականության վերականգնման գործընթացը Չանգեզուրում, ինչպես նաև Լեռնահայաստանի Հանրապետության անկման գործընթացը, շեշտադրված են դրա պատճառները:

Ս.Խաչատրյանի աշխատանքի յուրօրինակ կողմերից մեկն էլ այն է, որ պատմական զուգահեռներ են անցկացված Լեռնահայաստանի եւ Արցախի Հանրապետությունների միջև, ընդգծված են դրանց առանձնահատկություններն ու ընդհանուր գծերը, կատարված են ուշագրավ եւ ինքնատիպ եզրահանգումներ:

Ինքնատիպ են նաև ատենախոսի ընդհանուր եզրակացությունները, որոնք հենված են բուն շարադրանքի վրա ու անմիջականորեն բխում են նրանից:

Շարադրանքի ընթացքում ատենախոսը հաճախ է հասնում պատմական մտածողության ինքնատիպ հանգրվանների: Նկատելի է նաև, որ դրանք ձեւավորվել են Արցախյան գոյապայքարի մարտադաշտերում, գոյապայքար, որի ամենագործուն մասնակիցներից է Սուրեն Խաչատրյանը: Դա նշանակում է, որ Սյունիքի ինքնապաշտպանության եւ Արցախի ազատագրման համար նա մարտնչել է ոչ միայն զենքով, այլև մտքով ու գաղափարով:

Հոբելյանի առթիվ Սուրեն Խաչատրյանին մաղթում են աշխատանքային կորով, նոր հաջողություններ հայոց պատմության ուսումնասիրման անդատանում եւ անձնական երջանկություն:

«Սյունյաց երկիր», N13, 2011թ.

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Եզերքիս հոգսակիրը



ԿԻՄ ԱՂԱԲԵԿՅԱՆ
Բանասիրական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Սեծարգո՛ Սուրեն Խաչատրյան Ողջունում եմ Ձեր հոբելյանը, ցանկանում քաջառողջություն եւ մտահղացումներիդ իրականացման համար ու անգիջում կամք:

Ձեր իսկ ճիգ ու ջանքերով իրականություն դարձած Սյունյաց աշխարհի մշակութային կյանքի մեր նորօրյա զարթոնքի ու նվաճումների կողքին Դուք երազում եք սյունեցու կենցաղն ու առօրյան դարձնել առավել բարեկեցիկ ու ապահով:

Ես հավատում եմ բազմաթիվ փորձությունների միջով անցած, տարաբնույթ դժվարություններ հաղթահարած երեկվա զինվորիդ՝ այսօրվա քաղաքական գործունեությանը:

Դուք խորապես կամային մարդ եք: Ձեր կամքը ջրղեղվել է ձգտումների, որոնումների, փնտրումների խճճվածքում: Իսկ հին խոսքը հաստատում է՝ որոնողը՝ կգտնի, ձգտողը՝ կհասնի:

Դուք մշտական գրույցի մեջ եք մտավորականության հետ, Ձեր միտքն ու մտորումները մշտապես պտտվում են Ձեզ վստահված հայրենի երկրամասի շուրջ՝ գտնելով, որ այն Արցախի պաշտպանության հիմնական պատվարն է: Դուք սիրում եք Սյունյաց աշխարհը, որտեղ լեռների ծերպերում, անտառների մեջ, թփերի հետևում ու բարձունքների վրա, կիրճերի խորքերում, սարերի լանջերին ու «հերանց գնացող» արտերի խաղաղ ծփանքում, եւ հատկապես հայ մարդկանց շուրթերի վրա թրթռում է Քրիստոսի խաղաղ աղոթքը, բայց հպարտանում, որ սյունեցին ոչ թե քրիստոնեական կրավորականությամբ ներեց ու հանդուրժեց թշնամուն, այլ ապավինեց նժդեհյան հավատքով լիցքավորված ուժի զորությանը:

Անընդհատ մտորումների մեջ եք. անհարմար է, որ այդ չքնաղ երկրամա-

սում մարդն ապրի խեղճացած, կոտրված սրտով, նեղացած ինքն իրենից ու աշխարհից, գտնում եք, որ գլխավորն արդարամիտ ու հոգատար վերաբերմունքն է, հասարակության բարեկեցությունը:

Այս եւ նման կարգի հարցադրումների հաստատագրումով ու կատարված աշխատանքներով նվաճել եք համերկրացիներիդ վստահությունը:

Նրանք լսում են Ձեր խոսքը եւ անվերապահորեն հավատում Ձեզ:

Նորից ու կրկին ողջունում եմ Ձեր վաստակաշատ հոբելյանը եւ հաջողություններ մաղթում Ձեր երկրապահ ու երկրաշեն գործունեության մեջ:

«Այունյաց երկիր», N13, 2011թ.



ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Մեր աշխարհը եւ Նրա որդին



ՇՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական
գիտությունների դոկտոր

Սյունիքը, որ իմ հայրենիքն է, իմ նախաստեղծ տոհմածառով, հսկա ստվերախիտ սաղարթով, ինձ սնած հողով եւ ծիծ տված ջրով, ինձ համար աշխարհի ամենամեծ սրբությունն է: Նա եղել ու մնալու է որպես իմ մշտական հենարանը, իմ գոյության առհավատչյան այնքան ժամանակ, մինչեւ որ ես էլ կդառնամ այդ սուրբ հողի մի մասնիկը:

Հազարավոր թելերով կապված լինելով այդ աշխարհի հետ, բնականաբար չեմ կարող անտարբեր մնալ նրա ճակատագրի նկատմամբ եւ նրանց նկատմամբ, ովքեր իրենց ձեռքն են վերցրել այդ երկրի դեկը: Նրանցից առաջինը, անշուշտ, մարգպետ Սուրեն Խաչատրյանն է, ում ծննդյան 55-ամյակը լրանում է օգոստոսի 1-ին: Անկեղծ ասած, այդ տարիքը տեսնում եմ որպես հասունացած ղեկավարի տարիք, արդեն աննահանջ նավավարի կերպարով:

Այդ 55 տարիներից 20-ն անցել են իմ աչքի առջեւ, եւ այսօր ուղղակի անհամեմատելի եմ տեսնում 35-ը 55-ի կողքին, որովհետեւ այդ տարիները ոչ միայն փորձությունների, մաքառումների, տքնանքի, տնտեսական ու քաղաքական ալեբախությունների ժամանակաշրջան են եղել, այլ նաեւ սյունեցիներիս մոտ հավատի ու հոգեւոր կյանքի վերականգնման՝ դեպի ապագան միտված գործընթաց: Եվ այդ ընթացքում Սուրեն Խաչատրյանը իրեն դրսեւորել է որպես չկաղապարված, անհողորդ անհատականություն: Կարծում եմ, որ նա, ստանձնելով պաշտոնը, կարողացավ թոթափել մինչ այդ ունեցած մարդկային թուլությունները, դարձավ (ինչպես ինքն է ասում)՝ ուժեղ, ընկալեց, որ առաջին լինելը

ավելի շատ պատասխանատվություն է եւ հոգսաշատություն, քան աթոռ: Չէ որ հարյուր հազար մարդու՝ քո հայրենակից սյունեցու, հետ գործ ունես եւ նրանց ճակատագրում կարող ես լուրջ դեր խաղալ, թեթեւացնել նրանց հոգսերը, մտածել քեզնից հետո լուրջ հետք թողնելու մասին: Եվ քիչ է, թե բարի գործեր կատարես, պիտի երկիր կառուցես, հատկապես, որ տեսնում ենք, թե անկախության 20 տարին բոլորող երկիրը դեռ ինչքան թերիներ ունի՝ հատկապես իսկական գործիչներ, ղեկավարներ ունենալու ասպարեզում:

Սուրեն Խաչատրյանն իմ եւ իմ շրջապատի մարդկանց կողմից հարգվում է, քանի որ մարգպետական առօրյան չի խանգարում, որ նա փնտրողների մեջ լինի նաեւ հայ արվեստի ու գրականության տաճարում: Հրատարակեց գրքեր, կազմակերպեց բազում միջոցառումներ, հավերժացրեց մեծերի հիշատակը, թեթեւացրեց այդ բնագավառում տքնող մարդկանց հոգսերը: Հիանալի է, երբ Սյունիքի մեծերը՝ Ակսել Բակունցը, Համո Սահյանը, Գուսան Աշոտը, Աշոտ Սաթյանը, Մաես Նիկողայյուս Ադունցը եւ էլի շատերը նրա գործունեության կոնկրետ ասպարեզն են, որին նա չի նայում երազային հայեցողությամբ ու անրջանքով: Իսկ եթե անրջում էլ է, ապա դրանք իրականացնում է անմիջապես, ինչպես Տաթևի իրաշք ճոպանուղին, որ բնությունը ճանաչելու բանաստեղծական արարմունք է:

Մեկ է, ժողովուրդը ղեկավարին գնահատելու է գործով եւ միայն գործով: Իսկ առաջիկայում այնքան գործեր կան, որոնց համար կպահանջվի եւս 55 տարի:

«Այունյաց երկիր», N13, 2011թ.

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Այունիքի հրոպից- օգոստոս տոնական է



ՈՍՐԵՐՏ ԷԶԱՆԱՆՅԻ
Լեռնաձորի հիմնական
դպրոցի տնօրեն

20 տարի առաջ սերունդները կապանված էին կարմիր գաղափարախոսությամբ՝ ազգային ընկալվում-վերառվում էր բնականին ու բանականին անհարիր: Սակայն Նժդեհյան դարը, ինչպես անթեղ, գոյատևում էր՝ դպրոց-դասագրքային եւ հասարակական ճշմարիտ հնչեղություն չունենալով: Միամիտներին զենք որտեղի՞ց՝ սասանված «ազգային եղբայրությանը» դիմակայելու համար, նրանց համարձակության չափը միայն Մոսկվային ողբանվագ մամակ գրելն էր...

Ազգայինի ոգեղենությունն անպասակ անհատների մեջ էր եւ ուր որ է՝ Երկնավորի կամեցողությամբ նրանք հայտնվելու էին պատմության ոսկե սանդուղքի վրա:

*II ...Եվ այր մի՛ Չաբանդեցի
Սուրիկ անուն, ազգանվեր
սերուցքի հետ ստանձնեց
ազատագրական պայքարի
առաքելությունը. խրամատա-
վորվեց, ապավինեց պայքարի
բաղձալի տառապանքին,
սխրագործեց գունարտակի
հրամանատարական բարձուն-
քում: Չետայսու իր շնորհներն
ի սպաս դրեց իշխանության
վերակազմակերպմանը, հայ-
րենիք-բարուրի կայացմանը...*

Դեռ 1999-ին, կողմ դնելով բոլոր դասագրքերը, ուսուցչական հետաքրքրությամբ ճեպեցի Գորիս՝ շոշափելու մանկությանն ու երիտասարդությանն արժանավորապես ներկայացնելի նորահամբավ անհատականությանը: Մանկավարժական առեղծվածն ինձ արքանեց՝ պատմա-

բանասիրական քանքարով խոսում էր Մաշտոցի աղվանական առաքելության, Խորենացվո՛ մեր հայրենակցության վարկածի, երկրամասի նախաքրիստոնեական մշակույթի փաստարկվածության, նժդեհյան անտիպ էջերի մասին: Կասկած չունեի, որ առաջիկայում պետական շինարարության հոգսերը մեկտեղելու է գիտական գործունեության հետ: Չապացույց կռահումիս՝ նրա «Լեռնահայաստան» մենագրությունը... Աժ-ում, մարզի կառավարման ղեկին, ԵԿՄ-ն ու հայրենակցական միությունը ղեկավարելիս առավել հստակ տեսանելի են գործչի հոգեւոր բարեմասնությունները՝ մարդամոտությունը, վաստակաշատին զնահատելը, տկարին ու սայթաքածին ձեռք մեկնելը, ներելու եւ համերաշխվելու հեռահար հակումը, ինքնագոհությունն առ Սյունիք: Ի դեպ, անարժան սյունեցու հայրենաբաղձ կերպարով հույժ տպավորվել եմ մեր միջնադարյան պատմիչ Չայր Ստեփանոսի ստեղծագործություններից: Նորագույն ժամանակներում այդ կերպարն իմ ու շատերի մեջ ամրակայել-արդիականացրել է Սուրեն Խաչատրյանը: Սյունիքը մեր երջանկաբեր տունն է եւ մարգպետի ամենօրյա հոգածությամբ՝ բոլորիս տքնանքի շինհրապարակը, հայրենյաց նորոգ պատվարը ու շենշող ապագայի եղեմը:

Այր պետական, արելաշատություն եմ մաղթում ծննդյանդ 55-ամյակի կապակցությամբ, ակնկալում եմ հայրենապաշտ նվիրվածության նոր բնագծեր:

«Այունյաց երկիր», N13, 2011թ.



ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Նրա գերդաստանի գլխավոր արժեքը եղել է Աշխատանքը



ԳՐԻՇԱ ՍՄԲՍՅԱՆ

Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն

Սարգու հասարակական գործունեությունը գալիս է իր անցյալից: Հայ իրականության մեջ մարդու վրա կողմնորոշիչ ազդեցություն թողնում է գլխավորապես ընտանիքը: Նրանում ընդունված արժեքները դառնում են անձի հոգեկանի ներքին բովանդակությունը: Մեր գործողություններում, բազմաթիվ իրադրություններում վճիռներ կայացնելիս մենք վերադառնում ենք դեպի մեր ընտանիքը, հատկապես ընտանիքի ամենահեղինակավորներին՝ հորն ու մորը:

Սուրեն Խաչատրյանի գերդաստանի գլխավոր արժեքը եղել է Աշխատանքը: Հայրն աշխատավոր մարդ էր, մայրը՝ նույնպես: Որքան էլ ապարդյուն փորձեր արվեն փնտվելու մեր մոտ անցյալը, մի բանում պիտի լռել. Խորհրդային Միության, միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներում հայտնվում էին ոչ թե օլիգարխներն ու զանազան գործարարներ, այլ կուսակցական, պետական գործիչների, գիտնականների, արվեստագետների հետ միասին արարող, աշխատող, համընդհանուր հարգանք վայելող անհատներ:

Սյունիքի մարզպետի մայրը ԽՍՀՄ գերագույն խորհրդի դեպուտատ էր: Դրական հիմնականը մարդուն ժառանգվում է ծնողներից: Կարծում եմ՝ ընդդիմախոսները նույնիսկ նկատած կլինեն, որ մարզպետին հատուկ են կամային որակները, նկատելու, զգալու, արագ կողմնորոշվելու կարողությունը, կեղծ նոտայի բացակայությունը:

Ժամանակը, անձնական հաջողությունները հիմնականում գլխապտույտի են հասցնում մարդուն, կտրում նրան հասարակությունից, դարձնում մանկուրտ: Իրողություն է, որ Սյունիքի մարզպետը չխզեց կապը ժողովրդի հետ, մեր բարդ ու հակասական, որոշ առումներով աղավաղված իրականության մեջ ժողովրդի հանդեպ ունեցած վերաբերմունքում մնաց ազնիվ: Ի տարբերություն ժամանակակից շատ-շատերի՝ հասարակ, սովորական, մոլորված մարդու հանդեպ իր վերաբերմունքում կարծես գիտե «Աշխարհի իշխաններին» ուղղված խրատը. «...Քանզի նրանց բնությունը ձերինից տարբեր չէ, այլ նույն կավից ու շաղախից եք ստեղծված: Նույնն է տերերի ու ծառաների, հարուստների եւ աղքատների աշխարհ

զալու սկիզբը եւ աշխարհից ելնելու վախճանը» (Ներսես Շնորհալի, «Թուղթ ընդհանրական»): Ինչ-որ մեկը Սպարտայի թագավորին ակնարկել է, թե Լակեդեմոնի բարօրության պատճառն այն է, որ նրա թագավորները կարողանում են կառավարել, թագավորը պատասխանել է. «Ավելի շուտ այն է, որ նրա ժողովուրդը կարողանում է հնազանդվել»: Հնազանդվել՝ Հին Սպարտայում ընկալվել է քաղաքական դաստիարակության իմաստով՝ օրենքի, իշխանության հանդեպ հարգանք, պետական մտածողություն: Բարօրության մասին վաղ է խոսել, իսկ պետական մտածողությունը Սյունիքում եւ մարդկանց համակրանքը մարզպետի հանդեպ օգնում է նրան լուծելու երկրամասի կենսական խնդիրներ: Ցավոտ հիմնախնդիրների կողքին (բնապահպանություն, գործազրկություն, հոգսերի մեջ թաղված գյուղաշխարհի, սոցիալական բեւեռացում) Սյունիքի մարզպետի զսպող եւ հավասարակշռող ներկայությունն ու բազմաթիվ ձեռնարկումներն են: Վերջիններից կարող եմ թվարկել ինձ սրտամոտը. Մթնածորի փրկությունը, կարդիոլոգիայի կենտրոնը, Ս.Խանգառյանի տուն-թանգարանը, «Սիսականի» շքեղ հրատարակությունը, Կապանի երկրագիտական թանգարանը, բացառիկ վավերագրերի ու պատմական արժեքների վերադարձը թանգարան...

Ծննդյան օրվա առթիվ Սյունիքի մարզպետին մաղթում եմ առողջություն, Սյունիքին՝ խաղաղություն, սյունեցիներին (Ձանգերից մինչեւ Արաքս)՝ լավատեսություն:

«Այունյաց երկիր», N13, 2011թ.



ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Վերացել է խոսքի եւ գործի հակադրությունը



ՍՐՏՈՒ ԱԹԱՅԱՆ
Կապանի քաղաքապետ
2008-2012թթ.

հարտե շնորհավորում եմ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին՝ ծննդյան 55-ամյակի առթիվ, մաղթում քաջառողջություն եւ հետագա բեղմնավոր աշխատանք: Մարզպետն առանձնահատուկ վերաբերմունք ունի մարզի բոլոր համայնքների հանդեպ՝ Մեղրուց մինչեւ Սիսիան: Սակայն, որպես Կապանի քաղաքապետ, չեմ կարող չնշել այն հոգածությունը, որ նա դրսեւորում է մարզկենտրոնի հանդեպ: Դա ես զգացել եւ տեսել եմ իմ պաշտոնավարման երեք տարվա ընթացքում:

Պիտի խոստովանեմ, որ կուսակցական պատկանելությունը (մարզպետը հանրապետական է, ես՝ ՀԶԴ անդամ) ամենեւին չխանգարեց, որ մեկտեղենք մեր ջանքերը՝ Կապանի առջեւ ծառացած հիմնախնդիրները լուծելու համար: Ես դրանցից կթվարկեմ ամենակարեւորները: Կապանի Կավարտ թաղամասի հետ կապող ճանապարհին արդարացիորեն հարուցել էր դրանից օգտվողների դժգոհությունը: ՀՀ նախագահի՝ Սյունիքի մարզ կատարած այցի ընթացքում Սերժ Սարգսյան

նին մերկայացրի հիմնախնդիրը, մարզպետն էլ հետամուտ եղավ հարցի լուծմանը, ինչի շնորհիվ այս օրերին ընթանում են Լեւոնաքեր եւ Կավարտ թաղամասեր տանող ճանապարհի՝ համարյա ամանցանելի դարձած հատվածի հիմնանորոգումը:

Մարզկենտրոնն ավելի բարեկարգ տեսնելու նրա պատրաստակամությունը հույս է ներշնչում, որ քաղաքային տնտեսության առջեւ ծառացած այլ հիմնախնդիրները եւս լուծում կստանան: Մասնավորապես, խնդիր ունենք ավարտին հասցնել բազմաբնակարան շենքերի տամիքների հիմնանորոգումը: Կապանի մշակույթի կենտրոնի հիմնանորոգումն է օրակարգում:

Սյունիքի մարզպետի յոթ տարուց ավելի պաշտոնավարման ժամանակահատվածից մի համոզման եմ հանգում. Սուրեն Խաչատրյանն ըստ ամենայնի գործի մարդ է, ավելի ստույգ՝ մեզանում նա վերացրել է խոսքի ու գործի հակադրությունը:

«Սյունյաց երկիր», N13, 2011թ.



ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Նա իր հայրենիքի որդին է

Սուրեն Խաչատրյանի մասին՝ ծննդյան 55-ամյակի առիթով



ՍՍՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Փորձության եւ որոնումի մեր օրերուն դյուրին չէ, անշուշտ, խոսել աստիճանավորի, պետական պաշտոնյայի մասին, որովհետեւ հանրության մի սովոր մասի շրջանում իշխանավորի հանդեպ ի վերուստ վերապահում կա, եւ ոչ մի իշխանավոր բացառություն չէ այդ առումով: Բայց եւ անկարելի է (անկեղծ չէ նաեւ) կույր ձեւանալ ու չտեսնելու տալ տարիներ շարունակ քո շարքի առջեւից քայլողի, քո աչքի առաջ քո երկրի՝ իր բաժին բեռն ուսած պետական այրի լավն ու դրակաւնը, մանավանդ որ առիթ կա. օգոստոսի

1-ին Սուրեն Խաչատրյանը դառնում է 55 տարեկան:

...Առաջին անգամ Սուրեն Խաչատրյանի հետ գործնական առնչություն ունեցանք 1989թ. հոկտեմբերին՝ գիշերը, Կոռնիձորի մերձակայքում: «Ձանգեզուրի» ստեղծագործական խումբն այդ օրերին պարբերաբար այցելում էր սահմանամերձ, կենդանի, թարմ, հավաստի տեղեկություններ քաղում թերթի համար: Սահմանամերձի այդ հանդիպումը, մի խոսքով, մեր առաջին գործնական հանդիպումն էր: Սովորական ժամանակներ չէին: Վերահաս պատերազմի ուրվականը վաղուց էր շրջում Գորիս-Լաչին, Գորիս-Կուբաթլի սահմանագծում եւ ժամանակ առ ժամանակ ցավալի դրսեւորումներ ունենում: Խորհրդային բանակի հանդեպ վստահությունը նվազագույնի էր հասել, ազգային բանակի մասին դեռ խոսք չկար: Եվ ուրեմն սահմանային դիրքերում հսկումի էին կանգնած բացառապես կամավորականներից կազմված ինքնապաշտպանական ջոկատները: Եվ կոռնիձորյան այդ պահակակետում կամավորականներին ինքը՝ Սուրեն Խաչատրյանն էր ուղղորդում, հրահանգում՝ իր պարտադրող վարքով ու կերպարով: Չետո ավելի մոտիկից ու ավելի հաճախակի առնչություններ ունեցանք, մտերմացանք: Այնուհետեւ նա դարձավ 3-րդ գումարտակի հրամանատար: Դա գորիսեցի ազատամարտիկներին միավորող գումարտակն էր, որ մարտական փառավոր ուղի անցավ Արցախյան գոյակռվում: Չետո նրան տեսանք Գորիսի քաղաքապետարանում՝ փոխքաղաքապետի, ապա՝ քաղաքապետի պաշտոններում: Այնուհետեւ երեք անգամ ընտրվեց հանրապետության խորհրդարանի անդամ, իսկ 2004-ի մարտին նշանակվեց Սյունիքի մարզպետ ու մինչեւ հիմա շարունակում է վարել այդ պաշտոնը:

Սուրեն Խաչատրյանը, ինչպես ասացինք, քաղաքական ասպարեզ

իջավ Չամազգային շարժման եւ Արցախյան գոյակռվի բուռն օրերին: Եվ նա իրեն լավագույնս դրսեւորեց ինքնապաշտպանական ջոկատների, ապա եւ գումարտակի հրամանատարի պատասխանատու դերերում: 3-րդ գումարտակի անցած ճանապարհի մասին նոր-նոր է գրվում: Սակայն, իբրեւ ժամանակակից, իբրեւ գորիսյան կյանքի այդ օրերի տարեգիր՝ չենք կարող մեկ-երկու դիտարկում ինքներս չանել: Իհարկե, ազատամարտի առաջին օրերից, երբ ամեն ինչ դեռ նախնական ու տարերային փուլում էր, Գորիսում կային ինքնապաշտպանական գործի բազում կազմակերպիչներ, նվիրյալներ, կային տեղական իշխանության ղեկավարներ, ովքեր դժվարին այդ ժամանակներում առաջնորդում էին շրջանի բնակչությանը: Եվ Գորիսի ճշմարիտ պատմաբանը, Գորիսի պատմության այդ օրերի հետազոտողը ոչ մի դեպքում չպետք է մոռանա նրանցից յուրաքանչյուրի արած-դրածը: Սակայն Գորիսի ինքնապաշտպանական գործի կազմակերպիչների բույլի մեջ առանձնապես փայլատակեց Սուրեն Խաչատրյանի կերպարը: Եվ այդ օրերին, երբ դեռ չունեինք ազգային բանակ, երբ ամեն ինչ պայմանավորված էր կամավորականների գործողություններով, ինքը, ճակատագրի կամոք եւ անձնական հատկանիշների շնորհիվ, դարձավ ժողովրդական աշխարհագրի՝ բառի լրիվ իմաստով, կազմակերպիչ, ստանձնեց այն դերը, որ մեր նախորդ գոյակռվում՝ 1918-20 թվականներին, Գորիսի շրջանում կատարում էր Խաչատուր Մալինցյանը: Շատ կարելուր մի հանգամանք եւս. պատերազմական գործողությունների թատերաբեմ դարձած Գորիսում գրեթե ամեն օր հանրապետության տարբեր վայրերից նոր ջոկատներ էին հայտնվում: Նրանց վրանները հաճախ կարելի էր տեսնել անգամ քաղաքի կենտրոնական հրապարակում: Միեւնույն ժամանակ բոլոր կուսակցություններն իրենց ուժերը չափելու համար ասպարեզ էին ընտրում կրակագծի մոտ գտնվող Գորիսը: Եվ բոլորը, կարծեք, առաջնայնության էին ձգտում, բոլորը, կարծեք, իրենք էին ուզում որոշել, թե սահմանի որ մասում պիտի դիրքավորվեն, ինչ խնդիրներ պետք է լուծեն: Կարճ ասած՝ որքան էլ այդ ամենի հիմքում հայրենասիրությունն էր եւ անկեղծ մղումը, բայց տարերայնության, ինքնագոր-

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

ծունեության հնարավոր հետեւանքները դժվար չէր կռահել: Դա մի երեւոյթ էր, որ ամենաշատն էր սպառնում սահմանի անվտանգությանը: Հարկավոր էր մի բռունցք, որ եկող-գնացող, ինքնուրույն դերակատարության ձգտող ջոկատներին զսպեր, չափավորեր, բոլորի ջանքերը մի նպատակի ուղղեր: Այդ բռունցքը, նախեւառաջ, Վազգեն Սարգսյանն էր՝ սյունիքյան իր աշխատակազմով, այդ բռունցքը նաեւ Սուրեն Խաչատրյանն էր: Հետո եկավ մի ժամանակ, երբ պատերազմում ցուցաբերած նվիրումը, հետեւողականությունն անհրաժեշտ եղան խաղաղ, ստեղծագործ աշխատանքում՝ երկրի վերաշինման, պատերազմի հետեւանքների վերացման գործերում: 1994թ. գորիսյան մի խորհրդակցությունում Վազգեն Սարգսյանն ազատամարտի մասնակիցներին ու հրամանատարներին այդպես էլ բանաձեւեց պահի հրամայականը՝ զինվորը, ով կամենում է ծառայել ազգային բանակում, պետք է զինվորություն անի, իսկ մյուսները պետք է լծվեն երկրի վերածնման գործին: Սուրեն Խաչատրյանն էլ, մարտական ընկերներին իրար գլխի հավաքելով, իր մարտական ընկերների կողմից ճանաչված առաջնորդ մնալով, տեղափոխվեց համայնքային կառավարման ոլորտ, որը ոչ պակաս կարեւոր ճակատ էր այդ ժամանակ՝ պատերազմի թոկուրոհով անցած, իր լավագույն որդիներին հայրենիքի զոհասեղանին դրած շրջանում: Եվ քաղաքապետարանը գլխավորեց մինչեւ 1999թ.: Գորիսյան կյանքի այդ հինգ տարիները, անշուշտ, առանձին քննության ու շարադրման կարիք ունեն, որ մեր սույն հրապարակման խնդրից դուրս է: Երկու դրվագ, այնուամենայնիվ, այդ տարիների գորիսյան կյանքից չենք կարող չմտաբերել:

1997թ. մայիս-հուլիս ամիսներին անընդհատ տեղացող անձրեւները, կարկուտն ահռելի վնաս էին պատճառել Գորիս քաղաքին ու մերձակա գյուղերին: Հատկապես հունիսի 22-ի երեկոյան եւ 23-ի վաղ առավոտյան տեղացած հորդառատ անձրեւն ու կարկուտը գերազանցել էին վերջին ամիսներին գրանցված տեղումները: Քաղաքի տարեցները պատմում էին, որ նախորդ 37 տարում Գորիսն այդպիսի ուժգնության տարերք չէր տեսել: Շարքից դուրս էին եկել ինժեներական կառույցները, հաղորդակցության ուղիներ-

ը: Կային նաեւ մարդկային զոհեր (երեք մարդ էր զոհվել): Այդ օրերին Գորիսի քաղաքապետարանը՝ Սուրեն Խաչատրյանի գլխավորությամբ, ցուցաբերեց արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու եւ արհավիրքին դիմակայելու կարողություն: Իրավիճակն այնքան կրիտիկական էր, որ Գորիս ժամանեցին երկրի վարչապետ Ռ.Քոչարյանը, Սյունիքի մարզպետ Ա.Աբրահամյանը, տարածքային կառավարման նախարար Գ.Գամազյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության պետը, ՄԱԿ-ի մարդասիրական հարցերով հանձնակատարի Երեւանի գրասենյակի տնօրենը, ուրիշներ: Գորիսին օգնության ձեռք մեկնեց նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Համառ եւ հետեւողական աշխատանքն իր արդյունքը տվեց: Սեպտեմբերին արդեն տեղի ունեցավ Գորիս գյուղը քաղաքին կապող կամրջի հանդիսավոր բացումը: Աստիճանաբար վերագործարկվեցին, վերաշինվեցին քանդված, փլված կամ վնասված մյուս ենթակառուցվածքները եւս:

Հաջորդ դրվագը, որ հիշարժան է, տոնական էր ու սպասված: 1998թ. հոկտեմբերի 31-ին Գորիսում տեղի ունեցավ խմելու ջրատարի 1-ին փուլի ավարտմանը նվիրված տոնակատարություն: Գոռհայքի սարերում գտնվող Սուխուրթունյան աղբյուրներից խմելու ջուրն ինքնահոս եղանակով հասցվել էր Գորիս: Տոնակատարությանը մասնակցելու համար Գորիս էին ժամանել ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը, Սյունիքի մարզպետ Ռ.Նավասարդյանը, Երեւանի քաղաքապետ Ա.Աբրահամյանը: Տոնակատարության ընթացքում ելույթ ունեցավ Գորիսի քաղաքապետ Սուրեն Խաչատրյանը, ով նաեւ այդ գործի նախաձեռնողն էր ու աշխատանքների կազմակերպիչը, եւ ասաց. «Ջրատարի կառուցումը, ամեն ինչից բացի, մեր նորանկախ պետության եւ վաղվա օրվա հանդեպ գորիսեցու հավատն ամրապնդող ուշագրավ քայլ է, եւ Գորիսը երախտագիտությամբ կիիշի նրանց, ովքեր իրականացրին այդ համարձակ ու աննախադեպ մտահղացումը» («Սյունիք», նոյեմբեր, 1998թ.):

Դրանից տասներկու տարի առաջ՝ 1986թ. նոյեմբերի 29-ին, գործարկված Ջորգոր-Գորիս ջրատարը, որ աշխատում էր մեխանիկական եղանակով, վերջին հաշվով իրեն չէր արդարացրել,

խմելու ջրի սուր պակասը, անկայուն ջրամատակարարումը մնացել էին իրողություն: Հետագայում, իհարկե, Սուխուրթունյան-Գորիս ջրատարի կառուցումը նոր փուլ ունեցավ եւ ավարտին հասցվեց 2008-ին, ինչի արդյունքում քաղաքը վայրկյանում ստացավ մոտ 250 լիտր բարձրորակ ջուր, որն էլ հիմք դարձավ քաղաքում շուրջօրյա ջրամատակարարման համար (ներքին ցանցի փոփոխմամբ՝ դա իրականություն դարձավ 2011-ին):

Սուրեն Խաչատրյանի դիմանկարը թերի կլիմի, եթե չիիշենք նրա պատգամավորական գործունեությունը: Երեք անգամ ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր՝ 1995, 1999, 2003 թվականներին: Այդ շրջանը, իհարկե, քննության առանձին մյուս կարող է դառնալ: Բայց չենք կարող հիմա մեկ-երկու նկատառում չհայտնել Ս.Խաչատրյանի պատգամավորական գործունեության վերաբերյալ: Նա, իհարկե, հրապարակային ելույթի հակում չուներ, եւ ամբողջի մոտ նրան հազվադեպ կարելի էր տեսնել: Բայց պատգամավորական գործելակերպի առնվազն երկու հատկանիշ նրա խորհրդարանական գործունեությունն արգասաբեր համարելու հիմք են տալիս:

Նախ՝ Սուրեն Խաչատրյանն այն պատգամավորներից էր, ով ընտրողների հետ (կարող ենք նաեւ այսպես ասել՝ իր ընտրատարածքի բնակիչների հետ) ամենասերտ կապերի մեջ էր: Մարդկանց հետ ուղղակի, չմիջնորդավորված շփումները, որ առայսօր հատուկ են նրան, նրա պատգամավորական գործունեության անքակտելի բաղադրիչն էին: Ներքեւում գտնվողներն այդ ժամանակ հենց նրա միջոցով էին առավելապես հարաբերվում երկրի բարձր իշխանությունների հետ: Այնուհետեւ՝ կարողանում էր օրենսդիր մարմնի անդամի իր մանդատի ուժով գործադիրի ուշադրությունն առավելագույնս սեւեռել ընտրատարածքի վրա՝ գործնական հարցեր լուծելու միտումով. օրինակներ՝ որքան ուզեք:

Սուրեն Խաչատրյան մարդու, պետական ու քաղաքական գործչի, կազմակերպչի որակներն առավել ամբողջական ու ցայտուն արտահայտվեցին Սյունիքի մարզպետի պաշտոնը վարելու յոթ տարվա ընթացքում: Մարզի բոլոր համայնքների համաչափ ու հավասար-

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

րաչափ զարգացում. ահա սկզբունքներից գլխավորը, որով առաջնորդվում էր մարզպետը: Այդ մասին ավելի շատ գործերն են վկայում, որոնց վերաբերյալ սույն համարում խոսք է ասում մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանը: Մի հարցի, այդուհանդերձ, ուզում ենք անձամբ անդրադառնալ: Դեռես այն տարիներին, երբ Գորիսի քաղաքապետն էր, երբ պատգամավոր էր, առանձնահատուկ մոտեցում ուներ հոգեւորի, կրթական, մշակութային գործերի հանդեպ: Դեռես այն ժամանակ նրա գործունեության մեջ նկատելի էր այն ճշմարտության գիտակցումը, որ Հայրենիքի ձեռքին մշակույթը զենք է, եւ մշակույթն այսօր կոչվում է (վաղն էլ կոչվելու է): Այդ մոտեցումն առավել առարկայական դրսևորումներ ունեցավ մարզը կառավարելու ընթացքում: Բազմաթիվ փաստերից՝ մի քանիսը: 1897-1904թթ. Գորիսում կառուցված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն (թեև 1904-ին՝ օծվել, բայց մնացել էր անավարտ) 1995-ին սկսվեցին վերակառուցման աշխատանքները: Սուրեն Խաչատրյանի եւ Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ Եպիսկոպոս Սկրտչյանի ջանքերով եկեղեցին ձեռք բերեց իր վերջնական ու ամբողջական տեսքը: 1997-ի դեկտեմբերի 20-ին՝ ժողովրդական տոնախմբության վերածված օրը, հանդիսավոր պատարագով եւ օծման արարողությամբ վերաբացվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Խաչի օծման արարողությունը կատարեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն: Եկեղեցու վերաբացմանը ներկա էին ՀՀ վարչապետ Ռ.Քոչարյանը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ.Հարությունյանը, Սյունիքի մարզպետ Ս.Աբրահամյանը:

Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ ու մեկենասությամբ 1999-2001թթ. կառուցվեցին Գորիսի մուտքը խորհրդանշող կոթողը, 2002-ին՝ հայրենիքի համար զոհված բոլոր հայորդիներին նվիրված հուշարձանը՝ Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում, 2002-ին՝ Սերո Խանգաղյանի կիսանդրին՝ մեծ գրողի անունը կրող դպրոցի բակում, 2004-ին՝ Ալսեկ Բակունցի հիշատակը երիցս հավերժացնող խաչքարը՝ նրա տուն-թանգարանի բակում, 2005-ին՝ Գուսան Աշոտի կիսանդրին՝ Գորիսի մշակույթի կենտրոնի բակում,

2005-ին՝ «Մայր հայրենիք» հուշարձանը՝ Սյունիք-Արցախ սահմանագծում, 2006-ին՝ Սուրբ Տրդատ մատուռը՝ Սինդարա ձորի նախկին սրբավայրում, 2010-ին՝ Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշակոթողը...

Նա, անշուշտ, կշռելի վաստակ ունի Գորիսի ինստիտուտը Գորիսի պետական համալսարանի վերածելու գործում (2006թ.), որի շնորհիվ ընդլայնվեցին այդ կրթօջախի հնարավորությունները՝ ամեն տարի կամխելով հարյուրավոր պատանիների ու աղջիկների հոսքը մայրաքաղաք:

Սուրեն Խաչատրյանի դերը ոչ պակաս ցայտուն երեւաց մշակութային կյանքի մեկ այլ՝ հրատարակչական ոլորտում: Լույս տեսնելուց 113 տարի հետո առաջին անգամ վերահրատարակվեց ու ընթերցողին հասանելի դարձավ Դեռնոյ Ալիշանի «Սիսականը»: Դա 2009 թվականին էր: Դրանից առաջ էլ, դրանից հետո էլ նա հովանավորել է եւ ժամանակակից գրողների ու գրականագետների, եւ համաքաղաքացիների ստեղծագործությունների հրատարակումը:

Նրա նախաձեռնությամբ վերջին տարիներին մարզում կազմակերպվեցին մեկ տասնյակի հասնող գիտաժողովներ՝ ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի եւ առաջատար բազմաթիվ գիտնականների մասնակցությամբ:

Նրա համառ ջանքերով «հետ բերվեց» Սերո Խանգաղյանի գորիսյան առանձնատունը՝ կառուցված 1977-78թթ. (գրողի մահվանից հետո վաճառվել էր), որի հիման վրա ստեղծվում է տուն-թանգարան:

Մի էական շտրիխ եւս, որ առանձնանում է նրա դիմապատկերի վրա: Նկատի ունենք նախորդ՝ 2-րդ հանրապետության պետական ու քաղաքական նշանավոր դեմքերի գործունեության վերագնահատումը, որ շատ դեպքերում հանիրավի խեղաթյուրվել կամ թերագնահատվել էր անկախության շրջանում: Մասնավորապես՝ իր հայրենի Շինուհայր գյուղում հավերժացվեց 1953-1960թթ. ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանի հիշատակը: Իսկ մարզկենտրոնում, Արտուր Աթայանի եռանդուն մասնակցությամբ, հարգանքի տուրք մատուցվեց Ռաֆիկ Սինասյանի հիշատակին, ով 1960-70-ական թվականներին գլխավորել է

Կապանի շրջանը եւ անուրանալի դեր խաղացել քաղաքի վերակառուցման, կապանյան տնտեսության արդիականացման գործերում:

Սուտ երկու տասնամյակ լինելով իշխանության մեջ, բազում անգամ ապացուցելով իր նվիրվածությունը երկրի ղեկավարությանը՝ նա, այնուամենայնիվ, չհայտնվեց վարչախմբի կույր սպասավորի կարգավիճակում: Հատկապես սկզբունքային հարցերում առավելապես գործեց իր խղճի մտքը: Ահավասիկ՝ Սթենաձորի օրինակը: Կապան-Մեղրի այլընտրանքային ճանապարհի կառուցումը, որ մեկնարկեց 2005-ին եւ ավարտվեց 2007-ին, հենց առաջին փուլում բախվեց լրջագույն մի խնդրի: Ճանապարհի մի հատվածը պետք է անցներ Սթենաձորի կուսական անտառով, ինչի համար պիտի հատվեր մոտ 20 հա անտառ՝ հազվագյուտ ծառատեսակներով: Սուրեն Խաչատրյան մարզպետն առաջիններից էր, ով դուրս եկավ ճանապարհի կառուցման այդ տարբերակի դեմ: Ոտքի ելան հայաստանյան ու միջազգային բնապահպանական կազմակերպությունները: Բուռն պայքարը սպասված արդյունքը տվեց: 2006-ի հունիսին կառավարությունը վերանայեց իր մոտեցումը, թեև ճանապարհի կառուցման նոր տարբերակը զգալիորեն թանկ պիտի արժենար, թեև 7 կմ-ով պիտի ավելանար մայրուղու երկարությունը: Արդյունքում՝ Սթենաձորը մնաց անձեռնմխելի, իսկ ճանապարհը կառուցվեց նոր տարբերակով:

Ոչ պակաս վիճահարույց էր եւ Լեռնաձորի մերձակայքում ուրանի հանքավայրի շահագործման հարցը (հայ-ռուսական միջպետական պայմանավորվածության շրջանակներում գտնվող հարց է), որն ալեկոծել էր ամբողջ Կապանն ու Քաջարանը՝ մերձակա գյուղերով: Բանը նրան էր հասել, որ 2010թ. հոկտեմբերի լույս 29-ի գիշերը Լեռնաձորում հրկիզվեց որոնողական աշխատանքներ կատարող մեքենասարքավորումը: Դրանից մի քանի օր անց՝ նոյեմբերի 11-ին, մոտ երեք հազար կապանցի դուրս եկան հանրահավաքի: Կարգախոսը հստակ էր՝ կասեցնել ուրանի պաշարների որոնումը: Եվ, որքան էլ անսպասելի էր, հանրահավաքին ներկայացավ Սյունիքի փոխմարզպետ Վաչե Գրիգորյանն ու ներկաներին փոխանցեց մարզպետի ուղերձը. «Մենք ձեզ

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

հետ ենք եւ մեզանից կախված ամեն ինչ կանենք որոնողական աշխատանքները դադարեցնելու համար»: Մարզկենտրոնի բնակչության եւ տարածքային իշխանության համատեղ պահանջն այս դեպքում եւս դրական արդյունք տվեց:

Անտարակույս, Սուրեն Խաչատրյանը նաեւ թերություններ է ունեցել եւ ունի, բացթողումներ է ունեցել եւ ունի: Եվ դեռ ունենալու է, քանզի ինքն էլ մարդ-մահկանացու է եւ դժվարին ու հակասական մեր ժամանակներում, կառավարման թերատ-պռատ համակարգում բարձրաստիճան պաշտոնյա է: Մարզում էլ քիչ մտահոգություններ չկան՝ մի մասը, անշուշտ, գործող համակարգով պայմանավորված: Բայց այսօր այդ մասին չենք ուզում խոսել: Եվ ոչ թե այն պատճառով, որ նրա ծննդյան օրն է, ու մենք, ավանդույթի համաձայն, օրհնանքի ու զնահատանքի խոսքեր պիտի ասենք միայն: Եվ ոչ էլ այն պատճառով, որ Սուրեն Խաչատրյանի ամեն մի վրիպում ժամեր անց հայտնվում է մամուլի էջերում, ու մարդիկ գիտեն ամենի մասին: Պարզապես կա համոզմունք, որ այդ թերություններն ու բացթողումները, չլուծված հարցերն ու հիմնախնդիրները տեսանելի են նաեւ իրեն՝ մարզպետին, որ դրանք աստիճանաբար լուծվում են՝ երկրի հնարավորություններին համաչափ: Ավելին, Սյունիքում հանգամանքներն այնպես են դասավորվել, որ Սուրեն Խաչատրյան մարզպետի ներկայությունը հատկապես հիմա շարունակում է պահանջված մնալ:

Սուրեն Խաչատրյանը, անշուշտ, անհատականություն է՝ բառի բուն իմաստով, իրեն բնորոշ հատկությունների ամբողջությամբ, ուրույն նկարագրով: Նրա լիդերությունը՝ մոտ երկու տասնամյակ Գորիսում եւ 7-8 տարի մարզում, պայմանավորված էր ինչպես ժամանակաշրջանի ու միջավայրի առանձնահատկություններով, այնպես էլ իր նկարագրով: Ըստ էության դա մարդու, կազմակերպչի պահանջված տեսակն էր պատերազմի, թոհուրեռի մեջ հայտնված երկրի համար: Պատահական չէ, որ նրան վստահում էին Վազգեն Սարգսյանը, պաշտպանության հաջորդ նախարարներ Վազգեն Մանուկյանը, Սերժ Սարգսյանը: Նրան վստահում էին հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նրան

վստահում էին գրեթե բոլոր վարչապետները: Նրան, որքանով տեսնում ենք, վստահում է գործող նախագահ Սերժ Սարգսյանը:

Եվ, այնուամենայնիվ, որոնք են նրան առավել բնորոշ հատկանիշները:

Գործունյա է եւ հետևողական: Ամենակրիտիկական վիճակներում անգամ խուճապի չի մատնվում: Չի սիրում պարտվել եւ դրա համար անհնարին է անում, թեւ փոխգիշումներն էլ պակաս չի կարելու: Սյունեցու պատվախնդրություն եւ արժանապատվություն ունի: Ընկածին ձեռք մեկնել գիտի: Ուրիշի հաջողությամբ ուրախանալ գիտի: Ամենացորդ նվիրվել գիտի ընկերոջը, զաղափարակցին, զինակցին: Իր հետ տարիներով աշխատածներն ասում են՝ եւ հեշտ է նրա հետ աշխատել, եւ՝ դժվար: Դժվար է, որովհետեւ պահանջկոտ է ու մարդկանց չափում է կատարած գործով: Չեշտ է, որովհետեւ աշխատելու բոլոր պայմանները ստեղծում է եւ հետո միայն պահանջում: Խոսքին տեր մարդ է, երբեք չի հայտնվել բյուրոկրատ չինովնիկների, ասող-չանող պաշտոնյաների գունակում: Չորդառատ լեռնային գետի պես է՝ կարող է երբեմն վարարել, փոթորկվել, լափու տալ, բայց երբեք իր ակերը չի քանդում: Պաշտոնական եւ իշխանական ավանդակարգին հակառակ՝ մարդկանց հետ շփվում է բոլոր իրավիճակներում՝ առանց ձեւականությունների: Աշխարհի կենտրոնը նրա համար իր Փոքր հայրենիքն է՝ Սյունիքը, որից սկսվում է սերը Մեծ հայրենիքի հանդեպ: Գիտի երկրի, հատկապես Սյունիքի պատմությունը, ձգտում է առաջինն ընթերցել այդ ոլորտում ասված նոր խոսքը, եւ պատահական չէ, որ զբաղվում է գիտությամբ՝ նախընտրելով 1917-21թթ. զանգեզուրյան իրադարձությունների ուսումնասիրումը:

Սյունիքի առանձնահատկություններից մեկն էլ լիդերների, ընդգծված անհատականությունների առատությունն է: Սյունիքի մարզպետը, ով էլ լինի, պետք է հնարավորինս ընդունելի լինի նրանց համար: Եվ պետք է նրանց օգտակար ու ողջամիտ ձգտումներին նեցուկ լինի ու, միաժամանակ, զսպող գործոն լինի նրանց անհարկի ամբիցիաների ճանապարհին: Սուրեն Խաչատրյանը կարողացել է դառնալ այդ գործոնը, ինչի արդյունքում քանիցս փլուզվել են հնարավոր շատ կուռքերի

կավե պատվանդաններ:

Այդ ամենով հանդերձ, սակայն, նրա ուժեղ եւ օժտված ներկայությունը ոչ մեկս մեծարման, օբյեկտիվ գնահատման խոսքով երբեք չենք պսակավորել: Ինքս էլ քսաներեքամյա լրագրողական գործունեության ընթացքում առաջին անգամ են առանձին հողվածով անդրադառնում Սուրեն Խաչատրյանի դիմանկարին, թեւ իմ խմբագրած «Չանգեզուր», «Այունյաց աշխարհ», «Սյունյաց երկիր» թերթերում ժամանակ առ ժամանակ բազմաթիվ հրապարակումներ են եղել:

|| *Ինչպես վերելում ասացի, մեր միջեւ տարիներ շարունակ մտերմիկ հարաբերություններ են իշխել: Ասեմ նաեւ, որ բազմաթիվ հարցերում համակիրներ ենք եղել: Բայց եւ եղել են հարցեր, որոնց շուրջ մեր տարածայնություններն ակնհայտ են եղել, սուր դրսևորումներ ունեցել: Սակայն դրանք չեն կարող անդրադարձ ունենալ նրա դիմանկարի ուրվագծման ներկա փորձին:*

Սուրեն Խաչատրյանը մեզանից մեկն էր եւ է՝ իսկապես աշխատավոր ընտանիքից սերված, իր ճանապարհին իր իսկ ձեռքով բացած, իր վայրէջքները, սայթաքումներն ու անկումները սեփական ուժով հաղթահարած, մարդկային զանգվածի գլխին նույն այդ մարդկանց կանչով կանգնած, լիդերի իր կերպարն իր իսկ վարքով ստեղծած: Եվ ուրեմն մեզանով նրան չզորելը վաղը եւեթ ներելի չի լինելու մեր իսկ կողմից: Եվ ուրեմն մեր կարելիությունների չափով՝ ազգանպաստ, սյունիքանպաստ գործերում նրան զորավիգ չլինելը հասկանալի չի լինելու որեւէ մեկին, երբ ժամանակի բարձունքից կդիտեն մեր այս օրերն ու ներկա ընթացքը: Եվ այնքան անկեղծ ու շիտակ պիտի լինենք, որ որեւէ հարցում այլակարծիք լինելու դեպքում մեր միտքը ծածուկ չպահենք:

Ծնունդը շնորհավոր, ընկե՛ր Խաչատրյան, հարգելի՛ զինվոր ու հրամանատար, պարոն մարզպետ եւ, իհարկե, Սուրեն Սերյոժայի:

Կարող կերպարիդ մաղթում ենք երկար կյանք ու առողջություն:

«Այունյաց երկիր», N13, 2011թ.

ՐԱՎԵՐԺԱՑՎԵՑ ՆԱՅԱՏԱԿՆԵՐԻ ԴԻՇԱՏԱԿԸ



Մեծ Զայրենականում զոհված գորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի հարեւանությամբ այլևս ու ընդմիշտ կհառնի Արցախյան գոյամարտի նահատակների հիշատակին նվիրված եւ մեր նորօրյա հերոսամարտը փառաբանող չքնաղ մի կոթող:

Հրաշակերտ կոթող՝ Արցախյան գոյամարտի նահատակների հիշատակը հավերժացնող

Գորիսում մինչ այդ պատշաճորեն հավերժացված չէր Արցախյան հերոսամարտում զոհված հայորդիների հիշատակը:

Ի տարբերություն հանրապետության շատ տարածաշրջանների, Գորիսում զոհված ազատամարտիկները հողին չեն հանձնվել մեկ միասնական վայրում: 1990-ականների պատերազմական օրերին զոհված ազատամարտիկների հարազատները կամենում էին իրենց մարտիրոսացած մերձավորին հողին հանձնել տոհմային հանգստարանում, իսկ նրանց կամքը առարկելի չէր:

Տոնական կամ հիշատակի օրերին գորիսեցիները զոհված ազատամարտիկներին հիշատակի տուրք էին տալիս՝ այցելելով Սպիտակի երկրաշարժի առիթով կառուցված հուշահամալիր, որտեղ կանգնեցված էր նաեւ հիշատակի քար՝ Արցախյան ազատամարտի զոհերին նվիրված:

Այս իրավիճակը ժամանակավոր էր համարվում Գորիսում...

Եվ ահա հոգեւոր ու բարոյական նշանակության այդ հարցը տարիներ անց իր լուծումը գտավ:

Հրաշակերտ կոթողը ճարտարապետական յուրօրինակ հորինվածք է՝ մի քանի բաղադրատարրերից կազմված, սրբատաշ բազալտից պատրաստված՝ 16,5 մ բարձրությամբ եւ 8,6 մ լայնությամբ:

Գլխավոր բաղադրիչը հաղթական մարն է՝ Արցախյան գոյամարտում հայ ժողովրդի հերոսությունն արտացոլող:

Հաղթական մարի վրա բարձրացող երկու կամարները խորհրդանշում են հայկական ներկայիս երկու պետության համատող ու միասնական ընթացքը:

Հայկական երկու հանրապետությունը Տիրոջ խաչի հովանու ներքո են՝ Բարձրալին ապավինած:

Հաղթական մարի վրա փորագրված է բոլորիս երախտիքի տուրքը՝ «Հավերժ



փառք Արցախյան հերոսամարտում զոհվածներին»:

Հուշահամալիրի կենտրոնամասում կրակատեղին է կամ կրակնացայտը, որտեղ անմար կրակն է վառվելու: Եվ կրակի ցուլքը հանուն հայրենիքի զոհվածների անմահ հոգիներից լույս է սփռելու՝ բորբոք պահելով նաև նահատակ զորիսացիների հիշատակը:

Նախկինում էլ այդտեղ կրակարան կար՝ անմար կրակի համար, բայց դա հարմարեցված էր Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին կառուցված հուշարձանին: Հիմա երկու կոթող է, եւ կրակարանը տեղափոխվել է ու դրվել կենտրոնամասում:

Նորակառույց հուշակոթողի վրա չկա հիշատակագիր արձանագրություն, բայց Գորիսում քաջատեղյակ են, որ այն կառուցվել է Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ



ու ֆինանսական ներդրումով, Սեւադա Ջաքարյանի հեղինակած նախագծով: Կառուցման սկիզբը դրվել է 2013թ. աշնանը: Շինարարության աշխղեկը Կանո Միրաքյանն էր, ում վկայությամբ էլ կառույցի վրա ծախսվել է մոտ 250 հազար ԱՄՆ դոլար:

1980-ին՝ զորիսացիների հանգանակած միջոցներով: Նախագծի հեղինակը եւ ճարտարապետը Գեւորգ Մուշեղյանն է: Հուշարձանի շրջակայքը վերակառուցվել է 1985-ին՝ Սեւադա Ջաքարյանի նախագծով:

Մեկ տարի առաջ, դարձյալ Սու-



...Մայիսի 8-ի անձրեւոտ երեկոյան դեռեւս շարունակվում էին հուշահամալիրի տարածքի բարեկարգման աշխատանքները. այն ղեկավարում էր ինքը՝ Սյունիքի մարզպետը: Ձգտում էր, որ հաջորդ առավոտյան ամեն ինչ պատրաստ լինի տոնակատարության համար:

Իսկ ինչո՞ւ այդ վայրն ընտրվեց հուշակոթողի համար:

Հարցի պատասխանը հստակ տրամաբանություն ունի. դա Մեծ հայրենականում զոհված զորիսացիների հիշատակը հավերժացնող հուշարձանի տարածքն է. հուշարձանը կառուցվել է

րեն Խաչատրյանի նախաձեռնությամբ, խաչքար է կանգնեցվել այդտեղ՝ Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի կապակցությամբ:

Արցախյան գոյամարտում զոհված հայորդիների հիշատակը հավերժացնող հուշակոթողը եւս այդտեղ կառուցելով, կարծես, ամբողջանում է վայրը եւ վերածվում յուրօրինակ աղոթատեղիի, որտեղ հաղթանակի եւ հիշատակի օրերին կհավաքվեն զորիսացիները: Այն, անշուշտ, մարդկանց համար կդառնա նաև զբոսավայր ու հանգստավայր:

Կամեցանք լսել Սուրեն Խաչատրյան-

Ղ ԶԱՎԵՐԺԱՑՎԵՑ ՆԱԶԱՏԱԿՆԵՐԻ ԶԻՇԱՏԱԿԸ

նի մտորումները հուշակոթողի վերաբերյալ:

– Վերջին քսան տարում բազում կառույցների, հուշակոթողների եւ հոգետր նշանակության շինվածքների նախածեռնող ու հովանավորող եմ եղել, բայց ամենանշանավորն այս կառույցն է, որովհետեւ արտացոլում է Արցախյան գոյամարտում մեր ժողովրդի հերոսությունը, հավերժացնում մեր նահատակ ազատամարտիկների հիշատակը, խորհրդանշում Տիրոջ խաչի հովանուները հայկական երկու հանրապետության ընթացքը, – ասաց մարզպետը:

Ապա հավելեց.

– Մայիսի 9-ից հետո հուշահամալիրում աշխատանքները շարունակություն կունենան: Նախ՝ հաղթականարը զարդաքանդակներով կպատվի, իսկ մերձակա տարածքը կվերածվի հանգստյան գոտու, մանավանդ որ հիմնանորոգվել ու բարեհաճ տեսքի է բերվել համալիրի շարունակությունը կազմող փոքրիկ լճակը՝ մոտ 3,5 կմ հեռավորությունից՝ Շորիձորից ջուր հասցնելով այդտեղ՝ վայրկյանում 10 լիտր: Տարածքի անմիջական հարեւանությամբ գտնվող նախկին պիոներ պալատի առաջին հարկում էլ կհիմնվի Արցախյան հերոսամարտի նահատակներին նվիրված թանգարանը:

Դե ինչ, մեր գոհությունը մատուցենք հրաշալի նորակառույցի նախածեռնող ու հովանավոր Սուրեն Խաչատրյանին, ճարտարապետ Սեւադա Զաքարյանին, աշխույժ Կամո Միրաքյանին ու բոլոր վարպետներին՝ Գորիսին հիասքանչ այդ ստեղծագործությունը պարզեւելու, Արցախյան հերոսամարտի նահատակ հայորդիների ոգեղեն ներկայությունը մեր քաղաքում մեկընդմիշտ ապահովելու համար:

Հիշենք նաեւ, որ Արցախյան առաջին պատերազմում՝ 1988-94թթ., Գորիսի տարածաշրջանից զոհվեց 81 զինծառայող եւ ազատամարտիկ (ըստ Գորիսի զինկոմիսարիատի տվյալների): Քառօրյա պատերազմում տարածաշրջանից զոհվեց եւս մեկ զինծառայող՝ Նարեկ Մկրտչյանը:

Մեծ հայրենականին Գորիսի տարածաշրջանից մասնակցեց 9146 հոգի, նրանցից այլեւս չվերադարձավ 4144-ը (1381-ը՝ Գորիս քաղաքից):

Թվերը վկայում են, որ մայիսի 9-ը նաեւ ոգեկոչության օր է յուրաքանչյուրիս համար՝ Մեծ հայրենականում եւ





Արցախյան ազատամարտում զոհված մեր հարազատներին ու մերծավորներին հավերժ հիշելու, նրանց հերոսությամբ ոգեշնչվելու օր:

Ահա թե ինչու հազարավոր գորիսեցիներ էին հավաքվել հուշակոթողի բացման արարողությանը: Այն իսկապես վերածվեց աշխարհախումբ տոնահանդեսի, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Յուրի Աբրահամյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ կառավարության անդամներ և բարձրաստիճան զինվորականներ, զոհված ազատամարտիկների և զինվորների ծնողներ, Սյունիքի մարզի բոլոր քաղաքներից ժամանած պատվիրակություններ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

10 մայիսի 2016թ.

«Այունյաց երկիր», N16, 18 մայիսի 2016թ.



Գորիսի մուտքը խորհրդանշող կոթողը (1999-2001թթ., Նախագծի հեղինակ եւ կառույցի ճարտարապետ՝ Սեւադա Զաքարյան):



«Մայր հայրենիք» հուշարձանը՝ Սյունիք-Արցախ սահմանագծում (2005թ., «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր փնտրեն Մաքսիմ Հակոբյանի հետ, Նախագծի հեղինակ եւ ճարտարապետ՝ Սեւադա Զաքարյան):



Սուրբ Տրդատ մատուռը Սինդարա ձորի սրբավայրում (2006թ., Նախագծի հեղինակ եւ ճարտարապետ՝ Սեւադա Զաքարյան):

Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշակոթողը (2010թ., քանդակագործ՝ Նարեկ Օրոյան, ճարտարապետ ու նախագծի հեղինակ՝ Սեւադա Զաքարյան):



Գրիգոր Տաթևացու հրապարակը («Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության եւ Գորիսի քաղաքապետարանի հետ, նախագծի հեղինակ եւ ճարտարապետ՝ Գարեգին Փարսյան):

ԳՈՐԻՍ. նրա նախաձեռնությամբ ու հովանավորությամբ հավերժությանը մեկնված կոթողներ եւ կառույցներ



Գուսան Աշոփի կիսանդրին Գորիսի մշակույթի կենտրոնի բակում (2005թ., քանդակագործ՝ Գեորգի Բաղդասարյան, ճարտարապետ՝ Սեւադա Զաքարյան):



Հուշարձան Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցու բակում՝ նվիրված հայրենիքի համար զոհված բոլոր հայորդիներին (2002թ., նախագծի հեղինակ եւ ճարտարապետ՝ Սեւադա Զաքարյան):





Արցախյան գոյամարտի
Նահապետյանների
հիշատակը
հավերժացնող
հուշակոթող (2016թ.,
Նախագծի հեղինակ
Էլ ճարտարապետ՝
Սեւադա Զաքարյան):

Վերագործարկված շարվանդ Մխիթար Սպարապետի
անվան հրապարակում (2010թ.):



1953-60թթ. ՀԿԿ Կենտկոմի
առաջին քարտուղար
Սուրեն Թովմասյանի
կիսանդրին հայրենի
Շինուհայր գյուղի դպրոցի
բակում (քանդակագործ՝
Գեորգի Բաղդասարյան):



Սերո Խանգոյանի
կիսանդրին Գորիսի՝
գրողի անունը կրող
դպրոցի բակում (2003թ.,
քանդակագործ՝ Գեորգի
Բաղդասարյան):



Ակսել Բակունցի
դիմաքանդակ
(քանդակագործ՝ Գեորգի
Բաղդասարյան, 2013թ.),
կրեղադրվի Հայաստանի
ազգային գրադարանում:



Օրբեյանների գինանշանը
Գորիսի Մինդարա ձորի
Սուրբ Տրդատ մատու-
ռի հարավային պարիս
(2005թ., էքսիզը՝ Սեւադա
Զաքարյանի, քանդակագործ՝
Վարդան Խուրշուդյան):



Ակսել Բակունցի հիշատակը
երիցս հավերժացնող
խաչքարը՝ նրա տուն-
թանգարանի բակում
(2004թ., Նախագծի հեղինակ
Սեւադա Զաքարյան,
քանդակագործ՝ Ռազմիկ
Արզումանյան):



Խաչատուր Մալինցյանի
կիսանդրին (քանդակագործ՝
Լևոն Առաքելյան, 1995թ.),
տեղադրված է Գորիսի
գորամասի հրապարակում:



Ակսել Բակունցի հուշարձանը
գրողի տուն-թանգարանի
բակում՝ փողոցի կողմից
(2015թ., քանդակագործ՝
Միքայել Ղուկասյան):

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

Գրքեր, թերթեր, ամսագրեր, որոնք հրատարակվել են Սուրեն Խաչատրյանի մեկենասությամբ


ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ

1. Ղեւոնդ Ալիշան, «Սիսական. տեղագրություն Սյունյաց աշխարհի», 2009թ., «Հայագիտակ», գիրքը լույս է տեսել 1893թ., Վենետիկ, Ս.Ղազար:
2. Համո Սահյան, «Ինձ բացակա չղմեք», բանաստեղծությունների ժողովածու, «Զանգակ», 2014թ:
3. Ղեւոնդ Ալիշան. «Սիսական. տեղագրություն Սյունյաց աշխարհի», 2011թ., «Հայագիտակ», գիրքը լույս է տեսել 1893թ., Վենետիկ, Ս.Ղազար:
4. Ղեւոնդ Ալիշան. «Սիսական. տեղագրություն Սյունյաց աշխարհի», աշխարհաբար թարգմանություն, լույս կտեսնի 2016-ին:



ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ

1. Դավիթ Գասպարյան, «Ակսել Բակունց: Կյանքը եւ ստեղծագործությունը», Երեւան. 2009, «Զանգակ. 97»:
2. Ակսել Բակունցի ստեղծագործությունների ընտրանի, Երեւան, «Հայագիտակ»-«Նաիրի», 2009:
3. Տիգրան Գրիգորյան, Աննահոթյան համանվագ, Պոեզիա եւ արձակ պատումներ, «Զանգակ», Երեւան 2015:
4. Տիգրան Գրիգորյան, Աննահոթյան համանվագ, պոեմ, Երեւան, 2010թ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
5. Վոլոդյա Հովհաննիսյան, «Սիսա-



- կան» ջոկատ, «Զանգակ», Երեւան 2014:
6. Ապետնակ Գրիգորյան, Անթեղված կրակներ (բանաստեղծություններ), «Զանգակ», Երեւան-2013:
7. Դավիթ Գասպարյան, Գուրգեն Մահարի: Կյանքը եւ ստեղծագործությունը, «Զանգակ», Երեւան-2013թ.
8. Սուրեն Խաչատրյան, Մարտին Զիլֆուլդարյան, Մեծ գորիսեցի (նվիրված Սերո Խանգադյանի 90-ամյակին), 3 դեկտեմբերի 2005թ., Գորիս:
9. Հրանտ Բ. Արմեն, Փառանձեմ թագուհի (արեւելահայերենի վերածեց Ալբերտ Իստյանը), «Հայագիտակ», Երեւան 2014:
10. Գուսան Աշոտ-100 (Զանգեզուրի բարի ծնունդ), Գորիս-2007թ., «Գրիգոր Տաթևացի» հրատարակչություն:
11. Նիկողայոս Ադոնց. «Երեւելի հայեր», 2014, «Հայագիտակ»:
12. Գրիշա Մանուչարյան, «Զանգեզուրյան լեգենդներ», Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010:
13. Աշոտ Սիմոնյան, «Զանգեզուրի գոյամարտի հերոս Խաչատուր Մալինցյանը», «Զանգակ», Երեւան 2014:
14. Կիմ Աղաբեկյան, «Գուրգեն Մահարի», «Զանգակ», Երեւան 2013:
15. Տիգրան Գրիգորյան, «Հավիտենության ճանապարհին. բանաստեղ-



- ծուքյուններ», Երեւան 2007:
16. Համլետ Գեւորգյան, «Յապոն. Հովհաննես Պարոնյան», 2013, «Գրիգոր Տաթևացի» տպարան:
 17. «Մեղրի. գրական-հասարակական տարեգիրք, Երեւան 2008:
 18. Արտավազդ Մկրտչյան, «Սյունեցիները Հայրենական մեծ պատերազմում. 1941-45թթ.», 2009թ.:
 19. Արամայիս Սահակյանի գրքի հրատարակություն, 2007թ.:
 20. Մարտին Բաղդասարյան, «Ազատագրում», գիրք 3, Երեւան, «Այսօր» հրատարակչություն, 2010թ.:
 21. Գ.Խոջաբաղյանի գրքի հրատարակություն, 2012թ., «Գրիգոր Տաթևացի» ՍՊԸ:

7. Համո Սահյանի ծննդյան 100-ամյակին նվիրված. ՀՀ մշակույթի նախարարության, Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի, «Արսեն եւ Ներսես» ՍՊԸ-ի հետ («Սյունյաց երկիր», N6 (314), 8 ապրիլի 2014թ.):
8. Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոս Մովսես Գ Տաթևացուն (Խոտանանցուն) նվիրված. Կապանի 2008-2012թթ. քաղաքապետ Արտուր Աթայանի հետ («Սյունյաց երկիր», N23 (366), 11 սեպտեմբերի 2015թ.):
9. 20-րդ դարի 2-րդ կեսի հայ արձա-



- կի նահապետ Սերո Խանգաղյանին նվիրված («Սյունյաց երկիր», N32 (374), 3 դեկտեմբերի 2015թ.):
10. Նշանավոր պատմաբան, բանասեր, հնագետ Սորոս Հասրաթյանին նվիրված («Սյունյաց երկիր», N20 (396), 30 հունիսի 2016թ.):

Ս Խմբագրության կողմից

Մեզ չհաջողվեց ամբողջացնել Սուրեն Խաչատրյանի մեկնաստությամբ տպագրած գրքերի ցանկը, ուստի եւ այն կհամալրվի՝ նոր տեղեկություններ լինելու դեպքում:

«ՍՅՈՒՆՅԱՅ ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՏԱՐՆԵՐ

1. Ձանգեզուր աշխարհի նահապետը (նվիրված Աշուղ Աշոտին). «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի հետ («Սյունյաց երկիր», N1 (113), 17 հունվարի 2007թ.):
2. Ակսել Բակունցին նվիրված՝ ծննդյան 110-ամյակի կապակցությամբ. մոսկվայաբնակ գործեսցիներ Գագիկ Հայրունյանի, Ալբերտ Տոռոզյանի եւ Էդիկ Մարոյանի հետ, («Սյունյաց երկիր», N13 (185), 8 հունիսի 2009թ.):
3. Խաչատուր Աբովյանին նվիրված՝ ծննդյան 200-ամյակի կապակցությամբ («Սյունյաց երկիր», N23 (195), 10 դեկտեմբերի 2009թ.):
4. Սուրբ Գրիգոր Տաթևացու հիշատակին նվիրված. Յուրի Սաֆարյանի, «Հենրիկ եւ որդիներ» ՍՊԸ տնօրեն Հենրիկ Հարությունյանի եւ «Առանցք» ՍՊԸ տնօրեն Գագիկ Առուշանյանի հետ («Սյունյաց երկիր», N16 (213), 25 սեպտեմբերի 2010թ.):
5. Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին նվիրված. Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի հետ («Սյունյաց երկիր», N10 (229), 28 մայիսի 2011թ.):
6. Մելիք Հայկազն II-ին նվիրված. ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ («Սյունյաց երկիր», N7 (280), 30 մայիսի



ԳԵՐԴԱՍՏԱՆ

Երբ տարիներ առաջ այցելեցի նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Դեզիկ Բաղդազյուլյանին, հեռուստացույց էր դիտում. «Ժամանակ քիչ ունեմ, բայց առանց լրատվական ծրագրերի հնարավոր չէ», – ասաց նա եւ զրույցի ամբողջ ընթացքում հաճախ էր հարցերս անպատասխան թողնում եւ ուշադրությունը սեւեռում հեռուստացույցի էկրանին: Այն ժամանակ, նրա պատմելով, այդ օրերին ամենից շատ հետաքրքրում էր, թե ինչ են խոսում հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին: Նաեւ ռուսական հեռուստատեսության լուրերի ծրագիրն էր դիտում, որովհետեւ երբեմնի մայրաքաղաք Մոսկվայի հետ կապված լավագույն հիշողություններ ունի: Երբ տարիներ առաջ ընտրվեց ԽՍՀՄ գերագույն խորհրդի պատգամավոր եւ պետք է Մոսկվա մեկնեի ու մասնակցեի հերթական մատաչջջանի աշխատանքներին, ոչ միայն պատասխանատվություն էր զգում, այլև ուրախություն: Նաեւ չթաքցրեց, որ դա նաեւ իր համար իսկական տոն էր, հանդիսություն: «Պատասխանատվությունն ու կարգապահությունն իմ մշտական ուղեկիցներն են մինչեւ հիմա: Վաթսուկ տարուց ավելի կթվորուի եմ աշխատել Գորիսի՝ այն ժամանակ «Ավանգարդ» կոչվող տնտեսությունում, մինչեւ ֆերմա հասնելն ամեն օր 10-15 կիլոմետր ճանապարհ եմ կտրել, 30 կով կթել, նաեւ քաղաքային եւ շրջանային խորհուրդների պատգամավորի աշխատանք կատարել ու այս ամենի հետ իմ ընտանիքում ամեն ինչ հասցրել եմ, որեւէ անգամ չեմ ուշացել», – պատմում էր տիկին Դեզիկը: Զուտորով պատմեց նաեւ, որ մի անգամ քիչ էր մնացել ուշանա Մոսկվա՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստի մեկնելուց: Գորիսի օդակայանի այն ժամանակվա նորանշանակ դիսպետչերը համառորեն չէր հավատում, որ ինքն անվճար տոմսի իրավունք ունի եւ պահանջում էր վճարել: Ինքն էլ կողի է ընկնում ու չի ուզում ո՛չ վճարել, ո՛չ էլ այդ մասին տեղեկացնել ԶԿԿ Գորիսի շրջկոմին: Երկար համոզելուց հետո հազիվ վերջին ուղերթով հասնում է Երեւան: Ինչպես էր եղել, Կենտկոմում իմացել էին այդ մասին. «Վերադառնալուց հետո Գորիսի օդանավակայանում քիչ էր մնում անհատապես ինքնաթիռ առաջարկելին», – ծիծաղեց վաստակաշատ կինը:

ԴԵԶԻԿ ԲԱՂԴԱԳՈՒԼՅԱՆ.
«Փառքին հասնելու ճանապարհն իմ աշխատանքն է եղել»



Չարցին, թե դժվա՞ր չէր կթվորուի կնոջ համար ռուսերենով անցկացվող երկարաշունչ նիստերին մատել, Մոսկվայում շփվել մարդկանց հետ, տիկին Դեզիկը պատասխանեց. «Չավատա, չէինք հոգնում, որովհետեւ այդ ամբողջ ընթացքում այնպիսի ներքին հպարտություն էինք ապրում, անգամ՝ պարծենում, այնպես որ պատրաստ էիր մի քանի օր էլ ավելի վայելել այդ զգացողությունը: Իսկ շփվելու առիթներ քիչ էին լինում: Ամեն ինչ հաշվարկված էր: Անգամ խաճուճ գնալու անհրաժեշտություն չկար: Նստաշրջանի առաջին իսկ օրերից մեզ համար առանձին խանութ էր բացվում, որտեղ բարձրորակ ապրանքներ էին վաճառում: Նաեւ զգուշացնում էին, որ երկու-երեք կտորից ավելի չզենենք: Դե էն ժամանակներում հարյուր աչք էր մեզ նայում, հարցը կարող էր մինչեւ ԿԳԲ հասնել», – հիշում էր տիկին Դեզիկը: Չնայած աշխատանքը զնահատում

էին, պարզեւնե՞ր շնորհում, բայց նաեւ ուշադրության կենտրոնում էիր, որ հանկարծ սխալ քայլ չանես: Նրա խոսքով՝ այն ժամանակ աշխատող մարդուն ավելի շատ էին գնահատում, իսկ երբ իմացավ, որ տարվա մեջ հոկտեմբերի 15-ը մշվում է որպես գյուղի կնոջ միջազգային օր, դժգոհեց, որ դա քիչ է, ըստ նրա ամբողջ տարին հողի հետ աշխատող կինն առանձնահատուկ ուշադրության պիտի արժանանա: Դարձյա՞նք էր մշում, որ ժամանակին իր անունը միշտ տեղական եւ հանրապետական, միութենական թերթերի էջերում է եղել: Մի օր նաեւ հյուրընկալել է Բաքվի կուսակցական թերթերից մեկի խմբագրին, որին ամենից շատ զարմացրել է, որ առավոտից մինչեւ ուշ երեկո աշխատող կնոջ տանն ամեն ինչ «տեղը-տեղին» է: «Նրանք մինչեւ ֆերմա էին հասել, հետո երեկոյան ինձ հետ տուն եկան: Երբ ընթրիքին ճաշ հյուրասիրեցի, զարմացան, քանի որ գիտեին, որ առավոտյան ժամը 6-ին եմ աշխատանքի գնացել: Չէին հավատում, որ գիշերն եմ եփել», – հիշում էր նա: Վաստակաշատ կնոջ կարծիքով՝ ժամանակակից կանայք շատ մտահոգ են իրենց ընտանիքի, ամուսինների, երեխաների բարեկեցության համար: Դժգոհ էր, որ երիտասարդ կանայք օրվա մեծ մասն անց էին կացնում «փողոցի մատարանին մատած», սուրճի սկուտեղի շուրջ, ու նրանց պարապությունը լցնող միակ միջոցը մնում էր բամբասանքը: Ասում էր, թե տեղյակ է, որ բավարար աշխատատեղեր չկան, բայց համոզված էր, որ կինը, եթե մտքին դնի, իր համար աշխատանք կգտնի: Զարմանում էր, որ տնամերձ հողամաս ունեն, բայց

ԳԵՐԴԱՏԱՆ

Դեզիկ Բաղդազյուլյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

2012թ. մայիսի 20-ին, կյանքի 82-րդ տարում, վախճանվեց անվանի գործիչի, նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Դեզիկ Բաղդազյուլյանը, որի հուղարկավորությանը՝ կայացած մայիսի 22-ին, մասնակցեցին 33 նախագահ Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը եւ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի կառավարությունների անդամներ:

Դեզիկ Բաղդազյուլյանը ծնվել է 1930թ. Գորիս քաղաքում: Մանկությունն անցել է մեր ժողովրդի համար դժվարին ժամանակներում՝ պայմանավորված Հայրենական մեծ պատերազմով: Հայրը՝ Մեսրոպ Բաղդազյուլյանը, Մեծ հայրենականի առաջին իսկ օրերից մեկնել է ճակատ: Գումարտակի հրամանատարի աստիճանի հասած եւ ավագ լեյտենանտի կոչման արժանացած Մեսրոպ Բաղդազյուլյանը զոհվեց 1943-ին՝ Հյուսիսային Կովկասի համար մղված կռիվներում: Նրա գերեզմանը գտնվում է Պյատիգորսկ քաղաքում: Վեց մանկահասակ երեխա ունեցող ընտանիքի հոգսը ծանրացել է մոր՝ Վարսենիկի, ուսերին: Եւ ինքը՝ Դե-

զիկ Բաղդազյուլյանը, տեղի ութնամյակն ավարտելուց հետո, իրենից ավագ երկու քրոջ հետ, ստիպված աշխատանքի է անցել շրջկենտրոնի «Ավանգարդ» տնտեսությունում եւ արել հնարավորը՝ որբացած ընտանիքի հոգսերը թեթեւացնելու համար: Այդ տնտեսության հետ էլ կապված է նրա աշխատանքային ամբողջ կենսագրությունը՝ մինչեւ 1992 թվական: Աշխատել է տնտեսության տարբեր ոլորտներում՝ դաշտավարություն, այգեգործություն, ապա եւ անասնապահություն:

Դեզիկ Բաղդազյուլյանն աշխատանքում տարիներ ի վեր ունեցել է անուրանալի հաջողություններ եւ Գորիսում, ինչպես նաեւ շրջանի սահմաններից դուրս, վաստակել հարգանք, հեղինակություն եւ ճանաչում: Բանիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի, Գորիսի կուսշրջկոմի անդամ, Գորիսի շրջանային ու քաղաքային խորհուրդների պատգամավոր: 1970-75թթ. եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: Դեզիկ Բաղդազյուլյանի մկիրական աշխատանքը քանիցս գնահատվել է պետական ու գերատեսչական պարգևներով, իսկ 1973թ. արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի:

Լինելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ընդգրկված լինելով կոմկուսի հանրապետական եւ շրջանային ղեկավար մարմիններում, Դեզիկ Բաղդազյուլյանը երկար

տարիներ Գորիսը ներկայացրել է հանրապետությունում, անձնական ներդրում ունեցել քաղաքի եւ շրջանի գյուղերի առջեւ ծառայած մի շարք խնդիրների լուծման գործում:

Դեզիկ Բաղդազյուլյանն ավանդապահ հայ կին էր, հոգատար մայր: 1950թ ամուսնացել է համաքաղաքացի Սերյոժա Խաչատրյանի հետ, ով նույնպես աշխատում էր «Ավանգարդ» տնտեսությունում եւ մինչեւ կյանքի վերջը՝ 2012 թվականը, ակտիվ մասնակցություն ունեցել այդ տնտեսության կյանքին: Դեզիկ Բաղդազյուլյանն ու Սերյոժա Խաչատրյանը ստեղծել են օրինակելի ընտանիք, ունեցել վեց զավակ, որոնցից երկուսը մահացել է վաղ տարիքում: Նրանք ծնողն են Սուրեն Խաչատրյանի, ով Արցախյան ազատամարտի ճանաչված հրամանատարներից է, իսկ 2004 թվականից՝ Սյունիքի մարզպետը:

Դեզիկ Բաղդազյուլյանը նաեւ կարեկից ու հոգատար բարեկամ էր, ընկեր եւ հարեւան, Գորիսի առօրյայով մինչեւ կյանքի վերջն ապրող անձնավորություն:

Նրա անունը մշտապես կապված կլինի Գորիսի խորհրդային շրջանի պատմության հետ եւ կմնա երախտապարտ գործիչների հիշողության մեջ:

ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

«Այունյաց երկիր» N14 (255), 2012թ.

կանաչին շուկայից են գնում: Ինքն արդեն ութերորդ տասնամյակն էր ապրում, սակայն չէր կարող առանց աշխատանքի: «Թեպետ երեխաներս կարող են ինձ ապահովել, բայց չեն հանդիմանում, որովհետեւ գիտեն, որ ես պիտի իմ այգին մշակեմ: Ստքիս որ դնեմ, դեռ կով էլ կպահեմ, բայց վախենում են չկարողանամ կթել, 60 տարի կով եմ կթել, վախենում են թեևերս դավաճանեն», – ասում էր տիկին Դեզիկը:

Հարցին, թե ինչ են տվել նրան ժամանակին ստացած կառավարական մեծ պարգևները, բազմավաստակ կինը միանգամից պատասխանում է. «Անուն, ճանաչում: Կաթնասնանապահական

ֆերմայում աշխատելն այն ժամանակ արդեն իսկ վաստակի առումով բավարար էր, տարեկան մի քանի տասնյակ կիլոգրամ միայն բուրդ էին տալիս, բարձր աշխատավարձ, բայց անունն ուրիշ էր եւ այն պիտի պահպանեիր, փայփայեիր: Ծիշտ է՝ քո աշխատանքն էին գնահատում, բայց գնահատում էին, չէ՞: Եվ ես միշտ հավատարիմ եմ մնացել, որպեսզի հանկարծ չասեն, թե պարզե՞ր ստացավ ու արդեն թերի է աշխատում»: Նրա կարծիքով մեր օրերում գյուղի կնոջն ինքնավստահությունը պակասում է ու դրանում, ըստ նրա, կարելու տեղ ունի, թե երկիրն ինչպես է խրախուսում կնոջ աշխատանքը, սա-

կայն, նրա համոզմամբ, կինը պիտի ոչ միայն վաստակելու համար շատ աշխատի, այլև կարողանա բարձրացնել իր ինքնագնահատականն այնպես, որ իր հետ հաշվի նստեն ոչ միայն ընտանիքում: Եվ նախկին Գերագույն խորհրդի պատգամավորն ավստոսում էր, որ այս առումով ամենաշատ տուժում է գյուղի կինը: Ու գուցե այդ պատճառով էլ կանանց ձգտումը նոր հաջողությունների հասնելու համար մեծ չէ: Իսկ ինքն այն ժամանակ իր աշխատանքով մշտապես առավելագույնին էր ձգտում՝ Փառք էր ուզում եւ վաստակեց այն:

ՍՈՒՄԱՆԱ ՇԱՀՆԱԶՐՅԱՆ

«Այունյաց երկիր», N14 (255), 2012թ.

ԳԵՐԴԱՍՏԱՆ

Սուրեն Խաչատրյան մարդու համար իր արմատները յուրօրինակ այցեքարտ են

Չոր անապատում էլ ծառը կարող է աճել, բերք տալ: Եվ դա ոչ թե նրանից է, որ ծառը հարմարվել է անապատային կյանքին եւ բնակլիմայական պայմաններին, այլ՝ որովհետեւ նրա արմատներն առողջ են, կենսունակ: Ասել է թե՛ ծառ լինի, թե՛ մարդ, պիտի առողջ արմատներ ունենա, որպեսզի ոչ մի խորշակ չկարողանա անցնել նրա կողքով...

Սուրեն Խաչատրյան մարդու արմատներն առողջ են, նրանք սնվել են մաքուր, զուլալ ջրերով, եւ նրա յուրաքանչյուր արմատ ընծյուղվելու հնարավորություն է տվել այդ տոհմի մարդկանց:

Սուրեն Խաչատրյանի ապուպայերը հալալ քրտինքով ապրած մարդիկ են եղել: Պապը՝ Գալուստը, արհեստավոր մարդ էր: Գալուստի կինը շուտ մահացավ, եւ ամուսնացավ երկրորդ անգամ:

– Հայրս այդ ժամանակ 10 տարեկան էր, – պատմում է Սուրեն Խաչատրյանի քույրը՝ Մարետա Շալունցը, – Սիրանը պահեց-մեծացրեց երեխաներին, ամուսնացրեց: Պապս թի այգի ուներ Գորիսի «Կալին պաշ» անվանյալ վայրում: Երբ թուրք հասունանում էր, պապս կանչում էր հեռու-մոտիկ բարեկամներին, հարեւաններին, ընկերներին: Թութ թափելը տոնախմբություն էր մեզ համար: Տատս էլ այդ օրը լավաշ էր թխում: Թթի սեղանի շուրջ հավաքվածները համտեսում էին տատիս թխած լավաշը, պատրաստած պանիրը, մյուս ուտեստները: Հետո «Կալին պաշում» հնչում էր երգը՝ տարածվելով Գորիս գյուղով մեկ: Պապիս տունը մեզ համար մեր մանկության օրրանն էր: Պապս հյուսն էր: Գորիսի շատ տների վրա մինչեւ հիմա կարելի է տեսնել նրա ձեռագիրը: Հայրս ու մայրս առավոտ-իրիկուն աշխատանքի մեջ էին:

Ուստի ինձ եւ երեք եղբորս պահել-մեծացրել է Սիրան տատս: Նա մեզ սեր է տվել, ջերմություն, քնքշանք: Ժամերով հեքիաթ էր պատմում մեզ համար...

Մարետայի, Սուրենի, Սերոբի, Սեյրանի ընկալմամբ Սիրան տատի կերպարը դարձել էր սիրո, մայրության խորհրդանիշ: Երեխաները նրան մամա էին ասում եւ ոչ թե տատիկ, իսկ իրենց մորը՝ Դեզիկ Բաղդազյուլյանին՝ Դեզո: Իսկ Սուրեն Խաչատրյանն իր աղջիկներից մեկին Սիրան կոչեց՝ ի նշան տատիկի հանդեպ ունեցած մեծ սիրո:

Սուրեն Խաչատրյանի ծնողներն աշխատել են Գորիսի «Ավանգարդ» տնտեսությունում: Սերյոժան առաջավոր անասնապահ էր, Դեզիկ Բաղդազյուլյանը՝ հանրահայտ կթվորուհի:

– Հայրս լավ թամաղա էր, – ասում է Մարետա Շալունցը, – կենաց խմելիս առաջին բաժակը նվիրում էր տատիկիս ու պապիկիս: Նա լավ էր երգում: Մինչեւ հիմա ականջներումս հնչում է նրա ձայնը: Երբ գնում եմ իմ հայրական օջախ, թվում է, ուր որ է, պիտի լսեմ նրա երգը: Շատ էր սիրում Գուսան Աշոտի երգերը: Աշուղի երգերը նրա համար օրհներգի պես մի բան էին: Օրհներգ՝ սիրո մասին, օրհներգ՝ հայրենիքի, Ջանգեզուրի չոր չղերի մասին... Հայրս նաեւ իմաստուն խոսքեր ուներ: Հաճախ էր մեզ ասում՝ առիթի դեպքում երբեք չասեք, թե ում կողմից եք, այլ ասեք՝ ով է իմ կողմից: Երբ մեծացանք, հասկացանք հորս խոսքերի տողատակը. նա մեզ մանկուց լիդերություն էր սովորեցնում: Հաշտ ու համերաշխ են ապրել ծնողներս: Ես ընտանիքի միակ աղջիկն էի: Սակայն դա չէր նշանակում, որ պիտի ինձ երես տային: Շատ խիստ են եղել իմ հանդեպ: Մայրս հա կրկնում էր՝ աղջիկը պիտի եփել-թափել իմանա, որովհետեւ կյանքում ինչ էլ դառնա, ինչպիսի ընտանիք էլ հարս գնա, առաջին կոչումը տան կին լինելն է:

Ամռանը ծնողներս գնում էին սար: Այսինքն, «Ավանգարդ» տնտեսության ֆերմայի բոլոր աշխատողները սարում էին՝ «Թալվա չխուրում»: Ամռանը «Թալվա չխուրը» դառնում էր վրանային ավան: Աշխատանքն ավարտելուց հետո կթվոր-անասնապահների համար նոր առօրյա էր սկսվում. մեծերն ինքնաեռով թեյ էին պատրաստում, երիտասարդները վառարանի վրա թխվածք պատրաստում: Հետո բոլորը հավաքվում էին որեւէ մեկի վրանում, եւ սկսվում էր թեյախմությունը՝ շաղախված համով-հոտով զրույցներով: Իսկ երեխաները քարկտիկ էին խաղում կամ պահմտոցի: Մեկ էլ տեսար լավեց մորս ձայնը՝ երեխաներին կոնֆետ տվե՞լ եք, կամ՝ խմորեղենից երեխաները կերե՞լ են: Բիբիլիական մի ուրույն աշխարհ էր «Թալվա չխուրը»: Իսկ երեկոյան, երբ երկինքն աստղազարդ էր դառնում, վրաններում վառվում էին ճրագները: Եթե այդ օրը հանկարծ որեւէ մեկի վրանում ճրագի լույսը չէր երեւում, մայրս անհանգստանում էր. գուցե նավթ չուներ: Տղաներից որեւէ մեկին ուղարկում էր պատճառն իմանալու: Եթե նավթ չէին ունենում, մայրս անմիջապես նավթ էր ուղարկում նրանց:

Հայրս առաջավոր անասնապահ էր: Մայրս՝ առաջավոր կթվորուհի՝ հանրապետության մասշտաբով: Նա բազմիցս գլխավորել է հարվածային կթվորների ցուցակը, հաճախ ռեկորդներ սահմանել մեկ կովի կաթնատվության գծով: Մասնակցել է կուսակցության բազում համագումարների, եղել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, արժանացել շքանշանների, մեդալների:

Երբ մայրս այլևս աշխատանքի չէր գնում, դարձյալ հավատարիմ էր իր սովորույթանքը. հավաքատեղին հայրական օջախն էր դարձել: Հավաքվում էին հարեւանները, բարեկամները, ընկերուհիները: Մայրս ասես մերան լինեք բոլորի համար...

Հիմա չկան ծնողներս: Չկան ֆիզիկապես: Նրանք ապրում են մեր հոգում: Եվ ուրախ եմ, որ թողել են գեղեցիկ կենսագրություն, այնպիսի կենսագրություն, որով հպարտանում ենք բոլորս, նրանց կենսագրությունն աշխատավոր մարդու կենսագրությունն է, դաս-դասագիրք՝ շատերի համար: Այսօր հորս՝ Սերյոժայի անունն է կրում Սերոբ եղբորս որդին: Նրանք ապրում են մեր հայրական օջախում:

ԳԵՐՂԱՍՏԱՆ

– Այս տան լուրաքանչյուր անկյունում նրանց շունչն է զգացվում, – ասում է Սուսաննան՝ Սերոբի կինը, – ես այդպես էլ միշտ կլինի: Դեզիկը՝ կեսուրս, կանացիության խորհրդանիշ էր, հայ օջախի կնոջ ու կեսուրի խորհրդանիշ: Շատ առատաձեռն կին էր: Երբ աշխատում էի, ընդմիջման համար տեսակ-տեսակ, համով-հոտով ուտեստներ էր պատրաստում եւ ուղարկում: «Իմ հարսի «պերերիվը» պիտի ջոկովի լինի, – ասում էր նա: – Իմ հարսը պետք է գեղեցիկ հագնվի, լինի ժպտերես, հյուրասեր եւ մարդանոտ»:

Կեսուրս շատ հարեւանասեր էր:



Սուրեն Խաչատրյանի հայրը՝ Սերյոժա Խաչատրյանը

Սուրեն Խաչատրյան մարդու համար իր արմատները յուրօրինակ այցեքարտ են

Բոլորի հետ զրույցի թեմա ուներ: Ինձ միշտ ասում էր՝ հանկարծ որեւէ հարեւանի հետ բարձր տոնով չխոսես, բոլորի հանդեպ հարգալից կլինես: Նա գեղեցիկ էր հագնվում: Շրթներկը, օժանելիքը երբեք չէր մոռանում, հատկապես սիրում էր ֆրանսիական օժանելիքները: Մինչեւ հիմա մնացել են նրա օգտագործած օժանելիքներից: Ես դրանք, իբրեւ հուշ, խնամքով պահում եմ...

Կեսարս՝ Սերյոժան, հետաքրքիր մտածելակերպի տեր մարդ էր: Միշտ ասում էր. «Սուսան, բալաս, հարեւանաբաժին պահիր: Եթե այդ օրը քեզ մեկ խնձոր է բաժին հասել, իսկ դիմացինիդ՝ երկուսը, կլռես, չդժգոհես: Աստված մեծ է, մի օր էլ քո բաժինը շատ կլինի»: Աղջիկ երեխաների հանդեպ շատ խիստ էր: Եվ խստությունն այսպես էր քաջատրում. եթե աղջիկը վատ բան է անում, ապա դրանով տղամարդու ուսն է կտրում:

Սերյոժա Խաչատրյանը եւ Դեզիկ

Բաղդազյուլյանը ստեղծել են ավանդապահ գորիսեցու ընտանիք: Եվ ուրախ եմ, որ այդ ընտանիքի մի անդամն էլ ես եմ»:

Ծնողների բարի անունը, փառքն ու պատիվը շարունակելու պատասխանատու առաքելությունը նախախնամությամբ տրվեց Սուրեն Խաչատրյանին, ով էլ շարունակեց գերդաստանի ավանդույթները. Աժ պատգամավոր, համագումարների պատգամավոր, շքանշաններ ու մեդալներ եւ ամենից կարեւորը՝ նրանց առատաձեռնությունը, հյուրասիրությունը:

Հիշում եմ, երբ կառուցվում էր Սուխուրթույան-Գորիս ջրատարը, Սուրեն Խաչատրյանը միշտ «պերեդաշով» էր գնում շինարարների մոտ: Էլ խորոված, էլ տնական հավեր... Եվ ժպտալով ասում



Սուրեն Խաչատրյանի մայրը՝ Դեզիկ Բաղդազյուլյանը

էր՝ Դեզյի հավերն եմ: Ավարտվեց ջրատարի կառուցումը, դրան զուգահեռ՝ «դատարկվեց» Դեզյի հարուստ հավաքումը...

Երբ արմատներդ առողջ են, ամուր ես կանգնում հայրենի հողին: Երբ արմատներդ առողջ են, նրանք քեզ հպարտանալու իրավունք են տալիս: Եվ արարելու իրավունք: Եվ Սուրեն Խաչատրյան մարդու համար իր արմատները յուրօրինակ այցեքարտ են, լինելության ակունք...


ԱՎԱՐԴ ՄԵՏՐՈՊՈՅԱՆ

Վայելուչ տեսքի բերվեցին սրբավայրերը

Մ.Յոհաննիսյանը եկեղեցին կառուցվել է 1771թ., երբ գործի սեպիները դեռ ապրում էին Վարարական գետի ձախ ափին՝ լեռան լանջին գտնվող քարանձավային բնակավայրերում:

Մի քանի տասնամյակ մատնված լինելով անուշադրության՝ եկեղեցին վերանորոգվել է Վիենն եւ Գորիս քաղաքների համագործակցության շրջանակներում: Ծրագիրը Վիենն-Գորիս ասոցիացիայի եւ «Երկիր եւ մշակույթ» համագործակցության, ինչպես նաեւ Վիեննի եւ Գորիսի քաղաքապետարանների եւ բազում այլ դերակատարների աջակցության արդյունքն է:

«Երկիր եւ մշակույթ» կազմակերպության նախաձեռնությամբ սկսված շինարարական աշխատանքներին ի սկզբանե մեծ աջակցություն եւ հովանավորություն է ցուցաբերվել Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի կողմից: Աշխատանքների ավարտին՝ Սյունիքի մարզպետի կողմից հովանավորվել են եկեղեցու խաչի, զանգի, ջահերի եւ Սուրբ Խորանի կառուցման եւ Սուրբ սեղանի սպասքի ձեռքբերման եւ տեղադրման աշխատանքները: Մեծ աջակցություն է ցուցաբերվել նաեւ եկեղեցու շրջակայքի բարեկարգման, մոտեցման ճանապարհի եւ հեռապատերի կառուցման աշխատանքներին: Ներկայումս իրականացվում են հարակից բնակավայրի քարայրերի վերականգնման եւ արդիականացման աշխատանքները, որոնց ֆինանսավորմանը մասնակցում է Սյունիքի մարզպետը:



1897–1904թթ. Գորիսում կառուցված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն (թեւ 1904-ին օծվել, բայց մնացել էր անավարտ) 1995-ին սկսեցին վերանորոգման աշխատանքները: Սուրեն Խաչատրյանի եւ Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի ջանքերով եկեղեցին ձեռք բերեց իր վերջնական ու ամբողջական տեսքը: 1997-ի դեկտեմբերի 20-ին՝ ժողովրդական տոնախմբության վերածված օրը, հանդիսավոր պատարագով եւ օծման արարողությամբ վերաբացվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Խաչի օծման արարողությունը կատարեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն: Եկեղեցու վերաբացմանը ներկա էին ՀՀ վարչապետ Ռ.Քոչարյանը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ.Հարությունյանը, Սյունիքի մարզպետ Ս.Աբրահամյանը: * * *

Սուրիկ Խաչատրյանի անմիջական հովանավորությամբ ավարտվել են Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շուրջ 350 քառ. մ մակերեսով տանիքի քարե ծածկի կառուցման աշխատանքները նույնպես եւ իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ եկեղեցու տարածքի բարեկարգման եւ ներքին հարդարման աշխատանքները սկսելու ուղղությամբ, ինչը եւս ամբողջությամբ հովանավորվում է Սուրիկ Խաչատրյանի կողմից:

Տաթևի մայր վանքը՝

մարզի իշխանավորների, հոգեւորականների, զորականների փարեվերջյան հանդիպման վայր

ԱՎԱՆԴՈՒՅԹ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՈՎ

2015 թ. դեկտեմբերի 31-ին Տաթևի վանքը հերթական անգամ դարձել էր Սյունիքի տարածքային իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես եւ Հայաստանի զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի ներկայացուցիչների ու Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի բարձրաստիճան հոգեւորականների հավաքատեղի:

Հավաքը, ինչպես մեկ տարի առաջ, կազմակերպել էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը եւ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար

վարդապետ Հակոբյանը: Վանքի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցում մատուցվեց հանրապետական մաղթանք՝ գլխավորությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի:

Հավաքվածները միասնական աղոթք բարձրացրին առ Աստված՝ խնդրելով, որ Տերը օրհնություն բաշխի հայ ժողովրդին, խաղաղություն պարգևի Հայաստանին եւ Արցախ աշխարհին, որ ավելի զորանա Հայաստանի Հանրապետությունը:

Երկու տարվա սահմանագծում այդ կերպ հավաքվելու ավանդույթը նաեւ

այլ խորհուրդ ունի վերստին արտահայտել հավատը Հայր Աստծո, նրա որդու եւ Սուրբ հոգու հանդեպ, ինքնամաքրվել եւ մեղքերի թողություն խնդրել բարձրալից, ոգի առնել Սիսական տան բոլոր վանքերի գլուխ եւ շնորհաբաշխության աղբյուր Տաթևի վանքից, արտահայտել Սյունիքի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների ու զինական ուժի միասնությունը:

Այնուհետեւ տեղի ունեցավ մատաղի արարողություն, որի ընթացքում ներկաները շնորհավորեցին միմյանց Ամանորի եւ Սուրբ ծննդի առիթներով:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ
«Սյունյաց երկիր»,
13 հունվարի 2016թ., N1 (377)





**ԱՇԴԱՆԱԿԱՆ
(ԿԱԳՈՒՏՋՈՐԴ).
ՎԵՅԱԳՈՒՅՆՆԵ՝ ՍՅՈՒՆՅԱՑ
ԲՈԼՈՐ ԼԵՌՆԵՐԻ ՄԵՋ**

Սյուճնյաց աշխարհի հորովել

Գրասան Ալոս

Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,
Քո ձայնն է լսում, քո մաճկալ ապեր,
Հո՛ր արա, Խումար ջան, հո՛ արա, հոտանձ ջան,
Ապերն ինչ ասի, հոտաղը՝ լսի:

Հացի բուրմունքով ձորերը լցնի, հո՛ր արա, հո՛-հո՛...
Ամնձ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ Աստված ասեմ, տասը մեծ դարդ կա,
Հո՛ր արա, Եումանձ ջան, Եումանձ ջան, հո՛...
Հո՛ր արա, հոտանձ ջան, հոտանձ ջան, հո-հո՛ր արա, հո՛-հո՛...

Խնձորը ծոցին իմ ջահել ախպեր,
Հարսանքիդ քավոր քո մաճկալ ապեր,
Հո՛ր արա, Թումար ջան, օրը ճաշ դառալի,
Ամառվա վարը ոսկի հաց կտա:
Օջախի ժպիտ, ինդովժյուն կզա, հո՛ր արա, հո՛ր-հո՛...
Ամնձ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ Աստված ասեմ, տասը մեծ դարդ կա,
Հո՛ր արա, Դումանձ ջան, Դումանձ ջան, հո՛,
Հո՛ր արա, հոտանձ ջան, հոտաղ ջան, հո-հո՛ր արա, հո՛-հո՛:

Սարի սիրունը ճաշ կբերի,
Հոտաղի սերը նորից կնորի,
Հո՛ր արա, Խումար ջան, հո՛ արա, հոտանձ ջան,
Որ նորից ծփան ոսկեհոտ հասկեր,
Հե՛յ, թոռնատան մեր հացը խինդ ու սեր, հո՛ր արա, հո՛-հո՛,
Ամնձ ջան, ուսիդ սարի չափ բեռ կա,
Քեզ Աստված ասեմ, տասը մեծ դարդ կա,
Հո՛ր արա, հոտանձ ջան, հոտանձ ջան, հո՛ր արա, հո՛-հո՛: